

一

ՄԵՐՈՎԱՆՑ Հ. ՊԵՏՐՈՎԻՑ - 1
ՍԵՐԿԱՆԱԳԻ ՄՐՅԱԼ Է. ԶՈՒՄՈՒՆԻ

トセギ
トセギ

ՏՊԱՐԵԱ, ԸՐԿԵԱՄԱ-Յ ԱԶԴԻ ՅԻ ԲԱԾ
Դ ԱՓԻՖՈ-Յ ՀԵՐԱՅ

ト人間が死んでしまった。死んでしまった。死んでしまった。



トヨタ・リムジン
13,7

6
Janur

12004

~~33-761225~~
~~096-245175~~

140000
yellow may 2008

25

2458 910.4 (91.342) B-18 47
ՃԵՐԱՊԵՐՀՀՈՐԴ-ԱԽԹ-ԼԽՆ

644-44

ՄԵՍՐՈՎՔԱՑ Դ. ԹԱՂԻԴԻԵԱՆՑ · Վ. Ա.
ՍԱՐԿԱՏԱԳԻ ՄՐԲՈՑ ԷՀՄԻԱՌՆԻ

下卷

ՀԵՏԱՐ ԱՆ-Ա.Պ.Ի.Ց.

——— * 沈陽小器滿語 * ———

ՏՊԵԴՐԵԱԼ ԱՐԴԵԱՄԲՔ ԱԶԳԻ ՄԵՐՈՅ
Դ ՍՓԻՏՈՍ ՀՆԴԿԱՑ

ԴԱՅԱՐԱԿԱՆ ԱՎԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՅՈՒԹ




ԱՐԵՐԱՑԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

՚Տ ԿԸՆԿԸԹԱ :

1847

9(47.925).04



ԱՐԱՐԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ճանապարհորդութիւն, մանաւանդ՝ որ կից ունիցի ընդ
իւր մեջտե և կարիս՝ որէ զմիսս և ընդարձակելով զգիտու-
թիւն՝ բարւոքէ զվարս մեր։ Ցանկալի էր արգարե թէ ծը-
նեալք ՚ի զահոյս ՚նախ քան զամբառնալ իւրեանց ՚ի ՚նոռա՝
Ճանապարհ առնելին որպէս սոսկականք՝ առ ՚ի փորձ թշուառու-
թեան ժարդեային կենաց։ Ինգլիւման Լբուկ ։ Հոյտ ։ 8 ։ 1847։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐԵՎԵԼԱՊԵՏԻ
ՏԵԱՄՆ ՆԵՐԱՄԱՏ ԱԶԳԱԾՈՒՅԻ
ԽԱՅՐԱԳՈՑՆ ԿԱԹՈՒԴԱԿՈՍ ԸՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ
ՀՕՐ ԵՒ ՏԵԱՄՆ
Դ
ՊԵՏԱՐԱԳ ԱՐԵՎՈՅԻԹԵՐԱ
ՅՈՒՄՈ, ԸՆԾԱՑԱԲԵՐԵԸ,



ՀՅԴԵՏԱՌ ՏԵՐ

ԱՅԾԱՅԻՆ Կարգեալ ՅԱՍՏՈՒԾՈՅ ՚ի խնամա-
կալս մանկական ուսմանց իմոց, և առաջին
խոկ այժմ ՚ի մաստակարարութիւնն Բանին՝ յԱ-
թոռ Հայրապետութեան ամենային Հայոց՝ ա-
ռաջին հանդիսանայք յոզորմութիւնն արդարեա՝
եթէ աստուածահայեաց տչոքք քաղցրութեան
տկառ ըկիֆիք յայտ գուղնաքեաց աղերս, իբր

յառաջին 'ի տեսակս իւր՝ առաջնապտուղնը-
ուիրեալ Ձերդ Առաքածէր Տէրութեան ՚ի պա-
տաբագ ակնածութեան :

Վել գլորեալ 'ի բարձանց յաստանդանս
աջ և ահեակ պատահարաց աշխարհի և տա-
ռապահաց ՚ի տառապահանս օտարութեան անտուն
և անդրամ տուայտեալ՝ պատկառ իմ պարծել
թէ ժողովեցի ինչ՝ Ձեզ արժանի արմադան :

Յաւետիս Անհայտ զազատութենէ Հայ-
քենեաց առ Հասարակութիւն մեր ՚ի Հնդիկս
ուրացայ անձին զայն ամենայն՝ զոր աշխարհ
տալ կարէր օտարականի ուրուք . և որպէս
մանուկ սարտուցեալ ՚ի սաեանց մօր՝ անդրէն
՚ի նոյն գիմեցի : — Բայց ոչ գտեալ զոր
ինեղ ըէր անձն իմ, — վանական մտեալ և
վանական ելեալս 'ի Հնդկաց՝ յաշխարհական
փոխեցայ ՚ի Պարսկաստան, Հասի ՚ի ծոց՝ Օք-
նողիս, սպաս Հարի Հայրապետիս . այլ փո-
խանակ միւիթարութեան՝ յազատութիւն ան-
ձին իուսել պարտաւորեցայ :

Ե՞ որ պլիտեան , և է՞ որ անպիտան վտա-
 րանդետը՝ որ 'ի բեմը , և որ 'ի բանդ , ելի
 առանց վրէժիսնդրութեան , և խոյս ետու 'ի
 Հնդիկս վերստին : Ուրանօր մերթ գրաշար
 տպարանի , մերթ պատմաբան Հնդկաստանի ,
 մերթ վերեղակ յերկրամիջե , և մերթ հիւանդ
 գեանեանշտի , զամս Հինդ անդադար աշխա-
 տեցայ . այլ շահեցայ և ոչ ինչ՝ մինչեւ եկաց
 Արարատեան Ռնկերութիւն , սպաս Հարկանել
 Ազգին զրազիտութեան : Որոց 'ի ծառայել
 իմում , ծառայից ազգի ծառայելու՝ զանձն
 երջանիկ Համարիմ զարդիա՝ և բուն նպատա-
 կին հասեալ :

Եթէ բարիք իցեն 'ի շարժմանէ յայսմանէ՝
 այն ամենայն խմաստութեան և մեծագործու-
 թեան Պատուելի Հասարակութեան Հայոց
 Հնդկաստանեայց են շնորհք . ապա թէ ոչ
 ծառայս անպիտան նոյն եմ , որ ինչ և էի յա-
 մենայն ուրեք : — Ուստի և այս դուզնաքեայ
 աղերս , թերեւս առաջին՝ որ պարձի յանուն

ԱԶԳԱՍԻՐ ՏԵՐՈՅԹԵԱՆ ՁԵՐՈՅ յայտնի ապա-
ցոյց է որդիական սիրոյ և ջերմմ ռանեգութեան
նոցա՝ առ Ա եհափառ ՏԵՐՈՅԹԻՒՆ ՁԵՐ :

Խորին ակնածութեամբ բարեհաճ ընդու-
նելութեան յուսացեալ՝ մնամ

ԱԶԳԱՍԻՐ ՏԵՐ

Ա ԵՀԱՓԱՌԻ ՏԵՐՈՅԹԵԱՆ ՁԵՐՈՅ :

Ա ՅԵՒՆԻՇՆԻՐԻ ԾԱՌԱՎ :

Ա ԵԿԱՔԻ ԴԻ ԹԱՂՆԻՇՆԻ :

ՅԵՌԵԹԱԲԵՐ

ՈՐՊԻՍ միտք Տարտիկն , և ոյն և Տարմին շաբաշարժ պայմանութեամբ ՚ի Բարեւոր Ալեարէեն , ու ինչ այնուն գդալիք և անործ համարին՝ որոն զպարմութիւն շաբաշիոն առանձականի . իւնին բանին շառըդ՝ որոն և Տարմին իւն :

՚ի , Տանուի պիսց անդի սխաց հաստիւն զեւեւիս առաջին և արդարին անցից ծամանուից , և զվարոց վայրոց վայեւսանինս՝ սայսպէս բեղագրութեամբ և ընտօքինութեամբ հնասնիւնց . այլ ՚ի պէսոյէն Յանիորութեանց անդի՝ իրաւ իսմ անիշտ պարագնելոց՝ և յաշխարհաց առաջարկու զդարբնութիւն հաւածական գիշելուն՝ իսրեան եռու մինչ իսպատ :

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՓՈՐՁԱՆԱՑ անուանեալ Յեւագիւ իմ , Երեւան , ՓԲԿԵԱԼ , ԱՐԱՑՆ ԳԵՂԵՑԻԿ , հանդեք օհի նախօս նախնի աբշանգրութեանց , և առաջանութեամբ Մերմարէստու գրքեանց գրեւոց ՚ի բեւին բեղուն՝ անձնուած զԱրտութ . Բար զոնդակ գրութիւնն իմ զձիսից և իրակից Հնտիոց՝ Ըողոն ՚ի կոստունուածուին . և այլու ասոր և անդ : Եւ ենէ չեւ Վերնախիւամ ԳԱԼՈՒԹԵԱՆ պաշտպանեալ զիւնու յանհամար և ՚ի վերահստակեածին և մասց ինչ զարտիւ առ ինչ իմ ասեւ իսրեանց :

Բայց ՚ի նիւթ անդը—՚ի վերու Աւազին հապարաց գընց ու յօժարեցաց պարուսուորէւ զՊարմութիւն . մի՝ զի ասադին է Աշգին պարմութիւն՝ Յանիորոցն . և երեսորդ՝ զի որք գրանինն ՚ի շանկալեաց և երի բեսանին . Երուին՝ Ան Քովական Պարմութիւն մէր ևոր ՚ի նորոյ սիսուներ . ըստ օքինավին և ոճոյ Բարմերուիր հօք ԱՌԻԿԱԿԱ , Բժնիւեաց՝ ՚ի մոստ լեհուարանին :

՚ի հնառ-ըիւնս աղջի և Հուրենեաց ՛և ընկույթաց ՚ի զի իւ-
րաստալ էին հաւառմանեւ իմ և երիբորդ՝ զի ՚ի հեռագոր և ՛և
՚ի հօպոյ արքանեացա խօսել եւ ըստ որում այսպէս, իան ու լո-
ւագոյն ևս խօսին ժան զիս :

Զաւանչին ծիսից և սովորութեանց գաւառաց և աղջաւաց
իւրի հարւանցին ալւեաի, անողի ՚ի մտի իան իմ եւն իւնից
Աւրանցով, աօրինել և եւեւ զլլաւրոց ինչ, այւ Ծիստըն մի,
շրջամ նէսրագրիցին առանցին սովորութեանտ, հանդէստ, իրգու
և արարողութեանտ աղջայինտ : Եւն է հասից այսր դադագանեաց՝
գլւհագունիցն աղասարան առանց զայն, մանաւանդ՝ որոց հին Պար-
սի Բարբառաց գեղէիտգոյն իւնն :

Զաւան ՚ի վլւրոց նախինութեան լեզուին՝ կամովին ՚ի բաց
հասրի : Ուղիւ և զբայշագոյնոն ՚ի մանիայոն առից և ՚ի իւնա՝
որս թէղեղու անց + անիւղին Պարսու իւնաց՝ և ըստ Թէջի մա-
սին թաթուղանտ անմեղութեան՝ այւ և շերծ + գլխովին շարժաւին
Բարբառութեանց և ՚ի ներին իւրամանինութեանց որս հարին-
աղջորդեն իւնն :

Ցաւամ աերիբորդ հադրէին առաւեւ պարզախօս և սրագու-
պարում լինել զի անդ եւն գովեստ ինչ՝ ամենեցուն մերա-
բերի, իսի եւն պարսու անչին միայնու եւն :

Ըստ լիսին՝ և Բանասիրին ՚ի աբիբառ աշխատանց գլեթա-
նութեանն՝ առանց դանարի գրչին յանուք և յանկաչոյն պարմա-
թեան ասպաւդունաց ներւուն նշաղէցուանեւ ասպ և անդ շախան-
պարտաւիան աղջային անուին՝ իբրև զասդեղան աղօդաւոյն ընդ
պարտաւոյն ամոց համապարզ գիւերու :

ՅԵՒԿ

ԲԱՐԵՐԱՐ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

ԿԱԼԿԱԹԱ

" Ի՞նչ քան ամենեցուն յաւէտ հաճելի և ընդունելի է , ոչ
միայն Ճանապարհորդութիւն լեզուագէտ առն ճարտարի և
ազգասիրի , այլև փափազելի է ինձ բոլորովին իմանալ ըզ-
Հայրենեաց երկրին իմոյ զուտ և ստոյգ տեղեկութիւնս . վասն
որոյ ամենայն հաճութեամբ ստանաւ զվեցամսական տետրակսն
կազմեալ . որքան և բազմատետրակ հասանիցի զործն . մին օրի-
նակ վասն իմ , մին օրինակ վասն Արբոյ Տան Երուսաղէմի , և
մին օրինակ ևս վասն Դպրատանն Արբոյ Աթոռոյն . որոց յետին
պաշտօնեայ

Տէր Գրիգորեան Խսահակ Ծ . Վարդապետա 3
Կազարեթայ սուրբ Եկեղեցւոյ Վեճակաւոր Քահանայք . . 1

Պարոնայք Ա . Գալստան	1	Ջ . Մալխասեան	1
Թագէոս Խ . Ավետումեան	1	Մ . Խ . Մալխասեան	2
Պ . Յ . Սարգսեանց	2	Մեսրով Թագէոսեան	1
Խ . Գ . Աէթեանց	1	Գ . Եղիազարեան	1
Ո . Պ . Որդանան	1	Ղազար Աիմեօնեան	1
Պ . Յ . Պալ	2	Յովսէփ Աղաբէզեան	1
Յարութիւն Արգար վասն Հ .		Յովհաննէս Աղաբէզեան	3
Հայրենասիրական Ճեմարանին .	2	Մկրտիչ Աղաբէզեան	2
Արգար և Ընկերք	3	Ջ . Աղաբէզեան	1

Ա. Աղաբեկ վասն Մ.

Ճեմարանին	1
Կարապետ Աղաբեկեան	1
Մալխաս և Պողոս Աղաբեկ	1
Ցովսէփ Լմինեան	1
Մանուկ Զօրաբեան	1
Զօրաբ Մ. Մանուկեանց	2
Յ. Գ. Գրիգորեանց	1
Ցովհան Եղբարք	2
Ցովհաննեւս Ավկալեան	1
Փ. Ա. Գէորգ	1
Ցարութիւն Հէրապետեան	1
Յ. Մ. Վարդաննեան	1
Ս. Մ. Վարդաննեան	1
Վ. Մ. Վարդաննեան	1
Վ. Մ. Վարդաննեան	1
Խաչատուր Ցովհաննեան	1
Ռ. Զ. Շիրեսեան	1
Յ. Գ. Գրիգորեան	1
Ցակոբ Ստեփաննոսեան	1
Ա. Վ. Վարդաննեան	1
Գ. Մ. Գասպարեան	1
Բ. Ա. Տէր Գասպարեան	1

ԲՈՒՄԲԱՑԻ

Ցարութիւն Ցորդանան	1
Դաւիթ Ղ. Մհկ Ցովսէփ	1
Գրիգոր Մ. Մհկ Ցովսէփ	1
Ցովսէփ Մ. Մհկ Ցովսէփ	1

ՄԱԴՐԱՍ

Սամուել Մարգար	1
----------------	---

ԲԹԱԿԻՒԱ

Տիկին Մարիամ Յ. Ցա-	
րութիւն և Օրիորդ Թա-	
զուհի Մանուկեան	1
Ա. Պ. Աղանուրեան	1
Մկրտիչ Յ. Եղիկեան	1
Ցակոր Ս. Մկրտչեան	1
Ցովհան Ցարութիւննեան	1
Գրիգոր Ցովսէփեան	1
Մէլքոն Ա. Տէր Գամ-	
պարեան	1
Գէորգ Աւետ Զաքարեանց	1

ՃԵՆԵՊԵՐՀ ՀԱՐԴԱԽԹԻԿՆ

Մ. Դ. ԹԵՂԻԴՐԵՍՆՑ

—————*—————

ՀԵՏՈՒԾԾ ԱՌԱՋԻՆ

Առաջին անգամ, նոր էղանակ՝ դաստիարակութեան մանիսն ։

Եթէ ԻՑԷ որ Ճետւ Ճանապարհորդ, զանձըն գուզնաքեայ լնկալցի Հաղորդ վիճակի իւրում, Ա անեզի՝ Հանի իմ Անեա յետ թաղելոյ զայր իւր զՄեսրուլք. թողեալ զորդիս իւր յԵրևան քաղաքի, ՚ի թաղն անուանեալ Կարբւոյ ՚ի Չորակիւղ, որ ՚ի Հիւսիսոյ* Նրաստան գետոյ՝ առնու զամենայն Հարստութիւն զուդ գրամոց և զարդուց տանն, և չուէ գնայ քնակի ՚ի Ա տղարշապատ աւանի. փոքուին յառաջ քան զծնունդ իմ, յամի Տեառն

*Այս Կարբի առ Հրաստան գետով՝ այլ է յիսկ Կարբւոյն առ Վասարխառ յ՛՛ Արագածոյ՝ ուր Յովհանավանքն է, ըստ որում յետ աւերածին՝ մասն ինչ ժողովրդեանն՝ այսը զաղթեցան։

1803. Վաղլազարիկի յետ ծնանելոյ իմայ անդրանիկի իմաց ծնողաց . այլ կոյր աչօք և հաշմ անդամօք՝ որպէս պատմէր մայր իմ, յաւանդի եղեալ նորա զոր ինչ և ուներ առ. Աահակայ Վարդապետի ուրումն ։ Օօռ կամ չզօր անուանելոյ , ի սակա հսկայադ խոսկն ահագ նութեան , վերադառնոյ յԵրեան . և զիս ինքն առնու ասնի ՚ի Աուրբ Աարդիս յԵկեղեցի մեր . իսկոյն մկրտել տայ յաւուր Շռննդեան Տետոն մերոյ՝ ուստի անուն և կոչեն ինձ Աւետիք : Ո՞նդ որ զջարեալ հաւոյս՝ փոխէ զայն ՚ի Մերորովք . յանուն հաւոն իմայ , և յետոյ ՚ի Պապիկ : Ապա ուխտէ զիս՝ որպէս ասի* ՚ի ծառայութիւն Աըբոյ Եղմիածնի . և ընդ օձիս շապիկն ՚ի վայր Հանեալ՝ որպէս թէ վերստին ծընաւ , և Տաշտաքերամնք իւր անուանեալ՝ Հատանէ զիս յստեանց Մօր իմայ , և տարեալ ընդ իւր ՚ի Վաղարշապատ՝ սնուցանէ թառամ և ցամաքեալ ստեամբք՝ իւրովք՝ ընդ հարուստ ամանակս : Որով մշտնջենաւոր նուա-

*Այս հղանակ որդեզքութեան ոչ ուրեք ընթերցայ . սաւ կայն կարի հին թուրի ինձ , ընիկ Հոյտառանի , և նախկինազոյն քան դՆիկողիմայ “առռնվան Տօր Տպոնել և անդրէն ծնունել”

զութիւն կաթին տուեալ մոքուր ստեանց
Վօր իմայ, զոգին և մշտնջենաւոր անհոգու-
թեան զկենացն Հանդերձելոց գիեցոյց : Բայց
դու եկ աղէ և ընդ գութ ինամոց Բարերարին
զարմոցիր, որ զհին աւուրց պառաւու զստինա
յորդորեաց կաթամբ՝ ՚ի մնունդ ապիկար որ-
դանս ինքեան : Որ այն ինչ դեռ տղայ ՚ի
խանճարուրա պատեալ, երբեմն ՚ի Վաղարշա-
պատայ յԵրեան, և երբեմն յԵրեանայ ՚ի
Վաղարշապատ բարձեալ բերելով, յայն
քնաւորեցոյ ՚ի շրջմոլիկ սալորոյթ, որ յապայս
ժամանակաց ՚ի հեռաւոր ծագս աշխարհաց
վտարանդի թափառեցոյց զբովանդակ կեանս
իմ : —

Երբե մեռաւ Հանիս կորստեամբ ամենայն
գյեց իւրոց՝ և զհետ չոգան նմա որդիք
նորա ՚ի գերեզման մահու իւրեանց, յաւեր-
ժայիշատակ Վայր իմ Օարդար Յաւլիա-
դեանց : որ երկրորդ պսակաւ ամուսնացեալ
ընդ Պետրոսի Պօնջագիւլեանց, ոչ ախոր-
ժեր ծանրանալ նմա որբւովիք օտար Հօր
որդւոյ՝ կոչեաց առինքն զԲարէլ Կարբեցի
շարեան մերոյ ընտանի, և յանձն արար նմա
զիս տանել յԵջմիածին և հաւատալ ՚ի ինամն
Պարօն Յովհաննիսի Ասկարեան Հօռաքե-

ռառն իմոյ, որ զայնու ժամանակաւ վարելը դտակառապետութիւն Արքսին, կամ Առեհարանին :

Ոյն այս այր աստուածասէր, որ թէպէտեյետ մահու Հօրաքեռ իմոյ՝ ածեալ էր իւր կին զայլ, սակայն գեռ ևս արծարծուն պահէր ՚ի սրտին զինամոցին առ լնտանիս՝ հուր սիրոյ, իսկ և իսկ առեալ կացոց զիս առաջի Մեծին Կերսիս Աշտարակցւոյ, Արքեպիսկոպոսի, որ յետոյ կարգեցաւ Առաջնորդ Հայոց Արաստանեայց, և ապա Կաթուղիկոս ամենայն Հայոց, զառաջնոն բան ՚ի մէջ առեալ ասաց, “Գիտիցես մանուկ գու զընթեռնուլ գրոց,” Յանդգնագոյն և Համարձակապէս պատասխանի արարեալ նմա՝ ասացի, “Եթէ գիտէի, էրժէմ գայի բա՛,” — “Օ ի՞նչ գիտես ապա:” Արկնեաց Տօնելին յազգի մերում: պատասխանի արարի, “Օ որ ի՞նչ միանդամ ուսուցանէ Երեան անտերունջ որբոց՝ ցուցս, առակս, և առասպելս:” Օ ժաղու Հարեալ նորա յաներկեան և ՚ի Համարձակախօս բանից աստի, Հրամայեաց ինձ երդել զցուց իմն. այլ այնինչ գեռ բանք ՚ի բերան, սկսոյ աւաշել զայն, այնքան սաստիկ, ձախ, ծուռ, դիլ և անձոռնի ձայնիւ, մինչ պարտաւորե-

ցաւ նո խակոյն յետս կոչել զՀրաման իւր,
 և ասել ցիս, թէ “Ա ուռ լեր, քանզի և զԱ հ-
 Հապեան ի Ա եհարան վրդովիցեր :” “Գի-
 տեիր թէ վրդովէր, ընդէր առաջ Հրամայիցեր :”
 ասացի ցիս : Եհարց ցիս թէ զի՞նչ անուն
 իցէ քո : Պատասխանիցի՝ միրտութեամբ՝
 Աւետիք, պապեհական ժառանգութեամբ՝
 Վեսրովիք, խոկ Հասարակ կոչմամբ՝ Պապիկ :
 Ուրեմն կա ասէ : զոր ժառանգութեամբ կա-
 լար, և արի Վեսրովիք աջ առ : Զոքոյ Համ-
 բուրեցի զաջն սուրբ : Խոկ նո Հայեցեալ
 զամնեքումք՝ որք շուրջն կոյին, ասաց, “Ափսօ-
 է զերեխայս ի գալրոցի տրորել, առեալ ած-
 ջիք զու առ Գրագիր Յովհաննէս Ա տրդա-
 պետ, և պատուէր յինէն զոյս տաջիք նմա,
 զի բարւոք Հետեւեսցի զմա, մինչեւ տեսցուք :”

Յովհաննէս Ա արդապետ ի Բագրեանդոց
 զոր Հասարակօրէն “Քուրտ” անուանէր
 ուխտ միաբանից, էր ոյր երկայնահասակ, և
 բարակ, չեչոտ երեսով, քարձ մօրուօք, և
 զեղնաբիք աչօք, ամեննեին զուրկ յաղատա-
 կան արուեստից լեզուի մերոյ : Ա արք նորա
 Հանգունատիսլք գիտութեանն և խառնից
 երկրի իւրում, անգութ, խժական, խորամանել
 և կասկածուտ միանգամայն : Աակոյն ունէր

և ինչ ինչ յառաքինական բնաւորութեանց
 և արուեստական հմտութեանց՝ որք երեելի
 իմն առնելին զիտ ՚ի մեջ որբագումար միաբանից
 Աթոռոյն մերոյ զնրօրինակ, անվեհեր արու-
 թիւն սրտի, խորին հնարագ իտութիւն առ-
 ամենայն դեպս, նախանձ երեելոյ որպիսի ինչ
 ոչ էր, որպէս և ճարտար գրչութիւն և երա-
 ժըշտութիւն. որք ՚ի մեծի համարման էին
 յայնժամ յլիդհանուր Աղգի մերում։ Առակ
 հանապազորդեան էր ՚ի բերաննորա՝ թէ “շուն
 զերախտիս ճանաչէ.” և ըստ վարդապետու-
 թեան այսորիկ՝ վարէր ոչ միայն լնդ հաւասա-
 րակիցս կարգի և հասակի իւրոյ, այլ նաև լնդ
 երիցագոյնս և լնդ բարերարս իւր անգամ,
 որպէս յայտնի երեեցաւ ՚ի մերժելոյ նորա-
 զնէր Եփրեմ Կաթուղիկոս զիւր հոգեոր-
 ժեող, և ՚ի կողմն մատչելոյ Տետան Յովհան-
 նու Ապրեցւոյ Աւագ Լուսարարի Արքոյ
 Աթոռոյն՝ և ինքնին պատգամաւորելոյ ՚ի
 Պօլիս վասն լնտրութեան նորա՝ ՚ի կաթուղի-
 կոսութիւն ամենայն Հայոց՝ առ կենդանու-
 թեամբ նախորդին, Ա իմակերծանիկ. ՚ի գրկաց
 անտի խանդաղատ մօր զատուցեալ՝ տես մւմ
 մատուցայ՝ որ այլ զի ուներ աշակերտոս բազում
 գրչութեան և Ճայ ւ ւրտոց՝ յահճն արար զիս

միում ՚ի նոցանեւ . որոյ անուն էր Աւագ Տէր Վատթէսեւան Երևանցի : Որոյ գթալով ՚ի Հողս իւր . ծանոյց ինձ զաթութայս լեզուի մերում , և ՚ի միջոցս առուրց ինչ՝ յաւել տալ ՚ի ձեռս իմ և զզրիչ , որոց միահաղոյն ընդ ուսանել անուանցն , ուսայ և զձեւ ուրոյն ՚ի նոցանեւ գրել ՚ի թղթի : —

Օ այսու ժամանակաւ . 1813. ել Կիերսէս Արք Եպիսկոպոս ՚ի Տփղիս , իսկ ես զամս երկուս տուայտեցայ ՚ի բերան առնեուլ ինձ զիշտ մագիրք և զլլաղմաս , և զամս երկու՝ տուայտեցայ ուսանել զշարական . որ առ անյարմտք լինելոյ ձայնիս՝ եղեւ առ յապայս կորուստ մեծ ժամանակիս , և զրկումն ՚ի պիտանի գիտութեանց : Բայց այն զի՞ ոչ օգուտ ինչ է ասողիս , և ոչ շահ ինչ բերէ լսողաց՝ մաներանալ յառանենին անցա մանեկականս , յաւետ աւաղելիս քանի թէ ծաղրալիս , կամովին զանց արտրեալ զնոքօք՝ ՚ի պայծառագոյնն անցանեմ Հանդէս՝ ըստ Հոգւոյն դաստիարակութեան :

1816. Յայսմ ամի եկն յլջմիածին մեծանուն Արդապետն Առաքինութեանց Պօղոս Դարակաղցի , որոյ անմահ և Հոգերուղին դաստիարակութեան յանձն եղեն բազումք ՚ի պարոց և ՚ի սարկաւակաց ուխտին Արբոյ յլջ-

միաձնի։ Այլ ինձ, այն զի ահօրինեալ էր
տեսուչ իմ, ի մեջ աղբերացն ծաւարի՛ պառ-
քեցուցանել, առ ի թեկն տարոյ կուրութեամբ
մտաց՝ ընդ օրինակութեան կմնդակացն և եթ,
խնայեցաւ մուտ առ նա : Յետ բաղսւմ աղեր-
սանաց և խնդրուածոց, իբր ոչ կարացի զիջու-
ցանել գանդամնդի սիրտ նորաւ խոյս տու-
եալ փախեայ յԵրեան : Օ Հետ եկին խնդր-
ակեք ։ վերադարձուցին, ի կախաղան պնդե-
ցին, և ի Հարուածս անսղորմ գանից թափե-
ցին զեղեղունս մտանց ոտից իմոց : Բայց և
այնու սաստկացուցեալ զիրն՝ Հասուցին յո-
կանջս Երանեալ Հայրապետին մերոյ Եփրե-
մայ, որոյ սիրտ իբրև սահան միշտ ի ձեռին
Աստուծոյ՝ շարժեցաւ դոդջիր աղղմամբ շնոր-
հացնորա՚ի դութ յանձն ցաւալից . և կոչեալ
կացուցեալ զիս յանդիման պատկառելին
երեսաց, “ Օ ի՞նչ խնդրես՝ տասց : “ Տէր,
դուսումն գրոց ,” պատասխանի արարի Հեկե-
կանօք սրտի իմոյ, և սկսայ լուլ : “ Ո՞նդ էր ոչ
ուսանիս զԵարեկ, զոր վարդապետ քո կամի
դաս տալ քեզ, — “ Դիտեմ ես զԵարեկ, և
եթէ Տէրութիւն ձեր Հրամայիցէ, կարեմ
Տերամբ՝ զբաղսւմս ի գլխոցնորա Համար տալ
առանց գրոց : ” Ակնարկեաց նա առ Յովհան-

նէս վարդապետ՝ որ լնդ անկարելիս դատեւ-
լով զայս՝ ասաց. “Խմ չիք բնաւ ուսուցեալ
դմա, և թուի իմն եթէ Կարբեցի խաբէու-
թիւնք իցե՞ն յօդածոյք դորաւ” — Խոկ որրոյ
Հայրապետիս մերոյ բարեգոյն ևս կշռելով
զյարդ պատկառելի յանդիմնեսութեան իւրոյ՝
քան զմեզ, հրամայեաց Վաերփաննոսի Եղիս-
կոպոսի Եղիսովքեան Տփղիղեցւոյ՝ Առենագորի
իւրում, քենել և տեսանել զիս : Առաջի
որոյ անաղալ արտասանելով զՁոյն Հառա-
չանաց, զԵւարդ ՚ի վերոյ այսքանեաց յու-
սահատութեանց, և զկէս Գումարքին խմբից՝
մկայեցայ առաջի Հայրապետին զիտել ըստ
արժանւոյն զԵւարեկ : Ուստի կոչեալ դառա-
ջեաւ զայրն Աստուածառաք զՊօղոս Վար-
դապետ Պարագաղցի, յանձն արարնմա զիս.
պատուէր հրամանի ՚ի վերոյ եղեալ՝ զի զուն
զործեսցէ հրահանգել զիս յարհեստ քերա-
կանութեան. որքան փոյթ և հնարին ինչ իցէ :
Յառուր՝ յորում մտի ես լնդ աստուածաշնորհ
դաստիարակութեամբ վարդապետին ճշմար-
տութեան, թիւ աշակերտաց նորա Հասանէր
յութնեւտան ոգիս ՚ի սարկաւագաց և ՚ի դըպ-
րաց անտի չափուհասիցն : Որոց ամենեցուն
վերջին գտայ ես՝ ոչ միայն Հասակաւ և ուս-

մամբ, այլ և վիճակաւ կենաց խմբ և Հանգամանոք կարեաց և կարօտութեանց, Ա ասն զի նոքա լաւագոյն ևս բաղտի վիճակեալք, կամ ՚ի ծնողաց կողմանեւ, և կամ ՚ի մեծահարուստ աերանց իւրեանց, ՚ի վարդապետաց ասեմ և յեպիսկոպոսաց՝ ստէպ ստէպ մեծարէին զերեսս վարժապետի իւրեանց պատուամատոյց նու իրանոք, իսկ ես՝ որ յերկոցունց ևս վերջացեալ՝ աղօթիւք հոգւոյ դիստուած ՚ի վերուստ, և հլու հնազանդ սպասահարկութեամբ զվարժապետ իմ ՚ի ներքուստ շարժեցի յողորմութիւն ՚ի վերայ իմ,

Անաչառ ոք գոլով սորա՝ զերեսս ուրուք ոչ պաշտէր, և ոչ առ պատարագս ամբարտաւանութեանցն հոգի նորա զիջաներ + Եոր ոնն եղեալ զոդջիր կրետիղայոս, առաւել արժանաւորագոյն համարէր զգոյզի ինչ առաքինութիւն յաշակերտ իւր, քան զամննայն ոսկի աշխարհիս + Ա ասն որոյ և յամենայն գնացս զարառուզիս նոցա՝ զուզողութիւն մուծաներ, և ՚ի նժկահելք՝ ասսաիկս կշամամբէր երկիւղիւ Տեառն : Այլ նոցա մի առ մի յոտն հարեալ զիրատ բարութեան նորա, որպէս և զկաթե պարաբռութեան, որ հոգւոցն տայր սնունդ, հետ զհետէ թիկունս դարձու-

ցին նմա, և սկսան սկծանել զայրն տօնելի ։
իբր թէ բիրտ ոք իցէ նա, անտեղեակ կար-
գաց քաղաքալարութեան : «Ա» շատք այնք
է ին՝ որք ամաչիմ արդարեւ գրել, իմաստակ
անտառոյին զնա կարդոյին, ունչս զնովաւ-
արարեալ ակն յանդիման աչաց նորա :

Խակ ես, յետ զամենայն զհարկ գրութեան
կոնդակացն ինձ պատկանելոց, և զառտնին
սպասահարկութիւնս Յովհաննեու վարդապե-
տի անովթար կատարել յ, (որ զայսու ժա-
մանակաւ և ևս խստէր և ծանրացուցանէր
ինձ,) կանիսէի յորժամ և ձեռնհաս դտանէի,
ի կամակար պաշտօն Հրեշտակիս ի մարմի .
և 'ի պակասել կարեաց՝ անկեղծութեամբ
յառաջ մատուցանէի նմա զյօժարութիւն
կամաց : ԱՅԼ ոչ ընաւ փոշիմանեցայ . զի
քանի որ յիս գամ զարդիս՝ առաւել ողբամ.
զի ոչ կարացի պաշտել զայրն Աստուծոյ՝ որ-
պէս արժանն էր :

Օ երկուս և եթ արժան համարիմ պատ-
մել զանցիցն՝ յօրինակ Քրիստոնէական հե-
ղութեան և ըստ Հոդոյն վարդապետու-
թեան առնա տօնելոյ : Ո՞ի զի յորժամ
զառսջինն ընակութեամբ հաղորդեցայ լնդ
նմա, և ոչ կարէի ննջել . ասաց ցիս . չնեջես

որդեակ : Պատասխանիցի՝ ոչ, և ապա ժողովրա-
հեցայ հարցանել յիս, թէ գիտելը զպատ-
մութիւն ինչ : Յետ սակաւ մի խորհելոյ՝
ասաց, գիտեմ : Պատմեա զի ննջեցից* ասացի
յիս : Եւ նա սկսաւ պատմել ինձ յԱբրա-
համել, մինչև ՚ի վախճան Յօվանեփայ, այնպիսի
ինն պարզ ոճով, մինչ զի ՚ի միւսումն երեկոյի
դարձեալ ես ինքնին պատմեցի նմա գրեթէ
՚նուլին բառիւք՝ անովթար և անմիջահատ :
Եւ այս էր սորա ոճ ուսուցանելոյ . որ այն-
քան խոր ազդեց ՚ի միտս իմ, մինչև անհնա-
րին լինել մոռացութեան բառնալ զայն յու-
շյ իմմել :

Երկրորդ՝ զի տայր ինձ յերեկոյէ յերեկոյ
ընթեռնուլ զԱստուածաշունչն ՚ի ձայն . և
ինքն ելաներ արտաքս՝ յայցելութիւն եղբարց,
ստեղ գալով և ունեին գնելով ձայնի իմում :
Եթէ գտաներ զիս եռանդուն ՚ի կարդալու՝
քաջալերէր . իսկ թէ թոյլ՝ խրատէր սիրով :
Յաւուր միում իբրև նա յապալեցաւ ՚ի

*Այս ախտ զրեթէ ՚ի տղայական տիոց ախտացայ . յորժամ ՚ի
զիրկս աղջկանց Հանւոյ իմայ՝ կամ հաւասարաց նոցին , ըն-
դունէի զանունդ . և այնքան պինդ զհետ զակատեցայ՝ մինչ
բազում անգամ հանել և տալ զհանգերձս իմ որոց պատմէին
ինձ նորս և հրաշալիս :

դալն, և ես գլուխ եղեալ ՚ի մէջ բաց Առւրբ
 Գրոցն զքնով անկայ՝ աշտանակն ընթերակոյ
 խորտակեալ այրեաց գողջեր զկէս Գրոցն՝
 մինչեւ եհաս հուրն ՚ի գլուխ իմ, և զարթոյց :
 Յարուցեալ ահահար և գողահար շուարեցայ
 ոչ գիտելով զգլուխ իմ դապել, եթէ զԱռւրբ
 Գիրսն : Խրբե եկն երանելին՝ ՚ի խանձահոտոյն
 զգացեալ՝ հարց ցիս զիրաց իրայն պատահելոց,
 և ես սկսոյ հեկեկանօք ասել ցես զՃշմար-
 տութիւն անցիցն : Անխռով պարզութեամբ
 ոգւյ դարձոյց անգրէն երանելին, “Այդ
 ինձ ուրախութիւն է որդեակ, զե ՚ի վերայ
 Ճշմարտութեան նահատակեցար, թէպէտե
 փոքր մի զգուշութիւն և զքեղ փրկէր, և ըզ-
 Գիրքն Առւրբ : “Դու միայն կարդա . Առւրբ
 զիրք ոչ պակասին քեզ,” Օ ոյս ասացեալ
 Հան յարկեզէ իւրմէ զոսկետուփ Աստուածա-
 շունչ մի՛ և մատոյց ինձ, ասելով, “Առ,
 տղքատութիւն իմ որքան և իցէ, տակաւին
 բաւական է հոգալ վասն հոգեսոր մննդեան
 քո :” Երանին որոց այսպիսի վարդապետի
 աշակերտեցան դասախարակութեամբ : առա-
 ւել ինչ ոչ ասեմ :

Խրբե այսօրինակ աստուածային տեսչու-
 թեամբ Հրահանդեալ ՚ի նմանէ՝ ուսայ լստ

մասին զարտեստ քերտականութեան Հայկական բարբառոյ՝ յանբարեխառնութենէ տօթագին օդոյ ամառանին Աջմիածի, ախտացեալ նորա յազտա տեհնդի և զերման, Հրաման առ ի Հայրապետէի Արքոյ մերմ, գեալ թնակել ի վանս օրբոյն Յակովբայ՝ որ յԱրկուոի, առ ստորատով Մասսեաց լերին: Ճամ Հատանէր ինձ այնուհետեւ ի մի վայրկեան կորուս ոսնել զամենայի պտուղ վաստակոց իմոց, և զկուրութիւն յաւիտենից կուրանալ, եթէ չեր աղգեալ վերին խնամց ի սիրտ Հայրապետին Եփրեմոյ, ճանապարհորդակից առնել նմա զիս, ի պատկ կատարածի կրթութեանց իմոց: — Բայց նախ

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴԻ:

Դիւշ բաշտին Վաղարշապտոս, աւողագրական ժոհօթութիւնն Ասբոյ և միաժնի, այլ և այլ պարտգային Հանդեւը:

Դիւրք դաշտին Վաղարշապտոսյ ընտ արդի երեսութիւն նորա, ազատ և յամենայի խրթնաքանութեանց նախնեաց, է ձուաձե իմն, տարածեալ ի գետույն * յԱրփայ Վոյց

*Այս երկու գետք, Ախուրեանն և Արփային՝ միանուն Արփայչայ կոչին ի բարբառ ժամանակիս, այլ ինձ ընափառանի՝ զԵհրակայն Ախուրեան պահել, որ անկանի ընդարե մուտք ի Եփրակ, և զԱրփային՝ յարե ելս Եարութայ. Առ առ նորաշն զիւղիւ, խառնի յԱրտախ' ուր կայ և աւերակ Կոմը ջին Արտաշատու:

Ճորոյ ցԱխուրեան Շիբակաւանից՝ ընդ եր-
 կայեռութիւն յարեւելից յարեմուտս : Եւ ՚
 Վասսեաց ցԵրիս Արագածոյ՝ Արայի՝ Ա-
 պարանքն անուանեալ տեղի, և յԵրեան՝ ընդ
 լայեռութիւն : Տրամադիծ երկայեռութեան նորա
 ձգեանդր քան զՀրասախս 48. իսկ լայեռութեան՝
 իբրև 30: Յարեւելից Հիւսիսոյ՝ Ճնշեն զնա լե-
 ռինք Պառնոյ, Ա այոցՃորոյ և Ասպա-
 ռակայ՝ որ ՚ Հիւսիսոյ Շարուրայ . իսկ ՚ Հա-
 րաւոյ՝ յայենկոյուգետոյն Երասխայ՝ բազուկք
 ինչ մեծի լերինն Վասսեաց : Յարեմուից
 հարաւոյ՝ նոյնալէս արեմուեան բազկունք
 Վասսեաց, իսկ ՚ Հիւսիսոյ՝ արեմուից Արա-
 գածածին ըլուրք Թալին ~~Թալիշ~~ և Վաս-
 տարա գիւղօրէից Կապուտան Հանդերձ լե-
 րամբ : Այս գաշտ ընդարձակ, Հանդիսարան
 մեծ աստուածեղէն շնորհաց առ ազգս մարդ-
 կան, թուէր իմն թէ խորհրդով առ յինէն
 ժուածեն անունն ընկալաւ, թէ և որորոցածե
 ասել յարմարաւորագոյն ևս էր : Ա ան զի՝
 որպէս թոչունք ՚ ճուոց, նոյնալէս և նախա-
 հարք աղջ ի մարդկան ՚ տապանէ անտի ելեալ
 յետ համաշխարհական ջուրցն հեղեղաց՝ լցին
 զաշխարհ ամենայն : Որորոց արդարեւ արժան
 է կոչել զսա հանուր աղջաց և լեզուաց, որք

՚ի սմանախ ընակեալ, իր ըետ տղայք յորորանի
 աճեցան յարբունս կատարելութեան Հասա-
 կաց իւրեանց . և ելեալք ցրուեցան ընդ հե-
 ռաւոր ծագս աշխարհաց՝ Հայթայթել զպա-
 րէն կենաց : Աստ նախ յարոյց Հայաստան
 զսեղան ուրբութեան իւրոյ, և աստ Հաշտեաց
 զՏէր ՚ի նուէր պատարագաց Հաճութեան
 նորա : Որով զերկիրն անիծեալ առ Ադամաւ
 նախահարբ աղգի մարդկան, առ Եցիւ օրհ-
 նեցաւ՝ երկրորդաւ նորուն : Աստ եղաւ
 աղեղն յամսս ՚ի նշան յաւիտենից Հաշտու-
 թեան : Ոչ անկարկիցէ թերեւս նշանդ զգալի,
 Խմանալի՝ Օսիածածին ծագելոյ ընդ ամսս
 երկնից՝ Անեարարին մարդկութեան . որոյ
 մարմնառիկ տնօրինութեան և հրաշագործ
 տստուածութեան երեւելոյ ՚ի մարդկույին բը-
 նութեան՝ անդրանիկ գտաւ Հայաստան ՚ի
 Հաւատացեալս ամենայն, և նախաձայն երա-
 նութեանց Քրիստոսի ժառանդորդ՝ պատա-
 րագօք մոգուց իւրոց, և Հաւատովն Արդարու-
 թագաւորիս մերոյ : Որով ընդարձակեաց
 Տէր Յաթեթի, որդւոց ասեմ Հայկազանց,
 և ընակեցոյց ՚ի տան Աեմայ՝ յեկեղեցի Աս-
 տուծոյ . կտոմ լաւ ես՝ ՚ի նոր արքայութեան
 Աստեղն Յակովբայ ծագելոյ ՚ի տանէն Աեմայ,

ակնկալութեան ամենայն հեթանոսոց : Եսու
 նախ Արկուռի նախահայր հերկոց աշխարհի ,
 և ի գիււոյն անուշակ արքեալն՝ և զմայլեցաւ :
 Մարտին Քահանայ Անդղեացի , որ զաւե-
 տարան փրկութեան մերոյ թարգմանեաց ՚ի
 Պարսիկ լեզու՝ յանցանել իւրում ՚ի Ծիրա-
 զայ ՚ի Ծարուր , և ՚ի վսեմիցն զարթուցեալ
 տեսարանաց Ահեղափառն Մասսեաց և դաշ-
 տիս առհասարակ՝ բարեպաշտօն իմն խորհըր-
 դածութեամբ ՚ի մէջ բերէ զբան իւր՝ զայս
 իմն ձե օրինակի , յասել իւրում : “Այսոքիկ
 մեծամեծ պարարտութիւնք երկրի բեղմնա-
 րարք արմտեաց սորա , և այն ահեղափառ տե-
 սարան հնոյ որորանի մարդ կութեան , յանդի-
 ման կացուցին . ասէ , մտաց իմոց զԱստուած
 խոնարհեալ ՚ի պատարագս Կոյի , օրհեել
 զհերկ և զհունձ :”— Վասն զի այս դաշտ
 ըստ արդի առման իմոյ , պարունակիէ դետս
 մեծամեծս և փոքրկուս աւելի քան զքսան և
 չորս : Որոց ընականաբար և արուեստահնար
 ռռոգեալ զնորա զիւրաքանչիւր մասնաշափ ,
 տռնեեն զեա հանդիսարան բուսական բերոց :
 Լերինք նորա մեծամեծք բաց ՚ի հանքացն
 պիտանեաց ոսկեոյ աբժաթոյ , երկաթոյ ,
 պղնձոյ , և աղիք ունինք կծծումբ աղնիւ ,

և զածուխ հանքացին : Խսկ Ժավկանց պիտառնեաց նորա՝ չիք թիւ :

Ա. Ա. Ճանապարհորդի վիճակեալ մասին
քան զաշխարհագրի , ոչ մանրանեամ աստանօր ՚ի քնին իւրաքանչիւրոց ՚նոցա . զբկ պատահեալսն ինձ՝ շատ համարելով ստորագրել կարգել 'ի կարգէ՝ ըստ գիպաց :

Լ. Հ. Մ. Ա. Ծ. Ն. Ի. Ն. 'ի հնումն Հայաստանեայց անուանէր այս տեղի Արտիմէդ . գուցէ 'ի կոոց անտի յայդ անուն կոչեցելոյ , զոր ընդարձակող աշխարհատակետական իշխանութեանս Հայաստանեայց՝ Արտաշէս , բերեալ 'ի Կապագովիից կանգնեաց 'ի սմին : **Ա.** ասն զի 'ի տաղաչափ բանսն Գրիգորի Արդիստրոսի , անուն այսորիկ կոոց ՚նախադաս թուի քան զԱ տհագնին մերոյ , ՚նախաստուածացուցեալ Հոկային Հայաստանեայց :

“**Օ** արտիմեգեայ և զԱ տհագնին : ”

Ա. պազօր իմն թուին ինձ ընդ իմութիւնք մշրկածոյս , իբր այն թէ՝ Արտիմէդ ՚նոյն կուռք լեալ իցէ , զոր ապա պաշտեցին Հայք Անահիտ անուամբ , իբրև զտիկին երկնից , կամդժիւյ Հայաստանեայց : **Ա.** ամս զի , ՚նախո՛որ Պէտմէտրա կամ Պէլիցամայր որ առ Յանս՝ իդական անուամբ , առ ՚նախ-

Նիս մեր արական սեռիւ ճանաչեր՝ Ապանդարամն անուն. որոյ տօն 'ի սկզբան Կաւասարդի հուշակաւոր լիներ յոյժ յաշխարհի մերում։ Եւ երկրորդ զի՞ զի՞ կոյր ընդ բնիկ կալուածոյ նահապետական նախահարց մերոց, և ընդ այլազգական բառիդ Արտիմէդ։ Առ 'ի գրգիռ հնասիրաց յաւետ՝ զայս այսպիս կարդել բարւոք գտանեցայ, տպա թէ ոչ Արդ Ա'կդայ կամ Մեդայ, իբր Մարաց նահապետի նախ քան զաշտարակին՝ յայտնի ևս անուն համարիմ նորա :

2. Ապա ըստ գրելոյ Խորենացւոյն, “Հատուած գնացեալ Վարդգէս Մանուկն, 'ի Տուհաց գաւառուն՝ եկեալ նստաւ զՇըրէղ բլըով, զԱրտիմէդ քաղաքաւ, զԲասախ գետով, կռել, կոփել զգուռն Երուանդայ Արքայի :” Աս նարոգեալ զայս քաղաք, կոչեաց յիւր Աւան Վարդգէսի, ուր ընակեցուցեալ յետոյ միջնոյն Տիգրանայ զգերիսն Հրէից՝ արար քաղաք վաճառաշահ։ Խոկ 'ի Մերջոյ՝ Վաղարշ Արշակունի սլատեալ պարսպօք, և պարկէն խրամոց շուրջանակի փորեալ՝ անուանեաց յիւր անուն՝ Վաղարշապատ։ Արքայանիստ մայրաքաղաք համօրէն Հայաստանեայց,

թակետե՛ զարդիս և ուրուական ստուերք
նախնի շքոյ և մե ծափառութեանց նորա ան
զամ չերեին, սակայն և այնպէս՝ միտ եղեալ
բնիկ հանգամանաց արդի գրեց նորա և գրու-
թեան Ազաթանգեղայ և Խորենացւոյն՝ նըշ-
մարանս ինչ ՚ի վեր հանել մարթասցուք :
Եկեալ ասէ Ա արդգէսի նստաւ զԸ ըէզ
ըլրով, զՔասախ գետով : Արդ Քասախ
գետ ելեալ ՚ի Բաշ* Ապարան կոչեցեալ
մասանց Արագածոյ ընդ ձորն խոր Ապրը-
ւոյ, Աշտարակայ, Աշականայ և Աշոյ՝ գայ
՚ի դաշտ Արարատեան, և գեպ ուղիղ ընդ արե-
մուտս նորա ընթացեալ՝ խառնի յԵրասխ
գետ, իբրև երկուց ժամաց ճանապարհաւ ՚ի
պարսպէն Լջմիածնայ :

Խսկ Ը ըէզ անուն բլուր, կամ բերթ, ոչ
ուրեք է տեսանել յայսոսիկ կողմանս, եթէ
չէ Կոնդն Արանէից կոչեցեալ, որ անկանի

*Ապարան և Բաշապարան միով Անուամբ Ապարաներ,
սկսանի ՚ի վերուստ Սաղմոսավանից՝ Արագածոտանն, և ձգի
մինչ ՚ի Տաշերս կամ ՚ի Բամբակածոր, և թուի զու Աշոցաց
դաւառն հնոց : Եթէ իցեն ապարանք ՚ի Կախչուան, ՚ի Մոկս,
և յայլուր, տակառին այս սարադաշտ բարեխառն, ընդարձակ,
սիզաւէտ և լի որսովք և էրէովլք՝ ապարանք եղեալ թագա-
ւորաց և չայրապետաց մերոց՝ նոյն խսկ աւերակք նոցին ցու-
ցանեն մինչև ցայսօք ժամանեակի :

ընդ մէջ Եղմիածնի և Մօլլադուրսուն գեղջ՝
 ընդ ձանապարհն Ոշականայ՝ իբրև փարսա-
 խաւ միտվ Հեռի ՚ի Վաղարշապատայ՝ ընդ
 յարեմուտս Հիւսիսոյ նորա ։ Աւղղակի Հիւ-
 սիսային գիրք նորա , եթէ ՚ի վկայարանաց
 առցուք Հոփսիմեայ , Շողակաթի Մատ-
 րան Մարիանեայ և այդ եստանեայց՝ կարե
 անձկանայ , թէպէտե Հարաւային տարա-
 ծութիւն նորա ձգեալ երեի անդր քան լզ-
 բերան Աառն Քանեքանին , որ բղխեալ ՚ի
 ներքուստ մեծի եկեղեցւոյն Եղմիածնի յտ-
 ագոյ սեղանոյ Արբոյն Ատեփանոսի , ստորերկ-
 րեայ ջրանցիւք երթայ ելանէ մերձ յարօտս
 Շորլուայ , Հասարակօրէն կոչեցեալ՝ Շոր-
 լունի Չիման : Չոսոյն յայտ տանեն աստ
 և անդ մնացորդք աւերակաց , և մերթ ընդ
 մերթ պատառուածք ստորերկլրեայ շինուա-
 ծոց , զտեղի կալեալք յոռոգանելոյ Հերկո-
 ղաց զանդորայ իւրեանց : Թէպէտե վկայա-
 րան Արբոյն Գայլիանեայ ընդ մէջ սնկեալ՝
 դերեւել թուի զայս անմոլար յայտնութիւն
 Խոկ յարեւելից Եղմիածնի , ընդ գիծ կեղ-
 ըսի տարածութեան միջոցին՝ որ անկանի ընդ
 մէջ Հոփսիմեայ և Առապարին Արբոյն
 Գրեգորի՝ յայտնի երեին հետք պարսպաց

Նախնառյին Վաղարշապատայ. զորովք քերէ միշտ
առու ակ աղօրեացն Հռիփսիմեայ, և թու ի թէ
յանցանել ժամանակաց իսակառ ողողեսցէ
ի միջոյ զամնշմարանս նոցուն. Մանաւանդ
այսու հետեւ, յորում ամբոխ գիւղաւանին
բազմանայ, և օր լստ օրէ յաճախէ ղհերէ
և զայգեգործութիւն իւր. Արդ՝ գիրք մայ-
րաքաղաքին Վաղարշապատայ սկսեալ յե-
ղերց անտի Քասախայ ցԱրեգ զուռն քա-
ղաքին, երեխ յետ երկու հրասախաւ երկայն,
իսկ լայնութիւն նորա 'ի վկայարանէ որբոյ
կուսին Հռիփսիմեայ ցվկայարան Գայիանեայ,
հաղիւ կացո ցանէ զմզոն մի և կէս. բայց
թէ առցես զբլուրդ Ծրէզ, այժմ Արանեից
կոնդ կոչեցեալ, և զբերան Ասոն Քանքա-
նին. սասանայ քաղաքն զձեւ եռանկեան հա-
մեմատ գրից նախնի աւերակացն Արմաւրայ
մերոյ, Ալինուէի, Տիսբոնի և Բարելովի,
Եւ այս ձեւ եռանկիւնի շինուածոց գրեթէ
յատուկ էր նախնեաց՝ որք պաշտէ ին ցԱրա-
րին 'ի հուր, և ամենայն ինչ 'ի նոյն ձեւ
յօրինել ախորժելով ընտրէին :

Եւ լստ այսմ, նախնի գիրք լայնութեան
նորա երեխ տարածեալ 'ի Ծրէզ կամ յԱ-
րանեից Առնդէ մինչեւ անդր քան զվկայարան

Արբոյն Գայիսնեայ : Ո՞ւք ապացոյց հզօ-
 բագոյն 'ի Հաստատութիւն առման այսորիկ՝
 քան եթէ աւանդութիւնն 'ի հարց և 'ի Հա-
 ւուց յաջորդաբար ածանցեալ առ մեզ, եթք
 թէ տեղին, ուր յետոյ կառուցաւ Թղղթա-
 րան Արբոյ Եշմիածնի, որ Քաղղխանա և ս
 ահուանի՝ լեալ իցէ տեղին ապարանից Տրդա-
 տայ և նախնեաց նորա : Ա Ճիւս ստորագրու-
 թիւն Արկի, յարկի՝ կամ ապարանից ար-
 քայից մերոց՝ մի միայն Երաւանիաշատին յի-
 շատակի առ Խորենացւոյն, որ միահազըն
 ընդ Արկից կամ ապարանից արդի արքու-
 նեաց դրացի Թղղաւորացն համեմատելով՝
 գտանեմք զի տեղի նահատակութեան Արբ-
 ոյն ոչ էր առ դրամբ քաղաքին Ա աղար-
 շապատայ՝ այլ մանաւանդ առ դրամբ ապա-
 րանիցն Արքոյի, Քանիզի ոչ եթէ սան ոլո-
 րոյն ածաւ առ վարդապետուհին իւր, զի
 ընկալցի դյորդոր կամապաշտութեան արքոյի,
 այլ վարդապետուհին առ սան իւր : որ տա-
 կաւին յասրաբանան էր ընդ արքային արքե-
 ցելոյ գեղով նորա : Խղձ նորա անզուսպ,
 ամբարտաւանութիւն նորա խցուտեալ, “զօ-
 րութեամբ պերճոցեայի Արքայ ՚ի մանուկ
 կուսէն պարտեալ” ոչ մանրանայր ՚ի տեղին :

շատ էր՝ զի Հրաման տայլը, և շատ էր՝ եթէ
և ընդ ապարանիսն արտաքս Հանելին զնա :
Ու է Հրան մայրաքաղաք է Պարսից շուրջ
պարսպեալ ամրոցոք՝ բայց Արկ կամ ար-
քունիք Շահին (իսկապէս Հայ անուն), կայ
'ի միջի միջնաբերթին՝ որ ՚ի նմա, և ամենայն
սպանութիւնք լստ մեծի մասին առ զրամբք
այսր միջնաբերթի կատարին :

Ո արդիս Հինգ Հարիւր տունք Հաղիւ
քնակին յաւանին՝ շեղջակոյտ իրար վերայ,
անձոռնի իմն խռնութեամբ, բայց և այն
ուկս զբաւական տեղի գրաւեն՝ ի Հիւսիսոյ
Եջմանի : Ուր ապա քնակին երբեմն Հա-
րիւր Հազարաւոր գերդաստանք նախնեաց՝
եթէ այնքան անձուլի իմն էր նիստնորա՝ որ մինչ
'ի Հռիփսիմնայ ՚ի Գայիանէ Հաղիւ տա-
րածէր, Ճամանակն տակաւին յայտնելոց է
զստուգութիւն վարկածոյս այն է՝ թէ արևե-
լեան գիրքնորա յԱռապարէ սրբոյն Գրիգորի
տարածեալ իցէ երբեմն մինչև ՚ի Վասարի
ընդ յարեմուտու, և ՚ի Շրէզ Բլրոյ մինչև
'ի ծիր Ասոն Վանքանին՝ ՚ի Հիւսիսոյ ընդ
Հարաւ : Եղեն այս ոմանք ՚ի մատենագրաց
մերց, որք զԱռուրբն Գրիգոր ՚ի քաղաքին
Վաղարշապատաց եղին, բայց այս ոչ է

ատոյդ. զի Առապար Ալբոյն Գրիգորի անկանի
յարեւելս, յայդեստանեայց անտի ց՛ը բէզ բը-
լութնի Հիւսիս, Հասախ գետն յարեւմուտս,
իսկ Ասոն Հանքանն ընդ Արօտին Շորլուայ՝
ի Հարաւ,

Բաց ի Հասախ գետոյ՝ որ անկանի յարեւ-
մուտս նորա, և ի կրկին Հանքանացն Խջ-
միածնի, որոց մին, այսինքն Ասոն անուա-
նեալ քանքանն որ անպիտան եղեալ կարծի քա-
զաքին միանգամայն, ոչ ինչ այլ վտակ կամ
առու երեխ յայսոսիկ կողմանս. յարեւելից՝
ցհրասդան գետ, յարեւմոից՝ ցՓարպւոյ գետ.
ի Հարաւոյ՝ ցԵրասխ մեծ, և ի Հիւսիսոյ՝
ցԵղուարդ : Ապա ժոր սուզաւ Ուսհ անուա-
նեանն գետ յիշատակեալ ի գիրս նախահարց
մերոց, Հաղաք այնքան մեծ որբան էր Ա-
ղարշտպատ կամ գաշտ այնքան լի բնակչօք և
բերբի, որպիսի էր այս ընդգարձակ հանդիսա-
բան բնութեան, զիանը կարէր բաւարարիլ
դուզնաքեան վտական Հասախայ, որ և ի
ժամանակի իսկ մերում բազմիցս ցամաքեալ
դտանի՝ ի միջոցս ամառան : Առ հթէ կամիս
նոե զայն՝ զի մեծ մասն Արագածոտնան՝ ընդ
որ անցանէ այս գետ՝ այժմ աւեր է, որ եթէ
չեն լինէր՝ ոչ և արտօսը մի ջրոյ փրկէր զեղուլ

՚ի լաօնաբհ. ուրեմն զհետ գայ յարել, զի ամեներան նախնիք մեր յայլուստ փոյթ կալան ըսուլ զոյս պակասութիւն վտակելով զՈւահ յԱրագածոյ ստանէն մինչեւ ցԵրասխ. զի Առւրբն Վեսրովք՝ որ ՚ի միջագետաց դայր ՚ի Ապարշապատ՝ անդը պատահեցաւ Արքայի և Աւագանեւոյ նորա՝ ընդ յառաջ ինքեան Խսկ այն՝ որ յիշէ թէ Կերսէս Շնողն ջուր ածեալ ՚ի Քասախ գետոյ զամենայն տապախիր գաշտավայրն՝ ՚ի գործ արկանէր, իմանալի և վասն Հրասդան գետոյ, և ոչ վասն Քասախայ. Կախ՝ զի Քասախ չունէր յայնժամ, և չունի այժմ իսկ՝ ջուր բաւական յընթացս իւր՝ յամառան. Եսկըսրդ՝ զի չիք նշան առուից կամ ջրանցից. ոյլ առուն գետ հանեալ ՚ի Հրասդանայ՝ որ թէ և չոր զարդիս երեխ մինչեւ ցայսօր ժամանակի սկսեալ ՚ի Օ. ակքարէն՝ որ ՚ի ներքոյ Օթիծառնաբերթին և ընդ Երեքըլութն անցեալ՝ որ կոչին Խւչ Թռափէ, առ ՚ի շեղ ճանապարհին՝ ընդ Փարաքոր գիւղ կամ * “Փրփրափար,” գոյր զեղոյք

*Գիւղ պարսպաւ որ ՚ի մ.ջ Ճ անապարհին Վաղարշապատայ յԵրեան, զոր ռուզանէ առուն հանեալ ՚ի Հրասդանայ. Ունի ՚ի վերուստ դերի զմանատանն յառապարին ըստ հիւսիս՝ հանքին կաւօճառի, զոր գիւղ կոչին Պարսկերն. որ այն զի՝ սրպէս ոճառափրիքոյ, և ինքն որպէս քար է, վանորոյ և ես ՚ի Փրփրաքար ստուդարանեցի, յոր և անուանակոչեալ իսկ համարիմ:

ի “լիճն Քահանայի” և արգաւանդէր զԱռատարհնե աւազախիր, յայսնի երեխ յաւերածոյն մինչ ցայսօր ժամանակի :

Լուսաբանութիւն խնդրոյս պարտական է Յուսէյն Խան Բողեշխին Երեանայ . յառաջ քան զշաղթուի Խուսաց : Օ ի Արբաս Միրզա, բազմութեան որդւոց Բարախսնի Ֆատալեայ Արքայի Պարսից Նախագահ և աթոռաժառանդ, գոլով իշխանն աչալուրջ և խոհեմ, ընտրեաց իւր զզինուորական մարզս Երոպական Հրահանգաց, ուստի և ՚ի սկսանել իւրում զայն յԱռապատականս՝ Հրաման արձակեաց և ՚ի Նահագս ստորագրեալս ինքեան՝ զնոյն կրթութիւն կրթել զզորս ազգին : Եղբայր Բողեշխիս մերոյ՝ Հասան Խան, գոլով ոյր գոռ և պատերազմանէր, Հաւաքեաց կրթեաց արս իբրև 15,000, և ՚ի վերայ հաւաքեալ Նաև 15,000 ոյր ՚ի խժիցն ոյլազգեաց՝ առանց սոճկաց և թոշակաց միանդամայն, խաղաց Նոքօք ՚ի վերայ* իշխանաց ոմանց Վարաց՝ բոնոցելոց ՚ի սահմանագլուխ խանուն եղբօրն, և ընդ բուամբ Նուաճեաց զամննեսին

*Այս կոիւ ծագեցաւ ՚ի մէջ Հասան Խանի եղբօք Բողեշին Երեանայ, և Իրրահիմ Փաշային Բայազիլեսոյ, մինչեւ եկն Բարս Փաշա Սէրասկար, կալու զիբրահիմ, եղ ՚ի բանդի .

մինչև նաև զփաշայն Ասրնոյ. որովք բազմիցս
և ընդդեմ Որուսացն ահեղացաւ տէրութեան,
Խրբե պահ լինէր, յորում այս զօրք անտե-
ռունջ՝ պարապ ՚ի պատերազմացն դժանէին,
Յուսէյն Խան Ասրդար, դրացի և դիեցիկ
ռուսային խժութեան, լատ անգւած բարոյից
նոցա սկսանէր տառապեցուցանել և՝ զսոսա ՚ի
ձեռնարկս տարժանելիս, թէպէտե յամնեն-
ւին շահաբերս աշխարհին և անձին իւրում:

1814 Եւ լատ այսմ ՚ի դադարել զօրաց
նորա յայսմ ամի, գտեալ ՚ի Հին դիւանաց
տէրութեան Պարսից, թէ վլտակք կրկին,
ամբարձեալք Ճարտարութեամբ արուեստից,
՚ի Հրառդան գետոյ, մին ոռոգէր զբլուրն
լայնանիստ ՚ի Շահառնաբերթէ մինչեւ ՚ի տա-
փարակն Թալարայ, յանդիման ապարանից իւ-
րոց. Հառաբակօրէն Բոլոր կոնդ կարդացել՝
՚ի հարաւոյ կողմանէ գետոյն և կամրջին Ե-
րեանսայ, և միւս վլտակն ընդ Շակկարն ան-
ցեալ “դալմա” կոչեցեալ, և ՚ի հիւսիսային որ-
նարից Երեք բլրոց անցեալ, որք իւչ թափէ
անուանին, երթայր հասանէր ցլ աղարշա-
գքուրտ Արդուլս Աղա կարգեաց փոխանակ նորա իշխան Բայ-
տղիոյ՝ ընտրանօք Բդեշխին Երեանսայ : Խրբահիմ կաշառեաց
պաղատութիւն իւր, և Քուրտ Յոսէյն Աղա տուեալ զդուսար
իւր ՚ի կնութիւն Սարդարին՝ յարեցաւ ՚ի կողմն Պարսից :

պատ՝ լնդ ճանապարհ Երեանայ յԵջմիածին, առաքեաց արս խորհրդականս առ Հոյրապետան մեր Տէր Եփրեմ, “Մեք, ասէ, կարգեցաք յԱստուծոյ և ՚ի թագաւորէն թագաւորաց Պարսից՝ շինել և կազդուրել զաւխարհս այս ։ Արդ՝ կամք են մեր վերսակն ըանալ զգալմայն Հրասդանայ յառատութիւն քերոց և ՚ի միսիթարութիւն բնակչաց Երեանայ, եթէ և դուք զեղոյն խորհեսջիք առնել վճարեցէք իսձ թումանս 2500. և ես բացեալ զԴարմայն՝ արձակեցից առ ձեզ ջուր առատ յաւելորդացն Հրասդանայ, և ծալկեսցի Խւչ քիլիսա սահմանօքն հանդերձ։

Հրաւեր արդարեւ իշխանական, բայց Եջմիածնին զայսու ժամանակու հեծելով լնդ ժաներ Հարկապահանջութեամբք նոցին իսկ Պարսից, որպէս և ընդ պարտուք 40.000 թումանաց նոցա՝ ոչ իշխեր առնել զայս մեծագործութիւն ՚ի ձեռն այսպիսի Ճարտարապետի, որոյ օրէնք էին կամք, և հանապազորդեան ջանք՝ կեղեքանք Հայոց։ Մանաւանդ զի՝ և գերութիւն Հայոց սկսեալ ՚ի Արգուանայ, ՚ի Բագրեանդայ, ՚ի Կարեոյ և ՚ի կողմանց նոցա՝ յաճախեր օր ըստ օրէ, նեղեալ և չարչարեալ ՚ի Պարսից, զորս ոչ

միայն անխնայտքար գնէր և թափէր երանելի
 Հայրապետու մեր՝ այլ և ընդ բազում ամեսս
 կերակրէր և զգեցուցանէր՝ զնոսա մեծաւ գը-
 թութեամբ։ որով ոչ եթէ գահձք Աթոռոյն
 սպառէին։ այլ և պարտք ՚ի վերսց պարտուց
 շեղակուտեալ դիզուին։ Վասնորոյ մեծաւ
 իմն զգուշութեամբ հրաժիշտ տուեալ յայն-
 մանէ սրբոյ մերոյ Հայրապետին, յետս կա-
 սեցաւ։ Խոկ սարդար երաց իւր զգալմայն,
 և զհանուր Բառոր կոնդն, մինչեւ ցԵրեքըլուրսն
 ելից այդեօք որթոյ, և անտառօք պտղաբեր
 ծառոց։ Արդ Ոչահ անտանեալն գետ, ոչ այլ
 իմն երեխ լեւալ՝ քան թէ զմուծիմն առու, հա-
 նեալ յԱրագածոյ ոտանէն առ նախնեօք մե-
 րովք. կամ գետն Փարալոյ, Բիւրականայ
 կամ Ամբերթայ՝ որք հոսին յԱրագածոյ
 ոտանէն յայս դաշտ։ Խոկ այն՝ որ ՚ի վերնակող-
 մանց ճանապարհին Երեանայ ՚ի Վաղար-
 շապատ, միշտ ընդ Հիւսիս լնթանալով գոյր
 հասանէր անդը, և գործէր ՚ի հետմն զիհճն
 ցամաքեալ, որ կայ այժմ ՚ի մէջ Փարաքար
 գեղջ և Լշմիածնի, հասարակօրէն անուա-
 նեալ Քէշիշգեօլի, որ այնէ՝ լիճքահանայի-
 էր առուն Հրտագանայ։

Արդի գերք Լշմիածնի, կայանոյ ՚ի բեր-

Թաղարիսալ արտաքին և ՚ի ներքին : Արտա-
 քին բերթապարիսալ նորա , որ նորոգեցաւ
 յուռուրս Ախմէօնի Կաթուղիկոսի Երևանցւոյ՝
 և ՚ի ձև քառակուսի , փոքր մի խոտորեալ
 արտաքս առ դարբասաւն Եղբի՝ ՚ի հարաւա-
 կողմանէ նորա . որ անկանի դէպ ուղիղ ՚ի
 Թղթարան և ՚ի լիճ գոմշոց : Ատուարու-
 թիւն սղարսպիս այսորիկ , որ ՚ի Հիմանց քա-
 րաշէն , այլ ՚ի վերուստ արեւաթուրծ աղիւսա-
 կերտ՝ հասանէ ցերկու և կէս կոնգունս , իսկ
 բարձրուն ՚նորա՝ ցհինդ . ունելով բրդունս
 հաստակուցյոց յիւրաքանչիւր քարնիկցի .
 իսկ շրջապատ իրիւ չորս մղոն : Չորք մեծամեծ
 գարբասք են սորա . որ հանէ ընդ դիւղաքա-
 զաքն Վաղարշապատաց՝ ընդ Հիւսիս , անուա-
 նի գիւղի գարբաս : Որ ընդ Վաղարապատն
 հիւրանոց՝ ՚ի թղթարան անդք և ՚ի լիճ գոմշոց ,
 Վաղարապատի գարբաս . շնիւալ ՚ի Վաղար-
 կաթուղիկոսէ ջահկեցւոյ : Որ ՚ի մարագաց բա-
 կէն հանէ ընդ կալն՝ ՚ի հարաւոյ յարեկլից ,
 ասի Կալի գարբաս . իսկ որ ՚ի հիւսիսոյ յարե-
 մաից՝ ՚ի գուռն Վաղարապատաց , ՚ի թղթարան
 անդք , և ՚ի լիճ գոմշոց՝ անուանի գարբա-
 Եղբի . ՚ի սակա լինելոյ անդ սեաւ մարմարո-
 նեայ գումբարանի մեծանուն կաթուղիկոսին Հայ-

ոց Տերառն Եղբի. որ 'ի սակա ընդունելոյ իւր
զժողովն քաղկեդոնի՝ յարհամարհանս յի-
շատակի գիպուտածոյն. աստ ամփովիեալ ա-
ւանդի, մակագրեալ 'ի վերայ զհակագարձ
անունն և եթ՝ Եղբ . թէպէտ և ոմանք 'ի
վանս Գայլանէի զետեղել ախորժեցան .
Յարեելից կողմանէ պարապատէ այս պարիսպ
զգուն երիւլարաց և արջառոց Խջմիածնի, մո-
րագօք յարդից նոցա և ամենայն տղտեղու-
թեամբք : Յարե մտից՝ զներսն , անուանեալ
և վեհարան կաթուղիկոսացն Հայաստանի, որ
'ի հիւսիսոյ կողմանէ ընդմէջ արտաքին պարո-
պին՝ ունի զվաճառանցն իսկ 'ի հարաւոյ՝ զրակն
մարագաց, զձիթահանքն մնձ , և զՊ ապարո-
պատ՝ որ պարունակի նախ զվեհարանն յարեե-
լից, առ որով է աւազան ջրոյ և ծաղկոց զու-
արձալի . 'ի հիւսիսոյ՝ զԱնհողոսարան Խջ-
միածնի, և զտալարանն . Առ սովու յարե-
մտից՝ անկանի և բաղանիքն , որ ունի և
դոնակ ընդ արտաքին պարիսպ քերթին, ընդ
որ ընակիչք այժմեան Վաղարշապատոյ մտա-
նեն 'ի լուսնիլ . Ունի և դոնակ առ ներսն 'ի
վեհարանն , — 'ի հիւսիսոյ նր են միաշար և
միայարկ պալատանի , յորս բնակին երեելիք
եպիսկոպոսաց անընդմիջապէս կանխեալքն

՚ պաշտօն Հայրապետին :

՚ Երբեն պարիսալ Եղմիածնի է ամենենին քառակուսի . ունի գարբասս երիս , և դրունս երկու . ՚ ի դարբասից աստի արեմաեանն անուանի Տրդատայ դուռն՝ ՚ ի սակս չորից մեծամած սեաւ կճեայ վիմացն կացուցանողացն ասեմբ զսեամս , զսեմակալ և զբարաւոր այնը դրան , աւանդութեամբ հնոց լնծոյելոց ինքնակիր աշխատանաց որբոյ թագաւորիս մերում Տրդատայ : Երկրորդն՝ Պաղարապատի , ՚ ի հարաւոյ սորա բանի դարբաս մեծառ Թղթարանն , իսկ յարեմտից՝ փռքըիկ դարբաս , որ հանէ ՚ ի ներքինն կոչեցեալ Պաղարապատ , զոր կործանեալ Յովհաննու Կաթողիկոսի կարբեցւոյ՝ շինեաց ՚ ի տեղւոջն խորհրդարան Արևնհոգոսին , և Տպարան ընդարձակ : Երորդն՝ գումի : Չորրորդն՝ ներսի , իսկ Հինգերորդն՝ լուացարանի Արեմտեան մասն այսր ներքին պարսպիս՝ ունի զմեհարան կաթողիկոսին՝ ներս անուանեալ . Տրդատայ դրանքուին , գրադրատունն և զտեղապահարան՝ այսինքն պալատ տեղապահին , զոր կառոյց տեղապահ Մարտիրոս Արքեպիսկոպոս . որ երկրորդ էր կաթողիկոսին իշխանութեամբ և պատուով : Արեւելեանն՝ զիուռնն , զՃիթ-

տունն, և զիսուցմն արեղայից՝ մինչև ՚ի գուռն
 լուացարանին, որոց ՚ի վերուստ շինեաց մեծ-
 անունն ՚Աբրոէս Արքեպիսկոպոս զվարժա-
 տուն ՚Նշմիածնի՝ ՚ի բազում սենեակս, ՚ի պատըշ-
 դամբս և ՚ի գասատունս որոշեալ. այլ ակն
 յանդիման կուակուտակ գոմոց սնանոց և ա-
 խոռոց երիվարաց ջորւոց: ՚Ա երես՝ վասն յուշ
 առնելոյ սրբասուն աշակերտոց նորուն, թէ
 միայն ուսումն էր՝ որ զանազանէր զնոսա յա-
 նասնոց անբանից և ՚ի նմանեաց նոցա, և ոչ
 թէ կերպարան գիմաց կամ տարադ զգեստու-
 ցը: ՚Ա իցի որ ինչ և իցէ դիաումն ազգա-
 սէր Հիմնադրին, տակաւին տեսարանն ա-
 պաշուք, ազտեղութիւնն անտանելի, և Հա-
 նապազորդեան ժահահոտութիւնք նոցա՝ խօ-
 թացուցանելով զմարմին և զմիտս աշակերտոց՝
 զդապահարս ցածս և ստորինս տպաւորէին ՚ի
 միտս նոցա: ՚Ա Հիւսիսոյ՝ միաշար կարգ ք
 իսիցն, մոմատունն Հանդերձ մասնաւոր ցան-
 կապատ պարտիզանով միաբանից, զորս ոռոգէ-
 անձկագոյն առուակ քանքքանին: որ ՚ի կուսէ-
 տեղապահարանին ոլորտեալ Հասանի ցփուռնն
 մեծ: յորոց յերկոսին ծոյրս անկանին արտաք-
 նոցք բազմաստիճանեայք ՚ի բազում Ճեմիս
 որոշեալք: ՚Ասկ ՚ի հարաւոյ՝ ՚ի գլուխ դար-

բառին կ աղարապատայ՝ է մեծակառ-ցյց գըստ-
դարան աթոռոյն, լի ամենատեսակ հնագոյն
գըստագիր մատենիւք ազգիս մերոյ։ Այս սմին
անկանին կըկին սեղանատունք հասարակաց։
յորոց մին է ամառան՝ քարաշէն, և միւսն ձմբան՝
փայտաշէն նստարանօք և սեղանովք։ ՚ի գը-
լուխ իւրեանց ունելով տեղիս մատրանաձես
և գմբէթայարկս, սեղանք կաթուղիկոսի անու-
անեալ. ուր բաղմի նա յաւուրս երեւելիս՝
ձաշել ընդ միաբանիցն իւրոց։ Առ սովառ
անկանի լսուհարանն մնձ, ուր հանդերձի կե-
րակուր միաբանից. Վառնիչյոր պահի սառոյց.
Գինետունն՝ ուր ամանի և պահի գինի, և
մաջնատունն՝ ի թիկանց նորա, Ապա գոմիդաբ-
րասն, և անտի և անդր՝ գարեւունն, որ այն
ինքն է Համբարանոց անամնոց, և բանդ
անասնաբար անառակելոց։

Եկեղեցամայր Համօրէն Հայաստանեայց.
Շողակաթ՝ ՚ի շողոյն լուսոյ յերկնից կաթե-
լոյ ՚ի նա, և Խջմիածին՝ յիջանելոյ անտի
Միածին Բանին Հօր՝ ոսկի ուռամբ ՚ի վերայ
նորա, կառուցեալ է ՚ի կեդրոնի ներքին
պարսպին ՚ի վերայ չորեսին սեանց, Միջին
գմբէթ նորա, յարուցեալ ՚ի վերայ Խջման
տեղոյն՝ է բարձրագոյնն միւս այլ չորե-

յունց գմբէթաց կամ զանկագատանց, կառուցելոց ընդ չորեքծագեան մասունք աշխարհի :

Ունի դրունս երիս : Արևմտեանն՝ կոչի Աւագ գուռն, Հիւսիսայինն՝ Լուսաւորչի . իսկ հարաւայինն՝ Արբոյն Յովհաննու : Արդանք են ՚ նմա վից, Խջմանն անուանեալ սեղի, որ եայ ՚ի միջավայր եկեղեցւոյն, Աւագ սեղանն ընդ արեւելո՛ է յանուն Աստուածածեի : որոյ ընդ Հիւսիս՝ է սեղան Արդւոց Արոտման, և ընդ հարաւ՝ Լուսաւորչին : Գյարձեալ ՚ի Հիւսիսոյ է իննաստիճանեայ սեղան Արբոյ Յախամլային, և ՚ի հարաւոյ՝ Արբոյն Յովհաննու Ակրտչի : ~~Վեղեցիկ~~ քան զամենայն շնուածն՝ է զանդակատունն առաջոյ Աւագ գրան, Համակ քանդակագործ քարամբ, զոր կառոյց Փիլիսլպոս Կաթուղիկոս, որոյ ՚ի միջին յարկի է սեղան սրբոց Հրեշտակապետաց, ուր յամին երկիցս պատարագ մատուցանի, այսինքն՝ ՚ի տօնի Համբարձման Տեառն յերկինս . և Հրեշտակապետաց : Երկու են խորանք կամ աւանդատունք նորա, մին՝ ընդ հարաւ, ուր զգեստաւորի քահանային . և միւս՝ ընդ Հիւսիս, ուր պահին նշխարք սրբոց՝ և զարդք տաճարին :

Տանիք Եղիղեցւոյն շուրջ զմեծ կտթողիկէիւ
 գէպ ՚ի չորեսին զանգակատունսն , ոչ են հա-
 ւաստր , այլ խողակաձև , այսինքն՝ խողի քա-
 մակի , կամ որորոցի ձեւ . զի մի ձիւն կամ անձրե
 ներգործեսցէ ՚ի ներքս : — Բայց որովհետեւ
 ՚ի պատերազմին Պարսից ընդ Ուռւսաց յամի
 Տեառն 1814, գոնդ ինչ ՚ի զօրաց Պարսից
 պահ կարգեալ Արբոյ Եջմիածնի , զտանիս
 եկեղեցւոյն արարին պահակ իւրեանց , և ՚ի
 ցրտոյն ստիպեալ՝ ոչ միայն թէ բազում խա-
 րցիս կոյժականց վաւեցին աստ և անդ , այլ և
 ճանկօք երկաթեօք և աշտենիւք հրացանաց
 բրեցին . և ՚ի բաց կորդեցին զկապարսն՝ որ իբրեւ
 չաղախ զսալ ընդ սալ աղխախէին . տեղի
 տիեալ անձրեաց՝ ասկականէին զրեթէ զամե-
 նայն վայելչու թիւն նկարուց առաստաղի եկե-
 ղեցւոյն ՚ի ներքուստ : Վ այ Հարկեղեղ Արբոյ
 Հայրապետիս մերոյ Եփիրեմոյ զրել և բե-
 րել Ճարտարպահետս Հայկազնեայս՝ զԳրե-
 դոր Վ անցի , ՚ի Վ ասպուրականէ , և զթու-
 մաս Վ աղարշակերտցի , զեղբոյր զբագիր Յուլ-
 լաննէս Վ արդապետիս , այր բարեպաշտ և եր-
 կիւղած յԱստուծոյ , և սլատկեր անմեղութեան՝
 ՚ի Բարգեանդ գաւառէ , այլովքն Հանդերձ .
 և ՚ի ձեռն նոցա կոփածոյ քարամրք ՚ի քարահա-

նից անտի , և շաղաղով կրոյ , աւազոյ , ձիթոյ ,
ձուոյ և բամբակի միանգամայն՝ նորոգեաց ըդ-
բովանդակ տանիս սրբոյ եկեղեցւոյն , և ըդ-
խրամատութիւնս այլ և այլ մասանց նորա :

Կան ինչ ինչ աեղեկութեան արժանաւորք .
բայց ըստ սրբւմ նախնիք ոչ գրեցին , և ար-
դիք իրրե խորհուրդ թաքուն պահեն 'ի
մեջ իւրեանց՝ և այն՝ որպէս թուի ինձ , կարի
խմաստութեամբ և Հանճարով՝ վասնորոյ զանց
առնեմ և ես .—

Եղեն ճանապարհորդք , որ ունչս երկարեցին
ընդ անուն և ընդ ձեւ շնուռածոյ Եկեղեցւոյս
այսորիկ , բայց ես ոչ այն քան ընդ ընդարձա-
կութիւն միջին կաթողիկէին զարմանամ , որ-
քան ընդ կանխատես իմաստութիւն նախկին
Ճարտարապետաց նորուն . որ գիտելով թէ եր-
կիր այնքան զանգեալ ազով և շփշրական բա-
ղադրութեամբ , ոչ մնայր ազտա իստեալ յերկ-
րաշաբաժէ , պեղեցին զերկիր անբաւ խորու-
թեամբ . մինչեւ պարզել զջուրն անդնդային ի
Հողոյ անտի . և ընդ ստորերկիրեայ անցո Հա-
նին ածել ի բաց՝ բազում մզնաց Հեռաւո-
րութեամբ , որ այն ինքնէ . Ասոն քանքանն .
այլ և Հաստակառոյց կամորաւի կանդնեցին ի
ներքոյ , սալայատակ յարկեցին զոյն ի վերուստ ,

և ապա՝ ի վերայ կառուցին զեկիղեցին, որպէս զի՞
տեղի գտեալ ստորերկրեայ դոլորշեաց՝ ի վեր
ելցին ընդ փորոք կամ միջոցս նոցա, և շինու-
ածոյն մի մեղեցին :

Օ արմանք մի ես ոյս է . զի 'ի բարձրադյուն
տեղիս , որսլիսի է Ակոռի՝ ի լանջն Վասեաց .
և Ապարանքն՝ ի լանջ անդր Արտգածոյն , ոյն
քան խոր չունին զջուրն , որքան ոյս դաշտ .
զի 'ի նոսա ջուր ելանէ 'ի չորս կամ 'ի Հինգ
կանգնոց , իսկ աստ 'ի Հեղետասան կամ 'ի
քսան կանգնոց խորութեանց :

Արտաքին բերթապարսպին ընդ Հիւսիս-
է Հրապարակ բաց , ընդ որ ամենայն երթեւ-
կութիւնք յարեւմտից յարեւլս և փոխադարձ
կատարին : Աստ՝ քանիքան Յակը բայ Ասթու-
ղիկոսի ջահկեցւոյ՝ ունի աղքիւր քարաշէն .
ուստի ելանէ վիժակ ինչ ջրոյն յարբումն գիւ-
ղականին : Արդի աւան Խջմածնի ձգի 'ի
Գնիկի* առուէն մինչեւ 'ի կալս՝ յարեւմտից

* Դւնի ամսուանի կ Հայաստան՝ Գործառունն, ուր թեփահան եղիալ որիզ, յդիկ և մաքրի կ կերպակուր, Դինկ՝ կ գնկելոյ ձայնին առեալ, թէպէտե կ կիր առնուն և Տաճիկը և Պարսիկք, սակայն ընդէր ոչ և ես. ըստ որում նոյն հնչիւն է նորա, զոր լսեն նոքա, և նայն՝ զոր և ես: Կորորինսակ

յարեւլս , և ՚ի հրատարակ Փողոտայէն՝ մինչեւ ցառուն , որ գետակ Հանեալ ՚ի Վասախայ՝ ՚ի գլուխ կաւահանից թաղին՝ յերկուս բաժանի : Ա՛ին երթայ ուղեղ յարեւմտից յարեւլս ՚ի հիւսիսոյ աւանին . և բաշխի ՚ի պարտէզս և յանդորայ նորա . իսկ միւսն գոյ ընդ հարաւ յարեւմտից աւանին՝ ՚ի գիւնկն , հընարեալ և կառուցեալ ՚ի Ը էյթանն մականուանեալ կարապետէ հայկազնւոյ , և յետ շրջելոյ զոյն՝ զեղու ՚ի խոնարհ ՚ի պէտս անդու

Դին իմն Հնարեաց յերեան և յէջմիածին , մեծանուն արուեստահնարին Կարապետ Հայկազն , զոր ՚ի սակս անծանօթ գործեացն Հնարելոց , կոչեցին զնա Պարսիկք՝ Հէցթոն , կամ ստուայ Կարապետ : Փառ մեծ ՚ի ձեւ անւոյ սայլից տախտակամած յերկուց կողմանց , և ՚ի ծայրա իւրաքանչիւր փառից տախտակ լայնած իր յաստիճան յաստիճանս որսհեալ , զնի ՚ի ցըղոնին , ուր ՚ի նուռ անուանեալ խողալակէ իջանէ ջուր ՚ի բարձամոց բռուռն զօրութեամբ և դարձուցանէ զնա անհնարին արագութեամբ : ՚ի միջոց փառիս այսորիկ՝ մտանէ զլութ հաստահեղոյս գերանի , իբրև զլիսւռն կամ առանց՝ ընդ անիւն պինդ աղուցեալ . որպէս զի ՚ի շրջել փառին , շրջի և այս մարմին ահազին : Ատամունք փայտեայ հաստատեալ ՚ի տեղիս տեղիս ՚ի մակերեսութիւն լիսուան այսորիկ՝ հարկանին ՚ի ծայր թեոց ձողոցն , որ յերկուս շարս դասաւորեալ առընթեր նորա . մին վերուստ ՚ի վայր , և միւս՝ ընդերկար ընկողմաննեալ՝ բարձրացուցանին զնոսա զօրէն սանդիւռուանց , և ուժգնակի ջուցանին ՚ի սանդ անդը որիգալից . որով անտշատ յղի և մաքրի այն գերընտիր կերակուր մարդկային աղգի :

բէից, Բաժանի յերիս թաղս . որք են կաւա-
 հանքին, Դնկին և Ճամփն : Ունի եկեղեցի
 փոքրիկ յանուն Առւրբ Աստուածածնի, ուր
 գիւղականն նուիրէ զաղօթս իւր առ Աստուած,
 ԱՅԼ բաց յապարանից անտի Հաճի Միրզա-
 Աղասւոյ, երբեմն Պարսիկ գրադրի Հայրա-
 պետականցին սրբոյ, և այժմ մեծի նախա-
 րարի Դրանն Պարսից՝ ի Թհեհրան՝ չունի
 ինչ արժանի յիշատակաց, Յաջորդին սմա-
 ի Հիւսիսոյ՝ անդորրայ ինչ, ապա աւերակ
 մատրանն Վարիանեայ կուսի, և հուպ առ
 նովին վանքին Ծողակաթի՛ զոր նորոգեաց Աղա-
 մալ Ծոռօթցի . որ թէպէտե յայսոսիկ ժամա-
 նակս ամայացեալ կայր ընդ միւս համապատիւ
 Վերց իւրոց, ՚ի պատճառո պատերազմաց
 Պարսից ընդ Առուս՝ սակայն յետոյ բարե-
 ջան փութով Արբոյ Հայրապետիս մերոյ՝ վե-
 րլուտին նորոգեալ՝ լցաւ միաբանիւք : ՚Ի
 մէջ սորա և վանիցն Հռիփախմայ՝ անկանին
 աղօքիքն՝ զոր կառոյց բարեջան Պետրոս
 Վարդապետ՝ Ծուշտակին, և զվանսն նորո-
 գեալ՝ ելից գործունեայ եղբարբք : ՚Ի թի-
 կանց սոցա ընդ Հիւսիս՝ են այգեստանեայք .
 և ապա յիշատակարան զօրաց Առուսաց ան-
 կելոց ՚ի Վերջին պատերազմի նոցա ընդ Պար-

սիկս՝ յամին 1827, որք կատարեցան վասն փրկութեան Խջմիածնի, Ուստի ընդ անապատ անջրդի յառաջելով՝ գաս յստորաս մեծի Քարադրաշտին, ուստի ոտն Արագածոյ սկլսանի, և հանէ ցՈւշիան և ցԵղուարդ։ Հուպաւ ճանապարհին Ուշիանայ յարեելս Տօն Արդարն կոչեցեալ Պատւթի՝ անկանի լիճ Քարուդաշտին։ իսկ առ ճանապարհաւն Եղուարդայ՝ հանք կարմիր քաղանկ քարանց, յորոց շինցան և շինին գրեթէ ամենայն եկեղեցիք նահանգիս։

Յարեմուից կողմանէ ընթանայ Քասախ գետ, և խառնի յԵրասխ։ և չունի ինչ երեւելի ՚ի մերձակայս իւր։ Այլ որ ինչ գիւղօրէք են՝ յարեմուտս կըս գետոյն՝ անկանին։

՚Ի հարաւոյ Վաղարշապատայ անկանի թղթարանն ու որ համբաւի գոլ տեղին Ապարանից Տրդատայ և լիճ գոմշոց։ Յարեմուտլս կըս լճիս անկանի սեխանոց կամ քօստան վանից։ և բերէ զընտիրս ՚ի տեսակաց սեխի, ձմերիի, և ոյլ ցանելի արմտեսոց և բանջարց։ Յարեելից հարաւոյ թղթարանին է Պաղաբատունին պարտէ զ ամենարեր ծառոց։ զոր վայելէր Գրիգոր Արքեպիսկոպոս՝ գանձապետ Խջմիածնի, որոյ յարեելից է պարսպա-

ւոր գերեզմանատուն միաբանից աթոռոյն , և
ի գլուխ գարբասին օթ բացահայեաց , տեղի
ողորմաթաս ըմպելոյ կենդանեաց՝ 'ի յիշա-
տակ ննջեցելոց : Աւովել ընդ յարեելս սորտ
անկանի Տնտեսին պարտէզ , այսպէս անուա-
նեալ , զի հասարակաց Տնտես Աթոռոյն ունի
գիառավարութիւննորա . յորում բաց ի պէս-
պէս պաղոց՝ գոյանան և տարեկան թերք ,
բանջարք , և խաւարտք ի պէտո միաբանից :
Այս սմին է լիճ սառուցին 'ի հիւսիսոյ : 'ի
հարաւոյ նոյն գերեզմանատան անկանի պար-
տէզ և վանքն Արբոյն Գայիսնեայ . որ նախ
քան զՏէր Եփրեմ Աաթուղիկոս մեր՝ ամայ-
ացեալ և քոյքոյեալ էր 'ի պատճառս պա-
տերազմին Առուսաց ընդ Պարսիկա . բայց յետոյ
նորոգեցաւ և առաջին առաջնորդ նորոգու-
թեանն եկաց Խաչատուր Վարդապետ ոմն .
աստ թաղին ըստ մեծի մասին կաթուղի-
կոսունք մեր :

Խակ յարեելից է կայն . ուր կասին արմբ-
տիք Աթոռոյն և Աւանին միանգամսյն : Ե-
աստ և օթարան վերնայարկ , ուր նստի վե-
րակացուն կամ Հարկահան կալորեից . յորմէ և
անդր ընդ յարեելս՝ անցանէ առու աղօրեաց
Արբոյն Հռիփսիմեայ : Ապա Առապարն

Արբայն Գրիգորի, Հանգոցեալ Եկեղեցին. ցամաքեալ լճափորն, որ այժմ կոչի Քէշել Գերօլի, այսինքն լիճ քահանայի, որ ընդ Փարաքար տանի մինչև յԵրեան, Բայց վասն առաւել ևս ճշգութեան 'ի տեղագրութիւն Դրից Վաղարշապատայ՝ առաւել ախորժելի է ինձ և միւս շրջանակ տողել տատանօր. այս է զի յարեելից կուոէ տնտը քան զՓարաքար, Քալարա, Կաւակերտ, Շինագաւիթ, և բերան Հրասդանայ՝ որ խառնի յԵրասխ, են Երեան, Դումին մինչև ՚ի Գառնի, և Շարուր. ՚ի հարաւոյ՝ Երասխ և ոտն Մասսեաց, յորում է և լիճ Գինայ, Ակոսի, և Սուբբ Յոկոր, * Արդարաբատ Բերթ, Փառախոտ և Յոլակերտ՝ մինչև ՚ի Բայզղետ, Յարեմտից՝ Արմաւիր, Օէյվա, Արդարապատ բերթապարիսպ քաղաք, Բլուր, Ահաթափոս, Կողը, որ ունի զաղեհանքն և Հաճի Բայրամլու, ուր խառնի Ախուրեանն յԵրասխ. Խոկ յարեմտից դէպ յարեելս՝ կրկին Արշարունիք, Երուանդաշատ քաղաք,

* Այս Արդարաբատո բերթ յարեմտից հիւսիսոյ Ակոսի գեղջ՝ ոչ է արժան շիոթել ընդ Արդարաբատ բերթապարիսպ գոր կառոյց Յու սէյն Խան Արդար յոստ ինչ լերինն Արագածոյ՝ յԱշարուննեաց դաւառի, և զետ հանեալ յԵրասխայ՝ վայելչացոյց զնու :

Թաղլեն, Թաղլեշ, և Կօշ. որոց և 'ի թիկանց
յոստ ինչ Արագածոյ՝ անկանի Մաստարա,
Ապա ՚ի Թաղլեշոյ ընդ յարեելս՝ հիւսիաոյ՝
Աղաւնատուն, Փարսկի, Փառնկանոց, Պաղս,
Հաճիլար, և Անլադուրսուն, ՚ի հիւսիաոյ՝
Ուշի, Ոշական, Աշտարակի, Մուղնի, Կարբի,
Ապարանքն զաւառք, ուր բաժանի Քասախ,
և Արուճ, Եւսե՚ի լերին Արագածոյ՝ յարեե-
լից կուսէ նորա՝ Բիւրական, Արդահաւա-
սիկ, Ջրվշտեկ, Տեղեր, և Անըերթ,

Օդ.

(Օ) Մեղւոյս ՚ի պատճառս անհամար անդոց
որիզյ, և Ճախնից Աետ ջրոյ կամ Անձամօրի,
Երասխայ և Ծիցն շրջապատելոց զնովաւ, կարի
անառողջագոյն է յամառան անդ. Յորում
յառաւօտէ մինչև ցութներորդ ժամն, դուլ
տան ամենայն հնչմունք օդոց. և յութներորդ
ժամն ցկէս գիշեր, շնչէ հողմն ինչ հիւսիսա-
յին, անուանեալ Լուսաւորչի քամի: Այս
հողմն, կցորդեալ ընդ անյագ կիրառութեան
ամենատեսակ սեխոց, ձմերկաց և խագալողոց,
զրս յառաջընծոյին ամենաքեր անդ քերկրին,
և հաղորդեալ ընդ գարշահոտութիւն ճախնաց
և լճաց, և ընդ անբաւ զինուորութիւն չարա-
խայթոց մոծակացն, մծապէս վեասեն կենաց

վաստակաբեկ մշակաց . և պատճառեն զաղան
ջերման և տենդի, բազում անդամ մահաբերս
օտարաց և ընակաց միանդամայն : Այլ այս
յաւետ՝ է ՚ի սակա անխնամութեան դաշտին
Վաղարշապատայ . ապա թէ ոչ յեռնակողմանք
նորա չորեք կուսի այնքան աւողջարար և պատ-
ռական օդունին, մինչ արժանի լինել ընակութե-
անմահից անգամ : Եթէ ՚ի բարձուէ Մասսեաց
կամ Արագածոյ հայիցէ ոք լնել դաշտն մեծ
Վաղարշապատայ , մինչեւ ՚ի սպառուածս Շա-
ռուրայ՝ նշմարէ օդ թանձր և շամանդաղապատ,
իբրև զգոլորշի հնոյի փոքր լինչ բարձրու-
թեամբ լցեալ տարածեալ ՚ի նոսա , որոյ ՚ի
վերուստ մինչեւ յերկինա՝ տեսանի միօրինակ և
անպղտոր պարզութիւն : Յուրան ձմբան սաս-
տիկէ յոյժ , որ ըստ երեելի ձանապարհորդաց՝
պատճառի յաւետ ՚ի բաղմութենէ աղեհան
յերանց նորա :

Ճուռ :

Թեղետեկ վասկք հանեալք ՚ի Վասախայ
խոխոջին լնել Վաղարշապատ , դաշտուցանել
զաղօթիս և զգինիս նորա . սակայն և այնպէս
անցանելով նոցա լնել աղոտախտին և լնել
գիճին անդս որիզոյ և լնել աղմուստ երկրին՝
կորուսանեն լնել ականակիտ պարզութեան

իւրեանց, և՝ զբարեհամութիւն և դառողջարար
 ներգործութիւն իւրեանց, Քանիքանին հանեալ
 ի Յակովը Այսթուղիկոսէ Հայոց՝ յԱրագա-
 ծոտնէ ընդ ստորերկրեայ ջրանցս մինչեւ
 յԱջմիածին, բնակարան գոլով անհամար
 օձից և զեռնոց, որք յամառան ի տօթոյն
 խուսեալք, և 'ի ձմբան՝ 'ի ցրտոյն սառ-
 նամանւոյ, գունդագունդ անդր զեզուն, և ա-
 ւելորդով բնութեան, և մահաբեր շնչովք
 իւրեանց կարի վատառողջարար յօրինեն զջուր
 նորա : Անհամար ծակտիք են նորա ընդ մի-
 ջոց տարածութեան զաշտին՝ բացեալք աստ
 և անդ . յորոց մասնեն մշակք մաքրել զճա-
 նապարհ ընթացից նորա՝ միանդամ և երկիցո
 ի տարւոջ : Յամսեան Յունիվարի այսր ամի
 գիպուածով իմն պատահեալ միոյ. ի ծակտեաց
 տատի՝ թուեցի ի նմա օձս Հինդհարիւր, մե-
 ծառնծո և մանրկունս . որոց ելեալ յիւրա-
 քանչիւր ի խորշոց իւրեանց՝ յարեգունիս
 Հեշտանային ի կողս նորա : Բղինի և Ատոնն
 անուանեալ Քանիքան ի ներքուստ եկեղեց-
 ոյն յԱջմիածնի, որպէս զբեցաք, բաց յայս-
 ցանե՝ ունի և լճակս ի ներքոյ առապարին
 Աշականոյ, գէպ ուղիղ ընդ հիւսիս Կոնդին
 Որանէից՝ իբրև կիսով մզնեի շրջապատաւ .

այլ ջուր նորա՝ ձիոց և եթ ըմպելի ։ | իճ
Մեծամօրի, որ այն ինքնէ Ահ ջուր, անկանի
յարեմտից Վաղարշապատայ՝ առ Օէյվա
անուանեալ գիւղիւ, ձգեալ մինչև յԱր-
մաւիր՝ հին մայրաքաղաք մեր. և խառնեալ
յԵրասխ։ | իճ՝ կաղզուանոյ կամ Գայ-
լատուայ՝ մերձ ՚ի Գարեղէն գաւառ, Չէնկլի
կոչեցեալ. Քերթողք, ռամկաց համբաւել
կամելով զերիւլար Քօրօղլոյ՝ ՚ի ծովէ աստի՝
ծովածին զիա առասպելին։ — | իճ որ անկանի ՚ի
ցռուկ ինչ ոտանն Արագածոյ յարեմտից Ա-
ղաւնատան, և ՚ի Հարաւոյ Փռանկանոց գեղջ։
| իճ ընդարձակածաւալ ՚ի կատար Արագածոյն
՚ի վերուստ Բիւրականայ և Տեղերայ։ | իճ
Գինայ՝ ՚ի Հարաւոյ Երասխ գետոյ՝ որ նոյնավէս
կոչի սև ջուր, անհնարին խորութեամբ. ուր
անկաւ Արտաւազդ Երկրորդ՝ ըստ Խորե-
նացւոյն։ | իճ ՚ի խրամս Մասսեաց, ՚ի
վերուստ վանիցն և յարեմտից Աղբեր Ալր-
բոյն Յակոբայ, այն՝ զորմէ յայլուր զրեցաք
| իճ ծովանոյ ձիւնաթումբ,

Որ հալս հանուր ծծէ յումպ։

| իճ ՚ի կատար Փոքուն Մասսեաց՝ առ
որով մացառք թեղեաց և զերեզմանք Հակա-
յից՝ հասարակօրէն Օղուզի գերեզման կար-

պացեալ : Այսոքին լիձք թուին ինձ լինել
ակըռունք Մեծամօրին և Գինոյ՝ ընդ ստոր-
երիթեայ մուզո իւրեանց . Օկեի առման
Ռառսաց զայս նահանգ՝ որ լստ օրէ նուազեն
զմշակութիւն որիզոյ , Թուելով օդուա ինչ
առնել օդոյն բարեխառնութեան : Բայց այս
ոչ է Հնար լինել , եթէ ոչ զճախին և զաշ-
առալախնո նորա ընլով և հաւասարելով , և
փոխանակ որիզոյ՝ շաքար տնկելով աստի և
անախ յԵրասխ գետոյն :

ԳԵՐԻ ԱՐՄԵՐՈՒՄ

ՄԵՅՐ Գիտոց Արտրատեան նահանգին է
Գեհնն կամ Երասխ : Տարսալարո կարծիք
են մատեհագրաց առհասարակ՝ մերոց և օտա-
րաց միանգամայն , զբառն գեհնն Եթրուեցի
համարել . որով և զառոյդ անցո աշխարհի և
աղջաց աղաւաղելով մասցածին կեզծիս փո-
խանակ ի ներքս մուծանել : Ա ան զի՝ գեհն
կամ գահ . ի բարձրութենէն առեալ , և
գեհնեան ի բազմաւորականէ նորա , որ է գե-
հեր կամ միջոց և ձորքն , զորս բնականաբար
քարծին բազմութիք գեհնից , եւ տիրապէս հայ-
կական բառք , և նշանակեն զմեծամեծ ժայռ
կամ զսեպուհս լերանց . որ կազմեն զճոր .
Արդ գեհնն կամ գահուն , որ նշանակէ զու-

նողն գահից աստի և անտի՝ է տիրապէս
 Երասխ մեր ընդ Երասխածոր : Պարձեալ
 գեհն ըստ Եբրայեցւոց՝ նշանակէ ձոր իջե-
 անի, և Երասխն անցանէ ի մօտոյ Եախիջեան
 քաղաքի մերում, որ անկանի յարե ելս Շա-
 բուրայ գաշտին : Պարձեալ գեհն նշանակէ
 ձոր շնորհաց, և ի ձորն Երասխայ եղեն ա-
 աջին շնորհք Աստուծոյ . այսինքն օրհնու-
 թիւն երկրի և քերոց նորա՝ և նշանն հաշ-
 տութեան եղեալ յամսոս : Պարձեալ գեհն
 է պղտոր . առեալ նոյնալէս ի գոյռ և ի գեռ
 բառից մերոյ, յորոց մին ստուգաթանի առու
 ի գահէ, և միւս ուխ կամ յորձանք ի գահէ,
 որ հեղեղեալք ի խոնարհ՝ վարեն զառաջեաւ
 իւրեանց զամենայն պղտորութիւն : Եւ ըստ
 այսմ, չիք գետ պղտորագոյն ի Հայս՝ քան
 զԵրասխ մեր, մօնաւանդ յիտ զՄեծամօրն
 Արտօնասոյ և զՏղմուսն Պարաշամբոյ կամ
 Խրամի՝ յինքն ընդունելոյ, յարեմոից հիւ-
 սիսու . Եսիսպիսոյի վահից և Հին Պուղայ,
 Պարձեալ գեհն թարգմանի յորձանուտ, և
 ոյնալէս ևս գեհն հունի, և ահա այս յատիութի
 է նորա ի մեծ Քարավաղի Աստղանի ըստ որում
 ի գեհն հուն կաղմէ, որ է ասել թէ ի քարձանց
 գահից վեժելով կամ վաղելով՝ հուն կաղմէ,

Խոկ Երեմ. Բ. 18. “**Օ** ի՞նչ կայ քոյ և ճա-
նապարհին Եղիպատաց ոյ ըմպել զջութ Գե-
հովեայ ;” իմաստալի է միայն վասն պլառու-
թեան Կեղզոսի , որ զութի է միւս յամենայն
յատկութեանց դեհոն նշանակութեան Երաս-
խայ մերց : **Օ** ի նա և ընդ ջութի ի վեր նա-
ւարկի , իսկ Երասխ մեր ամեննե ին ոչ , սկսեալ
յԱնխայտ կամ ի Վ երին Բառենէ՝ մինչեւ ի
կուր գետ , Շահուլ զ Պ իհոն , որ և անուն
Ոքսոն գետոյ՝ յԱրաբոցւոց և եթ տուեալ ,
յապացց Հնութեան նորա , չիք ինչ , **Օ** ի
Հնագոյն անուն նորա , ըստ Հին աւուրց զրոց
Հնդկաց՝ էր Քաշու՝ կամ գետ Քոշանաց :

Ապաքէն զբարբառ տիեզերոց Երայա-
ցուցանել , ըստ որում Հնագոյն ի նցանե
Հանդիսացաւ Վալսէս՝ որ գրով աւանդեաց ,
զագիտութիւն զաշնառհէ , և զնախապաշտ-
րեալ իմն ջատագովութիւն Վուրբ Գրոցն
յոյտ առնե : **Օ** ի զոյցէ և Հնագոյքն քան
զՎալսէս զրեցին , որք կամ առ մեզ ոչ Հա-
սին , և կամ ի կրօնից և ի կռուց ծաղելց
ընդ մէջ ազդոց՝ կորեաւ անհետացաւ ուսումնն
այն : Գրոցէ ժամանակին գեռ ևս յայտնեսցէ
ապադայից զստուգութիւն վարկածոյս՝ յոր-
ժամ մարդիկ հնարիցն ընթեռնուլ զանհա-

մար գըռուածք ՚ի տեղիս տեղիս Հայտառանի
և շրջակայ տշնալը ց :

Անուն այսը գետոյ՝ ըստ գրելոյ Խորհնաց-
ւոյն, փոխեաց Արամոյիս նահապետ մեր՝
յանուն թոռին իւրա Երաստոյ՝ յԵրասին,
Որ այժմ Հասարակօրէն Արագ լոի :

Յաղագս ականց Երասիսոյ բազումք բազ-
մօրինակ գրեցին : Բազմավաստակ Հ. Պ. ու-
կաս Խնձինձեան յէջ 82 Կոր Հայտառանին
թիրես ուղեղ դնե բղենել նորա ՚ի լերանցն
թշեքմանոյ՝ որ անկանի յարեելից Արմեոյ, ՚ի
հարաւոյ Բասենոյ, յարեմաից Գեօդուուոյ
(կամ Հարքոյ .) և ՚ի հիւսիսոյ Խնուսոյ,
Բայց և այնպէս տաներով և տնկերով դՀարք
՚ի Անհանազի գուտոռ Բարձր Հայոց, Եւսի
Հին Հայտառանին՝ առեւոլ ՚ի Լատիվիերացւյն
ընդ մէջ դնել նորա զԱնհանազի Եկեղեց
և Գերջանոյ, այսինքն Երդնկանու և Գեր-
ջանոյ՝ մե ծաղէս շփոթէ զոհեղին . զե ըստ
այսմ, պարտ էր Երասիսոյ բղիսի յարեմաից
հարաւոյ Արմեոյ, փոխանակ յարեելից Հա-
րաւոյ նորա՝ ուր անկանի թշեքման, և ՚ի
ստորէ ՚ի վեր գիմելով ընդ Ամրին՝ զալ ան-
կանիլ ՚ի Բասենոս Այրարատոյ . որ է ան-
ընական իմն . Զի Եփրատ ՚ի Բարգեանդոյ ՚ի

Ապրին խոնարհեալ ընդ Գերջան, յԵկեղեց,
 ընդ Գատրանեազի և չնդ Վանանեազի, երթայ
 'ի 'Օռոփա : Ը փոթոթիւնս պարզ երեխ 'ի
 գրուածոց անտի Խորենացւոյն, զի Վանան-
 գացիք, որ ապատամբեալք 'ի Խոսրովոյ առ-
 պատակէին զիւլուածս արեելեան և արեմբ-
 տական թագաւորաց մերոց՝ Խոսրովու և
 Արշակոյ Արշակունեանց, մինչե ՚ի Վանա-
 նազի Հալածական վարեցան յերեսաց Աահա-
 կոյ Բագրատունւոյ : “Օ որոց ձիգ զհետ մը-
 տեալ Աահակոյ՝ առէ Խոր . վարէ յերկար
 մինչե ՚ի Վահմանս Վանանեազւոյ :” Ար ամե-
 նեին զուր լինէր, ելժէ Թահքման, որ յերի կոյ
 Բասենոյ գրեթէ իբր հարաւային սահման
 նորա՝ ՚ի Վանանեազի անկանէր, կամ որպէս նո-
 դնէ ՚ի մեջ Գերջանայ և Եկեղեց, Երկրորդ
 զդանձս Արշակոյ զհանեայն ՚ի բերթէն Հան-
 ւոց կամ Կամախոյ՝ տանել տռ Արշակ 'ի
 'Օռոփա՝ յափշտակեցին Աշխարհադար և ըն-
 կերք իւր, և յորժամ կամէին փախչել տռ
 Խոսրով արեելեց մեր թագաւոր, Աամելի
 Վանիկոնէի սլատահեալ ամբացան յամուր ոյք
 ինչ Վանանեազւոյ, ուր բաղտիւ գիսկեալ Աա-
 հակոյ Բագրատունւոյ՝ Հալածական արար
 գԱնելի, և ազատեաց զԱշխարհադար գան-

Ճուք և ընկերոքն գնալ առ Խոսրով, Արդ ոչ
ոչ զիտէ՝ զի ճահապարհ ՚ի Դարանազեաց (յո-
րում էր Հանի, Անի, կամ Ամախ), գեալ ՚ի
Շօսփս՝ յարեւմնւաս հարաւոյնորա անկանէր
և անկանի, ընդ Չւերոս լեռուն, ընդ յԱ՛համի,
ընդ Հասանովա, ընդ Պուռուշոյ, ընդ Բենկան
և ընդ Ակն, և ոչ յարեալու ուր է Եկեղեաց,
ապա Գերջան, և ասկա Ատրին, Գատրձեալ
յորժամ սլատերոզմ զրդութիւն Խոսրովու
և Արշակոյ. Խոսրով ՚ի Մուրսն կոչեցեալ
տեղոջէ առ եզերբ ծովան Գեղամայ՝ աճապա-
րեր ունիլ զառաջս Արշակոյ, զիմի մոցէ իստհ-
ման իւր : Բայց ոչ այնչոփ ատակեաց, միեւն-
եգիտ զԱրշակ իջեալ յիւր սահման : Արդ
եթէ Բասէն սահման էր Խոսրովու, և Թաք-
ման անկանէր ՚ի հարաւոյնորա, ուրեմն չեր
թաքման ՚ի Մահանազի. որ որպէս և գրելոց
եմ, անկանի յարեւմոից հետիւոյ Գատրանա-
զեաց՝ ընդ որ ես անցի ՚ի գալ իմում ՚ի
Պօլոյ ընդ Ատրին, ընդ Գերջան, ընդ Եկե-
ղեաց, ընդ Գատրանազի, ընդ Մահանազի,
ընդ Ակն, ընդ Արտեկեր, ընդ Շօսփս, ընդ
Աղձնիս, ընդ Ոճբին, ընդ Անուէ, ընդ
Բաղդատ, և ընդ Բատրոյ ՚ի Հնդիկու :

Օ անի Երասխոյ գնէ Խորենացին ՚ի Բա-

սէն բոյց որ տռաւել վճիտ աեղադրութեամբ
 յիշէ զայն և Աարարան Յոյն պատմիչ, զի գնէ
 ՚ի նոյն լերանց բղիւել՝ յորոց և Եփրատ զոր
 կոչէ Աւոս կամ Ասոս: Եւ ինձ թուի գոլ գօ-
 տի Եպատական լերին, կամ նոյն՝ Օտաղկուա-
 լետան բիւրակինեայ: զի և Եպակա լետան, և
 Եպակու ջուր յիշատակին յոյս սահման: թէ-
 պէտե փրխանակ ՚ի Հարաւոյ գնելոյ, ՚ի Հիւ-
 սակողմն Բասենոյ եղեալ: Բոյց Աւնիկ կամ
 Աւընկայ լետան և բերթ, որ անկանի ընդ հա-
 րաւակողմն Աերին Բասենոյ յարեմտից
 Բագրեանեգոյ, յարեելից Հարաւոյ Եերքին
 Բասենոյ, և ՚ի Հիւսիսոյ Խւզլերան և Գառեր
 գիւղեց՝ և է քարալետան ինչ նման Խլան
 կամ Ելամ սնուանեալ բարձրաբերձ սեպ-
 հւոյն Ապրակունեաց՝ առ երի Երնջակոյ:
 որոյ ՚ի գլուխն բղիսի տսեն, աղբիւր յորդ, և
 ՚ի ներքուստ ընդ կամուրջ բարձր՝ անցանէ
 Երասիս՝ գէալ յարեմուտա և մօտ ՚ի Պարոյնա
 աւան կամ Հասանզալէ՝ ընդունի զՄուրց
 գետ, և ընդ կամուրջ Հովուաց անցեալ՝
 Հոսի ընդ Հիւսիս, ապա ընդ Հարաւ և ընդ
 Հիւսիս մինչև յԵրասխածոր մեր, ուր առ
 Կարուց քաղաքաւ ընդունի զՉանկի վտակն
 ՚ի ծովակէն: Գայլստուայ, զԱխուրեանն ՚ի

Ծերակոյ առ Հաճի Բայրառմլու, զիւղիւ, ի
 ներքոյ կորմոսքար լերին փոքու, զՄեջուր,
 զգետն Անըներթոյ, զՓարպւոյ . զՔառասի
 Կարբուոյ, զՀրասպան Երեանեոյ, զգետակն
 Երայ կամ Երգոյ, զգետն Գառանեոյ, զգետն
 Առփոյ ի Ծարուր, զգետն Պահուկոյ՝ որ ի
 Բանակոթէ ընդ Անսիան և ընդ Երխոչուան
 ի վոյր հոսէ . զգետն Երնջոկյ, զգետն
 Ագուշեց կամ Գառղթան, զՄեղքի, զՀալե-
 ձորին զԱրոտնայն զԲարկու շտաբին և զՀա-
 քարուն՝ ի հետ սիսոյ, Խոկի ի հարաւոյ՝ զԱր-
 միր, զգետն Արկուռոյ, զԳինայ վտակն, զԿո-
 տալա և զՄակու յանդիման Առասպառու .
 զՃշբուտ Գառաշամբոյ, զՎտակի Գառգառաց
 ի Վարսնդոյ, զՎտակն Աւրդուպտասոյ, ըզ-
 գետն Քիլիքքարոյ՝ որ գոյ յԽմլանդոյ .
 զգետն Քրդաշտոյ՝ ի Հարզանեոյ . զՄՀար-
 պատականս, և զՊ զւզոն կամ Գառվզան գետ
 յայնմ կողմնեէ Պարբանքու լերանց : Եւ
 այսպէս անցեալ ընդ յԵրասիսաձոր ի Ծարուր,
 ի Երխոչուան, ի Խոսոմ, ի Գառղթն, ի
 Կառան, ի Մեղքի, ի Հայեձոր յանդիման
 Բիսյ կամ Անոյ՝ եջանէ ի Մուղան . միշտ
 յարեւելս ընթանալով : Ապա ընդ յարեւելս

Հիւսիսոյ թեքեալ՝ ընդունի յինքն զկուք
զետ ՚ի մերձակայս Ապահանու յԱղուանս
Հոյց, և նովաւ Հանգերձ զեղանի՛ի ծովն
Վրկանի՛ երեք բերանովք :

՚Ի Կարուց մինչեւ ՚ի Կախչուան և ՚ի Գող-
թըն հնար է լտառել կամ նաւարկել : Բայց
՚ի Կապանէ մինչեւ ՚ի Մուղան՝ ոչ բնաւ երբեք :
Օ ի թու զքարտվաղն մեծ, որ ահադին դը-
գիմմիր իջանէ ՚ի վայր՝ նաև ձորտփոր գետոյն
լցեալ մեծամեծ ժայռիւք գլորելովք ՚ի բար-
ձանց կամ ՚ի դեհից ՚ի խոնարհ խոչընդակլ լինի :

՚Կաւարկութիւն ՚ի Արկանէ մինչեւ յԱհար,
և ՚ի Հաբանդ Ախնեաց փաքու ծախոց պէտո
ռնին : Որ առ աշխարհաշեն Հայրենասիրի՝
գրեթէ ոչ ինչ է : ՚Կաւարկութիւն ՚ի Բա-
սենցոյ և ՚ի Կարուց մինչ ՚ի Կախչուան,
նոյնպէս գրեթէ չունի ժախս ինչ, եթէ ոչ ՚ի
տեղիս տեղիս վասն ժայռից Հասելոց ՚ի վայր
և խոզիսալից աւաղոց : Հայրենասէր ժողո-
վրդեան երկոքին ևս դուզաքեայ իմն են,
համեմատեալ ընդ մեծամեծ շահուցի՝ զորս
յառաջ բերե այսօրինակ Հազորդութիւն
բերոց և վաճառաց, ոչ թէ միոյ նահանգի
Հոյց ընդ այլում, յորս յամենեսին գրեթէ
նոյն ասատութիւնք են, այլ մասաւանք

Քրացի աշխարհաց լնու աշխարհիս մերոյ :

Հայեցեալ յարդեան ամուլ կացութիւն
տուրեառութեան Երասխական նահանգաց,
և զանքաւութիւն ծախուց՝ որ 'ի վերայ բեռ-
նակիր գրաստուց իշց : Չըրուց, և ձեւց (որք
մի միայն կարեն շորժել յայնոսիկ,) եօթն-
ամեաց և եթ Հարկ կապեալ 'ի վերայ այսը
նաւարկութեան՝ վճարէ զբովանդակ ծախս
մաքրելոյ և յարդարելոյ զնա յայն պաշտօն,
'ի Կապանէ մինչեւ ցՄուղան :

Տայ Հայաստանի աւելի քան զհարիս ը շո-
հաստան քաղաքս, զբերս Հայաստանի զան-
պիտան և զընկեցիկս՝ արդոյ և պատուական
ընծայէ կողմնցն Աստրից և Արկանի, և անդք
քան դժութուրաստան : Օքերս նրգա՝ որոց
եթէ կարօտիցի՝ գիւրադնի լնութունի . և թո-
ղեալ զհարկ նաւարկութեան՝ զոր կապէ տե-
րութիւն 'ի վերայ լաստից, նաւակաց, բե-
ռանց, անձանց և անտոնաց գետավարելոց,
տակուին մաքս ապրանաց աստի անդք, և
անտի ոյսը ածելոց զուգ շահ մնայ 'ի ձեռն
խոհեմ և ալալութջ տէրութեան՝ որպիսի էր
Արտաշեսին մերոյ Առաջնոյ՝ որ գքեթէ լնդ
ամենայն գետարայ աշխարհիս նաւս խա-
ռացոյց՝ լսա Խորենացւոյն :

Արդեն իւկ հնար է լտառու և նուռակս թե
թեակառոյցս վարել ընդ Երասմխ ՚ի Բասենոյ
մինչ ՚ի Գողթն՝ թեթեալի և եթ ծախիւք
մաքրելով և յարդարելով զՃ՛րափորնորա՝ ՚ի
Բասենոյ մինչ ՚ի բերան Ախութեանի և
Ախութապատոյ մինչե ՚ի գերեզմանոց Հին
Յուղայ զի յոյառոիկ միայն երեի ժայռից
հոսեցելց ՚ի բարձանց աստի և անտի պատաւ
գաւոր առնել զընթացս նաւաց ապա թէ ոչ
միւս այլ ամենայն տարածութիւն նորա գիւր
և հաւասար գոլով՝ մեծամեծ ծախուց անկա-
րօս է ։ Արդեն իսկ՝ ՚ի գիւրել Հարկին նա-
ւարկի այս միջոց զի ուստի արդեօք այն գե-
ղեցիկ գերանանի ապարանից իշխանաց և մե-
ծատանց յԵրեան, ՚ի Կախչուան և ՚ի Գողթն
եթէ ոչ մայր հատեալ յանտառէ Տոյոց և
ընդ Երասմխ գետավարեալ ՚ի խոնարհ։

՚ի հարթել այսր միջցի ծաղկի առ և
տուր Հայաստանի ընդ Պարս և ընդ Թատ քքս
միանգամայն ։ Աւան Պատրունից կամ Հասան-
զոլա ՚ի Բասէն ։ Հաճի Բայրամլու զիս շ ՚ի
խառնուրդս Ախութեանի ։ Ատհաթափու ։
Բլուր և Ասրդարապատ ։ Կախչուան Աստ-
պատ և Ուրդուպատ Պաղթանին լինին առա-
ջիկոյ շահաստանքաղաքանին Բեռինք եկեալ

չ Պոլսոյ և ընդ Ասքեայ քաղաք անցեալ՝ թօ-
թամիին ՚ի Բառէնս, և ՚ի լտառս կամ ՚ի նաւս
բարձեալ՝ առաւել փութօվ և անվեսս հա-
սանին ՚ի Դասլրէժ ընդ Ճահապարհ Ա-
րանդոյ կամ՝ Ուրդուպատայ՝ քան ո՛ ելցէ
գրաստուք :

Ե ինի այս և պաշտպանութիւն Հզօր յե-
րեսաց եկամուտ թշնամեաց՝ ՚ի վարել իւրում
զօրս, զէնո և սլաշարս՝ ուր և Հարկ ժամա-
նակին պահանջիցէ, Զեռնտու ո՛չ լինի թըշ-
նամեաց՝ եթէ ո՛չ միոյի ՚ի փախչել իւրեանց-
մի՝ զի ը՞դ ջուր ՚ի վեր նուարկել անհարին
է, և երկրորդ՝ զի ՚ի միջոց աշնորհիս գոլով՝
տեղի չտոյ թշնամ. ոյն երկար նստիլ և պատ-
րաստել զիւ բոն ՚ի խոնարհ :

Եսւարկութիւն Երասխայ ընդ գաշտն
Վո զան մինչե ՚ի Վւր զետ, և ՚ի լուր զետոյ՝
՚ի Տիղեաց մինչե անդը, և տորս ընդ ծովն
Վրկանի Հաշտորթան, ՚ի Բալը, յԲառա-
բապատ, ՚ի Վազանդարան, և ՚ի Ուաշտ՝ որքան
առաւել ը՞դարձակ՝ այնքան և առաւել շա-
հարեր լլնի աշխարհի մերում, Օ ՚ի Աիմիք
Բարձախ, Փայտակարան և Աղուան նահանդք
Հայոց՝ զանբաւութիւն փայտից և երկաթոց
Կարեն տալ ՚ի շնութիւն նաւաց . Արասխ

Առւր և մեծամեծ վլտակիք նոցա աստի և անտի՝
անաշխատ բարձեալ բերեն տախտակս ՚ի նա-
ւարան կամ ՚ի նաւաշինարան անողը՝ ուր ուրեք
և հաստատել ախորժիցին : Ո՞ւ միայն բնա-
կութիւն և շինութիւն ընդարձակածաւալ և
սիզաւէտ դաշտին Առուղանայ, որ հարկիւ
զհետ գայ բարեկարգութեան ընթացից գե-
տոյս մերոյ, և որպէս հաւատամս, բերել
բերէ և զամնայն բոյս և զպտուղ ցուրտ և
ջերմին աշխարհաց՝ որպիսի է լեզակ, շաքար,
շերամ, և այլն, հերիք լինի վճարել գործունեայ
ձեռին զվարձս վաստակոց իւրոց : ՚Ի մի
բան՝ ճշմարիտ զօրութիւն Տէրութեան, և
ճշմարիտ հարստութիւնն ժողովրդեան՝ յայսմ
և եթ կայանայ :

՚Ի՞նչ օգուտ արդեօք հաստատել թէ այս
մեր պատուական գետ՚ի ՚Նարախտէն Շղամայ
ելանէ, այս ի՞նչ մերով անփութութեամբ
գրեթէ ընդ անտպատ ընթանայ, ամեննեին ան-
պիտան երկրի և բնակչոց նորա : ՚Երկու և
եթ վլտականի ելանեն ՚ի նմանէ, մին՝ ՚ի Բլուրն
Ահաթափոսի, և միւս՝ ՚ի Ասրդարապատ քաղցք
և երկոքին ևս կարի կարձ միջոցօք, և առանց
առաւել աշխատութեան քան զ ռուն Հրա-
գանայ ՚ի Բոլոր Կանք, ՚Քանի՛ Հազար երկու

վտակաց պէտոս ունի այս գաշտ չնաշխարհիկ ,
մանաւանդ ՚ի հարաւոյ գետոյն յատորոսս
Ա ասսեաց լերին , ուր է ջրոց պակասութիւն
մեծ , Քանի՞ քանի՞ գործարանաց և արուես-
տից յաջողուածս ոչ գործէ հզօր մղումն ընթա-
ցից նորա : Քանի՞ թաւս անտառաց և պտղա-
բեր ծառոց ոչ բուսուցանե՞ն բարերեր եզերք
նորա՝ ՚ի նիւթ հրոյ և կենդանութեան բնակ-
չացի : — Բոյց գլուխ Քաջին Արմենակայ
պիտի առ ոյս , և ձեռք՝ արի նախահարց
մերոց :

Կամուրջք Երասխայ են ա . յանդիման Անիկ
բերթին՝ ՚ի թակ քման . ը . Կամուրջ Հովուաց
կամ Զօղան քեօփրի յանդիման Հասանդա-
լոյի . դ կամուրջ Վաղարշապատու , որոյ հետք
հազիւ նշմարին . դ կամուրջ Արտաշատու ա-
ւերակ՝ սռ . Երաշէն գիւղիւ . ե կամուրջ յա-
րեհից հարաւոյ հին Պուղայ՝ կիսաւերակ ,
Կամուրջ քառասնակամար Խոդափրինոյ՝ ընդ
մէջ Քարակըրարոյ և Գիջալուայ առ Ահա-
րաւ . է և կամուրջ փայտաշէն ՚ի Աալիան ,

Հուն Երասխայ եթէ իցէ՝ երկու է . և
ոյնք՝ ՚ի բուն յԱյրաբատ , և յամառան մլայն
անցանելի . մին՝ տունթեր Խոր վերապին՝ որ
՚ի հնումն յանոն Արտաշատու ճանաչէր . և

միւս՝ ՚ի վերառուսու Շորլուայ և Վեծամօքի,
յանդիման Ասւըմալի գեղջ կամ նախնոյն
Արմաւրայ : Բաց յայսցանէ չիք ուրեք այլ
հուն . եթէ հունն՝ զհետի անցանելոյ տեղին
նշանակիցէ :

Օ երեելի վտակաց գետոյս այսորիկ հարե-
անցիկ ծանօթաբանեալ ՚ի վերագոյնդ՝ Ճիշտ
ստորագրեցից՝ որոց յապայս և պատահեցոյց
յաստանդանս իմ :

Զ ինաբանակիւն :

Ո գ երբէք կարծէր, եթէ սահման այսքան
բարձր, մի միայն ունելով դեռ հզօր զիշրասիս,
որ սրընթացութեամբ իւրով զվերինս պատառէ,
և ժայռս մեծամեծս դլէ յանդունդս ձորոց,
կամ վտակք նորա, որք աստի և անտի
բզիսեալ յանսահման բարձրութեանց անտի
լերանցն յաւիտենականաց, և ընդ սուդ
ինչ միջոցս դաշտին և եթ սովացեալ՝ բերեին
արդեօք զայն անբաւ առատութիւն ամենա-
աեսակ և ամենահամ գեղեցիկ և պարարտ
ձկանց, որովք գրեթէ առանց գնոց լիանաց
միջոց աշխարհիս. թէպէտե ձկնորսութիւն իբր
զբօսանք իմն է ոմանց, և ոչ բարւոք մշա-
կեալ : **Զ կեաբանութիւնս աստեն առեալ :**
ստորագրէ զձկունս Երասխոյ և վտակաց նո-

բա . յորոց Շինկլին անուանեալ գետ ՚ի ծու-
վակէն Գայլատուայ վտակելով , և Հըսա-
դանն ՚ի ծովակէն Գեղամայ կամ Անանայ՝ բը-
նականաբար ՚ի մէջ բերին և ձկունք սեպհա-
կանք նոցին , և միահաղոյն կոչին Արարատեան
Զկունք : Կան և այլ ձկունք յայլ և այլ
սահմանս Հայատանի մինչև ՚ի ծովն Կտո-
թից՝ ընդ որ ընթանոյ Երասխ . բայց արտաքոյ
գոլով նահանգիս՝ այժմ զանց առնում գնոքօք :

Օ ձկանց Երասխայ խօսելով Բազմերախտ
Աշխարհագրին մերոյ՝ թուէ զոմանս ՚ի նոցանէ
զոր օրինակ Ճանառ , Լէօդ , Գեղին սորտ ,
կամ Գեղիկ . Մուրդ՝ ձուկին ընչաւոր , որ
յԵփրատ կոչի ասէ Մոխ . Կարմրախէտ և
Աղան : ” Երբեւ առաջնածանօթ գրութիւն ՚ի
հեռուատ անտի , Համբուրիւ երախտագիտու-
թեան ընդունելի է . բայց եթէ մեք ականա-
տես նոցա և բազմաց ևս անծանօթ մնացելոցն՝
Հարեւանցի բնադրեսցուք , ոչ մեծ ինչ առ-
նեմք , և ոչ բնաւ զտօնելին աշխատութիւն
քամահելոյ աղագաւ :

Ճանառ է ձուկին ինչ ոչ երկայն և նուրբ,
այլ յոյր և տակառաձեւ , բնական լճից . յո-
րոց ՚ի ժամանակս ինչ տարւոյն՝ ելանեն ընդ-
լուակն և գան յԵրասխ գետ : Ահագին է

գլուխ նորա , և բերանն կարի մեծ , մինչ կը-
լանել նորա զամբողջ կապոյտ մի և զկողակի :
Օ անհեթեթ բերանաբաց մարդն՝ ճանառի
նմանեցու ցանեն Այրարատեանք :

Լ ոք՝ նովին անուամբ կոչի մինչ ցարդ ՚ի
ընակչաց . և է միւս տեսակ լճային կիտի կամ
ձկան մեծի , ծոյլ և տղմախիր , ուստի և ո՛չ
այնքան որսացեալ : Գտանի երթեմն Լ ոք ՚ի
սեաւ ջրին և յԵրասխ , իրքեւ զմի ձիարեռն :

Դաւ՝ է այլ տեսակ լճային ձկան , որ գը-
տանի առ առ յԵրասխ և ՚ի Հրասդան : Դաւ
կոչի սա վամն գեղնութեան գունոյ իւրոյ , և
է գեղինալորտ կամ գեղիկ կոչեցեալ ձուկին ,
բարակ քան զկապոյնն և առաւել պարաբո-
քան զնա , այլ շողինքստ կտոր լորձունուա-
ռուսի և ո՛չ այնքան համեզանակ . ոսսինձն
լինի ազնիւ : Ազած սորա ընտիր է քան ըզ-
թարմն : Երդնկացին ՚ի քերականութեան իւ-
րում , զոմանս ՚ի ձկանց Արարատայ յանուանէ
յիշէ ॥ Դիմին , լոքն , դալն , բիլն և կապոյնն , ॥
զորս Կոր բառարան մեր մեկնէ յերանդս
և եթ :

Խնջագիտք , ծովախոզ , կտմվարադուկն՝
է թերեւ մեծագոյն ՚ի լուղակս Հայաստանի ,
որ է ձուկն ինչ լերկամորթ , ձեռվ նման

Խողի . որ ելեալ յերեսս ջուրց և զօդ շնչեալ
կրկին ընկղմի անհնարին արագութեամբ : Որ
կացեալ առ եղերք մե ծամե ծ գետոց՝ և հայ-
իցի յերիլար աշխոյժ լուրալով ընդ գետ խոր
անցանել , իսկ և իսկ մակաբերել ունի՝ թէ
առասպել ծովածին երիլարաց՝ առեալ իցէ
միայն ՚ի յառնելց և յընկղմելոյ ծովախոզիս
այսորիկ : Վանեղի՝ եթէ Թաեսազացւոց տե-
սեալ զառաջին ոյր հեծեալ ՚ի ձի , զձիացույն
յու շիասկարիկ ստեղծին , զի՞նչ արդելոյր և
ուամին Այրատարայ զխող ծովուն ձիանման
տեսանելով յառնել և յընկղմելն անհնարին
արագութեամբ՝ բնականաբար ոչ զհետ բերել
թէ հնար էր և ձիոց ՚ի ծովէ ծնանել :

Բոյց հայեցեալ ՚ի հնութիւնս աշխարհի
մերում , գտանեմ զՆըան մոլորակ նկարեալ
և պաշտեցեալ ՚ի կերպարանս վարազու , որպէս
անուանքդ Վարազդատ՝ տուրք վարազու ,
և Վարազդէն՝ հաւատացեալ կամ կրօնական
վարազու՝ յայտնի ցուցանենն : Թակէտե ոմանք
՚ի շամբամուտ խուզողութենե ցամաքային խո-
զին առնուն , այլ ինձ մանաւանդ հաւանական
երեի ՚ի ջրային զօղակէ յոյշամանէ դնել զնմա-
նութին , թէ ըստ խորամուտ հանճարյ մոդին՝
որ զՆըատէն վարդապետաց , և թէ ըստ

անհեարին արագութեան ընթացից մոլորակին՝
շուրջ զարեգակամբ : Մանաւանդ զի՞ և բագին
Վ արազուն՝ ՚ի կրծոց ՚ի վայր՝ ՚ի ձուկին վեր-
ջանայր՝ թեփոտեալ իրրե զնս : Կա զոր և
հաճոյ իցէ քեզ, և մեղադիր մի լիներ տկար
վարկածոյս :

ԿԱՊՈՅՑ՝ ձուկին բարեշէն, պարարտ և թե-
փաւոր + որոյ թեփիք ՚ի կապոյան հարկանին ե-
րանգ ՚ի նշուլից արեգականնե, ուստի և անուն
ընկալաւ : Լըտ ամենայնի յար և նման Ուույի
անուանեալ ձկանն Պանդիսի՝ ՚ի Բանդալա .
այլ փափուկ մսով, և փշաւոր քան զնս :

ԲԵԼ՝ որպէս և մինչ ցարդ կոչի, և ձուկի
ինչ յազգէ դալից, նուրբ քան զնս մարմնով,
մանր յոյժ և պապղուն թեփօք, բեխս ընդ
ծնօտն ունելով, ուստի և յոմանց Տաճիկ
մարբառով անունի Բելըլլի :

ԿԱՐՄՐԱԽԱՅՑ՝ կոչի այժմ Կարմրախէտ,
վասն ունելոյ խայտս կարմիրս ՚ի վերսոյ ձիւնա-
փայլ և աղուաթեփ մարմնոյ իւրոյ, մի մկանյն
ողնփուշ և քանի մի թրափուշ ունելով գե-
ղեցիկ տեսլիտմբ քան զամենայն ձկունս աշ-
խարհի, ամենայն բարեձեռւթեամբ յար-
մարեալ և պատշաճեալ : Յընթացս շրջագայ-
ութեան իմոյ ոչ ուրեք ձաշակեցի ձուկի հա-

մեղադոյն քան զուս : Կարմիախայտ հազիւ
գտանի ՚ի լիճս , կամ ՚ի մարմանդս Երասխայ ,
զի սիրէ զքարուտս գետոց , Ուստի և ոյն
վտակէք Երասխայ , որք ՚ի ժայռուտ լերանց
վտակին ՚ի վայր , որպիսի են գետքն Անբերթայ ,
Բեւրականայ , Վասավս , և մանաւանդ . թէ
Հրասդան՝ լի են սովին զրեթէ ընդ ամս ողջոյն :

Աեւստաձչ՝ գտանի ՚ի Հրասդաննաւ ձուկն
ինչ յոյս անուն կոչեցեալ . յարենման կարմ
րախայտի , այլ փոխանակ կարմիր խայտից՝
սեաւ խայտս ունի զմոխրագոյն մորթով իւրով :
Աս առաւել մեծանոյ քան զկարմրախայտն ,
ըստ որում ոչ այնքան համեզ է միս նորա , և
ոչ այնքան զհետ լինի յումեքէ :

Աեւսօնուկն՝ տեսակ ինչ կապուտի կամ կո-
ղակի , այլ սեազոյն մորթով և թեփօք , ոչ
այնքան ՚ի համարի :

Յթկաջուկն կամ Երկըրունք , այլաղերէն
ու զուն բուռնա կոչեցեալ , ունի մորթ ապիտակ
և ցռուկ երկար՝ իբրև զինումլի ձուկն , պա-
րարտ և համեղ մսով :

Մուրջ՝ է ձուկն ինչ սրակիճիթ յաղգէ
դալից , այլ միայն զի գոյն նորա խառնն է ընդ
դեղին և սեաւ , Ծերպամուտ և դժուարորա
է սա . միսն թէպէտե ոչ այնքան պարարտ՝

սակայն համեղ է : Անձագոյն Առուրզն հազիւ կշռէ 500 դրամ :

ԿՈՂԱԿ՝ ձուկե իրրե զկապոյտն թէ քանակաւ, թէ կերպարանաւ և թէ թիվօք պարաբո քան զնա՝ այլ ոչ այն քան համեղ + ո՞ր ելանէ անբաւ առաստութեամբ ՚ի մէջն Ապյիս ամսոյ, և անաշխատ որսացեալ՝ հազարաւոր բեռամբք կրի աստ և անդ, զոր խոտոցեալ և յաղաջուր եղեալ՝ ուտեն զամն բովանդակ :

ԽՃԱՆԱՋՈՒԿՆ՝ գլուխ ամենայն ձկանց, թէ ծովուց՝ և թէ գետոց աշխարհիս . ՚ի գոյն բաց կարմիր պղնձոյ, խայտ ՚ի խայտ զօրէն կարմրախայտի, այլ խայտքն բոլորովին նման պտղոյ աչաց ոչխարի, համեղագոյն և պարաբուամարմին յոյժ իշխանաց և եթ ուտելի. այլ ափսոս որ հազուագիւտ : Ելանէ ընդ կողակին հաղիւ մի կամ երկու ՚ի մէջ հազարաւորաց նորա : Անուն նորա, կամ իշխան ձկանց, և կամ յիշխանաց միայն ուտելի՝ յայտ առնէ գպատուականութիւն նորա :

ԳԵՂԱՐՔՈՒՆԻ՝ թէպէտե ամենայն ձկունք ելեալ ՚ի ծովէ անտի գեղարքունիք կոչին, սակայն առաւելապէս տեսակ մի կամ երկու յատուկ այսպէս կոչեցան, որք են յաղգէ կարմրախայտ և սեախայտ ձկանց, ընդ մէջ

երկոցուն ես՝ թէ քանակաւ, թէ դունով, և
թէ համավ։ Առթ նոցա ի գոյն բաց կարմիր
պղիձոյ՝ մանաւանդ յորժամ թարմ իցէ. թեզն
մանը՝ լստ կարմբախայտի, և լստ նորս գը-
րեթէ անփուշ։ Առոցակ արկեալզսա ի ձմերան՝
մեծաւ քանակութեամբ տանին աստ և անդ ի
վաճառ։ Ընտիր լինի սորս խորովեալն ի
փռան, փորալից կտաբն, և ձկնախաշուն,

ԲԵՂԴԱԿ՝ մեծ տեստկ պարարտամարմին և
սեախայր դեղորքունւոյ։ Որպէս իշխանա-
ձուկն ի մէջ կողմակաց՝ նոյնալէս և բաղտակս
այս ի մէջ դեղալքունեաց հաղուագիւտ է
յոյժ. զի գրեթէ բաղտովին անկանի ի ձեռս,
ուստի և անուն կոչեցաւ նմա։

**(Օ) ԶԱԶՈՒԿՆ ՀԱղուագիւտ է, և եթէ գտա-
նիցի ես՝ բնակիչք ոչ ուտեն զնա,**

Ծ ՆԱԶՈՒԿՆ՝ Ատղմանի, կամ Ատղան,
ձուկն մեծ՝ սպիտակապորտ և սեաքամակ,
այլ յԱրարատեան նահանդի ոչ ուտեն զնա։

**Ճ ԱՊԱԼ կամ Ճապաղ ասին ոյն ամենաա-
տեսակ մանը ձկունք, որ յետ ցամաքեցու-
ցանելոյ կամ շընելոյ գետոց ի բնական ըսթացից
իւրեանց յայլ, ժողովին ի քարատակ խորշ ինչ
ջուրց, և անաշխատ որսացեալ լինին ի ման-
կանց անոտի։**

Պ ԵՇՈՒՆՔ բազում՝ գտանին յԵրասխ և
ի վտակս նորա, որոց մորթ ազնիւ՝ կացուցանէ
զերևելի իմն նիւթ առի և տրոյ ընդ Օսմա-
նիա և Առուսաստան :

ԵՄ չափազանց առատութիւնն ձկանց յԵԽ-
բարատ, և այն գրեթէ պարզ և անաշխատ
որսորդութիւնն նոցա, եթէ ընդ հոգածու և
խմաստուն ժողովրդով լեալ, բաց ի պիտոյից
անտիմեծ նիւթ առնատրի ևս ընծայէր, Բայց
տարարադրասլես անծանօթ է նոցա ապուխտ
ձկան, անծանօթ է նոցա իւղել ձկան, և ան-
ծանօթ է նոցա ո և իցէ վասն ապագայիցն
պահեստ, թէպէտե առօրին պիտոյից ճարտա-
րին կանայք մեր հետարհել յաւետ քան զերե-
սուն տեսակս խահից ի մի և նոյն ձկանէ :

Զ Բարսեղիան Արքունու

ԹԱ ԱՐԻ՝ որ է քարակարկառ թումբ ինչ յա-
րուցեալ ընդ մէջ գետոյն, Հալելով՝ ի մի
կոյս ափանց նորա, իբրև ձոր եռանկիւնի իմն
ձեռվ, ի միջոցին՝ յորում այս կարկառ մեր-
ձենայ տփին, պատնիշապատ վանդակի ձողովք
'ի միջի ունելով ծուղակ կամ որթ ուռեգործ,
առ որ Հրապութին ձկունք և ի ներքս մտեալ
այլ ևս ոչ կարեն ելանել՝ մինչև գնայ թար-
ագ իրն և առնու զնոսա :

ՈՒԽԿԱՆ՝ ցանց, դամ, և որոց ՚ի սոցա սակի
են, գրեթէ ՚ույն են ամենայի ուրեք :

ՎԵՏԱՎԱԼ ասի այն մեծ տեսակ ուռկանի՝ որ
՚ի մլոյ կողմանէ Հասեալ ցմիւս կողմն՝ ՚ի մշջ
գրաւէ զընթացո գետոյն, և ՚ի ներս հաւաքէ
զձկունս նորա :

ԵՎԵԳՆԱՐՄ ասի այն՝ որ առեալ զբազում
խուրձս եղեգանց ՚ի մթին գիշերի՝ վառե՞ն յե-
զերս գետոյն, ձկունք առ լոյսն հրապուրեալ
դէսլ յափն գրոհին, և որսորդք կարթ հառ-
տատեալ ՚ի ծագ ցսլոյ ՚ի ձեռա՝ որսան զնոսա
և արտաքս ձգե՞ն :

Պատմի թէ Յովհաննէս Հօրեզբայր իմ,
որ միայնակ որսայր երբեմն զզիշերոյն ՚ի ներքոյ
ոյդւոյն Քարարաշի յանուիման Այրին ազք-
բաց՝ որ կոչի Առլուզաղ, առ ճանապարհան՝ որ
տանի յԵրեանոյ ՚ի Վաղարշապատ, ՚ի կար-
թել իւրում զձուկին ինչ ահագին մեծու-
թեամբ՝ ճուաց ճուկին ՚ի ձայն մեծ, և թափ
տուեալ զկարթն ՚ի ձեռաց նորա՝ նովին
Հանդերձ մղեցաւ ՚ի ջուր անդը : Յորմէ զար-
հուրեալ կորովւրյն Հազիւ Հաս ՚ի տուն, և
զկնի երից աւուրց լնկալաւ զլախճան կենաց :
Այս տեսակ ձկունք կամ անծանօթ իմն՝ կամ
երեակայականք թուին գուլ, ապա թէ ոչ՝

զամենայն ծանօթ ձկանց ոչ լուսյ թէ ճռւան,
Ճռւան կամ ձայն ինչ հանեն :

ԳԵՂԱՎԱՊ ասի այն՝ որ զլաւառ կամ զառաջ
գետոյն կապեալ գարձուցանէ զընթացս նորա
յայլ իմն կոյս 'ի բնականէն, և 'ի նուազել
ջրոյն, է՛ որ կարթովլ. է՛ որ ուսկանաւ, և է՛
որ ձեռօք՝ որսան զձկունս նորա :

ՈՐՍԱԴԻՆ, կամ Փռանդ ատ է բոյս իմն գորշ-
կանաչ գունովլ, և իբր թէ թեփոտ կամ ալերոտ,
զոր քաղեալ և ՚ի խուրձս կապեալ ջրոտեն և
հարկանեն զքարամբ.ք, ուստի ելանէ փրփութ
իմն օճառային, թմբացուցիչ ձկանց, որով
անզգացեալ լուզական արարածոց՝ խռովո-
րէն տատանին յերեսս ջրոյն և որսացեալ
լինին : Այլ զարմանք յիրաւի, զի կերակութ
նոցա՝ ուտողացն ոչ վեասէ :

ԼԵՒԻՆ ՚Ի և ԲԵՐ ԱՅԵՐԵՐԵՎԱՆ

՚Ի ՀԱՐԱԿՈՑ անկանի Ուստիս, և գօտի ՚ԱՐ-
պատական լերին . յարեւմոից Ուղանլու,
կամ Ոօղանլու . 'ի Հարաւոյ ~~Ա~~ Արագածն,
Արային . Գեղամին և Գառնին . յարեւելից՝
Գուզուազի, լեառն ազի կամ ԱզէՀանից՝ առ
՚Աախոչուան քաղաքաւ՝ ՚ՕՂԱԿ լերամբ.քն
հանդերձ, զորոց ՚ի հանդիպել իմում, գըեցից

մի ըստ միոջէ : Օ արդիս արժանե համարիմ
հարեանցիկ ծանօթս տալ, զի գտանին յԱյր-
բարատ ՚ի գաղանաց անտի՝ տոիւծ, վագր,
ինձ, արջ, բորենի, գայլ, աղաւէս, կատու
վայրի, ողնի, կուզ. աքիս, խլուրդ, ջրշուն,
ոճ շատ և մեծամեծ յոյժ, լորտու, մուղէս
և այլ բազում խանութներոր տրաբածք : ՚Ի
մէջ էրէոց ՚նորա՝ կիւնձ, վարազ, խոզ, ցիռ,
եղի, այծեամն, քաղ, քօշ, և ՚նապաստակ :
՚Ի մէջ ընտանի անասնոց ՚նորա՝ գոմէշ, կով,
եղի, ոչխար, այծ, ձի, ջորի, էշ, և ուզու :
Հնախօս մեր զԱյրաբատեան ՚Խշնց յատկա-
պէս խօսի, զանց արարեալ զնժոյդ երիվարօքն՝
որ թէ առ հնովք և թէ առ մ.օք՝ սքանչելիք
իմն համարեալ էին և են : Չիրաւ դաշտ՝ ի
Բագրեւանդ Ռաբարատայ, և առասպելք ծո-
վածին երիվարին : Բօրօղլոյ՝ յայտանենն
թէ այս ՚նահանդ ոչ ՚նուազ քան զԽնուս և
զՏուս* սնուցաներ յինքեան զերեելիս ՚ի ձիոց :

* Տուս զաւառ յԱղուանս ՚այսոց, ուստի գաղթական
գնացեալ և ՚ի խորասան հաստատեցին քաղաք և զաւառ յայս
անուն : Ցեսակինչ ձիոց ՚Իլիրօղ անուանեալ՝ յատուկէ Ցու-
սական ՚նահանդի մերոյ, և տեսակինչ Թուրքանի կոչեցիալ՝
յատուկէ Ցուսականին խորասանոց Ընտիր քան զերեսսին և սէ ՚է
՚ինուսանն՝ որ ՚ի հարաւայ Բատենոյ՝ ՚ի Տուրութեբան մեր
անկանի ՚նահանդ :

՚ Եթու չեց՝ ունի զսագ, զպոր, զթանձր, և
զաքար մացառազօղ՝ ըստ ՚ Ա ազարայ Փար-
պեցւոյն, զկաքաւ, զսեալանջ կամ բաղրդարա,
զլոր, զսալամբ, զտուլաշ, զսարեակ կամ թթի
զուշ, զժեռ, զծիծառն, զմանդաղաթե, զբադ
զարս, զարտուտ, զազանի, զտատրակ, զհօրաւ
զաբեղաձագ, զյոպոպ. զներկարար, զմարի վոյ-
րի, զռունկ, զկռունկ, և զծիտ կամ զճնձղուկ:

Յօձից երեւելիք ե՞ն նորա քարբ կամ ար-
քայիկ, վիշապ օձ, և լորտու՝ որ մարդկան
ոչ մեղանչէ, Առիւն ՚ի մեջ օձից Մասսեաց
և քարալերին Ելանայ կամ Ելամայ՝ յլպլու-
կունիս, եթէ չիցէ պատմաբանական իմն
այլաբանեութիւն, հրաշս առնէ թէ պատմողաց
և թէ լսողաց միանդամայն :

՚ Հանքաց ծանուցելոց մինչ ցարդ՝ ունի
ոսկի լնտիր * յլպարան՝ ի վերուստ Արու-

* Յաղագս հանից ոսկւոյ յլպարան՝ ծանօթութիւն ստա-
ցայ՝ յորժամ զունդ զօրաց Ռուսաց լնդ Դարա Մայօրաւ
մասեաւ անդր՝ պեղեաց և բարձ անհամար սայլօք զխամ հող
նորա ՚ի Պղնձահանս Ռւճունայ: Զոսկեհանից Աբասածորոյ՝
տեղին և յիշատակ միայն կայ: Բայց զհանից երկաթոյ և պղնձոյ՝
ծանօթ չեմ: Առ պակասութեան հանքային ածխոյ և բաւա-
կան փայտից՝ ամենայն հանքարհին՝ անգործ կան: Ռւստի
զլութ ամենայն փարթամութեան և սատարիչ արուեստից
համարի միայն դիւտ այնը նիւթոյ, առ որ և աղաչի մասպը-
րութիւն ազգին:

Ճայ, և յԱրասաձոր ՚ի Կիդ գաւառի՝ առ
երի Բջնոյ : Աշ ընտիր ՚ի Կողք, ծծումբ
ինքնածոր՝ յԱրադած լերին, կաւօճառ ՚ի
Փարաքար, և յայլ տեղիս . քարահանք
կարմիր . սեաւ, և սպիտակ փուխը քարանց
՚ի հիւսիսյ Վաղարշապատայ՝ քարահանք
կձէից և ջրաղացաքարանց՝ ՚ի Մասիս : Ու-
նի և հանքային աղբիւրս մերձ առ Վեանայ
ծովն, որ թթուուտ գոլով՝ առողջահար համա-
րեալ է : Ազգիւր Արծավու ՚ի Կոդ գա-
ւառի՝ ունի ջուր քարանալի, որ բիւրեղացեալ
լինի ուլունք սպիտակ գունով առ ՚ի զարդ
դեղականաց : Ոժուի ունել Մասիս մեր և
զածուխ հանքային, բայց ոչ բացիալ մինչ
ցայսօր :

Հաղկանց Աարարատայ հրաշալին և
հազուադիւտն է համասվիւռ Ժաղիկ, որ
գտանի ՚ի Դարիւնս . անթառամ, ձնձաղիկ,
նարկիդ, նարօտ, հօրօտ, պուտ, հարմնէմատն,
բրաբիոն, շուշան, աղբերաց արիւն, քեներ-
փուկ, աղլախնձոր, կակաչ, մեռն, բայմնեակ և
վարդ ամենատեսակ և ամեներանդ : — ՚ի բան-
ջարս նորա երեելիք են խաշնդեղ կամ խաւ-
րըծիլ, իշխուն, երիցուկ, նուուկ, ուրց, մահ-
մուդիէ, ջաղվար, ձարձարտուկ, բոխ, զոխ,

բոլի , ողորմակոթ , սինձ , սիպեխ , գոզի , կապար , կառ , կանգառ ընտանի և վայրենի , սպիտակաբանջար , ալանիկի , ճակնդեղ , գետախնձոր , գազար , բողկ , շաղգամ , սունկ , երիժնակ , աղինձ , գաղձ , աւելուկ , անանուխ , օղին , շրեղ , լոշտակ , և այլն ։ Ի ներկոց նորա թող զորդանն կարմիր՝ է նոին , հացին և գիտոր՝ ի նիւթ սեռութեան . ալաժահը՝ նիւթ կանաչի . ծպեխի և տոնիր՝ նիւթ կարմրոյ : Խոկ սլողոց պատուականաց և սեխից և ձմերկաց և վարնդոց՝ մեն մի մատենից պէտք են :

Յարմտեաց նորա՝ ընտիրք են զանազան տեսակք * ցորենոյ , որիզոյ և բամբակ անքառ : Բայց թողեալ զորս յիշատակին ՚ի գիրա՝ ստորագրեմ միոյն զոյնս՝ որք նորոգ մուծան ՚ի Ա աղարշտակատ , և են հետա-

* ՚ Առվտն Ուուսաստանի՝ որ եղե ՚ի վերջնում ամի կայսերութեան Աղեքսանդրի Առաջնոյ՝ և շարունակեաց ցամն երորդ կայսերութեան Կակողայոսի Առաջնոյ՝ կարողացաւ Արարատ միլիոն բնամեց ցորենոյ և այլ արմտեաց բառնալ անգանօր , և զգէմ ունիլ վտանգի սովամահ կոտորեան բաղմութեան նորա : Ասի թէ և Կայսրն իրբ զէս միլիոն ձիոց արտաքս եհան ՚ի Ուուսաստանէ , զի դիոխանակ նոցա մարդիկ կերակրեցին : Եւ բարի արար :

գոյքդ : Կաթուզիկոսն Հայոց Տէր Եփրեմ :
 Պոլով 'ի նախկնումն նուիրակ Հնդկաս-
 տաներայց՝ երեր անտուստ զժուրինդի .
 զբամիա, և զքարթովիլ կամ ձուտակ, զոր
 ոմանք անուանեն գետնախնձոր Եփրեմց :
 "Երսէս արք եպիսկոպոս . եմոյծ անդ՝ զհա-
 ցածառն Անդուիջեան կղզեաց, որ բերէ
 զարմատ պարարտ հանդոյն կռօթկի, որ չորա-
 ցուցեալ և լոսեալ՝ լինի ալիւր մննդարար և բա-
 րեհամ : Արդուինցի Գրիգոր Եպիսկոպոս
 "Օսուկուլն կոչեցեալ, երեր զեւմնիս . զոր
 և մեծաւ զգուշութեամբ պահէր ի ձմրան :
 Աահակ Եպիսկոպոս Անդիցի, (որ է թաղ
 Երևանայ,) փոխարքեաց ի կողմանց հնոյն Ար-
 տաշատայ զակը որդանն կարմրոյ, և մշակեալ
 ընդարձակեաց յիշմիածնին : Որով և զգիւտ
 առատացուցման և մեռուցման ոյներ չետշնար-
 հիկ երանդոյն հեղինակեալ՝ ընկալաւ պարգեի
 մասամբ ի "Եիկողայոսէ Առաջնոյ Այսերէ
 Ոռուսաց՝ զանդամանդի մատանի և զժոշակ
 կենսապահ : Օ գետակաղամբն, (Պումըիտ)
 երեր անդ Աարապետ Եպիսկոպոս "Եոր
 Պուղայ . և զալոճն վայրի ընտանացոյց
 պատուաստելով Աահակ Աարդապետ Աա-
 հառունի : Խոկ Որուսք յաւելին 'ի սոսա

միայն դճիստակին՝ կծու համով, որ ՚ի լեզուն
Անգղիացւոց horse radish անուանի . Համեմ
արժանիքմաց :—Ակսան Երեանցիք մշակել
ապա և զտոնիրն , որ մինչ ցայսվայր ինքնա-
բայս էր :

Ում զիտրտ և հաճոյ իցէ առնուլ զառա-
տութիւնն աշխարհիս մերոյ՝ առցէ . այլ ինձ
թուի այսր միայն լեալ պատճառ անիմաստա-
սիրութեան 'ի բարս առաջնոց թաղաւորաց
մերոց, և անմիաբանութեան Հպատակաց նոցա:
Մարդ՝ որ յաշխարհի առու առ մարդ մե-
ղանչէ, ՚ի դրախտին փափկութեան՝ առ Աստ-
ուած մեղաւ : Մեք՝ որ յետ կորստեանն
Եդեմայ զեդեմատիսն ժառանգեցաք զհայ-
աստան՝ առաստութեամբ բերոցն յզփացեալ
անկուշեցաք զԱստուած ՚ի վեր՝ և զԱրքայ
մեր ՚ի խոնարհ : Շնորհք ՚ի մեծաւորաց և հնա-
զանդութիւնն 'ի փոքրաւորաց կացուցաներն
զքաղաքական առնչութիւններ իշխան և ժողո-
վուրդ : Հայք շնորհաց իրիք կարօտ ոչ
մնացին, և չու բազմութեան նոցա ՚ի Բարելոն՝
ոչ եթէ առ Հարկի կարօտութեան ինչ , այլ
յաւետ վասն գաղտնի իմն ամբարշտութեան
եղեալ Համարիմ, որպէս եղեն և կատարեցաւ
լստ գրոց սրբոց : Քանզի ոչ Կոյ միաբա-

նեցաւ ընդ նորա, և աչ բարեպաշտագոյնք յորդւոց նորա:

Առեղծ մտօք զազատ իմն եղանակ կենաց, և դիր թէ դուզնաքեայ աշխատութեամբ կարող ինչ իցես հանել զտարեկան ծախս քո՝ անկախ զշնորհաց սորա կամ նորա, և կեալ: Արդ եթէ դէպ լիցի ուրուք զբկել և զզուել զքեզ, տանեիս արդեօք հեզութեամբ: Քաւ լիցի ։ ուրեմն այդպիսի էին և նախնիք մեր:

Չիք սահման յիշւրոպիա՝ այնքան ծայրագոյն իմաստութեամբ ընակչացն մշակեալ, որ հաւասարել կարիցէ դէթ անիմաստ մշակելոցն ՚ի հայաստան, ինքնաբոյս բանջարք նորա մնենդարար և համեզագոյնք են, քան զմիս այլոց աշխարհաց: Արմափիք նորա դրեթէ ՚ի կերակուր հրեշտակաց տարեալ, սլառուզքն պարարտ և պարարուն գրեթէ երկնայինք են. որք նախ զ Օքադեշտի՝ և ասկա զԱպահմետի վառեցին զերե ակոյութիւնս սոսկ ստուերօք իւրեանց նկարել զարքայութիւնն հաւատոցն: Ուստի նոքա՚ի հարկէ ստիպեալ կարօտացան արուեստից ՚ի զիւտ պարենիցն՝ զորս երկիր մեր ձրի տայր և տայ մեզ:

Այս ազատ ապրուստ ազգիս ընդ պէսպէս յոռութեանց անվութութութեան, ծուլութեան

և անիմաստասիրութեան, ճնառնէր 'ի բարս
նոցա և զազնուական առաքինութիւնս զա-
ռատասրատթե, զվեհանձնութեան, և որոց 'ի
կարգին : Հայեաց 'ի ճշմարիտ վեհանձնութի
Հայեաց առ դի տապաստ անկեալն Բէլ:
Հայեաց յողջախոհ ժուժկալութի Արայի, և
անփառամոլ սկըրճութի նորա առ վարար այն
Շամիրամ, գերօրինակ քան դՅովսեփեայն
յիշգիպտոս : Հայեաց յանուշութիւն վարուց
Անուշաւանայ, որով լնդ գերութե, զհայրենի
իշխանութին շահեցաւ, Որք միահաղոյն ցու-
ցանեն, թէ Հայք միայն եղեն միաբան և տի-
բասէրք յաշխարհի, քան զազգս բազումս :
Բատ որում հնազանդութիւն և Համաձայ-
նութիւն նոցա՝ ոչ էր առ հարկի կարօտու-
թեան և գերութեան, որպէս նախնի Յունաց
և Հռովմայեցւոցն . այլ տղատ և ինքնա-
կամ զինուորելոց : Բանիս ապացոյց լինի իշ-
խանութիւն Հայկազանց, թէ հնութեամբ
և թէ երկար տեղութեամբ իւրով :

Անիմաստասէր չէին և առաջին թագաւորք
մեր . նախ՝ զի որ ինչ արհեստք ստեղծան
յԱդամայ մինչեւ 'Կոյ, անդ ստեղծեալ և
անդուստ տարածեցան : (Օրինակ քեզ կաղ-
մութիւն տասկանին, և շնութեան աշտարա-

կին ՚ի Բարելովին, զի մարդիկն ՚ի Հայուռսեալ զարուեատոն ՚ի Աեհասարի վարեցին դէպ ՚ի չարն կօյս :

Ենիմաստասէր չէին առաջին թաղաւորք մեր, որոց պատմութիւն յօտարոտի գրոց և օտարոտի ձեռոօք հանեւալ, շնչոյն Աստուծոյ հաւասար ընծայեցաւ և կայ :

՚Եա՝ անիմաստասէր չէին, որք կարսցին զաշխարհ այսքան արդաւանդ և բերրի՝ ՚ի ժառանդութիւն անձանց և զաւակաց իւրեանց պահել զամս յաւետ քան զերկու հաղար՝ յերեսաց շրջակայ և արենարբու թշնամնաց իւրեանց :

Ճշմարիտ իմաստութիւն է զցանկութիւն սրտին չափաւորել, և ըստ այսոմ նչ լսի, թէ Հայաստան երբէք պատերազմ մղեաց վասն ընդարձակելոյ զսահման իշխանութեան իւրոյ, Հաղարք ՚ի վերայ յարձակեցան վասն առատութեան նորա, և նա զէն զգեցաւ միայն ՚ի պաշտպանութիւն իւրոց իրաւանց :

・Բարդէացիք, Ասորիք, Եղիպտացիք, Պարսք, Յօյնք, Հռովմայեցիք, որպէս նաև Արշակունին մեր Ա աղարշակ՝ նչ տանելին ճանաչել զազդ մեր, որպէս և էրն, զի մի աղօտացուցեն զիրաւունս բռնակալութեան

իւրեանց : Եւ եթէ այս միոյն չիցէ պատճառ, ընդէր ապա զքսութեանց, բանսարկութեանց և զգմտութեանց ծագելոց յաւուրս իւրեանց՝ զնշանախից անդամ ոչ տեսանեմք 'ի պասմութեան Հայկազանց՝ յինքեանց առ մեզ ածանցելոց :

Հայրենասէր եկաց ազգ մեր և կոյ՝ զի թէ-պէտե բաղմիցս ընդ տէրամբք խոտասրտօք աշխարհ ծովացաւ արեամբ անմեզաց ազգին, սակայն դեռևս մեծագոյն մասն նորա ոչ մեկնեցաւ ՚ինմանէ : Հանե յերկինս զԻԷլ, զԸ ամիրամ, զԱւսոստրէս, զԱզէքսանդր, զԱւկուզէս, զԱրտաշէր Ասսանեան, զՅազկերտ, զՏուզիլ, զԱրփասուլան, զՎ Էնկիզ Խան, զԹէմուրլանի, զԱրբաս Մշեծն, և զԿադիր Շահ խուժագուժ արենարբու զօրօք իւրեանց. և ահա անմօրմին Հրեշտակք անդամ զարհութեալք յահէ նոցա յերկիր թօթափին . այն Ենչ Հայք՝ այն Հայրենասէր Հայք՝ տակաւին կան և մնան տառապանօք 'ի Հողս Հայրենեաց իւրեանց :

Ամենալիր առատութեան Հայաստանի էին Հաստատութիւննակ անդադար արշաւանք ազգաց օտարաց, և անհնարին պատերազմունք մնդ դարս դարս . որք զբեթէ զարիւն Հեղին

փոխանակ ջրոյ նորա , և կեանս ետուն փոխանակ կենդանաբար բերոց նորա ,

Բայց չէ՝ որովհետեւ **Հայաստան** զարդիս զմեծ մասն երեակայական ծախուց իւրոց արտաքուստ ընդունի , և որովհետեւ ամենայն ծախք ժամանակիս գրեթէ երեակայականք՝ են ըստ ինքեանց անսատիք , այլ սրիչք մտաց մարդկան , թէ հնարողացն , և թէ վայելողաց , սպարտի խնայելով գոնէ ՚ի փոխանակել զիսկութիւն իւր ընդ սնստիս այլոց աշխարհաց , զարուեստից կարեռաց բուռն հարկանել . և ձեռակերտաց ձեռակերտա վճարելով՝ զՃըշմարիտ հարստութիւն իւր ՚ի ներքս ինքեան համբարել սպահել : **Օ** ի՞նչ միսիթարութիւն Մեղասայ ՚ի մէջ ոսկեցն սովորմահութիւն , և զի՞նչ միսիթարութիւն մեզ ՚ի մէջ այսքան առատութեան աշխարհիս՝ աւուրին սպարենի կարօտ հեծութիւն : **Այս** գար արուեստից գարէ , և ոչ ընութեան . ընդէլը և ՚ի սոյն արդեօք գերազանցել չփութացցուք : **Այս** ինչ այլք միայն արուեստ ունիլ կարեն և զիկութ արուեստին յայլուստ հայթայթեն , մեք զըրեթէ զամենայն սպատրաստի ունիմք յաշխարհի և ՚ի տան մերում :



ՀԱՏՈՒԵՇ ԵՐԿՐՈՐԴԻ

Բառացին առաջին ըստ բարեկարգության և առաջին պատճենին
կերպություն բնութագության է :

ՅԱՂԱԳՍ գինեւոյ Հայոց՝ տես ՚ի լիոս և
Աօնդիսլի՝ յերես 215:—Բայց եռ ոչ ոյն-
քան զարմանամ ընդ ամենալիր առատութիւն
բերոց նահանգիս՝ որոյ լերինք են մղը, և
դաշտք իւղ և գինիք, որքան ընդ բազմածը-
նութիւն ընակչոց նորա :

Օ կեր մեծի ջրհեղեղին՝ ողիք իրրե ութն
միայն իջին յայու դաշտ հրաշալի՝ յորմէ
ցշիւութիւն աշտարակին՝ ՚ի Բաբելոն՝ Հազիւ
ձգեցան ամք երկերիւր ըստ ամենայն ժամա-
նակագրոց՝ մերոց և օտարաց միանգամայն,
սակայն և այնպէս՝ ՚ի սուղ այսմ ժամանակի
և յառաջ քան զջուն ամբարշտաց՝ Օ ըուանն
(զոր ես Պրիան Համարիմ), ոչ միայն շէն
արարեալ և ելից բնակութեամբ և աշակեր-
տոք զգաւառն Օ արեանդ, ՚ի Հարաւոյ
Վասսեաց լերին, այլ և զլիեմ լեռան յիւր
անուն կոչեալ՝ ելից բնակութեամբ : Առձ
զլորձէսն ամենայն, Վոգք՝ զՎոկաց ՚Եա-
հանդ, Եւիլատ զեզերս Փիսովի՝ և անուա-
նեաց զայն երկիր Եւիլատայ : — Աղասիսեալ

Է. ին լերինք աշխարհին, վասն որոյ և համառ
ռօտութեամբ հայկական բառին՝ Խաղափիք
կոչեցան։ Փիսովն գետ զկողիւք երեելի
քաղաքին քսելով անցանելը, և ահա Կող-
քիադ եւ անուն, միոյ ՚ի Հնագոյն քաղաքաց
աշխարհի ՚ի մեք իսկ բարբառ։

Երեւան և գրեթէ ամենայն նահանգք
Հայաստանի՝ (զորոց առաջին գրութիւնք իմ
կորեան ՚ի Առւրը Խջմիածին*) զերոյն յայտ
առնեն։ Եւ յիրաւի եթէ նուրը քննեցին՝ նաև
անուանք ամենայն վայրաց Հայաստանի՝ յա-
ռաջ ընծայեն զմի մի ՚ի նահապետաց անոնի
ազգացն առաջնոց՝ որք աճեցան և բազմացան
՚ի Հայաստան, և յետոյ բաժանեցան՝ կէսք
զԵցի՝ և կէսք՝ Կերբութայ զհետ։

Թռուի թէ ընդդէմ պնդեսցեն ոմանք ասե-
լով՝ թէ նախ և զկնի հեղեղաց բազմածնու-
թիւն և երկարութիւն կենաց մարդկան յա-

* Առաջին զրութիւն իմ զայոցանէ՝ անռւանեալ Փորձա-
նարան Մեսրովայ, յիտ զարձի իմոյ ՚ի Հագկաց՝ արձակ
թռի ամեննեցուն ընթեռնուլ և զքօնուլ։ Բայց աւազ, զի
չ մեր ջոյ ով տարաւ զայն՝ ուրացաւ։ Յետ բազում ամաց
կըրսահան նորա՝ հասուած ինչ ՚ի նմանէ հրատարակեալ
աեսի ՚ի Հայրենասիրին Զմիանիոյ՝ և շատ զարմացայ։ զի
զրութքն իմ են, այլ ես օրինակն չունիմ։ Վասն որոյ ոք
ինչ այսուհետեւ զբացին, և զանազան ՚ի նմանէ զոցին,
իմանալի է, զի յուշոյ միայն զըին —

տուկ և ժամանակաւոր շեորչ իմն էր Աստուծուծոյ . զայդ և ես ընդունիմ : Ի՞սոյց ոչ կարեւ ականատես փորձոցն հակառակել , որք իբրև մատսմբացի ցուցանեն , թէ որպէս Հայաստան ամենալիր առաստեթեամբ թերոց՝ եղեմատիալ սահման ընկայեալ և խոստովանի ՚ի մերոց և յօտարաց՝ նոյնապէս և ծնունդ և կեանք բը-նակչաց նորա եղեմական անմահութեան մերձաւ որպադոյն լինել լնողունիլիք են : ՚ Ա Հաստատութիւն այսր կարծեաց առ դու զպատարագն Հայաստանի առ Աստուած , և զօրհնութի Աստուծոյ առ ազդ մարդկան՝ լստ վկայութեառուրը Գրոց : Առ զհամաձայն վկայութիւն բանիբունք Ճանապարհորդաց Եւրոպացւոց , զորովք զանց արարեալ առ այժմ , քաղեմ արդ զկարի հրաշալի պատմութիւն ինչ ՚ի ճանապարհորդութենէ : Հաթիմ Տայւոյ՝ օրինակ զայս : ՚ Ասդի սիրով կապեցաւ ասէ , ընդ պատահեւոյ ուրումն ՚ի Հայս՝ ուր մարդիկ թնականաբար ոչ մնունէին , այլ միանդամ ՚ի տարւո՞ն յաւուր նշանաւորի իրիք ժողովէին ՚ի շրջակայս մեծամեծ քաղաքաց և զրօնեալին ՚ի խաղս . յորում անձինք յամենայն Հասակաց յանկարծ զկայ առնուին , երկրապատնէին ընդ յարեմուտս , և գօտի ընդ մ.ջ ածեալ՝ արա-

գութեամբ սրանոյին յանձանօթս անտաղուտին և աներեւ լինէին : || (Կապուտի որպէս և կայ տակաւին կամ քերթուած իմն է այս խորասոյզ կորուտեան Արտաւազդայ Երկրորդին և կամ Պարսակուուին բարեկենդանի՝ որ մինչ յաւուրս մեր տեէր յԵրեան և 'ի Տփղիս . արատելով անդամոց և մահուամբ իսկ բազմաց ՚ պատանեաց մերոց, զոր օգնականութեամբ Առմին Երմալովի երարձ Տէր Աերսէս Առաջնորդ Հայոց Ա քաստանեայց :

Առ ՚ի կտրդ բանիս և զայն, զի յորժամ ընդ Արբոյ Հայրապետին Եփրեմայ բնակեաք ՚ Առուրբ Աշնեի վանս Հաղբատու՝ մեռաւ Մինաս Ա արդապետ, և դադաղ ոչ գտաւ թէ ՚ի վանս անդ, և թէ ՚ի գեղջն՝ ուր բնակենին Հայք առաւել քան երկերիւր տամբք : Եւ ՚ի հարցանել խմում ցՏէր Ատեփանոս ծերունի քահանայ տեղւրյի, թէ ապա դուք մրպէս բառնոյք զննջեցեալս ձեր ՚ի հող, ասաց . || ահա քառասուն ամբ են, զի ձեռնադրեցայ ՚ի քահանայութիւն, և երբէք ոչ պատահեցաւ ինձ մեռեալ զոք թաղելս || Անձարացեալ հատաք զմասն ինչ սանդխոց տաճարին, և ՚ի նմա բարձաք զլի հանդուցելոյն : Հզօրագոյն ապացոյց բան զսոսին համարիմ

նա և զոտնակոխ դրութիւն Հայաստանի և
զկատաղի աշաւանս խուժադուժ ազգաց, թէ
ընդ մեզ, և թէ ըստ օտարս պատերազմողաց ։
Որոց սրածութեամբ և գերութեամբ անհետ-
տանայր արդեօք անուն ազգիս, եթէ բաղ-
մածին և երկայնակեաց չլինեաք ազգովին ։

Բաց ՚ի բազմածնութենեէ, Հեշտածինք
ևս են կանայք Հայաստանի ։ որպէս ունիմ
յիշատակել յլնթացս պատահարաց ։ և ահա
միւս ևս նշան օրհնութեան Ամենակալին առ-
երկիր ժառանգութեան իւրոց ։

ԿԵՐՊԱՇՆ ԱՅՏԵՎԵՆԻ

ԱՐԴԻ իմաստասիրութիւն լուսաւոր ազ-
գացն Եւրոպիոյ՝ զազդ մարդկան ՚ի Հինգ որոշ
տեսակս վերածէ ։ ՚իս սպիտակս, ՚ի Հափշիկս,
՚ի Չինացիս, ՚ի Մալայիս, և ՚ի Հակոսնեայս ։
որոց ամենեցուն գլուխ կարգէ, թէ բարեձե-
ւութեամբ անդամոց, թէ անարատ յստակու-
թեամբ մորթոց, և թէ բոլորակութեամբ
դլխոյ և առատութեամբ ըղեզան՝ զընակիչո
կովկասական նահանգաց ։ Բայց այնզի՞ Կով-
կաս ՚ի Հիւսիսոյ կողմանէ Արարատայ կայ,
ընդ մ.ջ անկանելով Գուգարաց և Աւտեաց և
եթ ասելի է թէ այս դըութի՞ նոցա Հայի յաւետ
՚ի Հայաստան և յԱրարատ ։ Բանզի ամենայն

գեղեցկութեամբ նշանաւորք են հարաւա-
կողման ընակիչք Առվելասու որպիսի են Հայք,
Ա իրք, Եղերացիք, Լ եզկիք, Ա լանք, Ա ղու-
անք, Ուտիք, Ա խւնիք, Գ ուղարք և Ա րա-
բատ, Քան թէ հիւսիսակողմանիք նորա՝ որ-
պիսի են Ժամթարք, Պ ազախք, Պ ալմուխք
և այլ խուժաղուժ ազինք՝ որք ամենն ին տար-
բերք են ի նոցանել :

Գ եղեցկութիւն կերպարանաց ազգի մերոյ
յայտ իսկ է ի պատմութենէ անոնի Ա արի-
բասայ կատինայ, ուր իրրե զմի ի գլխաւոր
յատկութեանց յիշատակին կերպարանք իւ-
րաքանչիւր նահապետաց մերոց, Ա րայն մեր՝
գեղեցիկ վերաձայնեալ որ զ ամիրամ շլացոց
զհետ, և Յովսէփ Գ եղեցիկ՝ որ թէպէտե
հրեայ՝ այլ ի միջազետս մեր ծնեալ, Գ եղ
Ա սհապետ մեր, Գ ողթան երգոյն զարմանալի
նկարադրութիւն կերպարանաց Ա ահագնի՝
և այլն, զարմանալի ապացոյց լինին հաստա-
տութեան ըանիս : Եթէ այր մարդիկ այս-
պէս, ո՞ ապաքէն ժուժկալել կարիցէ գեղոյ
կին մարդոց Հայաստանի, որոց լոկ անուանք
ծնանին ի մեզ սէր և զարմացօն, Ա ստղիկ,
յաստեղափայլ կերպարանաց, Ա նահիտ կամ
Կ այիդ ի հայեցուած կամ 'ի նայեցուածոյ

երեսաց իւրոց . Աքըուսեակ՝ 'ի քրքմացան
զուարթութենէ դիմաց . Այուարդ՝ 'ի յաւերժա-
հարսնիկ անթառամութենէ տիցն , Շուշան,
Շահանդուխտ , և այլ հաղար այսպիսի հբա-
շանի յատուկ սիրոյ և խնամոց Աքարչին :

Շարդին երևելի ճանապարհորդ՝ 'ի խօսելն
զարենէ Պարսից՝ ասէ . || Աքիւն Պարսից քնա-
կանաբար խառնակ իմն է , որպէս տեսանի 'ի
Գատրը , որք մնացորդք գոլով նախնի Պար-
սից՝ ե՞ն անբարեձեք , տգեղունք , և խոժոռա-
մորթք : Ի՞այց յայլ կողմանս Պարսից մաքուր
է արիւն , 'ի սակս խառնելոյ նոցա լնդ Ա երս
և Եղիբացիս . ազգք՝ որ զանցանեն գեղեցկու-
թեամբ քան զամենայն քնակիչս աշխարհի :
Հազիւ գտանի իշխանաւոր 'ի Պարսկաստան ,
որ չունիցի զմի կամ զերկու Ա բացի կամ
Եղիբացի կանոյս : Յայսմ հաղորդութենէ
կանոյք Պարսից զգեղ , և արք նոցա զանձնէ-
ութիւն ստացան : || Օ որ միանգամ Շարդին
դրէ զԱ բացւոցն և զԵղիբացւոց՝ զեոյն
իմանալ սլարտիս և զազգէս Հայոց . զի որպէս
կանոյք , նոյնալէս և արք երևելիք 'ի նոսա-
էին յաւէտ յազգէս մերմէ , որք Գառռջիք
կամ Ա բացիք կոչէին առ նոսա՝ ըստ որում
այնը մասին Հայոց Ա երքն տիրէին , որպիսիք

Են զարդիս Առանու չար Խան։ Խոսրով Խան
Առեծն։ Աղալար Խան, Առւլէյման, կամ
Առղբմոն Խան։ Դատիթ և Զալ Խան Առկի-
նեանք, և այլք։

Եթէ շաղելով և գերելով աննշան ոմանք
կարացին ազնուացուցանել զսերունդ ազգի
ուրուք, ասլա Հարկիւ զհետ դայ, և ՚ի մեզ
սերել ՚ի նոցանե ժողովուրդ ընտիր։ որ ՚ի
սկզբանէ Հետէ իրրե մի ազգ և արիւն, թէ
խնամութեամբ և թէ բնակութեամբ կասլակ-
ցեալ էին ընդ մեզ իրրե ։ ընդ հանուրց Հիւ-
միսականաց իրաւամբ վեհագունից ։

Բայց ես Հաւանեալս իմ վարկանել թէ
Հոյք էին յաւետ՝ որ ազնուացուցին զարիւն
մերձակայ ազգացի՝ Արաց և Եղերացւոց՝
քան թէ նոքազմեն։ Յաւուրց անտի Առե-
ծին Արեգատայ՝ ցմեր իսկ ժամանակ, Հայ-
աստան շնորհեաց թագուհիս Արաց։ Տիկինն
Աղքասեղբի որդւոյ Հերակլեայ վերջնոյ
թագաւորին Արաց՝ է դուստր Ակլիք Աս-
հակայ հայկազուն իշխանին Երևանայ, զոր
որդւովն հանդերձ տարան Ուսուք ՚ի Պիետրո-
բուրդ՝ և կայ անդք տակաւին, վասն Աղք-
ասնդրի յամառելոյ ՚ի Պարսս, անդք վճարելոյ
գիւտանս իւր վերջին աղքատութք, և թաղելոյ

Ճիկեղեցի հայոց ՚ի թռեհրան : Հայաստան
շնորհեաց կրօնիի նոցազնուկայս իւր ՚ի պաշտօն .
զի զլամհագն մեր նախ Արք աստուածա-
ցուցեալ պաշտեցին . ՚ի հարկէ ընդ անօրինակ
գեղերեսաց նորա և ընդ քաջի աբարսն
սքանչանալով :

Եւ եթէ այսպէս , ուրեմն Արարատեան
նահանդ մեր , որ սկսեալ ՚ի Այսէ մինչեւ ՚ի մեր-
ջին կործանումն Անեւոյ՝ բազում քաղաքոք
եկաց թագաւորանիստ մերոց և օտարաց՝ հար-
կիւ զարմէր զազգ քաջ , առաքինի և սիրուն :

Այլ զարմանամ իրաւ , զի Դանիել Բարում
հոյկազուն ոմն , որ ամօք ինչ յառաջեկն յէջ-
միածին և անտի գնաց ՚ի Տիղիս , զի տարբեր
աչոք , և գրեթէ ախտացեալ ախորժակօք հոյ-
եցեալ ՚ի գեղունիս աշխարհին՝ բանդագու-
շանս գրէառ բարեկամս իւր ՚ի Անդրաս՝ օրինակ
զայս : “Տիղիս կանայքն և մարդիքն են լիրք ք
չափազանց և ոչ գեղեցիկք՝ որպէս անցաւորք
պատմեալ են մեզ . միայն ծիծն տեսանելով մարդ
գարշի : Ա ան զի է բաց , և կախ այնչափ՝ որ
նմանի տկի , և տեղաւորէ բաւականին ջուր առ-
՚ի շինիլ 10 թաս չայ : Թռէալէտ են առ հասարակ
բարձր և ճերմակ՝ բայց մասնաւոր Ջնէզի
դէմք մարդն է գեղեցիկ : Առ և տուր ոչ կայ ,

ամսոց տարւոյն ։ յորոց ոմանք սակաւաթիւ
գոլով, կամ յայնալիսի ժամանակս տարւոյն ե-
րանելով ուր կամ հունձ և հերկ ժողովրդեանն
արգելու ՚ի յորսալոյ, և կամ տօթ արե-
դականն ՚ի տանելոյ ՚ի հեռաւոր տեղիս՝ յան-
ձանօթից սակի լինին ։ Այլ զորոց որսան ան-
բաւ առատութեամբ՝ գրեցի յերես 36—73։

Խշաննութիւն ծովակիս և Գեղամայ՝ ժա-
ռանգութեամբ իջաներ մինչև ՚ի Նարիւրա-
պեսն Գաբրիէլ, առ Պարսից իշխանութեամբ։
այլ զինի յաղթութեան Ոռուսաց՝ իրաւունք
նորա՝ որպէս և այլ ամենայն ժառանգաւո-
րաց՝ ընդ օրինօք անկան, և դարսոց պիտէր
ակնկալութեան՝ զվճիռն տեսանել ։ Այժմ ՚ի
պատճառս գաղթելոցն Պայազիտայ և Ա-
կուայ, ընդարձակեցաւ այս քաղաք գրեթէ
յիւր առաջին շուք, ՚ի քաջացն Ակուեցւոց
առնելով զհոտ նախնի զօրութեան հսկայից
իւրոց, Տունք են նորա 1000։—

՚Ի շրջակայց ծովուն Գեղամայ մինչև ՚ի
 Շաղկանցն ձոր, անթիւ բաղմութեացին Պա-
 ղախ և Բօրչալու ցհղը Տաճկաց, և Հոնդոյն
 վերոյ գրեալ խառնաղանձիցն՝ ոչ խնայէին
 կեղեքել և ՚ի կենաց անդամ հանել զանցա-
 ռորս ճանապարհաց՝ առ որս հասանելը զօրու-
 թին ուժոյ իւրեանց :

Երկու ՚ի մեծամեծ գաւառաց աշխարհին
 Հայոց՝ որք անկանին զՀիւսիսյ ծովակիս այ-
 սորիկ, այսինքն են մասն Տաշըաց և բերթին
 Գաղոցյ՝ յանուն սոցա Պաղախ և Բօրչալու
 կոչելով, կարծիս իմն ծնանին յիս՝ գոլ ժո-
 շովրդեան այսոցիկ՝ մնացորդք ինչ նախնի ե-
 կամուտ ազգաց, Որք սակաւ առ սակաւ հզօ-
 բացեալ տիրեցին գաւառացս, և յանուն ազ-
 գացն անուանեցին զնոսա : Յաղագս Բօրչա-
 լուաց՝ չունիմ ինչ ՚ի Հնութեանց, իսկ Պա-
 ղախ, կամ ըստ բուն ազգին հնչման՝ Ասակ,
 ՚այն Համարիմ ես՝ զորս ոմանք ՚ի նախն աց
 Ասյսիկ ոնուամբ յիշատակեն յաւուրս Որմ-
 բատայ Արքոյի մերոյ, Յորց՝ որք յունկյա-
 ծովակի բնակին, որ այժմ անկանի լնող Տէ-
 րութեամբ Ոչուսաց փոքր ՚ի շատէ զկերպա-
 ռան մարդավարի կենաց յանձնին բերեն, իսկ
 որք ՚ի մասն կրօնակից Պարսից՝ զբեթէ գլւ-

Խովին անմարդացեալք՝ քրէիքուր դազանաց ա-
նապատի վայրագասուն բարս երեւցուցանէին

Ընորհ ունիմք արդարեւ պաշտպանութեան
Հայկազուն Խշնանի գաւառիս, ապա թէ ոչ
վաղուց արդեօք լեալէաք որս ատամանց սոցա,
առ որս համբաւեալէք ճոխութիւն վանակա-
նաց աշխարհիս :

Կացեալ ՚ի Անան զաւուրս ինչ՝ դարձաք
Երեւան ՚ի 27 ամսեան Յուլիսի :

Օ այսու ժամանակաւ Արդարն Երեւանաց
կախեաց զիայտէ՝ զայր մի անծանօթ ազգաւ-
որ զիտէք զբազում լեզուս . և հրաշազործ ոք
համբաւէք ՚ի քերանս ռամկին : Ասի թէ այր
դիւթեզեալ սորա՝ ոչ միայն զանազան առ ա-
չօք տեսիլս ցուցանէք ռամկին, այլ և գործս
վատթարս և աղտեղիսնիւթէք գործէք միշտ +
Յաւուր միում, այնինչ յապարանս իշխանին
զտեալ, և տեսանէ զբազմութիւն կանանւոյ ՚ի
քաղհանաց անդորէիցն դառնալ՝ երեւցու-
ցանէ նոցա հեղեղ անձրեաց լճացեալ զճա-
նապարհայն . ընդ որ զհանդերձս ՚ի վեր կա-
լիալ յանցանելն իւրեանց՝ զամօթալի տե-
սարանս ցուցանեն, հեշտալիս աչսց Պարսից
՚ի զբօսանս և թիւ : Այսպիսի խարուպատիք և
հեշտալստական միջոցօք՝ որք առաւել ազ-

դեմին ՚ի մասկտին և կանանին, հռ չակ հարեալ
նորա՝ առ ինքն գրոհէր աւուր աւուր զբաղ-
մութիւն ՚նոցա : Ո՞ինչ այնքան՝ զի և զե-
ղեցիկն ՚ի կանայս Ասքղարին ոչ ամաչէր ՚ի
տես գետալ կախարդին : Այսպիսի բացարձակ
չարագործութիւն հանասլաղ անյայտ մնալ ոչ
կարէր. ուստի յիրազեկ լինել իշխանին և ՚ի
սաստել կանակց իւրոց, իրքն եզիտ զնոսա
յետին սնոստիասլաշտութեամբ ՚նախասլաշա-
բեալս, կամ զսուտ ընազնցութիւն ճշմարիտ
հեշտութեանց առաջաստ միայն առեալս՝ կա-
լու զայրեն չարագործ և ՚ի կախարդան եհան-
գեա : Գաէշ ՚նորա կեր թաշնոց եղեւ, և ՚նե-
խեալ ՚ի բաց լուծաւ. այլ զեռ ևս հաւա-
տային թէ չէր հեար մարդկային, զօրութեան
մեղանչել ՚նմա, Ասէին ևս, թէ ՚նա աներեսոյթ
կայր տակաւին ՚ի քաղաքի անդ, և ում կամկը
յայտնէր զինքն : —

Ճանասլարհ արարեալ ընդ հարաւ՝ թողաք
զբերթն ՚ի թիկանց, անցաք ընդ քարաշէն
կամուրջ ՚Առողայ զետոյ, և թողեալ յաջմէն
զ ՚Առորաշէն * և զ ՚Առորագաւիթ զիւղօրէս՝ առ :

* ՚Առօրաշէն անկանի ՚ի հարաւոյ բերթին, Ենակեալ համակ ՚ի
հայոց, Խակ ՚Առօրագաւիթ իւրեւ մղոնաւ ՚ի հարաւոյ ՚Առօրաշէ-
նայ: ունի երկուս Եկեղեցիս, և լածանի ՚ի չորս թաղս, որք

եղերբք Հրազդանայ՝ եկաք յԱղբաշ դիւղ՝
ու որով անցանէ Գառնոյ գետ՝ ազատ ըն-
թացիւք ։ ընդ ամենային ճանապարհն՝ յաջմէ
ընդ յարեմուտս տեսանելով զիսւրբ Խջ-
միածին, որ վեց կամ եօթն Հրասախօք հե-
ռի ՚ի մէնջ անկանէր, և ՚ի յետուտս ՚ի
Հիւսիսայ՝ զիքրեան, Հեղիկ ՚ի վեր ընդ բլուրոն
բարձրացեալ :

Ո՞նդ գետն ՚ի վեր յարուցեալ՝ դտաք զառ-
ւերակս բերթապարիսալ հզօր բազաքին, զոր-
մէ հաստատէր Պօղոս Ա արդապետ, լինիլ մը-
նացորդ նախնեսյն Գանեայ՝ Աստանին Հայոց,
զոր շինեաց Խոսքով Արքայ, և զարքունիո
՚ի նմա հաստատեալ՝ տնկերաց առերի նորա-
սիստառս երկուս՝ զիւսրովակերտ և զՏաճար
Ապյորին, ՚ի Հիւսիսոյ Արտաշատայ կամ
Խոր վերապին : Արկիննորոգեցաւ յաւուրս
Արբոց Ա արդանանց, և Արդ լազիկ ոստի-
կանի հադարացւոց : ԱՅԼ ՚ի վերջը եղծաւ
՚ի սաստիկ գետնաշարժէ, որպէս և դիրք
աւերակացն ցուցանենու Բլուր լոնի փոքրիկ ան-
կանի ՚ի մէջ աւերացոցն, զորով շըջապատեն

կոչին, Թուշի Մանուկ՝ ՚ի կողմն Շալարայի : Նարիսպական՝ ՚ի
կողմն Աւլուխանլուայ : Գատակ առուի՝ զէպ ՚ի Գառնի, և
Բնիթին թաղ՝ դէպ յԵրե ան :

աւերակք ասլարանից և տանց լոյնածիր նըս-
 տիւք : Ապա յաջօրդնն նոցա վլածոյք բեր-
 թապարսալին , որք երեխն իրբե բլորք ար-
 ուեստակերտք պար առեալ զմեծ բլրովն ,
 յորմէ՝ որպէս ինձ թուի , և զանունն էառ :
 Այլ դարմանք մեծ են , զի ոչ ոք ՚ի մատե-
 նագրաց մինչ ցայսօր ժամանակի , որոշակի
 տեղագրել հաճեցաւ զդիրս քաղաքիս այսո-
 րիկ : Ոմանք զնենն զսա ՚ի գաշտին Շարու-
 րայ . ոմանք՝ յիստան գաւառի , և ոմանք
 և նոյնացուցանեն լիդ մեծին Արտաշատու :
 Պատճառ այսորիկ այլ և այլութեան կարծեաց՝
 թուի ինձ խափանումն գործածութեան անուան
 Վեճամօրի . որ է՝ զի նշանակէ զիւկուրն , և
 է՝ զի զԳառնւոյ գետն : Արդ սկսեալ յԵրե-
 անայ մինչև ՚ի ՚Աախչուան քաղաք , լիդ
 դաշտն Շարուրայ , թէ պէտե կան զանազան
 ջուրք և առուք , այլ ոչ ոք յայնցանէ տի-
 րապէս գետ անուանի , բաց ՚ի Գետոյն Գառ-
 նոյ , և ՚ի զետոյն Շարուրայ , որ այժմ Ար-
 փա-չայ կոչե ՚ի Տաճկաց . որիշ յԱխուրեանէն
 Շիրակուանայ : Արդ՝ եթէ տարեալ զետե-
 ղիցէ ոք զայս քաղաք յափին զետոյն Շա-
 րուրայ , պարտ էր լինել նորա առ լինթեր՝ Աախ-
 չուանայ , ուղեղ լիդ յարեելս Արդաշադու :

և ոչ թէ 'ի հիւսիսոյ նորա , որպէս ակնարկնեն ամենայն վիպասանք Ազգիս : Խսկ եթէ առ Գրառնի գետով՝ որպէս և է իսկ , չիք անդանօր Աբեծամօր . և ոչ խառնուրդ ընդ Երասխայ . զի 'ի Հրազդան խառնի այս գետ , և նովաւ հանդերձ յԵրասխ ընթանայ չորս ժամու հեռի 'ի խառնարանէն : Անունդ Գրառնոյ գետ՝ ոչ յիշատակի առ նախնիս . ուրեմն կայ ինձ ասել աստանօր , թէ Աբեծամօրիւ նշանակին նոքա զայս գետ : Աբեծամօր՝ զի ընդ անհնարին տղմուտս Երևանայ անցեալ 'ի Գրվին , առնու զանուն Աբեծամօրի , որ այն ինքն է՝ տղմային : Բայց այն զի 'ի գահիցն գայ արքունեաց Գրառնոյ , կոչի այժմ յայդ անուն : Օ կնի Ոչուսաց գաղթականք ոմանք՝ իբրև տունք ՅՈ , բնակին յաւերակս նորա . և հոտ առեալ 'ի համբաւոց , կոչեն զսա Արտաշատ , թէպէտեվըիպակաւ :

Աստ անկանէր 'ի հնումն Երազընդհան Տըի գից , գպրի գիտուե՛ Արմզգի Ճարտարուե՛ն՝ մեհեան , զոր կործանեաց Առւրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեաց : Օ սոսկ ուզիդ ընթերցուած գրութեան Ագաթանգեղայ Թողեալ ոմանց՝ ոյլ ընդ ոյլոյ ընթերցան , վարկան և

զբեցին ևս + Բայց եթէ Տիր անուն գիք
 իմն պաշտէր 'ի հնոց՝ անուանքդ Տրդատ ,
 Տիր , Տիրան և Դարի—թիր՝ յայտ առնեն ,
 'Այն կոչէր և Ա արազ . ուստի վարազագիր
 մատանեաւ աղ կնքել և մատուցանել համարէր
 առ մեօք և առ Պարսիօք՝ ահաւորագոյն նշան
 երդման : Որսէս անուանքս Ա արազդէն ,
 Ա արազատուր , Ա արազվազան և այլն՝ ցու-
 ցանեն : Առչէր Դապիր , և ահա Գրող և Ճա-
 կատագիր ՚ի մեր լեզու յայտ առնեն զնա :
 Իբրև բարկանան կանայք Արարատայ՝ ասեն ,
 || Գրողն տանեի՛ զըեղ : || Առչէր և Երազընդ-
 հան . զի ոյսը կռոց էր տալ կամ մեկնել զե-
 րազս . որսէս Հերմեսի առ Եզիստացիս :
 Յանուն սորա և Անի 'ի հնումն Երազգա-
 ւորս անուանէր . իբր յերազ եկողի , կամ
 զերազ մեկնողի տեղի : Եւ զամենայն միա-
 հաղոյն առեալ՝ նշանակէր ոչ զԱրամազդ՝
 Օ ևս՝ Յիւսլիտէր կամ զԱրև , որսէս զը-
 նէ բազմաշխատ Հնախօս մեր , այլ զՓայ-
 լածուն , կամ զԱյրի՝ որ նախ զնա եդիտ և
 'ի լերայ խօսեցաւ : Յայլուր ցուցեալէ մեր
 զյատկութեանց սորա՝ լնթերց . և համեմա-
 տեալ լնդ Հերմեսյ կամ Աէրկուրեայ այ-
 լազգեաց՝ դտանես զմեծ իմն լուսաւորութիւն

զնախնի մոգութենէ աշխարհիս Հայոց, քան
զոր ոք ոչ Համարձակի ստուգադոյնս յառաջ
քերել, Հնար է զհանուր իմ բազմաստուա-
ծութիւն 'ի մի միայն բովանդակել՝ Արեն,
կամ յԵՀՈՒՍՅՆ բայց այդ ոչ է ճիշդ Հնախօ-
սութիւն, Օ այսմանէ և զայսպիսեաց խօ-
սեցայց 'ի հատորն՝ որ 'ի վերայ Պարսից :

28.—Եկաք 'ի Խոր Ա իրապ, շուրջ զո-
րով անկանեին աւերակք մեծի մայրաքաղա-
քին Համօրէն Հայաստանեայց՝ զԱրտաշատայն
ասեմ, որոյ այժմ Հետք ևս ոչ նշմարին : 'Ի
վերայ կրկնագագաթ գլխոց բլրոյն Արտա-
շատայց ուներ յառաջն Պ.զետակ . այժմ յա-
րեելեան գագաթանն և եթե երեի վանքն
Խոր Ա իրապայ Լ ուսաւորչին Հայաստա-
նեայց, զոր 'ի նորոյ վերանորոգեալ էր
Կերուէս Ա արդապետ ոմն, Հաստափոր կո-
չեցեալ, միաբան Արբոյ Կաթուղիկէին : Ու-
ներ ամրոց վիմապարիսպ շուրջանակի, 'ի մէջ
ունելով զմեծ իմ Եկեղեցի յանուն Տիրա-
մօր, և 'ի Հիւսիսոյ նորա մատուռն ինչ կա-
ռուցեալ 'ի վերայ վերապին անդնդայնոյ,
ուր ճգնեցաւ Առւրբն Պ.ըիգորիոս զամս Հըն-
դետասան՝ իրքեւ որդի վերնամարտին Անա-
կոյց, այլ ել անտուստ ե լուսաւորեալ պայ-

Ֆառացոյց զՀամօրէն Հայաստանեայո՝ իրքե
որդի հոգեւոր՝ Առաքելոյն թաղթէոսիւ Ա ի-
րասկն՝ Համարհա թէ առ անբաւ խորութեան
իւրոյ՝ զտուը և առութիւն չնչոյ աղօթկերա-
ցըն խափանեալ, սրատձառս ետ յետագայ-
ից կիսով չափ լնուլ զայն հողով, և 'ի նմին
յարուցանել զսեղան :

Խսկ յարեմտեան զագաթի բլրոյն, որ 'ի
թիկանց սորա՝ է սեպուհ հզօր, յորոյ վերսոյ
ցուցին ինձ ոմանք 'ի վանականաց Ա իրասլին՝
զգրոշմ ինչ խաչանիւ, գծեալ լստ ասից իւ-
րեանց՝ մատամբ Առաքելոյն թաղթէի, Առ
ստորոտով բլրոյս՝ էր գիւղիմն փոքրիկ, ընա-
կեալ 'ի Աւշդլու թառւրքաց, որոց ընիկ սլաշ-
տօն է հուղկահարութիւն . թէ և 'ի զօրա-
նալ իշխանսւթեան բգեշխին՝ նուազեցան սո-
քա, և զգիմակ անմեղութեան զերեսօք ծըլ-
տեալ՝ գործէին զերկիր 'ի սնունդ, Հեռի ան-
կանի Երասխ 'ի հարաւոյ բլրոյս՝ իրեւ զիկս
Հրասախի, խսկ խառնուրդ Ա եծամօրի ընդ-
յարեմուտս նորա՝ իրքեւ երկու Հրասախօք,
Ակսեալ ասաի մինչե 'ի ծիր եղերտացին Ա ա-
ղարշապատայ ընդ յարեմուտս, և մինչե 'ի
Պէվլալու, (որ ինձ թուի զոլ Ա արակերտն
Շարուրայ՝ ընդ յարելս, ճգեալ յերկայ-

նութիւն,) Հարուստ իմն և լայնութեամբ
 ընդ հիւսիս և ընդ հարաւ գետոյն Երաս-
 խայ՝ բուսանի տեսակ ինչ ծղօտաւոր սի-
 զոյ, որոյ բունն է սպիտակափայլ և իւղա-
 լից նման ելեկարռնի, տերե քն նման մնձոյ,
 իսկ արմատն նրբաթել և ամփոփի : Յարմա-
 տոց աստի սորա ծնանի որդնն կարմիր, և
 մոնեալ՝ ի մէջ ցօղունից սորա՝ ուտելով երթայ
 և ելանէ ՚ի ծայր նորա : Ճամանակ ելանե-
 լոյ նորա սկսանի զմիջով ամսեան Յուլիսի,
 և տեւէ մինչև ՚ի վախճան (Օգոստոսի) Աշո-
 մծադին բերք Երարատեան աշխարհիս, թու-
 թէ ՚ի պատճառս սաստիկ բռնաբարութեան
 Պարսից ՚ի վերայ ողորմելի շրջակայ դիւ-
 զականացն՝ խափանեալ կայր առ այժմ, թէ-
 պէտե յետոյ, զենի յաղթութեանն Ոչու-
 սաց՝ Օպաղկարար Ամհակ Եպիսկոպոս Կոն-
 դեցի, վերատին երե ելի հանդիսացոյց զոյս
 վաճառ : Քանզի յառաջնումն՝ օգնականու-
 թեամբ Աիմոն Ա արդապետի առաջնորդի
 Ա անաց Ա իրապիս, և շրջակայ դիւղօրէ-
 ից հաւաքեալ զմանաւոր իմն քանակ ՚ի սո-
 ցանէ, սպան գինւով և կրով . զման ինչ
 չորացուցեալ, և զման ինչ յիւղոյ քամնաւ
 և լոսեալ, առ ՚ի պէտս նկարուց ՚ի վերայ

լժղթոյ՝ առաքեաց առ՝ Արիկողայոս Ա . Կայս
ըլին Առուսաց , և ընկալաւ 'ի նմանէ զան-
գամանդի մատանի առ 'ի տրիտուր մեծի ե-
րախտեաց իւրոց : Եւ այս միայն չոփեաց
պիորա բովանդակակ յոյս , վասն զի՞ այնուհետեւ
Հրաման եղի Առուս զիՀալետաց՝ աշխատ առ-
նել առհասարակ զամենայն ժողովուրդո շրո-
ջակայ գիւղօրէից և հաւաքեալ զմիջանն
չորացոցանել և առաքել 'ի Պիետրուրուրդ :
Խւրաքանչիւր գիւղականի սահմանեալ է
վարձ յարքունուստ 40 միարոյ , կամ հինգ ե-
րորդ մասն Պ բանեւոյ Պարսից , ոյլ թէ դու
ընթերցն ընկալար ինչ , նոյնպէս և գիւղա-
կանքն ողորմելիք . զի իշխանք նոցա յափշ-
տակեն դայն 'ի արէտո իւրեանց :

29 : *Աերսէս Հայր վանացն ընկերեցաւ
միզ կիսով Հրասախաւ ցագին Երասխայ , ու-
րանոր Վէյդլու գիւղականք նորա , որք էին
միանգամայն վանացն սպաշտօնատարք և լու-
սարարք , լցին վրայովք ըերանոց իւրեանց տիկի
ութն մեծամեծո , կապեցին 'ի ներքոյ չորից
մեծամեծ ձողոց , ձգելոց 'ի վերայ ընդ եր-
կոյնութիւն զօրէն գերանաց ձեղուան , և ա-
պա քաղեալ 'ի մացառացն մոշայի , որք ան-
տառանան զրեա թէ յեղերս Երասխայ , թա-

ւանեցին սկզբակաղմ։ և արարին մեղ քել-
լէկ, որ այն ինքն է լաստ։ Խրբեւ կատարե-
ցաւ բովանդակ դործ շինուածոյն, ողջու-
նեալ զմիմեանս, ելաք մեք 'ի լաստ անդը
և անցաք 'ի հարաւ առ ոսն Մասեաց։

Խրբեւ ելաք 'ի ցամաք անդը, կալաք
զերիվարս մեր, որք զերծեալ 'ի սարուցն
թողեալ էին ընդ լուզ անցանել զգետն։
Կացեր տլդեօք ընթերցօղ, առ ավն գետոյ
մեծի՝ առ 'ի զեին անցի աշխուժագունին 'ի
կենդանեաց ընդ ջուր, ուրեմն զրեալքն իմ
'ի դլուխ Տնկարանեութեան այսր զործոյ՝ ոչ
իւիք տարագէպ երեին քեզ։ Խոկ թէ ոչ
ուրեմն ինձ իմա զլայելըութիւն և զվսեմհե-
տեանս նորուն։ Յուղի անկաք։ 'ի հեռուստ
ահաւորագոյնն ըարձրութեամբ Մասիս, քա-
նի գնույաք՝ խոնարհիլ սկսանէր, զոդ ջեր հիւ-
րամն ծար յատկութեամբ իւրով։ Հէր գիւղ
հաստատուն ուրեք, այլ օպայք, կամ վրա-
նատեղիք ինչ Մարաց աստ և անդ։ 'ի պատ-
ճառս անտառախիստ մացառացն մոշայի, (իլ-
դունի,) ամբաւութիւն չարախայթոց մածա-
կաց և մժեխաց շնչարգել անէին զմեղ։ Խր-
բեւ երից ժամուց ճանապարհաւ հասաք 'ի զար-
հուրելի իմն վտակ Մերաւջրոյ, որիշ անտի՝ որ

բղկաւալ յլլարտգածոյ ոտանէն 'ի Հիւսիսոյ
 յարևմտից Ապաղարշապատայ՝ խառնի յիշ-
 բասիս դետ։ Օ այս համարիս ես Ակն Գինայ,
 յիշատակեալ ի Խորենացւոյն, ուր անկատ Ար-
 տաւաղը Երկրորդ։ Պարզ է ջուր սորս,
 յորժամ յափն առնուցուս։ այլ 'ի վտակին
 առ անբատ խորութեանն այնքան սև անայ,
 մինչ ահ արկանել յոդիս հայեցողաց։ Ի մե-
 րայ ձգեալ գերանք երկու և եթ, յօրինէին
 'ի կամուրջ, այլ այնքան վտանգաւոր՝ մինչ
 ձիով անցանել ընդ այն ոչ համարձակեցար։
 Պատմեաց մեզ ֆուռնի, թէ երբեմն զերա-
 մակ մի գոմշոց բովանդակ եկուլ այս գետակ.
 և ընդ բան նորա ես ոչ զարմացայ, վասն
 զի թողլով զի եզերք նորա ճախնուտ ան-
 համարին՝ սրպլջան իբրև կաթսայ եռանդեան՝
 կռիւ ուրեք չտալով ոտից, նաև անհամարին
 խորութիւն նորա կցորդեալ ընդ անձկու-
 թեանն, անելանելի անդունդ իմն առնեն
 զնա, որոց միանգամ անկանին 'ի ներքու Աա
 յիշբասիս խառնի։ Յառաջ խաղացեալ աս-
 տի յանջրդին արեակէզ, հասաք 'ի վտակ
 ին որ հոսեալ 'ի Մասեաց, դայ դադար-
 իի յիշբասիս։ Յարեւելից կուտէ վտակիս ան-
 կաներ աւերակ մեծի զիւղաքաղաքի, առ ո-

քով լոյնածիք , խարիսլապարիստ և փշաբեր
տեղի այգւոյ իրիք , ուր նախ արկ ուռի
նահապեա հերիոց աշխարհի . և ի դինւոյն
զմայլեալ վճռեաց զասլագայ վեճակ կենաց
որդւոց իւրոց երեցունց . դուարձարան պար-
գեելով աշխարհի՝ զլոյրարատեան մեր աշ-
խարհ . որպէս և մայր Աստուածալաշութեան
զիա՝ և արուեստից կարեորաց մարդկան՝ դըժ-
խոյ մէծափառ . Առ քեզ յԱստուածապա-
տումն Առորք Գրոց զայգէգործուի , զհերկ ,
զհունձ , և զարմանալի այն ձարտարութիւն
շինութեան Տապանին և Աշտարակին Բարե-
լովիսի , զոր բնակիչք Հայաստանեաց ընդ չու-
ելն ի Աննաար՝ իսկ և իսկ ձեռն արկին կա-
ռուցանել անդանօր . Խրոհական Ընթերցող ,
թուեան թէ քանիք արուեստից կատարելութեան
պէտք էին յոյն շինուած , որոյ յետ Աստ-
ուածասաստ կործանմանն աւերտկք ՚ի չորեք
հաղար ամաց հետէ՝ կան և մնան տակաւին
յապշութիւն մտաց ամենայն մարդկան :

Աստի ընդ արեելս անկանի քարահանքն
մէծ կարծրագոյն գայլախաղ քարանց . զոր
հասարակօրէն ջրաղացաքար կոչն : Աւստի
հատեալ զոյգ մի , և ընդ մէջ փորեալ , և լի-
սեռն անցուցեալ , լոկէին և մլէին դէպ ՚ի

Պատրիքժ առ ՚ի պէտս գործատան Արքաս
Միբղայի :

Ո՞ւդ խոժոռ զառ ՚իվերս վտակին ընթացեալ մկնիօք երկու՝ Հասաք ՚իպարտէղ՝ Օիրանեաց արդի Արկուռեցւոց ։ Օի վասն անփութութեան ժողովրդեանն ոչ այլ ինչ ըերէր տեղին ։ Քան զՃիրան և զայլ մասնաւոր համանման և դիւբահաս պտուզ ։ զրեա թէ անտառայինս Համեմատութեամբ պտղոցն Երեանեայ ։ Ի Հարաւային սպառուածս ծիրանեաց անկանի այժմ ան Արկուռի ։ գիւղ մն ձայոց՝ իրրե 800 տանց ։ որ ունի իւր և յատուկ Եկեղեցի ։ Եւ անդը և ո քան զայս իրե մկնաւ միով ։ անկանի վանքն Քակովրայ Աճրնայ Հայրապետին ։ ըերթասպարիսալ և քարաշէն այլ անշուք ։ Օ Հիւսիսակողմամբ սլարսպին անկանին մարզք յարադարար սիղոց Հովանացեալ ՚ի ծիրանացն և յուռենեաց շուրջանակաւ ։ յորոց յարեւելից կարկաչահոս անցանէր ծիւնահալ վտակնորա ։

Առաջնորդ վանացս Պիետրոս Ա արդապետ ոմն ։ այր յաղթանդամ խոռուամօրուս մրայն և զարհութելի ։ որ էր առաջնորդ միանդամայն և միաբան վանաց իւրոց ։ Օի բաց յիւրմէ շունէր զայլ ոք եթէ ոչ զպա աւ մի մածնապան ։

զանդէորդ և զորթարած : 'Խմէջ այլ և այլ
 սլաշտամանց իւրոց, ընկալեալ էր և զտչալուրջ
 սլահպանուի աքսորելոցն յլչչմիածնայ . որուժ
 միայն սլատշաճեալ : 'Օչաղը օտար էր յերե-
 սոց 'նորա , և Հիւրասիրութիւնն՝ դիմաց դը-
 ժնդակութեանն Համեմատ : Որ յառաջին տե-
 սութեան իւրում , այնքան խոժոռա Հայեցաւ
 ի մեզ , մինչև Համարել մեղ թէ Երուանդին
 կենդանացաւ Արշակունի՝ Հայեցիւք իւրովք
 սալացուցանել զմեզ . գուցէ վարկանելով զմեզ
 աքսորեալս յիւր սահման սառնամանեաց : Բայց
 իրքեւ մատոյց նմա Յառնի զկոնդակ Հայրա-
 սկետին՝ զյանհձնարարական՝ ընթերցաւ և ընկա-
 լաւ զմեզ 'ի ներքս . այլ դէմք նորա ոչ
 փոխեցին զբնականն ահեղութիւն : Ճաշեալ
 էր սորա 'ի Հարկէ , զի զկնինախաճաշուն և նհա-
 րին յաջողեցաւ մեզ Հասանել անդր . — բայց
 Հրամոյեաց զենուլ մեզ՝ ուլ մի , զոր 'ի սեղան
 մատուցին եփեալ ամբողջ , Հանդերձ անկա-
 նու միով լի մածնով , և ափսէիւ մեծաւ
 պանրով . որք կացուցին զբուլանդակ Համա-
 դամս պարզութեան կենաց նոշա : Պինի ոչ
 պաշտէր անդանօր 'ի զեղխութիւն . թէ ողէտ-
 ե տռաջին գինարան երեսաց ամենայն երկրի :
 Օղի և ցքի ամենն ին ոչ , թոյնքն մահա-

բեր մարդկային կենաց , Եղաւ սեղան , ոյլ
մեկուսի եկաց Հիւրամնձարն առաջնջական , և
Հրաւիրեաց ի նոյն զՊօղոս վարդապետ , ո-
րոյ գոլով Հիւանդագին և խոնջեալ , և՝ ձեւ
ունե միսել յայն դանդաղէր , թէ չէր յառաջ
մատուցեալ Առաջնորդիս , և հենդի ի նա
արձակելով մանրեալ զույն բովանդակի , Չե-
էր Պօղոս վարդապետի ծիղառ ծիղ ծասքեալ
դէթ զմին ի մսանաց կենդանոյն մինչեւ ահա
քաղեցաւ յԱռաջնորդէս ամենայն միս յոս-
կերացնորաւ Հառաջ մատոց ապա զմածուննեւ
և ցկէսն վճարեաց Հաւատարմացուցանելով
Հիւրի իւրում , թէ՛ բարեխառնէր զջերմուի
մոյն ։ ։ Եւ նոյնակէս զպանիլն ասելով , թէ
մարսեցուցիչ է ։ ։ Եւ միայն բարեխառնա-
րարե մարսեցուցիչ զի ոչ պայթեցին զախորշակ
նորաւ որ ծալեաց ի բերան և լօշս Հինդ ընդ նո-
սու ։

Յայս վայր յոտին կացեալ պաշտէի զերա-
նելիս , վասն զի՝ անարդութիւնն մեծ էր յայ-
սոսիկ ժամանակս աշակերտաց նատիլ ի սե-
ղան ընդ վարդապետս իւրեանց : Վասնորոյ
իրբեւ աեսի զԿարայ ողէ փոխեալ յայս Ա-
ռաջնորդ՝ ջանացայ Ճար առներ գլխոյս , զի
մի սովամահ կորինչեցիմ : Օ մտաւ ածիւ . թէ

գրդել և խուեցուցանել զհեղահոգին Պօ-
զոս Ա արդասլետ ի սեղանակութենէ նորա ,
(որպէս բազումք առնէին . . .) անհարին էր
ինձ վասն կրկին պատճառաւոց + Ա ի՛ զի նա
ոչ լսէր ինձ յայսպիսիս + Ե՛ւ երկրորդ՝ զի սե-
ղանն նորա էր՝ և ոչ թէ սորա + Ա ամս որոյ
հնարեցոյ և զմայրագրութեան զտնտեսի վա-
նաց պատիւ ընկալայ . և այնուհետեւ կեանս
վարեցի փափուկս ի կերակուր , և մաքուրս ի
հանդերձ :

'Խ տրիտուր բարերարութեանց բարեպաշտօն ,
ոյլ առ ժամանակեայ մայրագրի այսորիկ՝ ոչ ինչ
ունէի ի ձեռին մատուցանել՝ քան ընթեռ-
նուլ և բանալ նմա երբեմն զգլուխս ինչ Աս-
տուածաշունչ Առւրբ Գրոց , զպատմութիւն
վարուց Արբոց , և երբեմն ևս զհատուածս
ինչ գրուածոց իմց . այլ այս յաւէտ առ ի
Հրդեհ սնափառութեան իմոյ , և 'ի խայծ
զարմանաց և սիրոյ նորա . որ գոգջեր զԱրիս-
տոտելին համարելով զիս մանկացեալ , առա-
տութեամբ շնորհէր ինձ զսեր , զկաթե , և զա-
մենայն ոգեալահուստ կերակրոց և պտղոց † :

† Թռէպէտե երկուտակ կուզիացեալ յաւէտ ի վշոաց քան
յամաց , սակայն դեռ վառուն կայ յիս մանկութիւն , և առ
մենայն ինչ սիրելի մին խայց ոչ երկորեց զնոցանէ առ այցմ :

Արկուռի և վանքն Արբոյն Քակորոյ միով
 և կիսով մղոնի հեռի ի միմեանց՝ յարևմտեան
 կողմն վտակին Արկուռոյ հոսեցելոյ ի Ամաս
 ուաց՝ անկանին ի լանջ անդ լերինն մեծի, ուր
 եզերի լայնաբաց բերան խորանդունդ վհին ամե-
 լորյ՝ կամ ձիւնաթումը լճին, Անուժի շրթանց
 սորա, քարանցն խանձելոց, և անհնարին բըռ-
 նութեամբ բացումն վհին, յայտ առնէ զիս
 գոլ հրաբուղիս շեղեալ, Եւ իբրեւ ոյսպէս՝
 նաև զհանք ածխոյ, եթէ փորձեսցի ՚ի նմա
 հանձար բանիքուն տարրալուծի, և ոյժ ձե-
 ռին արքունի, Աստի միւնչ յաղթեսիկ Արբ
 բոյն Քակովբայ ձղի մղոն մի և կես, զարդա-
 բեալ բուլանդակ անդորոյիւնք աստ և անդ,
 մշտադ ալար կանաչօք և ամենատեսակ բան-
 ջորօք, Անուանի է ՚ի բերս լերին ոյսորիկ
 սունկիս մեծ ասպարաջափ, պարարտ թարմ, և
 համեղ յոյժ, ՚ի վերայ Աղբեկանն Արբոյն
 Քակովբոյ կառոցեալ է մատուան փոքրիկ,
 որոյ ՚ի հաբաւակողմանենն բղիսի կաթ առ կաթ
 ջուր յաւազան ինչ վիմափոր, զոր “Անհատա-
 կան” անուանենն Ակուսեցիք, պնդելով, թէ առ-
 ցէ որչափ շատ և արագ և կամիցի ոք, ՚ի ջրոյ աւա-
 գանին, գեռ կաթ առ կաթ հասումն նորա լեռ-
 իսկոյն զգաղ արկուն ի աեղւոյն, և ոչ ոլակասի:

Պերբնական Հրաշից տուր դու , կամ ընա-
 կան Համակրութեան դեռ ևս զարմանալիս
 պատմեն զջրոյ աստի յայսմանէ՝ ամենոյն
 ժողովուրդք երկրին : 'Ի գալ մարախոց
 ուրեք՝ գան ՚ի ընակչաց նորա , և բառնան
 կժող նորով ՚ի ջրոյ աստի + զոր և զգու-
 շութեամբ մեծաւ տանին , չդնելով ՚ի գե-
 տին : Ո ՚ի թէ սլէտ լիցի երեկօթս ուրեք
 առնել , արարեալ եռոտանի ՚ի գաւազանաց
 ընդ միմնանս կապելոց , կախն զկումն ըզ
 նմանէ . և իրեւ Հասանեն յերկիր իւրեանց՝
 թափօրական հանդիսիւ ելանն ՚ի դաշտորայ ,
 և կաթեցուցեալ զոյս ջուր յառուս անդոց
 և յակօս ցերից իւրեանց՝ ազազակեն առ
 Եստուած : Եւ ահա տարմ ՚ի տարմոց սարե-
 կաց յանկարծ ՚ի վեր երևեալ , որ յառաջն
 ոչ ուրեք տեսանելի՝ անհնարին արագու-
 թեամբ կոտրեն զանքաւութիւն մարախացն ;
 Եւ եթէ դէպ լիցի ծանրանալ թեոց նոցա
 հիւժողք մարմնոց մարախացն կոտրելոց ,
 դնան լուանին ՚ի ջուր + և անդ ընն դարձեալ
 սպառեն զմնացորդս նոցա : 'Ա ան այսորիկ
 ուխտիւք և զոհիւք պատուի ոյս աղբիւր ՚ի
 Հայոց և ՚ի Տաճկաց միանդամայն :
 Յաղբերէ աստի մարթիս ՚ի վեր ելանել իրեւ

ապարիզօք երկուքումբք , այլ ոչ առաւել ,
 զի սկսանի ձիւնն թանձրամած : Եւ վասն այ-
 սորիկ՝ ոչ ոք իշխեաց ելանել ՚ի կատար նո-
 րա : Խշխեցին այս Առւբըն Քակովը Արծ-
 քընայ , և Խրբահիմ փաշայն Բայազիտայ .
 այլ մին վասն ազօթից և ճգնաւթեանց իւրոց՝
 ընկալաւ ՚ի հրեշտակէն զփայտ փրկութեան
 աշխարհի : Խոկ միւսն վասն յանդղնութեան
 և ձեւնիրութեան իւրոց՝ ընկալաւ “զմահ.” ըստ
 ականատես վկայութեան առաջնորդիս վա-
 նաց : “ Այլ յանցանել ժամանակաց յան-
 դղնագոյն ևս գտաւ կայսերութիւն Առու-
 սաց .” ասէր մի ոմն ՚ի հարազատից Արբոյ Ա-
 թոռոյն .“ որ առաքեաց ՚ի Պուրլինայ արո-
 անհաւատս և Լուտերականս , որոց ոչ հաւա-
 տալով Առւրը Գրոց . իժօրէն պատառել
 կամեցան զորովայն Մօր համօրէն մարդկան .
 և ժողնեցան ելանել ՚ի կատար լերինն մն-
 ձի : Այլ թէ ելին , հա . ոչ թէ ՚ի կատար անդք
 այլ ՚ի կուղնորա : Տեսանես եղբայր զցցունն
 արտաքս սլալարացեալ յուս լերինն , անդք
 ելիալ անկեցին զիսաչ , և առասպելաբանեցին
 թէ այն բարձրաբերձ և երկնանման լեառն
 Վասիս , էր միայն 9000 ոսն բարձր ՚ի ծովէ ,
 Ամրելի արդիօք : ”—

Եռապատիկ է աստանօր օդ Մասեաց . ՚ի
վերոյքան զաղբիւրն չակովրայ՝ է ձմեռն մշտե-
ջենաւոր . ՚ի ներքոյ մինչև ցԱրկուռի՝ գարուն
ծաղկաբեր . իսկ անտի ցԵրասխ՝ ամառն տօ-
թագին . Առ երի աղբեր սյասորիկ ընդ յարե-
մուտս՝ անկանի վիճն անդնդային , յոր ամօք
ինչ յառաջ անկետլ մ. ծաքանակ լեռնաշեղ-
ջուած հատոր ձեան ՚ի բարձրագագաթն Մաս-
սեաց՝ ելեց զձորափոր նորա զամս ինչ . ուստի
և ժողովեալ ջուրցն հալելոց՝ արար զնա լիճ՝
անյատակի խորութ . ՚Օ կնի տարւոյ միոյ ՚ի յաջոր-
դելամատանն երկրորդի՝ բեկաւ ասի , մասն ինչ
այսր ձիւնապաղաղ թմբոյ նորա , և յորդեաց
արտաքս զայն սաստիկ և զահաւոր յորձանուտ ,
որ ՚ի հիմանց սրբեաց զբովանդակ Արկուռի , և
խարխլեաց զպարիսալ վանացն չակովրայ :

Քաղումանդամ սառնապատի այս լիճ , և ՚ի
տասլս ամառան : Ուստի քանի մի աւուրբք
յառաջ քան զգնալ մեր աստի՝ երկու ՚ի Մա-
րաց վրանաւ բնակելոց ՚ի լանջակողմանս Փո-
քուն Մասսեաց , անցանել կամն լով յա-
րեմտեան լանջակողմն Մեծին , և յուլանա-
լով չափել ՚ի քայլս ոտից զձանրատաղտուկ
և զանձնարին խորաձորս Արկուռոյ՝ ՚ի վե-
րաց երեսաց սառին սողալ սկսան : ԱՅԼ յան-

կարծ բեկանելով՝ նորուն ի՞ներքուստ՝ ի՞ մի
ումակ եկուլ զերկոսեան , Օ ինի ժամանաւ
կաց գտին ասեն , զհրացան միոյ ի՞ նոցանէ՝ առ
ի՞ խէ կուռեալ զսառոցօքն , և ծանեան ըդ
կորուստ նոցա :

Եցրկու ևս այլ մարդիկ դաղանաթեկ կո-
րեան ի՞ լերին այսմիկ , մինչ մեք անդր էաբ +
Ապրծիք էին հայորերոյն , թէ առիւծ սլա-
տառեաց զնոսա , զի գտանի անդ :

Աբաբաթեան բարձր Ապախա՝ որբան հըռ-
չակեալ ՚ի Գիրս Աստուծոյ , Այախաշարց
մերոց՝ և այլ և այլ ազդաց , այնքան տա-
կուին ևս անձանիթ մնայ մինչ ցարու ՚ի մե-
րոց և յօտարաց միանգամայն : Եւ պատճառն՝
որպէս եսն Հասկանամ , ոչ անհոգութիւն թա-
դաւորաց , ոչ ծուլութիւն ժողովրդեան , ոչ
բարձրութիւն նորա , ոչ ձիւնապատութիւն ,
և ոչ անմատոյց կորդութիւնն եղեւ . քանզի
բաղումլերինք կան յաշխարհի՝ քան զԱպախա
դժուարամատչելիք՝ ընդ որս ճանապարհ ար-
արին մարդիկ և առնեն . մանաւանդ՝ Ազգ
մեր , Ապա երեխ , զի միոյն պատկառելի
խորհուրդ տապանին գաղարելոյ ՚ի դրուխնո-
րա , որով և արգանդ լինելոյ նորածին սերնդոց
զարմիս մարդկութեան , յանցիշատակ հնու-

թենէ և այսը պատկառանս իմն ածէր Աղղի
մարդկան չլրբանալ՝ Քամօրէն և զառականս
ծնողին բանալ . Մարդ ինչ իցէ մարդոյ՝ ա-
սաց Աիկող իմոս ցՕրինադիր վերստին ծն-
դեան մերոյ . անդրէն մտանել յարդանդ
մօրն :

ԱՌԵՌԻՆ

՚Ի խաղալ տղայոց յԵրեան քաղաքի
կոչեն զՄասիս “ՄՈՒԹԱՆ ԱՇԽԱԲՃԱ,” Եւ այս
նախնի աւանդութեանց խեշերանք իմն է՝
՚ի հաւուց և հարանց անցեալ . քանզի և
երդիչք Գողթանն՝ առ Խորենացւոյն , յանէ-
ծըս Արտաշեսի առ Արտաւազդ՝ յիշատակեն
զոյն՝ ասելով , “Եւ դու յորս հեծցես յԱ-
զանն ՚ի վեր ՚ի Մասիս . զքեզկալցին Քաջք,
տարցին յԱզատ ՚ի վեր ՚ի Մասիս , անդ կաց-
ցես , և զԼ ՈՏՍ ՄԴ ՏԵՍՑԵՍ : ”

ԱՅԼ առաջին յանուանակոչութեանց սորա
համարիմ ես անունդ “ԱՌԵՌԻՑ .” որոյ յաւի-
տենագիր գողցես յիշատակ գտանի ոչ միայն
՚ի հետթիւնս աւանդութեանց աշխարհիս ,
որք զերգս եղեալ ՚ի բերան Տապանին ՚ԵՄի
դիմառնաբար ասել ետուն ցԳրգուռ լեռն
մեր , թէ “Գրգուռ , առ զիս !” Եւ նորա պա-
տասխանի տուեալ՝ ասել . թէ “Գնա՞ ՚ի

Մասիս, որ բարձր է քան զիս" այլ և ՚ի գառանն Առնեոյուն կոչեցիւալ : Այս անուն դարդիս միայն ՚ի վերայ գաւառին նշմնրի, ուստի թուի թէ հնագոյն և անգործածականն յանուանս լերին մերոյ է Առնոյ :

Երկրորդ անուն նորա և սեպհական համարիմ զԱԶԱՏՆ՝ նախագոյն քան զԱրամայիս՝ ուստի Մասիսն անուանեցաւ, Հաստատէ զմեր կարծիս, Անոջողւոյ մեծ օրհնուի ՚ի Հայաստան համարել և ասել, "Կատուած բարի ազատումն տայ քեզ": Բարեաւ ազատիս, և այլն : Անոջ ծնելոյ ոչ ասեմք՝ ծնաւ . զի այդ կովուց և ոչխարաց է . այլ ասեմք՝ ազատեցաւ : Ապաքէն իրաւամբ կոչի Մասիս մեր Ազատ, այսինքն մայր ազատեալ յերկանց ծնեն գեան իւրոյ :

Եւ եթէ ոչ այսպէս, ո՞ւ տայր համարձակութիւն պառաւաւանց Գողթանն զըուցիւլ զԱրտաւազդայ : "Եթէ արգելեալ կայցէ յայրի միում, և երկու շունք հանապազ կրծին շղթայս նորա : " Զիար ՚ի Հայաստան ոք սիրող Արտաւազդայ . տինակ կին, որդիք և եղբարք . որք ելեալ յայր անդք տեսանելին և ստելին զարաւաւանցն առասովել : Զէ հնար ասել թէ չէ, Ուրեմն յայտ է, զի նախնեն

Նախապաշարութիւն, կամ լաւ ևս՝ որդիապարտ
ակնածուի էր, որ արդեւ ժողովրդեան պատ-
կառել ՚ի վայրացն :

Օ անազանութիւն կարծեաց միշտ ՚ի տգի-
տութենէ յառաջ դայ . և եթէ մեծանուն
մատենագիրն Վարշմէն իմանայր զայ լե-
զուն, և աշակերտէր առմանց և աւանդութեանց
մերոց՝ ոչ տանէր զլբարատ տնեկել ՚ի Բակ-
տրիա, պատճառ բերելով՝ որպէս թէ Առւրբ
Գ.իրք յարեելից ասեն չուեալ մարդկանն ՚ի
Աբենաար՝ որ ոչ համաձայնի ասէ, գրից
Հայաստանի . զի Աբենաար Բաբելոն է . և
Հայք ՚ի հիւսիսոյ կայ նորա . և ոչ թէ յա-
րեելից, Արով ոչ խորհի, զի Առւրբ Գ.իրք զա-
մենայն երկիրն յայսկոյս Եփրատոյ մերոյ՝ ուր
Վասիսն կայ, Արեելք կոչեն : Եւ Առստանդ-
նուալոլսեցիք նաև զՓոքըն Ասիս՝ Արեելք
կոչեն մինչեւ ցայսօր ժամանակի :

Արկին է մասիս, Վեծ և Փոքը : Վեծ Վա-
սիս անուանի տիրապէս կոչեցեալն ՚ի մէնջ
Ազտատ . այն անմատոյց ՚ի մարդկանէ, և ձիւ-
նապատ գագաթ լերինն՝ ուր հանգեաւ տա-
պան ՚Եցի : Եւ Փոքը կոչե ձիւղ նորա
կամ զլուխն՝ որ ուղիղ ընդ արեելս դէս ՚ի
՚Աախջուան անկանի . և ՚ի բոլոր ընակչաց նա-

Հանդին անուանի Փոքր կամ Պլատիկ Մասիս :
 Թռողեալ զաւանն Արկուռի՛ ուր բնակին
 մերձ 800 տունք Հայոց . և երկու մղոնօք
 ընդ դիւր զառիվերն մղեալ՝ դաս ՚ի վանս
 Արբոյն Յակոբայ՝ առ վտակաւն Ակաւաւոյւ
 Ապա ընդ ձորակին գէպ յարեելս Հարաւոյ
 ելեալ ընդ սեպացեալ եմակն ՚ի վեր՝ դաս
 յանդիման ահադին և ասանապատ վիրապին,
 ուր բնութիւնն խառնի ընդ պատմութեան ան-
 ցից նորա ՚ի զարմանս Հնասիրաց :

Յարեելից վիրապին մեծի ընդ մատուռն՝
 ուր բղիսի աղբիւր Արբոյն Յակոբայ՝ յա-
 րեելս շեղ ՚ի Հարաւ դիմելով՝ յանքար և ՚ի
 Հաւասար Հովիտս ծաղկածիծաղ գալարեաց՝
 և հեղեկ ընդ զառիվերն բերելով, Հասանես
 ՚ի գլուխ Փոքուն Մասսեաց, Հրաշարսն աչաց՝
 շրջակայ և Հեռաւոր առարկայիւքն, ՅԵՐԵ-
 անայ կամ 'ի Կախջուանայ Հայեցեալ՝ կար-
 ծէք ոք զկատար նորա այնքան սուր և տի-
 գացեալ, մինչ անհնարին Համարել և թռչոց
 անդամ դադար գտանել 'ի նմին . բայց ելեալ
 'ի վերայ՝ գտանես և զինչ աւազ յիշատա-
 կի վաղանցիկ զուարձութեանց . — սարաւանդ
 տափարակ իր ըստ վեց մղոնաւ շրջապատի : 'ի
 կեդրոնին՝ ծով կամ լիճ 'ի ձեանց Հալելոցն

Հաւաքերալ, աստի և անտի անտառ թեղոշի
կամ թեղի ծառոց . յորմէ բնակիչք Արեւ-
ոեայ յամսեան (Օգոստոսի հատանեն ցախ
'ի վառոյթ և 'ի ցանկս պարտիզաց իւրեանց :
Այս անտառ տիրապէս մացառ ասել
պիտի . քանեղի առ սաստիկ ցրտութեան տե-
ղւոյն ոչ այնքան աճին և զարդանան ծառք .
տինա սպատահին ևս ամք , յորս ոչ բնաւ հալի
ձիւն գագաթան Փոքու ոյսը Վասսեաց :

Արջու , ընծու , և առիւծու իսկ՝ երկիր դ
շատ ցուցաներ ինձ առաջնորդ վանացն . կան
և կատու , կուզ , և գրեաթէ ամենայն տեսակք
գաղանաց և էրեոց , Առւնկ նորա մի մի վահան
կամ ասպար . պարաբոտ , պարարուն , և բարե-
համ : Ըուշան , օղին , բոլի , բոխ , զոխ և
հաղար այլ բանջարանի , որոց զանուանս ան-
դամ ոչ գիտէի և ոչ գիտեմ , գտանին անդ :

Բայց որ առաւել վարձատրել կարեն զվաս-
տակ ճանապարհորդին , և պատմութեան աշ-
խարհի բանան զմեծ յայտնութիւն , են քա-
նի մեծամեծ տասլանք կճեռյք , երբեւ վեշ-
տասան ոտնաչափ երկայնք և հինգ կամ վեց
ոտնաչափ թանձր , որ 'ի ձեւ գերեզմանաց ըն-
կողմանին զեղերօք լճին և կոչին Գերեզմանք
Ալայից . — ռամկօրէն (Օղուղի գերեզմաներ ,

քանդի թէե յատուկ անուն ևս իցէ , սակայն Արարատեանք (Օղուզ զհսկայն կոչեն այլազգերէն :

(Ծերես նորասիրաց պատճառս տաց և քերթողաց , 'ի մասնաւորել խմում զոմանս 'ի հրաշալի տեսաբանաց Փոքու , ընդ ևս հրաշալի անցից Ա'եծի մերումս Մասսեաց :

ԵՐԵՒԱՆ

Գ.Ի. 'ի Առւբր. Գիրս , թէ յամսեան մն տասաներորդի երեւցան գլուխը լերանց . և ահա Երեան , որ անկանի 'ի Կոտայս գաւառ Արարատայ՝ նովին անուամբ և յայտնագոյն իսկ աւանդութեամբ կայ և մնայ մինչեւ ցայսօր՝ արձան յիշատակի անցից ջրհեղեղին : Քանզի ասի , թէ իբրև բացաւ ձեղուն կամ լուսամուտ տասլանին , նա որ զառաջինն ետես ըզ կատարս լերանցն Գառնոյ և Գեղամայ միանդամայն : առ խնդին աղաղակեաց՝ երեան , երեան : (Ծերես պէտե 'ի Արբոյն Յակովբոյ ց Խրբահիմ Փաշայ՝ ոչ ոք կարողացաւ ելանել 'ի գլուխ Ա'եծին Մասսեաց ,) սակայն 'ի գըլուխ Փոքուն Մասսեաց ես հրկիցս ելին : (Երանի թէ այժմիկ ևս յաջողէր ինձ դէսին : տղայ հասակաւ , սակայն մինչեւ ցայսօր անջինջ

դրոշմեցան գաղափարը յուշի խմում,) և ընդ
Հիւսիս հայեցեալ՝ տեսի զի երկնամբարձ ա-
չեղանայթ Առվկաս՝ իրքե զամակ մթին 'ի թի-
կանց ամենայն լերանց ։ բայց Արագածն, Ա-
րային, Գառնին, և Գեղամին 'ի մօտոյ ահե-
ղագոյնք ես ։ որք որպէս ինձ 'ի Փոքուէն՝
նոյն և Այեանց 'ի Աեծէն Մասսեաց երեեալ,
քնականաբար յինքեանս ձգէին զուշագրու-
թիւն նոցա : Խսկ ընդ հակառակն լերինք
Առրդուաց 'ի հարաւոյ՝ ընդ Կապան, Ահենդ
և Աաւալան յարեելից՝ բարձրաբերձք որքան
և են, Ճնշին առաջի Մասսեաց ։ և երեին
որպէս սեխս 'ի խանի շարեալք :

ԵՐԱՒԱՐԴ

Յ բավարեւը նախահարը՝ անհամբեր ըս-
պասէին զիջանելոյ ջուրց և երեելոյ երկրի .
ապա զկնի աւուրց ինչ իրքե տեսին զստորոտ
լերին Արայի բացեալ, գոչեցին “Եղև արդ” :
սյուինքն՝ արդ եղև դադարումն ջուրց : Ա-
մանք զայս Հին աւուրց աւանդութեամբ զանց
աբարեալ՝ համարեցան անուանն նորա ծագել
'ի Գեղարդէն Քրիստոսի, որ առ ժամանակ
մի պահեցաւ ասի՝ 'ի վանս նորա : Բայց այս
յերեկեան խօսք են, զի անուն Եղուարդայ՝

Հայելով և ՚ի պատմութիւն Աղջիս՝ Հեագոյն
է քան զՊեղարդ :

ՕՇԱԿԱՆ

Թակութեան երեսումն Եղուարդայ յոյս մեծ
ծնանէր յոգի նախահարց սակայն տակաւին
զգաշն մեծ ծովացեալ ջուրբք զառաջեաւ
տեսեալ՝ ոչ ինչ կարէ ին Համարձակել ՚ի փո-
փոխումն վիճակի իւրեանց ։ Բայց իրեւ վե-
րստին Հայեցեալ տեսին զբլուրն ծիրանա-
փայլ չեշաքարանց որ մինչև ցայսօր բոսո-
րափայլ երանգէ զաւանն (Օշականայ զուար-
ձացեալ խրախուսանօք իմն ձայնեցին ։ (Օշ-
ական օշական այսինքն է երանի աշաց մե-
րոց զի տեսաք և զայս բացեալ ։ ՚Ի բա-
նիլ (Օշականայ ՚ի Հիւսիսոյ բանիւր արդեօք
և Արկուռի ՚ի ստորոտս մեծին Վասսեաց ։
այլ գուցէ ոչ երեկը ՚Այեանց վասն մեր-
ձաւորութեանն իւրոյ ։ ՀՅերեւ (Օշականայ
թէպէտե Հնար էր աշխահին բնակել ՚ի մարդ-
կանէ սակայն և այնպէս դեռ վերջին աստիճան
բարձրութեան ջրոյն զամնայն դաշտ բերրի և
զպտղաւէտ ծածկեալ ունէր ։ մինչ երեցաւ
Ուշին աւան առ Քասաղ գետով ։

ՈՒԾԻ

ԽԲԲ թէ տեղին զոր յՈւշի ունելին իրեւ

զվերջին կիստանելոյ ջուրցն՝ բացաւ, երեեցաւ : Ատուգաբանութիւնք անուանցս ոչ միայն անվրէպ հաստատութիւնք են Տապանին : Եղի իջանելոյ 'ի Հայաստան, այլ մասւանդ թէ՝ և Պարախտին Եղիմայ անդր լինելոյ : Օ ի արդարեւ զայնպիսի անուանս տալ վայրաց՝ ծանօթից միայն է գործ, և ոչ անձանօթ աստանդականաց : Անհամար աշխարհ, կղզիք և եղերք գտան դարուց 'ի դարս ժամանակաց . բայց ոչ Հին անուանք նոցա, և ոչ նորոգ եղեալքն 'ի գտողաց անտի՝ զայնպիսի ճիշդ համաձայնուիս ընդ անցիցն ցուցանեն :

Առին տեղի տամ և քաջ չափաբերին՝ առնուլ զամիսն մետասաներորդ, և չափելով ըզ բարձրութիւն գագաթանց հիւսիսային լեռանց մերոց՝ տեղ 'ի տեղի իջանել և գտանել զաստիճանս նուազութեան ջուրցն : Աւր գուցէ և այլ անուանք տեղեաց՝ զորոց կամ տգէտ ես, կամ մոռացեալ՝ առաւել ևս օգնեսցեն նմա :

ԱՐԿՈՒՌԻ

Արկ ուռի, այսինքն տնկեաց ուռ : Խաղողի մատին՝ արգատ կամ ուռ ասեմք : Արդայս առաջին և հնագոյն ընակարան աղդի

մարդկան յետ ջրհեղեղին , անկանի ՚ի հիւսիսոյին կողմանէ ոտանն Վասսեաց . ուր տնկեաց ՚ԱՌ զուռ որթոյ՝ առանց որոյ այգի ոչ լինի . Ռոացի առաջին բնակարան . նախ՝ զի բնականաբար ՚ԱՌ իջեալ ՚ի լեռնէն՝ աստ պատահել ալիտէր . և վասն բնակութեան ութն ոգւոց միայն՝ երկար ճանապարհ երթալ բնական իմն չէր , ՚Երկիրն բաւական էր , ոչ եթէ ութից՝ այլ՝ յաւէտ քան զութն հազարաց : Վանաւանդ զի և դաշտավայրք դեռ տամուկք էին , և ՚Երասխ անցանել պիտէր ամենայն ախիւքն , եթէ որ ուզենային գնալ ՚ի ՚Եախիջեան քաղաք՝ կամ յայլուր , ՚Անդ՝ ուր տնկեաց ՚ԱՌ զայդին , անդ որը և ՚ի գիւղոյն , ՚Բանան կամ լաւ ևս՝ ՚Խըն Հայերէն , իբր արմատ խլնդ , խանդ , և ծաղը բառից՝ ծաղը արար զնա . և անէծս լնկալեալ մերժեցաւ յերեսաց նորա . և որպէս թուի ինձ բնակեցաւ ՚ի ՚Բանաբեր :

ՎԱՆԵՔԵՐ ԿԱՄ ՔԵՄԱՔԵՐ

՚Անկանի ՚ի հիւսիսոյ ՚Անդին ՚Երևանայ , և յարեմտից ուսոյ ՚Առաեզանն՝ ուր գերեզմանոցն է ՚Երևանայ : ՚Անարդեալն ՚ի Հօրէն ՚Բամ կամ ՚Բանան , զսովա . քերեալ բնակութիւն արար ՚Ուտի մեր նահանդ ,

ԿՈՇ. ԿԱՄ. ՔՀՈՒՅ

ԽՍԿ որդին նորա ՔՀՈՒՅ անցեալ յարեմուտ-
ալս կոյս յոստ ինչ Արագած լերին՝ ի տեղի
շրջապատեալ լերամբք՝ թնակեցաւ անդ, և
անուանեաց զայն՝ ՔՀՈՒՅ կամ Կոշ. զոր ոմանք
աղաւաղելով Կուաշն կոչեցին զնա, 'Ի հաս-
տատութիւն բանիս առնում զաւանդութիւնն
որ կայ մինչե ցոյսօր 'ի բերանս հասարակաց՝
որ զայր անարդ և արհամարհ՝ "Կոշայ ժամա-
հար" կոչեն, Իշ փոխանակ ասելոյ, || թէ այս
ոք անարդ է՝ ասեն, քան զԿոշայ ժամահարն
է, || Իշ եթէ չիցէ պատճառ սորուն 'ի պատ-
մութեան աշխարհի՝ ընդէր ապա այս կոչումն.
այնինչ շատ գիւղք և աւանք 'ի նահանգին
աղքատագոյն կան, և չեք 'ի նոսա յիշողու-
թիւն այսպիսի, Անանաւանդ թէ և Կոշն իսկ՝
թագաւորաց առանձնարան եղեալ է մեր. ունի
զարդիս բերթ 'ի կարմիր քարանց 'ի լերինն
կառուցեալ. և անդս, և այգիս պատուա-
կանս քան զԱրկուուոյն, որպէս և գետ
կամ վտակ ստորերկրեայ՝ որ ահագին դնդջ-
մամբ հոսի յայրին՝ ի հիւսիսոյ գեղջն,

ԽԵՆՏՈՒՏԻ ԶՈՐ

ԽԲԲ Քանանայ, Քամայ, և Խանդոտի,
այսինքն ծիծաղղի ձոր՝ տակաւին կայ 'ի մեջ

Կօշայ և Շիրակեայ : Առասպելքն զնմանէ 'ի
ժողովրդեանն , եթէ ուղիղ մտօք պարզեցին ,
դատոյգ անցո Քամայ 'ի մ.ջ բերեն , բան ըդ
Տիգրանունեայ մերում կամ զնմանւոյն , որպէս
դնէ 'Երբ Հայաստան :

ԵՊԸ

Եթէ զայտ լեռուն հուպ առ Մասիս և
կից ընդ՝ Օչաղկուտն , ուատի բղխնեն ակունք
եղեմաբուխ գետոց աշխարհիս առաջին ամա-
րանոց համարիմ Կահապետիս մերոյ սրբոյ :
Քանզի այր հինգ հարիւրտման նախ քան
զհեղեղն եղեալ Կոյի լսէր արգեօք կամըն
թեռնոյր զտեղւս գրախտին Ադամայ , և
հուպ յայն տեղի փափագէր բնակել՝ գէթ
զամիսս ինչ տարւոյն : Արդի սովորութիւն
բնակչոց խելամուտ առնէ ինձ զայս բան . ոյք
'ի տօթոյն Արարատայ խոյս տուեալք՝ անդք
հարկանեն զլբան իւրեանց , և յարօտա խա-
շանց հրաշանան և հարստանան :

ԱԴԱԿՆԵՑՈՒՆ

ԱՅՍ գիւղ այժմ անկանի իրեւ երեք մզո-
նօք հեռի 'ի Քասախ գետոյ ընդ յարե-
մուտս նորա . և զարմանս բերէ ընդ այսպէս
կոչել անուանն . ոյնինչ յիշատակ հնուեց ,

լեառնեն, կամ ըլուր ինչ ոչ գտանի անդանօր: Արձակեաց ՚Ես զաղաւնին՝ որ գաղար ոչ գտեալ գարձաւ. բայց զինի աւուրց կրկին արարձակեալ՝ ոյլ ոչ և ո գարձաւ: Անուն սորա, բնաւորութիւն աղաւնւոյ, դրութիւն գեղջո, (ակնյանդիման Արարատ լերին,) և ոյս անցք, զարմանալի ինն եղանակաւ հաղորդին երերաց: Բայց ինքնին երեան լինի աստանօր և միւս խնդիր. զի որ ինչ անուանի, սուրբ, և յիշատակաց արժանիք գործեցան, ՚ի հիւսիսոյ Մասսեաց լերինն յիշատակին. և որ ինչ անախորժ, ապերախստ և գժամնելիք՝ ՚ի հարաւոյ նորա: Եւ եթէ չիցէ ոյս ծագեալ ՚ի մտաց նախաշտարակեան նահապետաց՝ իրը յարհամարհութիւն աշտարակին՝ որ ՚ի հարաւոյ Մասսեաց և շինողացն՝ ուրեմն զարմանիք իմն են:

ԱԳՐԱԿՈՒՑ ՔԱՐ

՚Եթ զագուաւն արձակեաց. և նա գնացեալ ոչ եկն վերստին ՚ի տապան անդք: Ա տան զի ընդ հարաւ գնաց. և լեառն՝ ուր նստաւ և բոյն արար՝ կոչե մինչ ցարդ Ագաւուց ՚Բար: Եւ է կրկին, մին որ բաժանէ զ Օ արեանդ ՚ի հին Գարեղենից գաւառէն, և յինքն ընկըշ-

մէ զՃիգրիս զետ՝ այժմ Աւաջուխ կոչեցեալ,
ուր և Պաղի կեօլին կամ լիճն Արեթուսայ,

Եւ երկրորդ՝ 'ի Կարգուաց աշխարհին, 'ի
Հիւսիսոյ Կապուտակ ծովակին՝ որ տանի 'ի
Գավթիժոյ, 'ի Խորովշահէ, 'ի Մամաղա-
նայ, 'ի Գրօդանայ, 'ի Խանայանայ՝ յիշ-
ջաբշեր, 'ի Շիշտան, 'ի Շերազ, 'ի Քուլ-
թարէ, յըլիի, 'ի Բնար, 'ի Մարաղա, 'ի
Չելիկ, և 'ի Դուռար :

ԿԱԽԻՋԵՒԱՆ ԿԱԾ ԿԱԽՉՈՒԱՆ

Թէ հնութիւնք, թէ աւանդութիւնք և
թէ պատմութիւնք ազգիս և օտարաց՝ ուր եր-
բէք և յիշատակին զսա՝ քաղաք անուամբ յի-
շատակեն։ Արդ և շինել քաղաքի պիտին նախ՝
ժողովուրդք բազումք . և ցբազմանալ ժո-
ղովրդեան թոռանց 'ի թոռունս՝ հարկիւ խնդ-
րի ժամանակ երկու կամ երեք հարիւր ամաց։
Եւ ահա յայնժամ ևեթ թուի ինձ կանդնել
քաղաքիս : 'ի հաստատութիւն բանիս առ-
նում զմիւս անուն նորա, ուստի նախ չու-
եցաւ աշտարակաշէն բազմութիւն մարդկան, և
մահ Կոյի անդ, որպէս և գերեզման նորա։
Թէ պէտե. Հայր Եփրեմ 'ի նպատ լերին
փորէ նմա զայն՝ լնդէմաւանդութեան և պատ-

մութեան միանդամայն : Այլ հետեակ զաւուրս երիս հազիւ հասանեւ յԱրկուռուս 'ի Աախիջւան : և այն անցանելով ընդ Երբասի գետ , և ընդ արեելս ընթանալով է Եթէ դիցուք թէ Այ զայգին յԱրկուռուս տնկեաց , և ինքն 'ի Աախչուան ընակէր , արտաքոյ ընականին խօսեցեալ լինիմք : Խսէ եթէ դիցուք ըստ Հնախօսին մերոյ 'թէ Եղեմ ընդ արեելս դոլով , ընականաբար ձգէր զժողովուրզն դէպ 'ի կողմն իւր՝ և զԱրց ինքնին , ծաղու արժանի լինիմք : Օ ի ընդէր մեք սոսկ 'ի նշանացն հասկացեալ և պնդեմք հաստատել այլոց զտեղի դրախտին , ու նա հինդ հարիւր ամօք նախ քան զհեղեղն կացեալ , և դեռ անծանօթ՝ տղայաբար յարեն կըս կղկաթէր :

ՄԱՅՐ ԱՆԴ

Անկանի յարեելից հարաւոյ Աախչուանոյ , և ուղիղ ընդ արեելս Օ արուանդայ և Հերկամ Խոյ գաւառի . այսպէս կոչեցեալ 'ի սակա Այեմզարոյ կնոջ Այի , և մօր հանուր մարդկութեանս՝ անդք թաղեալ լինելոյ :

Օ ԱՐՈՒԵՆԴ

Օ բոխանն , թէպէտ Եղնիկ դուդ Պարսկական համարելով թարդմանէ 'ի բաղտ , կամ

փառք, որպէս թէ՝ **Օ** առվլան, սակայն ես բուն
հայերէն համարիմ, 'ի **Պ** ըլլանն, զի լնդ ջուր
վարեալ, կամ զջուր վանեալ՝ ապրեցաւ ի համա-
կործան հեղեղաց : **Ա**յս դէպք առաւել **Բ**աղտ
կամ **Փ**առք եղեն նմա, քան թէ ոսկի կա-
պեալ 'ի պարանոց ընկղմէր յանդունդս խորոց :
Եազի՝ ոսկւոյ լինել նախ քան զհեղեղն յիշա-
տակուի իսկ չիք : **Ե**ւ այս կարկատանք առաս-
պելախօսից **Պ**արսից են միայն Խսկ **Պ** ըլլանն,
Օ բուան կամ **Ա**եմ էր՝ որ նախ բնակեցաւ
'ի **Օ**արուանդ, և տեղին յանուն նորա կոչե-
ցաւ **Օ** բուանայ անդ, **Օ** այս այսպէս ստու-
դաբանելով՝ 'ի կամս նորա ապաստան առնեմ,
ուսուցանել զ**Ա**րև անդ՝ կամ ո՛չ :

'ի մէջ երկուց **Վ**ասսեաց անկանի ահագին
և անմատոյց այն քարայր, յոր ապաստանեալ
աւազակաց՝ և հուղկահարաց՝ քամահէին զօ-
րինօք երկրին :

Վարդար յայն սակա կառոյց զհզօր բերթն
Վարդարաբատ՝ յարեմտից **Ա**րկուռեայ, ուր
ինքնին իսկ ամառէ, և զօրք հոկեն հանապազ
զանցուդարձ **Վ**արաց : **Ա**յս թուի ինձ դոլ
նախնի **Փ**առախոտն, զոր շինեաց **Գ**եղամընդ
յարեելս **Յ**ոլակերտին, և ետ արւոյն **Փ**ա-
ռոխաց : — **Ա**հա այսքան չքնաղ, վսեմ և հրա-

շաղանս լնծայէ Ամասիս տեսարանս աչաց և
մոտաց մարդկան :

(Օգոստ : Փոքը ՚ի շատէ առողջացեալ էր Պօ-
ղոս վարդապետ , և ես շրջադայութեամբ օ-
դափոխեալ՝ մաքրեալ յարդարեալ էի զիմ
խելապատակ յընդունելութիւն դաստիարա-
կութեան նորա : Դեռուալարժ որպէս և էի
յըսկղբունս քերականական գիտութեանց ,
տակաւին ոչ ախորժէի լնդ այն : Ուստի մար-
դասէր և բարեբարոյ վարդապետ իմ , փոխա-
նակ դաւազանաւ երկաթեաւ շարժելոյ զիմ
ախորժակ , իսպառ թոյլ ետ յայնմ . և սկսաւ
հրահանգել զիս ՚ի նախակըթութիւնս արհես-
տին ճարտասանութեան . այլ այնու դաշամբ՝
զի վերլութանիցեմ 'ի ներկայութեան իւրում
առ օրին տասն տունս շարականաց : Աիրով լն
կալայ , դաս առի զճարտասանութի , և առօրին
գրեալ զմոտացածին իմն սպատմութիւն , տարայ
նախ ցուցի տնտեսի վանաց , լնդ որ կարի հա-
ւանեցաւ . որպէս և ես լնդ սեր նորա և մեղը :

Ապա տարոյ առ վարդապետ իմ , որ այնքան
սրբագրեաց , մինչ յիմոց գրուածոց հազիւ
թողուլ բառս ինչ : Օ կնի դասառութեանս ,
սկսանէր լուծումն քերականական , որ առ ա-
մենայն դարձուածս բանից պահանջէր յա-

ռազբերութիւն կանովնաց նորա + որով կարի ճիշտ կրթեցայ յարուեստին + Եւ այսպէս՝ 'ի շնորհս երախտեաց խոհական վարժապետիս + ի միջոցս չորից ամսոց անվթար ուսոյ զբերականութիւնը ընդ նմին և զնախակրթութիւնս արուեստին ճարտասանութեան : Եղանակ ուսանելոյ իմոյ օտար իմն էր՝ և գլխովին ինքնաշնար : Ը եշ իմն փոքրիկ լցեալ մելանաւ կախեալ զալարանոցէ՝ կրէի հանասլաղ՝ 'ի ծոցի իմում. և գրիչ՝ փետուր սագի, և մատիտ 'ի գտակածալի, իսկ գիրք ևտետրակրթով զանթովը իմովը՝ զնայի ուր և հաճէի, և նստեալ կամ ընթեռնուի, և կամ գրէի : Այլ ըստ մեծի մասին առանձին ուսումնարան յօրինեալ էր իմ ինձ՝ զմատուռն Աղքեր Արքոյն Յակովայ + ուր ելանէի միայնակ զաւուրս բազումն՝ առանց ինչ յայտնելոյ վարդապետիս + Յաւուր միում դուժկան պատառուածոյ արանց երկուց յառիւծոյն հասանէ՝ 'ի լուր նորա, բազմիցս որոնէ զիս Երանելին, այլ ոչ զըտանէ . ուստի և կարծելալ վեասինչ հանդիպեալ ինձ՝ խռովի յոդի իւր, և զայրանայ յոյժ յոյժ : Խսկ ես յարուցեալ յանուշակ քնոյ, լուանիմ ի մատրան այնմիկ . և յանհոգս երգելով և վերծանելով զդաս իմ, զամ հասանեմ ի դուռն

վանաց : Ուր իրքեւ տեսանէ զիս նա , ասէ ցիս :
 “ կաց աստանօր , ” խսկ հս բարւոյ իմիք ա-
 կեկալու՝ կացի ըստ հրամանին , և ահա վե-
 րադարձաւ մական մեծ ’ի ձեռին իւրում , և
 սկսաւ հարկանել զիս . ոյն և սաստիկս գանա-
 հար առնել , առանց ինչ զպատճառն յայտնե-
 լոյ : Արձանացեալ կամ առաջի նորա իրքեւ ըդ
 վէմ տնմուռնչ , մինչ գայ մայրագիր տնտես
 վանաց՝ և ընդ մէջ մտանէ իմ և գաւազանին
 բարկութեան : Վեկեութեամբ պատճառին
 փութով հաշտեցաք : Այլ գէալք ՚ի վերայ
 ածին և այլ իմն պատահար նմին չարաչար :

Ա առն զի հնաղանդութեամբ վարժապետիս
 լքեալ մինչ ՚ի սպառ զմատուռն ինձ սիրական ,
 ընտրեցի ինձ զմարմանդս ծառաւէտ սարաւան-
 դին , որ ’ի թիկանց վանացն անկանէր : Որոշե-
 ցի ինձ անդ առանձինն տափարակ տեղի՝ շրջա-
 պատեալ և թաւացեալ ուռենեօք և ծիրա-
 նեօք , և յօրինեցի ինձ զայն տեղի սերտելոյ
 զիմ դաս : Յաւուր միում , որ օր քսաներորդ
 էր (Օգոստոս ամսոյ , և ես նիրհեալ էի անդ
 ’ի քուն քաղցրութեան , յանկարծ զարթոյց
 զիս ցայտումն ինչ ջրոյ :

Օ արթեայ . և զի՞նչ տեսանեմ . եթէ ոչ յա-
 ւէրժահարսանց դրախտին Պուրանի՝ ոլարառ-

ծովուն զինեւ : Ողջայն Հարամ Աարդարին : Ապ-
շեցայ զառաջինն՝ երկիւղալից սասանմամբ, այլ
նեաել և մարդասէր վարք նոցա, ըստ ակնարկե-
լոյ երիցադունին ի նոսա՝ Հաճի Խանումայ,
վտարեաց 'ի սրտէ զամենայն երկիւղ : Հուպ
մատեան սուխս, և բացեալ զՃարտասանութիւն
կըկտեցին և գտին զպատկեր մէժանուն Հեղիւ-
նակաց լեզուիս մերոյ 'ի նմա, և Հարցին ցիս
զհանգամանաց նոցա : — Հաւելին Հարցանել
ցիս եթէ թլպատեալ իցեմ, եթէ զՊ ուրան
գիտիցեմ, եթէ զՊ ահմետ մարդարէ ընդու-
նիցիմ, և այն : Ասացի “ոչ :” Եւ ահա քոմք
ընկալայ 'ի դլուխ : Հարցին ցիս թէ ընդէր
սեազգեաց էի . Հայր քո 'ի նորոյ մեռաւ,
ասեն : և այլ այսպիսի Հարցմունք անտեղիք :
Խսկ Հաճի Խանում սլարդեեալ ինձ ոսկի
դահեկան մի, մեկնեցաւ անդրէն, և գնաց
ի դղեակն Արկուռեաց, զոր կառոյց Աարդար
և անուանեաց Աարդարաբատ :

Աեսկո . 20—Աանխեցաւ ձիւն, և սաստկա-
ցաւ յոյժ ցուրտն, ուստի Պօղոս վարդապետ,
այն զի ոչ աստ մնալի կամեր և ոչ վերադառնալ
ԺԼՃմիածին, դրեաց խնդրեաց Հրաման ի Ալք
բոյ Հայրապետէն Եփրեմոյ, այց ելանել ըն-
տանեացն՝ 'ի Վուժումբար Պ արադաղայ :

՚ Խ դառնալ Յօհունոյ և մեծ բաղմաւթիւն
 ու խտաւորաց ՚ի Վ աղարշապատայ եկին ՚ի վա-
 նըս Արքոյն Յակոբայ, ընդ օրս և Հին աւուրց
 բարեկամ իմ, Պարոն Մէլքում Ենոքեան
 երիտասարդ առոյգ, այլ փոքր մի կարճ հա-
 սակաւ, Աա՝ որպէս և Խաչատուր անուն Եղ-
 բայր սորա, էր մի ՚ի գերելոց Բագրեանդայ,
 զորս գնեաց և ազատեաց Տէր Եփրեմ Հայրա-
 պետ մեր, այլ ըստ որում մնոյց ինքեան և ուսոյց
 զնա, Ատեփաննոս Եպիսկոպոս Ենոքեան Տփղի-
 ղեցի, վասնորոյ և յանուն նորա երկոքին ևս Ե-
 նոքեանք անուանեցան, Հասեալ Մէլքումայ
 յարբունս կատարելութեան իւրոյ, կարի վարժ
 Հանդիսացաւ, ՚ի Ճիալարութեան, զի զձեռս ՚ի
 քսակ վարդապետին ունելով՝ միշտ զերիվարս
 ընտիրս և ամենիս բուժանէր, Որով Հաճոյա-
 ցեալ յաչս Մէլիք Ատեփաննոսի Տանուտեա-
 ռըն Արկուռեաց, ամուսնացաւ ընդ արդարեւ ա-
 մենագեղեցիկ դստեր նորա, և այժմ ընդ ուխ-
 տաւորացն գայր Հասանէր անդանօր՝ յուխտ
 Աստուծոյ, և յայցելութիւն աներոջ իւրում:
 Զէր ցեծութիւն և վայելչութիւն, զորս
 ՚չ Հանդիսացոյց Հասարակաց Մէլիք Ատե-
 փաննոս՝ ՚ի տես դստերն և փեսային, ՚ի տանն
 զիոչունս խնջոյից ասա, յԷղբերն՝ զմատաղաց

զինմուշնս, ՚ի պարտիզին՝ զիսրախճան խորովածի
և գինւոյ, ՚ի լերին՝ զորսոց պատրաստութիւն,
տինաթիւ և ՚ի գագաթան Փոքուն Վասսեաց՝
զհամերեան զուարձարան ամենայն Հրաշա-
լեաց : —

Ա Եթէ հաւասարակից և սրտակից բարե-
կամաց անուշակ և անմեղ կեցաղավարութիւն
յերկրի՝ չիցէ պատկեր ամեներան վայելչու-
թեանց արքայութեան երկնից՝ ուրեմն այս
աշխարհ Աստուծոյ չէ :

Ա Յոօրինակ երջանկութեամբ կատարեցաք
զաւուրս երիս՝ ՚ի փառս ամեներան և ծայրա-
գոյն Բարւոյն, մինչեւ եհաս օրն բաժանելոյ
բազմերախտ վարժապետիս ՚ի գլխոյ իմմէ :

Ա Պոչեաց զիս առաջեաւ այրն աստուածազ-
դեաց, խրատեաց զիս յերկիւղ Տեառն՝ և ՚ի
Հնազանդ ութիւն սուրբ կամաց նորա, և յանձ-
նարարեալ նմա զիս և զբարեկամս իմ, հեծաւ
՚ի չու իւր : Ասյլակունք յաչաց իմոց և հե-
կեկանք սրախս՝ զամենեսեեան յարտասուս շար-
ժեցին : Ամեները ին, մինչեւ նաև ուխտաւոր
տիկնայք ՚ի ձի աշտանակեցան ուղեորել զե-
րանելլին : այլ նա խստիւ արգել զնոսա :

Օ Հետ չոգայ համբուրելի հետոց դարշա-
պարսց ձիոյ նորա, նոր ՚ի նորոյ հասկանալով

թէ որպիսի՞ կիրք եռային յոզի մաքուր Ե՞
զեսէի՞ 'ի բառնիլ անդ մարդարէահօր նորա՝
և վարժապետի : — Քաղմութիւնն մի առ մի
դարձաւ . վարժապետն սուրբ հեռացաւ , մեկ-
նեցաւ յաչաց , և ես գեռ ընդարմացեալ կացի :
Տասն անգամ սկսայ խմածախ ձայնիւ . “Գնաս
քա ” ’Գնաս քա — ” այլ հեկեկանք ոչ թողին
կատարել զբանն՝ օրինակ զայս՝

Գնաս բարեաւ Վարժապետ՝ հանրասփիւռ . զիտութեանց +
Գնաս բարեաւ Ռւսուցիչ Հաւատայ՝ զերազանց .
Գնաս բարեաւ , այլ կաթիլք իմ անմեղ արտասուաց
Լիցին քեզ փոխանակ քոց անմահ երախտեաց : ” —

Այսպէս բաժանեցաւ գնաց նա . և ես ընդ
ուխտաւորացն դարձայ ՚ի Առւրբ Խջմիածին .
անցանելով զԵրասխ ընդ հունն Արմաւրայ՝
առաջին թաղաւորանիստ մայրաբաղաքի հա-
մօրէն Հայաստանեց , յարեւմտից հարաւոյ
Վաղարշապատայ՝ ՚ի գլուխ Մօրին Մեծի՝
կամ Աեւաւ ջրոյ :

Դարձեալ վիճակեցաւ ինձ զ բագ բարան սըր
բոյ Աթոռոյն ընդ ակնարկութեամբ Հովհան-
նու Վարդապետի Բաղրեանդցւոյ . ուր զա-
միսս ինչ առանց ուսման՝ և կրթութեան ընդ-
օրինակէի ինձ զկոնդակս Հայրապետին և ըդ-

Քարողագիրս Պիետրոսի Եպիկոպոսի Բերթում
մեցւոյ լնդ միւս գրուածոց նախահարց մերոց :



ՀԱՅՈՒՄԾՎ ՀԻՄԻ ԵՐՈՐԴԻ

ՃՌՆԿԱԿԱՆ ՀԱՐԴԱՐԱՐԱՐ ԻՄ ՇԷԿ ՇՈՒՆ ԱՐԵԳԱԿԱՆ :

ԲԱՐՄԵԴ, Եպիսկոպոս Ահսարացի պատրաստութիւն տեսանէր ելանել յոտն Արագածոյ, զի վանորայք տեղւոյն, մանաւանդ Առուղնեն, Առորը Գրիգորին՝ Հօմիչանալանքն, Աղմասալանքն, և Աօշալանքն ի հոգս նորա էին :

Խսկ եղբօր որդի նորա Պօղոս Գրիգորեան աշակերտակից իմ, գուլ՝ ի սերտողութեան, բայց և սուր յերաժշտանկանին դասառութեան՝ միջնորդեաց և ինձ լնկերել ինքեանց, յուխտ և ՚ի զրօսանս վայրացն վայելչականաց :

Ելաք յիշմիածնայ լնդ ճանապարհ Հիւսիսյ՝ որ տանէր յՕշական Աւան : Պերեալառ առուօքն Աղօրեաց որ հանեալ՝ ի Պասախայ բերէր ՚ի Աղարշապատ՝ հասաք ՚ի բլուրն Արյանէից կոչեցեալ . որ ՚ի հնումն կոչէր Շրէշ . ուր հիմնեաց զառաջինն Առանուկն

Ա արդգես զիւր աւան, զոր յետոյ լնդարձա-
կեալ Ա աղարշայ՝ անուանեաց Ա աղարշապատ:
Խոկ զայս ա նուն արդիք տան նմա, 'ի սակս
երգելոյ անդ ձայնաւոր վարդապետի ու բուժն
զերդն Հրեշտակապետաց՝ այդու սկսուածով:

Խըրե միով մղնեաւ հեռի 'ի բլրոյ աստի լնդ
յարեմուտս հիւսիսոյ, 'ի ստորոտս քարագաշ-
տին (Օշականեայ՝ է գիւղե Ո՞ոլլադուրսուն.
ընակեալ համակ 'ի Փարսուտաձկաց՝ յեզը
գետոյն՝ Բասախայ, ուր յապայս յաւելան և
քանի մի տունք Հայոց :

Առերի գեղջս է աւերակ քարաշէն մեծի
Եկեղեցւոյ որոյ որմունք գեռ կանգուն կան,
ի ձախմէ ձանապարհին որ թուի ինձ, “Անա-
պատն Առւրենայ” կոչեցեալ ՚ի Փարակեցւոյն:

Յաջմէ նորա անկանին աւերակք ինչ բա-
րակարկառ շինուածոց անուանեալք Տուն
Արդեմ Պատթի: Այս Արդար Պատթիթ, ըստ
պատմելոյ հինաւուրց Եպիսկոպոսաց մերոց՝
էր այր սոսկավիթխարի, անձնեայ և ուժեղ
քան զամենայն մարդիկ իւրումն ժամանակ ի :
Որ հրաժարեալ յամենայն մարդկային հա-
զորդակցութենէ, շինեաց աստ յանջրդի ա-
ռապարիս զայս դաստակերտ մենաւոր, և ա-
ռանձնացաւ ՚ի սմին՝ անհամեմատ ճգնութեամբ:

Յամենային եղանակս տարւոյն՝ ընդ ցուրտ և
ընդ տօթ, յառնէր յիւրմէ դաստակերտէ, և
դիմէր ասեն, յԵկեղեցին Խջմիածնի ժամու և
կիսոյ ճահապարհաւ, հաղորդիլ աղօթից Ալբ-
քոյն : Որ և ի սակս ոյսր սաստիկ ժամանա-
սիրութեանն, կոչեցաւ, Արդար :

Յանցանել ժամանակաց երկու 'ի մոնթից,
կամ 'ի ստորին աստիճանի դպրաց Աթոռոյն
սլակասեցան յանեկարծ, որք այնզի ուսումնա-
կանք էին և յուսոյ բարւոյ ապահովարք,
բաղմօք որոնեցան, և ոչ գտան : 'Խ վաղիւ
անդք որովհետեւ ձմռնն էր՝ գոյ արդարս ան-
ուանեւալ 'Դաւիթ' ըստ սովորութե՛ իւրում,
աղօթել յԵկեղեցւոջն : 'Խ լուսել առաւօ-
տուն ոմանք 'ի մերձակայից նորա՝ ընթեռնուն
'ի թիկանց մուշտակի նորա՝ 'Յովհանն Արդար
Դաւթի Տան է,' ածխով նշանագրեալ :

Ազդ առնեն Հայրապետին, աշխարհս ամե-
նային պատկառի յառնն արդարութենէ, և ոչ
Համարձակի ձեռն միսել 'ի նա, Խմաստութք
Հնարին 'ի կոչունս պատաղեցուցանել զնա,
մինչ արանց հեծելոց հասեալ 'ի դաստա-
կերտ Արդարոյն, տեսանեն զողորմելին Յով-
հանն կաշիանդեալ 'ի կապանս շղթայից, Ար-
ձակեն զնա, և նա կալեալ զձեռաց նոցա

տոնենի ՚ի խահարան Արդարոյն, և ցուցանեկ ՚ի
 ՚նմաս զմարմին ողօրմելի աշակերտակցին իւրոյ
 եռալ ՚ի սանեի : Քառշունի կըթին ՚նոքա ընդ-
 տեսին սոսկալի . այլ յաւելու Քովհան ցու-
 ցանել և զկարկառ ոսկերտց բազմաց , զորս
 խարէութեամբ որսացեալ մարդարարառ
 Քորինւոյս՝ մատուցեալ էր ՚ի խորտիկ ախոր-
 ժանաց խանգարեալ ախորժակին : Տանին
 կացուցանեն զնա յանդիման Հայրապետին
 դալկացեալ յերկիւղ մահու . կոչեն զՊաւիթ
 Արդար զառաջեաւ , որ այնինչ տեսանէ զմա-
 նուկին զերծուցեալ և զխորհուդս դաղմնի
 մարդակերութեան իւրոյ առ ՚ի լ՛յս յանդի-
 մանեալ , զայրագնի կատաղին սրամտու-
 թեամբ . և յոյժ իրանացն ձեզքել զամբոխն
 և փախչել աճապարէ : Ունին զնա երիտա-
 սարդ.ք Ա աղարշապատայ հրամանաւ Հայրա-
 պետին , և յոյտնի ինչ ոչ կարացեալ առնել
 ՚նմա յերկիւղէ Փարսից , առ որս տարածէր
 սնոտի համբաւ սրբութեան ՚նորս , արկանեն
 զնա ՚ի բուրգն ինչ Հիւսիսակողման պարս-
 պին Լ ջմիածնայ , որ լնդ մէջ Լ ուացարանի
 ՚նորս և Ախոռոց . զի անդ սովամահ սատա-
 կեցի , որպէս և սատակեցաւն իսկ : Առ ոմանս
 ՚ի հսագիտաց կոչի այս բուրգն յանուն ՚նորս ,

“Արդար Պատմի բուրք ո՛” Եղի Հապա, գերամեծար ընթերցող, ի միտ առցուք յօրինակէս, թէ արտաքին երեսով թ սրբութեան ոչ մաքրէ զհերքին հոգին . և միաբան աղաղակեսուք առ Հոգին Ճշմարտութեան, զի բարձցէ ’ի սրտից մերոց զկեղծաւորութիւն . և տնկեսցէ փոխանակ զհոգի Ճշմարտութեան . որպէս զի հոգւով և Ճշմարտութեամբ պաշտեսցուք զԱստուած :

Աստի ընդ յարեելս իբրև ասսլարիզաւ երկոքումբք, անկանի ջրաշեղջ իմն . Հասարակօրէն գեօլ կոչեցեալ . որոյ շրջապատն է մարդագետին խոտաւէտ, տեղի արօտից երիւլարաց Կաթուղիկոսարանին : ’Ի ջրշեղջէ ընդ յարեելս, հուալ առ ճանապարհն՝ որ Հանե յԵղուարդ գիւղ, է քարահանքն կարմրավայլ և սեաւ փուխը քարանց . Հասարակօրէն քաւանկ քար կոչելոց . յորոց շինեալ է Խջմիածին, և դրեա թէ ամենայն քարաշէն եկեղեցիք և վանորայք աշխարհին :

Առ տամբ Արդարոյն Պատմի ընդ Հիւսիս՝ ելաք ’ի Քարաղաշտ տափարակ . յորմէ յարեմուտս՝ յայնկոյս Քամաղայ իբրև կիսով ժամու՝ անկանի Ուշի գիւղ աւերակ՝ յԱրագածոտան գաւառի . ուր է խարխլած Եղիղեցւոյ,

առ լինթեր ունելով տապահածե դերեզմանս :
Յօրոց 'ի միւս կողմն ցուցին ինձ զոտնատեղին,
 ժամահարի գեղջն , և ասացին . “թէ առ
 անբառ սիրոյն իւրոյ առ. **Աստուած**՝ դքարինս
 անգամ հալեին սրունք սրբասունք նորա ։”

Վ տակ 'ի **Քասաղայ** ոռոգանէր տակաւին,
 զբարեթեր սրունքաշորայ . զորս մշակէին,
 բնակիչք շրջակայ գիւղօրէիցն :

Միով ժամու հաղիւ , 'ի մէջ ճանապար-
 հին **(Օ)**շականայ և **Քասախ** գետոյ՝ անկանի-
 քլըածե աւերակ ինչ . այլ թէ **Եկեղեցւոյ**
 արգեօք , և թէ պատերազմական պատնշի՝ ոչ
 կարացի ստուգել : **Աստ** նախ առաջինն եցոյց
 ինձ **Բարսեղ** **Եպիսկոպոս** զԵկեղեցի **Արքոյն**
Մեսրովքայ . զոր իրքե տեսի՝ իջի յերիվա-
 րէն , և անտեղեակ անհնարին ձորոյն՝ որ ընդ-
 մէջ անկանէր **Քարաղաշտիս** և աւանին՝ հետի-
 լնթացայ 'ի պատիւ **Աստուածամերձ** անուա-
 նակցիս : **Բազում** անգամ յորդոր մատուցա-
 նէր ինձ **Բարսեղ** **Եպիսկոպոս** հեծանիլ 'ի ձի .
 մանաւանդ ընդ անհնարին զառիվերսն որ
 յերեքկամարեան և 'ի քարաշէն կամըջէն
Քասաղայ հանէր ցաւանն **(Օ)**շական . այլ զի
 իմ դիտաւորեալ էր հետի պատուել զՏօնե-
 լին՝ ոչ անսացի նմա :

Հասաք յօշական աւան , և մտաք նախ
 յԵկեղեցին քարաշէն որմովք , ոյլ փայտա-
 ձեղուն յարկօք կառուցեալ 'ի վերայ նշխա-
 րաց գրաւորական լուսաւորչն Հայաստա-
 նեայց Արբոյն Մեսրովքայ թարգմանչի Առ-
 տուածաշունչ Առւրբ Գրոց : որոյ 'ի տրիտուք
 աստուածածանօթարար երախտեաց , պարտա-
 կան էին արդարե ամենայն քաղաքանի Հայաս-
 տանեաց կանգնել նմա զհբաշակերտս 'ի շնո-
 ռածոց իւրեանց : Խբրե մտի 'ի ներքս + և
 իջի 'ի տալան նշխարաց Արբոյն՝ որ անկանէր
 'ի ներքոյ սեղանոյ , պատուեցի զայն արտաս-
 ուօք և համբուրիւք իրբե զյիշատակարան
 Հօր և Երախտաւորի աղդիս , և ասացի “Տէր
 Ամենակալ Հայր , եթէ տաս ինձ՝ որպէս զան-
 տան՝ նոյն և արգեանց սրբոյս զմասն , նորոգեցից
 զայս տաճար գմբէթակերտ 'ի փառս քոյ : ”
 Եռլինթեր Եկեղեցւոյս յարեելեան հարաւոյ
 քունջ պարապին էր բուրդն , և 'ի նմա զամ-
 բարանի Վահանայ Ամատունւոյ , որ քաջու-
 թեամբ պարտեալ զթշնամին , պարգե ընկա-
 լաւ յԱրքոյէն Խոսրովայ զայս աւան : Բը
 նակիչէք նորա իրբե 500 տունք համակ յազգէս
 Հայոց , սեպհական ժառանիղութիւն են Կա-
 թուղիկոսարանին : Բերթապարիսով զիրք նորա

՚ի ձորավին ՚Քասաղայ՝ ՚Նման է ՚Կնապատին
 ՚Չորագեղայ ՚Ճըրեւան : ՚Քասաղ ՚ի ՚Ներքուստ
 անցանէ ձորոյն . որոյ վերայ կառուցեալ է
 կամուրջ քարաշէն երեքկամարեան : ՚Բերե
 այս գետ կարմրախայտ առատ և պատուական ։
 ՚Ամօք ինչ յառաջ ՚Տանուտէր սորա ՚Կահիջան
 անուն՝ այր զուարճախօս՝ բարձեալ լնդ իւր
 զբանի մի ՚ի կարմրախայտից գետոյս՝ գայ ՚Ճշջ-
 միածին , ակնկալութեամբ արժանաւոր ինչ
 փոխարինի : ՚Տանի առ սա . և տեսեալ թէ
 ոչ ինչ տայ , յետս կոչէ զընծոյն իւր ասելով ,
 “թէ դու զձուկն ՚Կահիջանի չկերար ,” —
 ՚Մինչև մի ոմն փոխարինէ ՚Նմա զոսկի մի , և լու
 ՚ի ՚Նմանէ , “ահա դու միայն կերար ,” ՚Արկին
 բանք ՚նորա ևս յառակ հանեալ են մինչ ցայ-
 սօր ժամանակի : ՚Այգեւէտ է այս աւան , և
 բերէ գինի ազնիւ յոյժ : ’՚Խ հիւսիսոյ պարս-
 պին է բլուր իմն կարմիր և փուշ , այսինքն փը-
 շեալ կամ ծակոտիկն փուք քարանց . զոր կա-
 ՚նայք աշխարհին տանին լնդ ինքեանս ՚ի բա-
 զանիս , և քերեն ՚նովաւ զկեզոտ ՚ներբանաց իւր-
 թեանց : ՚Ուստի և ոմանք ոսկեպատ կամ արծա-
 թաղատ արտեալ՝ գնեն ՚ի բաժնի դստերաց
 իւրեանց՝ և առաքեն ՚ի տուն փեսային , ՚իբրե
 զմի ՚ի բաղնէսարուց ՚նոցա , ’՚Խ գլուխ բլոյս է

մատուռն փոքրիկ . որ երեկը լինել յաւետ
նախնի դիտանոց : **Զորե** (Օշականայ լի է ան-
մատչելի անձաւօք և քարայրիւք ընդ երկուս
կողմանն գետոյն : ուր ամբանան բնակիչք նո-
րա յաւուրս խովութեանց : **Պատմի թէ** ՚իհին
աւուրս ինչ , կալեալ զօրաց նորա զմի ՚ի
դիւղականացն (Օշականայ չարաչարս տանջէին
մատնել զտեղի թաքստի նոցա : Խոկ այ-
րին առաքինի՝ փոխանակ մատնելոյ զնոսա , կամ
խարէութեամբ արտաքս յամուը տեղեացն
Հանելոյ բան զայս առեալ ՚ի բերան , և
կեղծելով զհաճոյս կամաց թշնամնացն կատա-
րել , ՚ի ձոյն բարձր աղաղակեաց առ նոսա ,

“ Օշակնայ Մարդիկ ,
Անունս է Վարդիկ ,
Ի՞նձ տեսէք ,
Զեղլացէք :

“ Ուր որ կէք՝ ամուը կացէք ։”

զոր թարգմանութեամբ Հասկացեալ **Օ** օրա-
վարի նոցա՝ ետ ասեն մահու սպանանել զայրն
Հայրենասէր : **Որ** միով արեամբ իւրով գը
նեաց զարիւն և զգերութիւն բազմաց : **Ա**հա
սովին սիրեաց **Ա** արդիկ զկերանս իւր և կո-
րոյս՝ ըստ բանի **Տ**եառն իւրում . և որ այս-
պէս կորուսանէ՝ դացէ : **Ա**սնեղի սէր **Ա**ներ-

թեութին՝ յերեւելոյն սկսանել հաւատամ։ Կազմացեալ աստի երկու ժամուք՝ հասաք յԱշտարակ գիւղ, կառուցեալ՝ ի նմին ձորաբաշի Քասաղայ, որ թէ ըստ դրից, և թէ ըստ առասութեան այդեաց և արմոեաց՝ ոչ ինչ նուազ իմն երեւե քան զնոյն ինքն զլցրեան։ Երեքին հնակառոյց՝ քարաշէն և քարձրաբերձ Եկեղեցիք՝ ի սմին գեղջ՝ յայտ առնեն զսա լինել մի ՚ի հնագոյն գիւղօրէից Արագածոտան գաւառի, թէև անուն սորա ըստ արդի հնչման ոչ ուրեք յիշատակի ՚ի գիրս նախնեաց, Եղեշէ ՚ի թուել իւրում զկայանս կամ ձմերոցս զօրաց աւերեալս յուրացելոյն Ա սատկայ, ՚ի շարո նոցա կարգէ զլուաշն աւան, զլուածն, զլունակն, և զմենայն ոտն Արագածու, Ռազմավաստակ Ասորագիր Հին և Կոր Հայաստանի, ոչ ՚ի հինն և ոչ ՚ի նորն յիշատակէ զլշտարակ։ Յաւելուածս հեղյն, ՚ի կարգս անծանօթից կարգէ ՚զլշնակն աւան, զոր ես զայս համարիմ Աշտարակ։ Երեքին հնաշէն Եկեղեցիք նորա, Առորք Մարիամն, Կարմիւրոր, և սուրբ Ա առվառ անուանեալ նշանք հզօրք են հնութեան սորա, Ուր թողլցուք, զի և դիրք նորա ՚ի վերայ Քասաղ գետոյ զդոյն ցուցանեն, յարկմոից հիւսիսոյ

ունելով՝ զԱրուճ յիշատակերալն յԵղեշայ .
(ուր այժմ բնակին Տաճիկք . և անուանին
Օրուճլուք .) յարեհելից զՃորին Քասաղայ և
զԵղուարդ գիւղ . ՚Ի Հարաւոյ զՕշական ,
իսկ ՚ի հիւսիսոյ զՄուղնի , և զԿարբի . Արդ
եթէ Ա աղարշակերտ փոխեսցի յԱլաշկերտ ,
զարմանք ի մն են , եթէ և Աշնակն փոխեալ
իցէ յԱշտարակ :

՚Ի վերայ գետոյն ընդ անցսն Երեանայ՝
ունի կամուրջ քարաշէն . ձկումք նորա նոյնք
են ընդ ձկանցն Օշականայ . Քարատակք նո-
րա լի են լօշտակօք , և այգիքն՝ խաղողովք .
այլ գինի նորա ոչ այնքան յարգի քան զՕշա-
կանայն , զԵրադեղայն , զԵրեանայ և զԱ ա-
ղարշապատուն :

Մուղնի , կամլաւ ևս ասել՝ Մղնի սուրբ
Գէորգ , է վանք իմն կառուցեալ մղնաւ ընդ
մէջ Աշտարակայ և Կարբւոյ . Եկեղեցին ՚ի նո-
րումս նորոգեալ գեղեցիկ է յոյժ և վայել-
չակերտ : Ունի բերթապարիսպ շուրջանակի ,
այլ տկարաձեռն շինութեամբ : Յառաջնումն
չէր գիւղ աստ . այլ այժմ իբրև երեսուն
տումք յազգէ Հայոց բնակին անդանօր . նո-
վին արտունութեամբք՝ որովք և Ա աղար-
շապատցիք յերի Եղմիածնի , Զիք վանք ինչ

կամ սրբատեղի յաշխարհին Արարատոյ, (բայց
յէջմիածնէ,) այնքան խռնեալ ու խտաւորոք
քան զայս Մաղնւոյ Առւրբ Գէորդ : Օ ի ոչ
միոյն Հայազգի ժողովուրդք 'ի հեռաւոր և ՚ի
մերձաւոր գաւառաց աշխարհին, այլ և Ա երք
և Պարսիկք յիւրաքանչիւր աշխարհաց դան
յուխտ առ ոտո Արքոյն : Ունի ասե՞ն, զանա-
զան արտոնութիւնս հրաշագործութեան սեու-
հականս ինքեան . ուստի կոյըք, կաղք, բո-
րոտք, ուրուկք, գողիք, մանաւանդ թէ՛ և
խելաժետք դան բնակին 'ի նմանէ : Յորս են և
ազգ ինչ կանացի խելաժիտաց կոչեցեալ
Ռնկնաւորս, զորոց ստորև :

ՄՈՂՆՈՒԽԻՑ

Վամ տօն յիշատակի նահատակութեան
սրբոյս, Հանդիսանայ ՚ի 18 ամսեան Աեպտեմ-
բերի, և վասնղի ամենայն ժողովուրդք աշխար-
հին ոչ կարեն 'ի մի աւուր խմբել աստանօր, և
եթէ խմբէին ևս՝ վեաս կենաց բազմաց լինէք
փոխանակ շահու, վասնորոյ Հոգացան խոհա-
կան Առաջնորդքն մշտնջենաւորել զոօնն
ցեօթն շարաթս հետագայս : Բ ստ տեղեաց
տեղեաց սահմանեալ են և աւուրք ելից .
իւրաքանչիւր ուխտաւոր պատրաստէ իւր պա-

շար զաղնիւ և զփափուկին՝ ի կերակրոց և ըմսպեւ
լեաց, թխէ զգաթայ, զթերթ, զկտաբ և զլօշ՝
նաշնոյ, առնու լնդ իւր խաշածս մնոյ + զինի
երկոքումբք տկօք, և զհամես կամ զգինեոյ
մազա յամենայն պլոց + **Օ** զենու եթէ
ունի և կարէ, իսկ թէ ոչ յանօթի առնու ՚ի
դրացւոյն զլաւն և զմեծագինն զգեստոց և
զարդուց նորա : Պճնի և հեծանէ ՚ի ձի՝ յէշ
կամ ՚ի ջորի իւր՝ թէ այր իցէ և թէ կին, **Ա**
ռաջեաւ վարեն նորա և զոչխարն մատաղացու,
գան և վրան հարկանեն արտաքոյ վանայն,
ուտեն և ըմսպեն զեղլսութեամբ զգիշերն
ողջոյն, զենուն զոչխարանին ՚ի մատաղ . և
զմորթ նոցա երեաւն հանգերձ տուեալ ողոր-
մելի վանականայն, զմնացեալն ամենայն խո-
րովեն կամ խարշեն, և ուտեն :

Երբե օրն զգիշերն մերկանայ, շատ ոյնք
են՝ որք և՛ զսեամս դրաց **Եկեղեցւոյն** չկոխեն.
բոյց որք բարեսլաշտք են՝ գնան յԵկեղեցի,
համբուրեն զտասլան նշխարաց **Արբոյն**, և ար-
կանեն ՚ի գանձանակին եղեալ՝ ՚ի վերայ՝ զփող
մի՝ կամ զերկուս + **Օ** ախսք իւրաքանչիւր ուխ-
տաւորի վասն իւր՝ ըստ սակաւագունին, հա-
սանէ մինչեւ ց50 արծաթի դահեկանս . իսկ մա-
տուցեալն **Արբոյն** միայն դանել մի կամ երկուս +

Ազգի ինչ յաղտաժետաց տեղւոյն՝ մանաւանդ կանայք ՚ի խելաց անկեալ, թէ ինքնահնար զիւտիւ և թէ խրատու՝ գժուարանամորոշել, խորամանկեցին զայն ճարտար խարեւութիւն, որով ընդ հարուստ ժամանակս սասանեալ զահի հարան ժողովուրդք : Օ որս յառաջն եղեն՝ թողում, զօր ես իսկ աչք տեսի, զայն դըեմ : Առյս ոմն Ա աղարշապատցի՝ լուսնահար, Հասարակօրէն Բըեմի աղջիկ կոչեցեալ՝ որոշեցաւ ՚ի վանս Վովնւոյ, և յաւուրս տօնիւ նորա հանդիսանայր Ռ նկնաւոր, Վեկնութիւն բառիդ զանկեալին ցուցանե : այլ գործք աղջկանն Բըեմայ՝ առաւել ես, վանեղի ՚ի գնիւլ ահաւոր խորհրդոյ կենարար Վարմնոյ և Արեան Տեառն, եկն այս աղջիկ՝ և գիտախութ դիմոք և փրփրեալ կատաղութեամբ անկաւ ՚ի մէջ եկեղեցւոյն անշունչ ամեննեին՝ իրբե զկէս մի ժամու : Օ ահի հարան ժողովուրդք, ճիչ բարձին կանայք, խոռովիցան կղերք որբասացութեանն, և խավանեցաւ պատարագն Պ լուս ամբարձ յեղակարծուստ, և մոլեղին կատաղութեամբ եհար զքարի : Ապա ՚ի բերանոյն փրփրելոյ՝ եհան զայս պատգամ, իրբ ՚ի գիմաց Արբոյն Ապղայ Վելիք Արբահամ, քոյ Վատաղն

շան միսայ + ես քոյ զաշխայ սև եղն կուզեմ : ”
 Օ այս ասացեալ , վերստին անշնչացաւ , Եւ
 ահա ճիչ կանանւոյն ելից դիմիկեցին վերս-
 տին : Տեղապահ Մարտիրոս Արք Եպիսկո-
 պոս , որ խնամ մեծ տանէր՝ որպէս արտաքին
 շինութեանցն՝ ‘ նոյնապէս և ‘ ներքին Հոգեոր
 պայծառութեան վանիցն , յարուցեալ եկն առ
 աղջիկն , և չիարաց ազդել ինչ կամաւոր անընդ-
 դայութեան նորա : Ուստի զայրացեալ ոգւով ,
 Հրամայեաց Գարիդորի Երեանցւոյ Աարդաւագի
 խրում , բերել իւր զինքամոմ և զՃրադ : Եւ
 Հալեւալ անտի կաթեցուցանե՛ի որունս ոտից
 ընկնաւորին . որում այլ ես չիարացեալ ժու-
 ժալ , յառնէ և փախչե : Ոկանիւ ապա աստ-
 ուածարան վարդապետութեամբ բանալ ըդ
 միտս ժողովրդոց , և Հրաժարեցուցանել ըդ
 զնոսա յայսպիսի ՚ի գիւահնար և ՚ի հոգեկորոյս
 ցեորից : Արդարեւ գործ արժանիւ տեղապահի
 Հայրապետութեան Հայոց . որ զայսպիսի հին
 և ցնորական ինչ աւելորդապաշտութիւնն , և
 ’ի գիցն մնացեալ պատգամախօսութեանց խե-
 շերանս , արմատաքի խլեալ երարծ ՚ի միջոյ : *

* Բազումք կան ՚ի Ծրշկան և յայլ զեղս ֆուղայ յայսպիսի
 ընկուռաց , զորս ես ևս տեսեալ եմ , բայց նոքա չերե ին
 պատրաղք և ոչ այդպէս լերբք :

Ելաք ՚ի զնին աւերակին Կարբւոյ առ երի
 Վուղնեւոյ յափն Քասաղայ , յարեմտից
 հարաւոյ լերին Արայի՛ ՚ առնիեառուղ կոչե-
 լոյ՝ ուր Ա առվառէ կուսին աղքիւր , յաւուրս
 Ա արդարավառաց ուխտելի , Օ այս մեծ և
 անուանի աւան նախնեաց , որոյ յանուն եր-
 քեմն կոչէին եպիսկոպոսք Ա մատունեաց կամ
 Արագածոտանն՝ և այժմ բոլոր դաւառն և
 կցորդք նորա անուանին Կարբիրասար , նոյ-
 նացուցեալ Ասորագըին Հ նե և ՚ Ա որ Հ այս-
 տանեայց՝ ընդ թաղին Զօրագիւղայ ՚ի Կար-
 բեցւոց բնակեալ՝ գնէ առ Հ րազդան վտա-
 կաւ : Ա երջին աւերած Կարբւոյ եղե յաւ-
 ուրս ՚ Ա ադրայ Արքայի Պարսից . յորոյ ՚ի
 բնակչացն կէսք դնացին ՚ի Օ մլուսնիա , իսկ
 կէսք եկին յԵրեան և բնակեցան ՚ի թաղին
 Զօրագեղայ . յորոց մի էր ՚ Ա իկողայոս Թա-
 ղիագեանց նախահաւ իմ : Յարեելից Հիւ-
 սիսոյ սորա անկանի լեառն Արայի՛ և ձոր գե-
 տոյն Քասաղայ . ուղիղ ընդ յարեելս պատ-
 նէշ կամ սանդարն քարակարկուու ՚ Ա ադիրայ,
 ուր ընդ Օ սմանեանս պատերազմնալ և յաղ-
 թեաց . որպէս յիշէ Արքահամ Կաթուղիկոսւ
 Առ որով անկանի Եղուարդ : ՚ Ի Հիւսիսոյ՝
 Աղմասավանք և Ա պարանքն անուանեալ ու

ւառ . մինչեւ ՚ի Բամբակաձոր կամ ՚ի Տաշիրս ,
 ’ի Հարաւոյ՝ Առողջնի . և յարեմտից լեառն
 մեծ Արագածու , և աւանն Ագարակ և Փարպի՛
 ուրեկեղեցին է Արբոյն Կարիգորի : Օ այսու
 ժամանակաւ աւեր էր Ամարրի , այլ շէն կայ-
 ին ՚ի ՚նմա , թէպէտե լքեալք՝ հետադայ
 հինաւուրց և պատուական եկեղեցիք : Ա-
 ռաջինն էր վանքն Արբոյն Յովհաննու Ա-
 րապետի՝ կամ Հօվհաննավանքն , կառուցեալ
 ’ի սրբոյ Լուսաւորչէս մերմէ . միազմբէթ ,
 բարձրագագաթ , և անսիւն ՚ի ՚ներքուստ
 վեցեքին խորանօք : Խսկ գաւիթ ՚նորա առա-
 ւել ևս հոյակապ քան զեկեղեցին՝ հաստա-
 տեալ է ՚ի վերայ չորից միասպաղ հաստակա-
 ռոյց սեանց քարեայց , յորում էին գերեղմանք
 ՚նախնեաց . այլ ՚ի պատճառս արջառանոց ձմե-
 րանի յօրինելոյ զայն ինքեանց շրջակարնակ
 գիւղականացն Տաճկաց , և առաւել ևս վասն
 անփութութե իմոյ և որոց ընդիս՝ զանց արարի
 որոշել : Համանման ձորադիւղեան Անապա-
 տին Երևանսայ , կառուցեալ է և սա ՚ի վերայ
 անդնդախոր ձորաբաշին՝ ուստի և Քարփի կամ
 Քարափի անուն . որոյ ժայռք առհասարակ լի-
 են անմատչելի այրիւք և քարանձաւօք . որք
 ըստ կարծեաց հինաւուրց մարդկան , պարու-

նակեն շատ դանձ և գրեանս, Պատանի ոմն հայ
աղքաւ, անդէսրդ Աշտարակայ, որ յանդս
Կարբւոյ արածէր դիսաշինս իւր՝ յամին անցե-
լոյ, պարանաւ կախեցաւ ընդ զարհութելի սե-
պուհն ՚ի վայր յայր մի՝ որսալ իւր հաւս, և
երեր անտուստ զՅայսմաւուր մի դրչագիր,
զՅարական և Ջամագիրք հին յոյժ, Բայց
զայսոսիկ տեսի ասէր՝ առ ընթեր մտից այրին՝
ուր լոյս էր, և 'ի ներքսագոյնն չհամարձա-
կեցայ մտանել:—'Ի մեջ աւերակացն էր ոյլ
եկեղեցի քայքայեալ, և արտաքոյ քան զնա
յարեմտից կուսէ Կարբւոյ՝ վանքն Առւրբ
Արգիս կոչեցեալ, քարաշէն, գեղեցիկ, և
նոր՝ թէ դոդցես: Տարածութիւն աւերակաց
սկսեալ ՚ի Առողնուոյ ձգի մինչ 'ի Աաղմոսա-
վանքն՝ լնդ երկայնութիւն 'ի հարաւոյ ցհեւ-
սիս: իսկ լայնութիւն նորա 'ի ձորոյն ՚Բա-
սաղայ մինչև 'ի Առւրբն Աարգիս՝ յարեւելից
յարեմուտս: Արու երեւի, զի 'ի հնումն էր
արդարե աւան մեծ և հզօր, այդեւէտ: Աւ-
նէր և վաճառանոց գեղեցիկ՝ ըստ երգոյն:

“Դուքան բազար է Կարբի,
Գինի խըմողն արբի”

Յաղագս խորիմաց հանճարոյ և հնարագի-
տութեան կարբեցւոց՝ բաղում ինչ լսի յաս-

ուլիս հասարակաց, իրը թէ սատանայ և կարբեցին դաշնակուռ եղեն դործել զերկիր, իւ դաշին զօրութիւն էր՝ զի որ ինչ միանգամ արգասիս նոցա բուսուսցէ երկիր՝ զգլուխն կարբեցին առցէ, և զտակին սատանայ, իւ այսպէս ցանեցին և հնձեցին զցորեան. և շտեմարանեաց կարբեցին զշեղջ ամենայն՝ և սատանայի մնաց միայն խոզանն յանդի:

Յամին երկրորդի յեղաշրջեաց սատանայ զգաշնն, և կարբեցին մշակեաց զբանջար արմատաբեր, որով շահեցաւ սա 'ի զրկանս նորա: Դարձեալ փոխեաց զգաշնն, և ցանեցին խառն զհասկաբերն և զարմատաւորն 'ի միասին, և 'ի ժամանակի հնձոցն վճռեցին, զի նա առցէ զամենայն, որ նախ զարեն տեսցէ: Աստանայ յարեելս կոյս ուղղեաց զաշնն, իսկ կարբեցին յլզատն 'ի վեր 'ի Ասսիս, որոյ բարձրութիւն ձիւնափաղփիւն դադաթան յարեգական նշողեալ ճառագայթից՝ նախ փայլեաց քան զդիր հորիզոնի աչաց խռաբողին: Ուստի կարբեցւոյն վիճակեցան բերք, և սատանայ ամաչեցաւ: Աստուստ ոճդ.

“Աստանախար Կարբեցի.” Հասարակ է 'ի բնակիչս Արարատեան աշխարհի:

Թէ յամառան հիւր ոք դնայ ասեն, 'ի տուն

կարբեցւոյն՝ նախ ՚ի պարտէղ սալորոյն հրաշւիրէ, զի խակակութ ազոխովք ատամնանք առացին. և զհաց մի կարասցէ ուտել, Խոկեթէ ՚ի ձմբան՝ դտանիսն նոր հողով շաղէ, և զհիւըն անդ ձեմեցուցանէ՝ զի պեղեսցին տանիքը իւրոր է ասել, թէ անդործին հաց ձրի ոչ տայ կարբեցին :

Ելաք այսօր աստի ՚ի զնին Աաղմոսավանից, որ է մի ՚ի նախասպայծառ վանորէից աշխարհիս՝ առաւել անխախտագոյն քան զՅովհաննավանքն : Օ կեկի Ուուսաց՝ մասն ինչ ՚ի ձոխագոյն բնակչաց Բայաղիտոյ և սահմանացն գաղթեալ բնակեցան ՚ի Կարբի, և ՚ի Աաղմոսավանս, և օր ըստ օրէ շինութեան և պայծառութեան նորուն միտ դնեին :

Քերելով զեղերք վտակին Բասաղայ ՚ի բարձանց ելաք ՚ի գաւառն, որ այժմ անուանեալ կոչել Ապարան : Եւ է կրկին Ապարան, որ ՚ի լեռնէն Արայի սկսեալ ձդի ՚ի մէջ Արագածուն յարեմտից՝ է դաշտավայր լեռնապարփակ և լայելուչ, խոտաւէտ և մեծ դիւղօրէիւք . զորս նախ ելից բնակչօք Աարդարն Երեւանայ ՚ի գերելոց անտի Ապարշակերտի և Բասենոյ, և յետոյ՝ և ևս ձոխացուցին Ուուսք դաղթականօք (Սմանաստա-

նաբնակ Հայոց։ Հայս գաւառ անկանի վանքն
Հռոմոսի՝ կառուցեալ 'ի ձորամիջնե Քա-
սաղայ, ընդ որ անկանի ճանապարհ Երեա-
նայ։ Աստի սկսանի առանձնակ գաւառն
անուանեալ Բաշ Ապարան։ որ այնինքն է
ըստ Հայ բարբառոյս՝ Բաշ, կամ ըստ Թռուր-
քացն՝ Գլուխ Ապարանից։ (Օդ երկոցուն
'ի միասին առեալ ցուրտ է յոյժ և առողջա-
րար, ուստի ամի ամի ելանէր Ապարանն Երե-
ւանայ և Հայրասլետն Հայոց, յայս տեղի
դովանալ 'ի տօթոյն ամարայնոյ։ —Ունի Եջ-
միածին աւերակ իմն ամարանոցի նախնի Կա-
թուղեկոսաց Հուսլ առ դիւզն Աւելիք Կեր-
սէհի կոչեցեալ, զոր խորհէր նորոգել Աւեծն
Կերսէս Արք Եպիսկոպոս Արաստանի՝ և կար-
գել զայն Համալսարան մնաց ուսումնականաց
Ազգիս մերոյ։ Այլ զի սկսածառեցին թէ զինի
շնութեան նորա, ոչ ոք 'ի միաբանիցն մնայթ
յԵջմիածին, և աթոռն Հայաստանեայց անշը-
քանայր յաստուածային սլաշտամանց, վասն
որոյ արհամարհանօք իմն 'ի բաց եղին զայս
խորհուրդ։

Հուսլ 'ի կերպն Ապարանի, որ հանե՛ 'ի
Տաշիրս՝ է եկեղեցի իմնքարաշէն և փառաւոր
յոյժ յայնկոյս Բասաղ գետոյ։ Այս կերպ

Ճիւնափակի գրեթէ զամիսս վեց , և արգելու
զերթեեկ կարաւանաց Երևանայ 'ի Տփղիս +
որք պարտաւորին կամ ընդ Գեղարքունիս
ճանապարհորդել , և կամ ընդ Շիրակուան +
Աստի խոնարհեալ զկողեւք Արագածոյ՝ եկաբ
'ի Փարսլի՝ գիւղ իմն առ ստորոտով լերին Ա-
րագածոյ , առ Համանուն վտակաւ 'ի վերայ
ճանապարհին՝ որ 'ի Կարբւոյ 'ի Բիւրական
տանի : Խրբեչորս ժամաւ հեռի յլջմիած-
նոյ յարեմաից հիւսիսոյ նորա , ունի եկե-
ղեցի քայքայեալ՝ որ կոչի Առուրբ Գրիգոր +
Պաղար մեծ ճարտասանն մեր էր 'ի գեղջէ
յայսմանէ , ուստի և կոչի Փարպեցի : Շեն
եկաց սա մինչեւ 'ի վերջին հարուածս Կա-
պիր Պուլի Շահին Պարսից , որ և զՊիլ-
լի քաղաքն Հեղկաստանի էառ : Բնակիչք նո-
րա ցրուեցան ապա յայլեյայլ տեղիս , գիւ-
ղըն դարձաւ 'ի բնակութիւն Աէյգլու Վահ-
մետականաց : Որոց թէպէտե հասարակեալ
պաշտօն գողութիւն և աւազակութիւն է՝ այլ
'ի պատուոյ Եկեղեցւոյ Արբոյն Գրիգորի ոչ
պակասին իւիք : Օի սրբեն և յարգարեն օր
ըստ օրէ , Ճրագ մշտավառ պահեն , ուխտա-
ուխտեն , և 'ի նմին իսկ կատարեն զառ Աստ-
ուած մաղթանս խրեւանց : Բնդ Էր , Ա ասն զի

տեղին այն մե ծարեալ է Հանապաղորդեան և
գողջիր առառուածային իմն Հրաշխեք : Եթէ
Հարցէ շուն կատաղի զա և իցէ 'ի բնակչաց շրո-
ջակայ քաղաքաց և դիւղօրէից , և ախտ ջրա-
վախութեան ընդ կոսկար անցանիցէ բժշկական
հմտութեան՝ կապեալ զշնառն սարեօք երկա-
թեօք՝ հեծուցանեն՝ 'ի գրաստ , կեմ զգլխով
փաթութելով՝ առ 'ի նշան ճանապարհորդաց
'ի բաց հեռանալոյ 'ի նմանէ , զի մի փոխադը-
րեցի ախտն առ ինքեանս . և այսպէս տանին
՚ի Փարպի , և զնեն յեկեղեցւոջ օր մի , Խա-
ղընկեր գրողիս Հաննես Պարաղեան Ար-
քեցի՝ Ծնեալ յԵթեան քաղաքի՝ այսօրինակ
տարեալ 'ի Առւրբն Գրիգոր և առողջացեալ
'ի խնամոցն Աստուծոյ , կեայ մինչեւ ցայսօթ
ժամանակի : Թռողում և զայլս ոմանս , որոց
չգիտեմ եթէ կենդանի իցեն մինչ ցարու՝ թէ
ոչ : Եթէ ոք նոր զգեստ աղանիցի , կամ նո-
րոյ պարզեի արժանացի՝ ուրախակից մտե-
րիմն հանդիպեալ՝ ասէ յնա “ ’ի Փարպին
զնացեր դու : ” Աամ . “ ւոյ 'ի Փարպին զնաս
դու : ” Այսինքն թէ՝ որպէս ուխտաւորեալքն
՚ի Փարպի՝ ձիի շնորհացն Աստուծոյ արժանա-
ցան , նոյնակէս և դու քոյոցդ , և այլն :

Քերեալ զբաղում աւելակօք գիւղօրէից

և վանից, զլանջօք մեծի լերինն Արագածոյ, Հասաք ՚ի Բիւրական գիւղ Հայոց, իբրև ըզ քառասուն տանց, Յորմէ Լշմիածին և լայնածաւալ դաշտն Արարատեան մինչև ՚ի Շարուր և ՚ի Բլուրն անուանեալ գիւղ՝ իբրև պլտուղք ամարանի յըսկտեղ շարեալք ՚ի պատարագ իշխանի՝ յանդիման երեւէին : Եկեղեցի գեղջս խոնարհեալ էր, այլ ՚ի մեջ ծործորոյն յարեւելս հիւսիսոյ նորա էր այլ իմն եկեղեցի քարաշէն և գեղեցիկ Արդավլիկ կոչեցեալ. այսինքն է “Արդ աւասիկ Աստուածածին :” Առուն Շրմշտիկ յարեւմտից անցանէ և ոռոգանէ զդաշտորայ նորա :

Խջաք ՚ի ձորն Տեղերայ, յոր անցանէ կարկաչանոս վտակն համանուն, և կալաք մեզ կարմրախայտ աւելի քան զբեռն մի նոր օրինակ ձկնօրսութեամբ : Մանկտին Բիւրականայ հնձեաց ՚ի շրջակայ լանջակողմանց լերինն մեծի զեսոտ իմն պարարտաբոյս, որոյ տերեք էին նըման ձիթենւոյ կամ փշատւոյ, և ծաղկունք գեղին : Օ որ ինքեանք Փռնդատ անուանէին, և ես՝ ձկնդեղ : Առա կալեալ զառաջ մի ջըրոյն դարձուցին ՚ի վտակն մեծ, որպէս զեդադարեսցի ջուրն ՚ի սաստիկ յիւրոց լնթացից, և առա առեալ ՚ի խոտոյ աստի խրձունս

՚ի ձեռս՝ մլսեցին ՚ի ջուր և հարին զերեսօք քարանց, մինչեւ փրփրեցաւ ջուրն . և ձկունք արբեալք որպէս ՚ի գինւոյ՝ ելին կիսամեռ յերեսս ջրոյն, զորս անաշխատ կալան, խորովեցին և կերան, և ոչոք ՚ի նոցանեւ լիսասեցաւ կամ ՚ի մէնջ:

Անցեալ ՚ի վեր ընդ սյս խորածոր՝ տեսաք ՚ի տեղիս տեղիս ամուրս անմատչելիս, և ՚ի վեր եկեալ ՚ի մլուս կողմանէ գետոյն՝ եկաք ՚ի Տեղեր, ուր էր վանք հրաշակերտ կառուցեալ յամպածայր բարձրաւանդակին մլուջ ձորոյն: Զեւ շինուածոց սորա, որպէս և տեսիլ դըրիցն՝ ամենենին հանգունատիպ էր Յովհաննավանիցն կարբւոյ . թէպէտ և ճարտարապետութիւնն առաւել ընտիր, և տեղին՝ ահեղագոյն ևս: Դասրձեալ ընդ ձորն՝ ուստի եկաք, յարեւմուտս կոյս նորա ուղղեցաք զընթացս մեր՝ ընդ նեղսագոյն կիրճս, նեղուցս և կապանս ահաւոր լերինն ճանապահն արարեալ՝ երբեմն ընդ հիւսիս և երբեմն ընդ հարաւ՝ եկաք յլլմբերթն աւան, աւերակ և անխնամ՝ կառուցեալ ՚ի ձորաբաշի առ համանուն վտակաւ, ՚ի վերուստ որոյ խոյանայ եկեղեցի վայելչակերտ և ամբողջ՝ ՚ի սարաւանդակին բարձրութեան, ոյլ բերթն

Հզօր՝ որ շուրջ պատեր՝ ի հնումն զսովաւ,
 աւերեալ է մինչ խսպառ։ Թուիմ, 'ի բուռն
 իմիք գետնաշարժէ, Ա ասնզի բարուկիր հաս-
 տահեղոյս և պնդակազմը բրդունքնորա եր-
 կուք՝ յանհնարին բարձրութենէ անտի ոլայ-
 թուցեալ անկեալը՝ ի խոնարհ բուռն ճարճատ-
 մամբ, դեռ ըստ մեծի մասին ամբողջ կան՝ ի
 խորութեան ձորամիջնե։ Յանմատոյց բարձ-
 րութիւն վայրացս հայեցեալ՝ թուիմ թէ և
 առանց բերթի կարողք է ին նախնի բնակիչք
 նորա պաշտպանել զանձնես ընդդէմ արշա-
 ւանաց թշնամեաց, ուստի և անուանեալ կո-
 չեցին զնա՝ Անբերթ : Խսկ՝ ի միւս կողմանէ
 յամզահամբոյր բարձրութիւն դրից նորա ակ-
 նարկելով, թուիմ զնա կոչեցեալ Ամբերթ,
 այսինքն Ամպ, կամ Ամզահամբոյր բերթ :
 Այսօր կամք եղեւ մեզ ելանել՝ ի բարձրա-
 դոյն դադաթն Աբագած լերին, ուր է լիձ իմն
 ջուրց, մայր անհամար վտակաց և աղբերականց
 նորուն, Պարապատեալ յերից կողմանց բարձ-
 րաբերձ ապաւաժիւք, յորոց՝ ջերմութեամբ
 արեգականնե ելեալ տեսակ ինչ ազնուագոյն
 ծծմբոյ, մաքուր իրրե զէլէկտրիոն՝ սառու-
 ցեալ կախի զբարձանց, Անհաս գոլով՝ ի ձե-
 աց հողեղինաց, զնան մարդիկ և հրացանաւ

բեկանեն և լնկենուն 'ի վայր զծորս նորա . զոք
և մեծագնի յոյժ վաճառեն իպէտս դեղոց և թէ:
Քանի պատուականագոյն լինէր արդեօք ամրողը
ծոր նորա , եթէ հնարեին մարդիկ մի կամ միւս
եղանակաւ 'ի ձեռս բերել : Ունի Արագած
և հանքս ոսկւոյ , պղնձոյ , և արծաթի , զոր
հաւաստի առնեն վտտութիւնք անտառաց թեղ-
ւոյն և այլոց ծառոց բուսելոց 'ի ջրարրի
ծործորս նորա : Վտորագրութիւն բուսոց լե-
րին այսորիկ՝ վարժարանի բնագիտաց պէտս
ունի , քանթէ իմոյս մուրացիկ , դուզնաքեան ,
և հասեխած տեղեկութեան :

Եղաք այսօր 'ի Բիւրականոյ և ագաք
յլլագարակն գիւղ , կառուցեալ առ համա-
նուն վտակաւ , 'ի ստորոտս լերին մեծի :
'ի հնումն էր սա աւան մեծ , և որպէս ո-
մանք երաղեցին՝ մայրաքաղաք իսկ . այլ այժմ
իսպառ քայքայեալ և աւերակ է : Բնակիչք
նորա 15 տունք Տաճկաց :

Որովհետեւ յընթացս ուխտագնացութեան
'ի Վուզնի , պատուէր և եկեղեցին Առա-
շոյ կամ Կօշոյ . թէ պէտե 'ի ձեռս Թոռը-
քաց՝ թեքեցաք և մեք անդը զերասանս երի-
վարաց մերոց : Գտաք զնա իբրև ծերունի
խոնջեալ 'ի կենաց , թիկն տալ զլլագա-

ծով և հետեւ՝ ի մահ ցվերջին շունչ իւր է
 կայնատարած այդեստանք նորա եղեն յա-
 նապատս փշաբերս, թաղք ընակութեանց նո-
 րա թաղկեցան ընդ մացառովք մոլեխոտոց,
 տունք աւերեցան, և եկեղեցի նորա՝ Կօշյ
 Առւրբ Աարդիս՝ մինչև ՚ի սպառ անշքացաւ ։
 ՚ի վերուստ նորա ՚ի սարաւանդակին կառու-
 ցեալ է ըերթ Հզօր ՚ի կարմիր քարանց, որ հա-
 մեմատութեամբ աւանին՝ ողջանաբատ կայ-
 և մնայ: Յարեմտեան կողմանէ սորա՝ հոսի
 Առուն Կուաշյ, ջուր ընտիր և պատուա-
 կան, որ ոռոգանէ ՚ի ներքոյ զրաշն հա-
 մատարած մինչև ՚ի նոր քաղաքն Աարդա-
 րասպատ ։ ՚ի ձախմե առուսոյս է այլ իմն թե-
 լերին, ուր են զարհուրելի քարանձաւք, և
 ՚ի միջոյ միումն ՚ի նոցանէ լսի խոխոջ ջուրց
 քաղմաց, որ թէ ուստի զայ, և ուր ելանէ, ո
 չկարացի տեղեկանալ: Աստ մեռաւ կուրա-
 ցեալն Տիբան արքայ Հայոց: Օ ինչ զար-
 մանք, թէ և աստ գտցին Հնութիւնք Ազ-
 գիս: Այժմ պայազատեն զայս զիւղ, ճո-
 խացեալ իրեւ 120 տամբք ՚ի Հայոց և ՚ի
 Տաճկաց, երկոքին Հայկազունքն Երևանայ:
 Յովսէփ Խաչատուրեան, և Վկրտիչ Քար-
 տաշեան՝ Ատենադպիր Խորհրդարանի Ատ-

թուղիկոսարանին ամենայն Հայոց :

Այլ բադառնալ կամելով ՚ի Առւրբ Խջմիածին՝ հրաման առի ՚ի Բարսղայ Եպիսկոպոսէ՝ գնալ ՚ի Փռանեկանոց * գիւղ, որ անկանի ՚ի մէջ Արագածու լերին և Պռղս գեղջ, հեռի ՚ի Վաղարշապատայ՝ իրքեւ երեք ժամու ճանապարհի, զի անդ էր ՚ի ժամանակին Հօրու իմ Պետրոս Պռնջագիւլեան Խլի միրզեանց :

Կացի առ նմա զաւուրս երիս, և բազմիցս գանգատ յարուցի զթերութենէ ուսման իմոյ, աղաչելով զնա հնարել և հանել զիս անստուստ : Խսկ այրն դարրին գոլով արուեստիւ՝ յանալիտանեաց սակի զնէր զամենայն ուսմունս արտաքոյ նորա. և խստիւ յորդորէր զիս կալ և մնալ անդ, “զի մատաղ ես ասէ, մատուցեալ Լուսաւորչին, որպէս պատմեաց ինձ մսոյը քոյ :” Եւ այսպիս բարուոք ՚ի միտ առեալ իմ զվիճակին ճակատագրեալ ինձ ՚ի ծնողաց իմոց՝ մեկնեցայ . և ընդ Աղաւնատուն և ընդ Պռղս ճանապարհ արարեալ՝ եկի յԽջմիածին յամսեան Հոկտեմբերի ՚ի 16 : Եւ եղէ անդ՝ դրագիր առանց գլոց :

* Զեցլ այս Հայունուն Մոբք, յէշատակիեալ նախնեաց :

Այլ աղետ ինձ + որ իբր թէ մանուկ մտա-
 վարժ ձեանալով՝ գրեալ էի զամենայն անցս
 այսը ճանապարհորդութեան իմոյ + յորում
 և մի առ մի յիշատակագրեալ զխանդաղա-
 տանս դստեր Քուրդ իշխանին Ահմադայ՝ որ
 յԱսլարան, զանցս Փոնձւոյ ծերունւոյ Բիւ-
 րականցւոյ՝ որ կոնճէր զմեր ամենայն գիւ-
 նի : — զ Թագթէոսի մանթի՛ ընդ Վարտիրոսի
 Եսլիսկոպոսի Տաթեացւոյ, և այլ Հաղար սիւ-
 տանի և անսլիտան ասուլիս սորա և նորա :
 Օ որ իբրեւ դարձայ՝ խնդրեաց յինէն Յով-
 սէփ Եւգոկիացի սարկաւագ սրբոյ Հայրա-
 պետին մերոյ, որ ցարդ մտերիմ ինձ Համա-
 րեալ, և տարաւ յանձնեաց զայն Վարտի-
 րոսի Եսլիսկոպոսի, զորմէ մի միայն քառ և թ
 գրեալ էի “Անթարթը :” Որ եղեւ ինձ Հաղա-
 րիցս Հաղար անդամ չար, զի՞ վազիւ անդը
 կոչեալ զիս յատեան Տեղապահին՝ ինքնին
 եկաց իմ դատախազ և դատաւոր միանդա-
 մայն : Հրամայեաց զոտոս ՚ի կախաղան ար-
 կանել, և այնքան գանակոծ առնել, մինչ
 արիւն յորդութեամբ Հասել ՚ի պճեղաց ու-
 տից իմոց + և գրեթէ կիսամահ արարեալ՝
 սսաց . “գնա՞ արդ + և սուսիր նոր եղանակ
 գիրք շնել :” Այ յետոյ կարգեցաւ Արք

Եղակոպոս Վիւնեաց , և իրը քաջ՝ 'ի վերայ հաս անմեղութեան դիտաւորութեան իմոյ՝ առաջին՝ 'ի բարերարս իմ հանդիսացաւ . և բերան բարեխօս առաջի Վեծին Աերսեսի Արք Եղակոպոսի Հայոց Արատանեաց 'ի Շուշի , որպէս յետոյ պատմելոց եմ :

Իսկ Քովսէփ սարկաւագ , որ Թէպէտէ Հասակաւ և աստիճանեաւ 'ի վեր քան զիս էր , և յեպիսկոպոսաց անգամ ակնածելի , ոչ կարաց զերծանել յարդար վրիժոց իմոց : Գրայր սա ստէպ ձայնաւորաց աշակերտ ի գրադրաբան մեր . որ բարձր գոլով քան ըզ վեհարանն ընդ մի և եթ նեղուազոյն քարեաց սանդուխս ոլսրունս 'ի վեր հանեէր , Ա ասն որոյ յաւուր միում 'ի սաստիկ ձմբան , մինչ նա զգասն գեղգեղէր , ես առեալ զկոռւ կազինս կարգ առ կարգ շարեցի 'ի վերայ առտիճանացն : Եշ նա կարի զուարթացեալ 'ի միտս իւր , և իրը ընդ մթին յանդունդ 'ի վայր զոտն կոխեաց յաստիճանն առաջին՝ գլորեցան կաղինքն 'ի ներքոյ ստից նորա , և ինքն այնքան սաստիկ հոսեցաւ յաստիճանաց յաստիճանս ցյատակն 'ի վայր , մինչ զի բեկաւ ողն նորա , և գեռ ևս թեք մնայ :

“Վերաբ : թէ մարդ ես , այդ քանդ բաւական է քերգ ,” ասացի ցնա . երկու ամսով Հիւանդ մնաց , և յորժամ առողջացաւն՝ ’ի Օ ատկին ողջոյն տուաք երերաց , և եղաք ողջունեղբարս : Յորմէ մինչ ցարդ՝ շնորհիւ վերին խաղաղութեանն՝ այլ ևս չեմուտ ’ի մեզ խռովութիւն ինչ :

Օ այսու ժամանակաւ մեծանուն գիտնականն Հայոց Օ աքարիա Ա արդապետ Գիւլասպեանց Տփղիղեցի , եկեալ ’ի Կոստանդնուպօլսոյ՝ և ’ի միաբանից ոմանց Լըմիաձնի ախոյիան Հզօր վարկուցեալ լնդդէմ ” Եերսիսի Մեծի , թէ ըստ գիտութեանն՝ և թէ լնտանեաց աւագութեանն՝ ի քաղաքին , կարգեցաւ նուիրակ Ա բառատանի : Խսկ այրն գիտուն , այլ պատանի Հասակաւ և փորձառութեամբ՝ փոխանակ արդարութեամբ զիրսն կը ուելոյ , կաշուեաց ի կողմն իւր միայն զնենգութիւն խորհրդոց թշնամեացն ” Եերսիսի : Ուստի նաև քան ըգ հասանիլ իւր ի Տփղիս՝ Ասլառնացաւ գետամոյն կորուսանել զնա : Այլ Մեծն ” Եերս սէս ղաղախօք վանեաց զնա Հըմիաձին , ոչ ներելով նմա գոնէ և զստինս զմօրն համբուրել : Աա որքան զիարդ և այլոց թռւ-

իցի գոլ՝ ինձ բարի մեծ եղեւ յոյժ։ քանդի
 'ի գալ նորա կորիդլուխ, ոչ այլ ուներ
 առնել, քան յուլանալ 'ի խցի հոգեմաշ
 մտածութեամբ։ Ուստի և սկսաւ յաշակեր-
 տութիւն ընդունել իւր նախ՝ զտիրացուս
 Պարիգորի Եպիսկոպոսի գանձապետի Աթո-
 ռոյս, ասլա և զոմանս յերելի վարդապե-
 տաց։ Օ այս տեսեալ տրորեցայ 'ի խիզճա
 մտաց։ զի Քովհաննէս վարդապետ ոչ միայն
 ատեսցը զնա, այլ և զուսումն նորա ընդ-
 հանրապէս, ուստի և մեծապէս խափան լի-
 նէր իմումն յառաջադիմութեան։

Ունէի ՚ի դարակ դրասեղանի իմում, մերձ
 զերկիրիւր * “ Եկաւ Հասաւս ” թէ ծաղ-
 կեալս և թէ գրեալս յինէն։ զանուանս տու-
 ողացն, և զորքանութիւն դրամոցն միայն ոչ
 յիշատակեալ։ — Ետ ինձ յայնժամ դրա-
 գրապետ մեր դրել մերձ երեսուն 'ի նոցաննէ-
 անտեղեակ գոլով առաջնոցն։ Օ անուանս
 որոց և զգումար դրամոցն կամ զինչութիւն
 նուիրացն իսկոյն ներմուծեալ յառաջինսն
 տարայ ետու նմա, զարմացաւ ընդ անհնա-

* Եկաւ Հասաւ կոչին այն տեսակ կոնդակաց Հայրապետին
 յորում Խոստանայ զտուրս նուիրեալս ինքեան, և փոխարինէ
 առաքողին դաստուածային օրհնութիւն։

թին արադութիւն և ընդ պարզընթերցանուն
 թիւն գրութեանն , Եւ յաւել տալ ինձ և
 զերեսուն ՚ի նորոյ “” արալ մին շաբաթու .”
 որպէս և ասացն : “ Խարձուցի և զայն յա-
 ռաւօտու վաղորդենին , և շահեցայ ինձ ըդ-
 մեծ բարեհաճութիւն նորա . որով տարեալ
 մատոյց զառաջեաւ Հայրապետին Եփրեմոյ ,
 և պատմեաց նմա զառիթ զարմանաց իւրոյ :
 Խսկ այրն տօնելի , որ ոչ երբէք անքաջա-
 լերս թողոյթ զգուզնաքեայ նշմարանս ու-
 սումնասիրութեան՝ կոչեաց զիս , արկ զինե-
 վերարկու ’ի չուխայէ պատուականէ , եղ-
 ’ի ծոց իմ զզմելին և կախեաց զԵնջակ զգո-
 տոյ իմոյ՝ ասելով , “ ԲԱՐԻ է ԳԻՐԴ , ԲԱՅՑ ԿԱՐ-
 ԴԱ ԵՒՍ : ” Պատասխանեցի , “ Հոգեռը Տէր ,
 Օ աքարիս վարդապետ ուսուցանէ , եթէ
 Հրամայեսջիք , երթայց առնա ուսանիլ ըդ-
 Շաբատասանութիւն : ” — Յայնժամ պատուի-
 րեալ Յովհաննու վարդապետի հակառակ կա-
 մաց նորա՝ տանիիլ զիս առնա , ասաց , ԳՆԱ
 ԼԱԽ ԿԱՐԴԱ . ԴՈՒ ԻՄ ՈՐԴԻ ԵՍ : ” Եւ այսպէս
 սկսայ ընդ Հզօր գաստիարակութեամբ նո-
 րոյ վարժապետիս այսորիկ՝ ուսանիլ զՇաբ-
 տասանութիւն , զրելով օրինակսն համաձայն
 ամենայն ձեռոց , զամլսս հինգ շաբունակ :

Օ ի կարգեցաւ վարժապետ մեր նուիրակ
Բայազիտայ , և ես մնացի անդաս զամ մի
ողջոյն զորմէ չեն կամք ինձ ասել ինչ : —

ՀԱՏՈՒԵՇ ՎԵՑԵՐՈՐԴԻ

ՃՌԱԿԱՆԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂՄԱՆ 1819.

Լ ոԽՍԱՐԸՐ Պանիկէլ Եպիսկոպոս կար-
գեցաւ նուիրակ Ալենեաց , համբաւեալն ՚ի յոյժ
ըազիաց , որք և զանուն իւր գրել խնայէին :
Ուստի և ՚ի խնդիր ելանէր այնպիսւոյ ու-
ըուք , որ զեկեղեցական սպասաւորութիւն ,
և զգրութիւնս իւր կատարելութեամբ ՚ի
գործ դնիցէ : Եկեղեցական պաշտամունք
մեր , որովհետեւ յերգս և ՚ի շարականս վճա-
րէին , և ընութիւնառատարաշխ զլանոյր ինձ
դոյս արտունութիւն աներաժիշտ ձայնիւ հա-
գագի իմոյ , զանձն դուզնաքեայ յայն պատ
շաճեցուցանել ոչ համարձակէի : Բայց և
՚ի գրելն վստահացեալ՝ նախընծոյ մատու-
ցի նմա զիմովսանն ձառոյսութիւն : Ելաք
միանգամ ևս լնդ ճանապարհ Փարաքարայ
յԵրևան : Աւրանօր մատուցեալ զողջոյն հլ-
րաժարանաց խանդակաթ ծնողիս իմոյ՝ պլ-
սակեցայ մարգարտակաթ մանեկաւ արտա-
սուաց սրբոց նորա , և զօրացայ օրհնութեամբ

ծնողական սրտի աստուած տաշտութեամբն
 վառելոյ : Օ աւուրս երիս կացաք աստա-
 նօր , տեսանել մեզ զկազմութիւն հանդեր-
 ձեալ ճանապարհին : Դանիիէլ Եպիսկո-
 պոս , առ ահի աւազակաց զՃանապարհայն
 կապեաց յազդեր իւրում զսուսեր , զոր մի-
 այն կարող էր 'ի կիր արկանել 'ի մեջ ամե-
 նայն զինուց , 'ի կորովութիւն բազկացն ա-
 պաստան : Յովհաննէս եղբօր որդի նորա պա-
 տանի առոյգ , և Հառակաւ վոքը ինչ աւելի
 քան զիս՝ վառեցաւ 'ի սուր երկայրի , 'ի
 Հրացան և 'ի պարագայս նորա : Մասց ինձ
 իբրև պաշտօնէի Արբութեան , կրել զսրու-
 ակ իւղոյն (Օճութեան Արբոյ Մեռնի : Օի
 խղձէր Դանիիէլ Եպիսկոպոս , և 'ի մեղս վար-
 կանէր ծրարել զայն 'ի բեռան : Եւ այսպէս
 թէև 'ի գալ վտանգին ամենե ին անսկատո-
 սլար , յանձին կրել համարէի զորս միանգամ
 'ի ուերայ ածէր խժութիւն աւազակացն , սա-
 կայն և յարգութիւն մեծ զոր տայր Ազգն
 իւղոյն սրբութեան , մնակառութեան իմոյ բա-
 ժանորդ նմին զիս թուեցուցանելով՝ բառ-
 նայր 'ի մտաց զամենայն կասկած : Պատրաս-
 տեցան բեռինքն , և յուղի անկեալ յԵրե-
 ւանայ եկաք յԱղբաշ գիւղ՝ 'ի հարաւոյ

յարեւ մոտից աւերածոցն Պավլոս, Անդանտանք
 սորա հոչակաւորք են ՚ի բերս ընտիր և
 պատուական որիզոյ, որ իշխանաց և թագաւ
 որսց միայն լինի կերակուր: Օ ի թէալէտ
 և առատ յոյժ, և յամն ողջոյն դատանելի,
 սակայն առ մեծի ազնուութեանն և աճեցուն
 քնութեան, կրկնապատիկ աւելի դնուլ վա-
 ճառէր քան զպատուականս այլ և այլ անդու-
 թէից դաւառիս: Գիւղականք այսպիսի բա-
 րեբեր գեղջ, հարկաւ հարստանալ պիտէին:
 այլ լնդ հակառակին յանուրս չքաւորու-
 թեան կաշկանդեալ կոյին: Ա ասնզի Յու-
 սէին Խան բդեշնն Երեանայ, որպէս ամե-
 նայն գիւղօրէից աշխարհին, նոյնպէս և
 ողորմնի բնակչաց սորուն բաժանորդ լինէր
 ամենայն հերկոց: Տայր իւրաքանչիւր տան
 լուծն մի եղանց, և սերմանիս որիզոյ, բամ-
 բակի, և այլ ևս շահաբեր արդեանց և ար-
 գասեաց: Յանէին նոքա, և ՚ի ժամանակի
 հնձոցն առաքէր նախ լնդ մէջ կիսէր զկալ
 նոցա ՚ի բարժին, ապա ՚ի մնացորդացն հա-
 տանէր և զհասսն արքունի, մինչ զի չմնոյր ինչ
 նոցա և ժախուցն բաւական: Եթէ դէպ
 լինէր երբեմն երկնառաք պատուհասիւք ստեր-
 չանալ անդորէից, և զլանալ ՚ի բերսն, սա

զվնասն զանցառութեամբ.ք ժողովրդեանն արկեալ, բռնանայր նոցա անպատմելի խժդժութեամբ, առնոյր գրաւէր իւր զոր ինչ ՚ի տունս նոցա զտանէր զկահս և զկարասիս, և ՚ի պակասիլ նոցուն զկանայս և զորդիս նոցա՝ առ ՚ի վճար ընկերական բաժնի իւր իւրում։ Եա շատ և այն էր՝ զի դերեւեալ, յայսցանէ գանիւք ծնուցանէր իւր ոսկիս, և ՚ի տանջանաց տառապելոցն հաւաքէր արիւն յարբումն իւր + զաշխարհն համօրէն կեղեքանօքն մաշէր, և քրտամբ.ք նոցա կերտէր իւր գաստակերտս ՚ի Պ ազրին, և Ճոխացուցանէր զզանձն + Պիտէր արդարե ժողովրդեան յուլի և ծուլի ոյսպիսւոյ՝ իշխան այսքան խստասիրտ, Վ ասնզի ապաւինեալ ՚ի քաջարեր երկրին արգասաւորութիւն և յիւրեանց սակաւապիսոյութիւնն, շատանան սակաւիկ ինչ մշակութեամբ ցորենւոյ, դարւոյ, կորկան և նմանեաց, և զանդորայ արգաւանդ անխնամ ամայի թողուն, յորոց մարթէր յարուցանել անբաւ մթերս վաճառաց. և նախանձ աշխարհի յօրինել զաշխարհ և զանձինս իւրեանց + Վիայն լեռնակողմանք նահանգիս առատութեամբ մատակարել կարեն զամենայն աղզս սննդարաբ

կերակրոց բնակչաց համօրէն Երեանայ , և
արօտոս հօտից և խաշանց նորա : Խսկ դաշ-
տըն լայնածաւալ և շատաջուր , (թողեալ ըզ-
Ե եղակ և զՇ աքար , որք օտարք ե՞ն նորա՝
քայց կարեն ընդելանալ քաջաքիրտն վաս-
տակօք ,) կարեն զբնիկն իւրեանց քաջարերել
զորդնն կարմիր և զտոնիք յափունս Երասխայ
ընդ երկայնութիւն , զանտառս մե ծամե ծս
թթենեաց 'ի նիւթ շերամոյ , բամբակ , և զա-
մենայն ազդս կտաւոյ և ձիթոյ գըեթէ յամե-
նայն ուրեք :

Եկաք 'ի Պաօխկուղ գիւղ բնակեալ ՚ի Հայ-
ոց . իբրև 50 տանց և 'ի Տաճկաց 25ից :
Աստանօր պատահեցաւ մեզ Պարսիկ ոմն , որ
կեղծէր զանձնէ պալատական դու Քալբալի
Խանին Եախչուանայ : Աս ընդ պատրուակաւ
մարդասէր այցելութեան եկեալ առ Պա-
նիկ Եպիսկոպոս , առ անդէտն բարբառոյ
իւրոյ զննէր մաներ խուզողութեամբ զթեռ և
զբեռն մեր : Կասկած էառ Պանիկ Եպիսկո-
պոս զառնն նենդութենէ , և խորշեցաւ որ-
շափ և կարացն 'ի նմանէ :

Վաղայարոց ընդ առաւտոնն , ընդ բուք
և յանձրև յուղի անկաք դէպ 'ի Պէդա-
լուն անուանեալ դիւղ , զոր Վարդակերսն

Համարիմ գոլ Շաբուրայ, որոյ ընակիչք էին
200 տունք Տաճկաց: Ես ովհ էր ճանապարհն
յերթեւեկաց, մթին և երկիւզալեց՝ ի պատ-
ճառս աւաղակաց խմբովին շրջելոց անդ՝ 'ի
խնդիր կողուպուտից: Դժու ոչ Հատեալ մեր
զիւս ուղւոյն այնորիկ՝ և ահա եհաս 'ի թիւ-
կանց Պարսիկն երեկեան: Ե՞ւ * ողջունեալ լոլ
մեզ, զփորձ փորձել կամեցաւ զօրութե՛ մերոյ:
Վասնորոյ յառաջ խաղցեալ նորա 'ի բեռ-
նըն կոյս՝ շօշափեաց զայն ձեռօք, և Հարց ցՊա-
նիկը եպիսկոպոս, “Թէ զի՞նչ ի՞նչք իցե՞ն 'ի
նմա,” Պատասխանեաց ինեւ նմա, “Գանձ
քաղում, այլ քեզ զի՞նչ: — “Ինձ ի՞նչ,” ասաց.
“՞չ զիտես զի ահա աւուրք երեք են, որ զհեռ
զամ հետոց ձերոց ի խնդիր քեռինս այսորիկ: ”
“Եաւսքան զթարդմանել իմ զոյս 'ի լուր ա-
պաժոյժ Եպիսկոպոսի խմում, ասացի ցնա.
“Յաւ Տէր, յաւ, կորեաք: ” Պահու կոյր
պարսիկ մեր ակնեկալ պաղատական դարձե-
նորա: այնինչ հուպ առ նա մատուցեալ
արհւոյն՝ կալաւ զաջոյ բազկաց նորա, և ա-
ռանց օղնականութեան զինուց այնքան պինդ

* Կարէ արդեօք պատահարս այս մեկնել զիմաստ ըանէ
Փրկչին: || 'ի ճանապարհի ողջոյն ումեք մի՛ տա ջիք: ||

սեղմեաց , մինչ ուշաթափ 'ի ձիոյ 'ի վայր
 անկանել նորա : Ծողութ զնա յայն աստի-
 ճան և գնալ , վտանկ մեծ բերեր . բայց և
 այնպէս ընկերել հուղկահարին ճահի չեր :
Ա ասնորոյ հրամայեաց եղբօր որդւոյ իւրում
 ապահովել նախ՝ զզէնս նորա , և ապա ի-
 ջեալ ինքնին և կալեալ զականջացն ոլորեաց՝
 և յուշ դարձոյց զնա՝ ասելով “**Գ**ամս արդ ՚ի
 ինդիր բեռնինս , տար՝ եթէ կարող ինչ
 իցես ,” “**Ո**չ , ոչ” պատասխանեաց նա :—
 “**Դ** օլնղդա վար **Վ**արասան ,” այսինքն կայ ՚ի
 կռանդ օձագաւազնդ դու : **Ի** զնւր խնդլ եաց
 զզէնս իւր , սոսկ կատակի աղագաւ արարեալ
 զշարիսն՝ խոստովանելով . զի ոչ դարձոյց
 գանիէլ եպիսկոպոս մինչև հասաք ՚ի **Դ**ե-
 մալու գիւղ որ անկանի ՚ի միջոցս դաշտին
Շարուրայ յարևմտից կուսէ բլրակի միոյ ,
 Հեռի ՚ի **Ա** իրապէն եօթն փարսախօք , ՚ի
 հարաւոյ լերանց **Գ**առնեւոյ՝ զորս այժմ **Ա**լա-
 տաղ անուանեն , **Ա**լտ չիչէք , կամ **Գ**առնեւոյ
 սարեր , ՚ի հնումն ջրվէժ , **Օ** կնի յաղթու-
 թեան **Խ**ուսաց ելին **Տ**աճիկը գեղջս այսորիկ
 ՚ի **Պ**արսկաստան և փոխադրեցան ՚ի տեղի նոցա
 Հայք ՚ի քաջաց **Վ**ակուեցւոց :
Աստի չորիւք փարսախօք հասաք ՚ի **Ա**ս-

գարակ գիւղ , որ ունէր տունս Տաճկաց 80:
 Այս անկանի յարևելից հիւսիսոյ Դաէվլուայ ,
 կառուցեալ 'ի սարադարակ ծործոր ինչ լե-
 րանցն Արփոյ : Աստանօր աղբիւր իմն ցամա-
 քեալ յերեսուն ամաց հետէ՝ բանիւր յայսմ
 ամի , և ոռոգանէր զմեծ մասն սեխանոցաց և
 պարտիզաց նորա :

'Տ Խոգ գիւղ Տաճկաց՝ յաւարտ գաշ-
 տին Շարուրայ՝ հոսի գետ հզօր անուա-
 նեալ Շարուրայ գետ՝ և 'ի Տաճկաց՝ Առ-
 փայ Չոյի , յոր անուն կարդ աննոքա և զԱ-
 խուրեանն Շիրակայ : Որոց կոյը զկուրայն հե-
 տեեալ և իմ , կոչեցի զսա Ախուրեան Շարու-
 րայ . զի զհին անունն ոչ ուրեք գտի : Այս գետ
 գոյանայ յԲալոչիչէկ լերանց Գառնւոյ , և
 յանհամար յառաջո հատեալ ոռոգանէ անդո-
 րայ Շարուրայ , և դատարկի յԵրասխ մերձ
 առ Կորաշէն գիւղիւ ուրունի կամուլ Պաւերակ
 որ հանէ 'ի Վակու : Առ Պարսից որի շխանութ
 Շարուր պարունակէր գիւղս Հինգ ընդ ամե-
 նայնն , յորոց երեւելիքն էին ստորագրեալըդ 'ի
 վերոյ . իսկ այժմ պարունակէ առաւելքան զ25:
 Աստ մեծի մասին բնակեալս 'ի Հոյոց : Յայս
 գետ իրեւ 'ի սահմանագլուխ այժմեան դրից
 նահանդին Երեւանայ՝ կնքեմ և ես զբան իմ :

ՍԻԿՆԻՔ

ԿԱՄ

ԱԻՆԱԿԱՆ աշխարհ ձգի ըստ Խորենացւոյն
 'ի ծովէն Գեղամայ մինչեւ 'ի դաշտ մի՛
 ուր դեսն Երասխ անցանէ լնդ խոխոմն
 նեղս և ձիզս այսինքն ՚ի Առուղան՝ լնդ յա-
 րեելս յարեմաից ունելով զեահանդն Այրա-
 բատոյ ՚ի Հարաւոյ զման Փայտակարանի
 և զԱտրպատականս և 'ի Հիւսիսոյ զԱրցախ
 և զԱղուանս Հայոց Երկիր նորա լեռնային
 և ըստ մեծի մասին թաւացեալ անտառօք մայ-
 քեաց ։ Ամուրք անառիկք նորա բաղմաթիւք
 են յոյժ վանիք և եկեղեցիք նորա անհամարք ։
 Ժողովուրդք նոցա բիրդք այլ բարեպաշ-
 տօնք և սէդ ՚ի մրցմունս պատերազմաց ։ Խշ-
 խանութիւն Աինեաց բաժանեւալ ՚ի մեծ և
 'ի փոքր ։ յաւուրց անտի նահասվետացն Հայ-
 կազունեաց մինչեւ ցյետին ժամանակս Աա-
 բակիսոսաց միշտ նախասպատիւ հանդիսացաւ-
 յԱզգի մերում ։ Աեծն ՚ի նոցանէ որ և Տա-
 նուտէր Աինեաց նստէրի Օղուկս և ՚ի Բաղզ-
 երբեմն և թագ կատեալ ՚ի դլուխ ։ Յորոց
 Աեղոկ այնքան զօրացաւ յաւուրց Շաղհց

արքոյի Պարսից, մինչդեռ և՛ զբաղաքն Տիսըն
յաւարի եհար + Խսկ փոքրն՝ 'ի բուն Հայկա-
զանց սերեալ՝ ուներ զգահնեն ՚ի Գեղարքունիու-
թին ցարդ կան անդահոր մեծամեծ իշխանք
որք ընդ անուանակոչութ Առէլիքաց ընդ-
բռամբ ունին զազգն, և 'ի կարեոր ժամանակին
կարեն հանել հետեակ և հեծեալ զօրս կըր-
թեալս ՚ի բնութենէ ՚ի մըցմանս պատերազ-
մաց : Հոգեոր իշխանութիւն Այսնեաց է մի
՚ի չորից մայրաբաղաքական Արքեպիսկոպո-
սոցն Հայաստանի, որ կայ ՚ի Տաթեւ . և
զարէ զիւր իշխանութիւն բացարձակ հրա-
մանաւ : 'Ի բաց տուեալ զԱրեիք և զԲաղա-
ձոր, որք բերեն զամենայն պտուղս Երեանայ՝
ամենայն մայրիք աշխարհին բերեն խաղող-
տանձ, սալոր, հոն, զիւռ, մոշ, մորի, ցուրդ,
կաղին առատ, և շագանակ : Որպէս տեսցի
՚ի ստորեւ :

Ելաք ՚ի Խօդոյ և 8 փարսախօք Հասաք
՚ի Աախչուան, Լերինք Պահկայ՝ որ ՚ի ձախ-
մեւ ճանապարհին՝ ունեին զաղահանս ընտիրս
ու իւիք նուազունս քան զԿողբայն : Այս
քաղաք նախամայր քաղտքացն աշխարհի,
զարմանամ թէ ընդէր զանց արարեալ ՚ի Բաղ-
գէացւոց և յԱսորւոց մատենագրաց, առ-

Պաղոմէսսի միայն գրի՝ Ետքսուանեայ , և
 առ Յովսեալոսի՝ Թարդմանութեամբ Հայկա-
 կանիս՝ Արովադիթիոն . այս է՝ տեղի երից կամ
 չուոց : Այլ այս անուանք արտաքին մասե-
 նագրաց երևին յայտ առնել միայն զերկըորդ-
 պաշտօն նորա , այսինքն չուարանն լինել
 որդւոց մարդկան ՚ի Այնաար : Եւ ոչ զեախ-
 իջեանել Կոյի որդւովք հանդերձ անդր՝
 և նախկին իջեան կամ քաղաք ընութեան
 յօրինելն զսա : Ասացի քաղաք ընակութեան ,
 յուցանել թէ ՚ի բազմանալ անդ որդւոցն
 Կոյի , նախ զայս շինեցին քաղաք . ապա
 թէ ոչ նախկին տեղի իջեանի նորա ՚ի տա-
 սլանէն էր , ուր և Արկ ուսի , և ՚ի զին-
 ւոյն ճաշակեաց լստ գրոց սրբոց : Եթէ
 չէր ՚ի սակս բազմամարդութեան նոցա և անձ-
 կուե դրիցն Արկուռոց առ Ոտս Ամսսեաց՝
 ընդէր պիտէր նահասկետին լքանել զայգին
 իւր Ճեռասունկ , զզուարճարան ծերութեան
 իւրոյ , և դալ աստ շինել աւան : Խսկ եթէ
 ոք ՚ի սակս զերեզմանի նորա , զոր մինչե-
 ցայսօր ժամանակի յուցանեն ընակիչք Կոյս-
 չուանայ , առ երի սլարսալաց նորա ՚ի Հարա-
 ւոյ՝ համարեսցի զիս Հակառակութեան կար-
 ժիս ՚ի մէջ մուջանել : Կերոյամբ քաղցրու

թեամբ լսել աղաւեն : Ուշ չէր արդեօք հըս
նար մնացորդացն Հայաստանի ածել զդին
նախահօր իւրեանց և պարծանաց՝ յլլրկուռ-
ւոյ ի Կախչուան, քանի մի ևեթ փարսախօք,
և ամփոփիել անդանօր իրբե յառաջին բաղմա-
մարդ քաղաք իւրոց սերնդոց :

Այս էր ի հնումն մի ի պայծառագոյն և ի
բազմամարդ քաղաքացն Հայաստանի, բեր-
թառարիսպ և գեղեցիկ, ուր նստէր Եպիսկոպո-
սըն մարդպետական Այլ քանդեցաւնախ յառ-
ւուրս Արշակայ երկրորդի տրքայի մերում՝ ի
զօրաց Յապհոյ : Յեօթներորդ դարուն ի
հիմանց քանդեաց զսա Ապյորն Երակլ յար-
շառել իւրում ի Պարս : Առջում ոստիկան այ-
րեաց յԵկեղեցւոյն սորա ողիս իրբե 800: Յելս
անդ չորեքտասան դարուն առ Դ աղան խա-
նիւ, զօրք Ուաթարաց “քարչեցին զդրունս
խորանաց, ընկեցին և զսեղանսնեւ:” Դ պատե-
րազմին Առւլթան Առուրադայ ընդ Պարս կա-
րեվէր քայքայեցաւ, և հետ զհետէ անտես
եղեալ անշքացաւ մինչ խսկառ : Օտոաջին
մեծափառութենէ քաղաքիս հնչէ և երգն
Պարսից : Թէ Կախչուան Կախչոջնան է:
Յորմէ վըիպեալ ոմանց ի ճանապարհորդաց
օտարազդեաց, համարեցան դքաղաքդ Կա-

դաշ ճիշան անուանիլ . և ասել թէ ի պատմառս բազմազնն նկարուցն որ ի սմա՝ յայդ անուն անուանեցաւ ի հայոց և ի Պարսից : Որ անհիմն է , և առասպելածոյ կեղծեաց ի կարգի :

Դիրք սորա ցուցանէ կամ բուն քաղաք լինել Այրարատեան նահանգիս , և կամ Ախականին սեպհականեալ աշխարհի . և ոչ բնաւ Ա ասպուրականք երբեմն զօրացեալ տիրեցին մասանց այլեայլ նահանգաց՝ այդ ոչ կարեր խառնել զկարդ նախնի սահմանացն : Ա ախչուան ի գլուխ դաշտին Շարուրայ , կամ առընթեր և յանդիման Օչկանց դաւառի Ախւնեաց՝ միում կամ միւսումն ի նոցանե յաւէտ յատկանայ՝ քան թէ Ա ասպուրականին : Ա ախչուան յարեելից անկանի Պարսկահայոց , որ է միջին իմն նահանգ ընդ Ախւնիս և ընդ Ա ասպուրականս , և զնելն զնա քաղաք վերջնոյն , համեմատի ասելոյն , թէ “Ա ախչուան քաղաք է Ա ասպուրականի յայնկոյս Պարսկահայոց նահանգի” :

Խորենացին քաղաք Ա ասպուրականի զնէ զայս , բայց դիրքն ոչ համոյժայնի գրութեան նորա + Աւստի թուի թէ՝ այն մասն

գրութեան նորա մատնամեջ իմ արարեալ
իցէ ՚ի յետնոց :

Արդի քաղաքն , քայքայեալ որպէս և
է՝ կառուցեալ է ՚ի սրբար ինչ դաշտին մն-
ծի , որ ՚ի նախնումն Հացունեաց կոչէր ,
յարեելս Հիւսիսոյ Երասմայ Երբե երկու
մզնօք հեռի ՚ի նմանէ՝ գետակին Կախչու-
անայ ելեալ ՚ի լերանց Ախանսոյ՝ կամ լաւ
ևս Ախական դաւառին , և քերեալ դՊ ահու-
կաւ անցանէ իբրե կիսով մզնի հեռի ՚ի նմանէ
և առերի Աստավատոսյ հոսի յԵրասխ գետ :

Անի բերթ քաջաղին , այլ քայքայեալ ՚ի Հե-
մանց ՚ի հարաւակողմն իւր , ՚ի վերայ բարձրա-
ւանդակին , ուր բղխին ակունք ականակիտ
և հզօր աղբերականց , և դարձուցանեն զաղօ-
րիս նորա : 'Ի մեջ բերթիս է պալատ կու-
րացելոյն Քալբալի Խանի՝ գեհպետին Կախ-
չուանայ , 'Ի Հիւսիսոյ բերթիս անկանի վա-
ճառանոց քաղաքիս ամենեին անշուք : Եւ
առերի նորա թաղ Հայոց իբրե 500 տանց
և եկեղեցի նոցա՝ Երեքխորան կարդացեալ .
ուր իջեան արարեալ կացաք զաւուրս Հըն-
գետասան : Այլ որովհետե ոյս քաղաք լի-
նէր առաջին տեղի նուիրակութեան և մե-
ռոնարաշլութեան եպիսկոպոսի մերում , պատ-

շաճ համարիմ փոքր ՚ի շատէ ՚նկարագրել աստանօր զհանդէս մտից ՚նորա այսր :

Խըրեւ երկու ժամու ք յառաջքան զմտանել մեր՝ առաքեաց անդր առաջի երեսացն իւրոց կարապետ՝ զեղբօր որդի իւր զ զովհաննեէս, ապսպարեալ ՚նմա ասել ՚ի լուր եկեղեցւոյն զաստուածարար ՚ներգործութենէ իւղոյն սրբութեան, զօրհնութիւնաբեր կոնդակէ Հայրապետին, և զանդստին առաքինութեանց իւրոց, և “զորինչ միանդամ տուն տայ քեզ՝ ասէ Հանձար քոյ, պատմեացես ՚նոցա :” Խըրեւ յառաջ խաղացաք միոյ ժամու ճանապարհաւ, ահա ծերունիքահանայք թուով չորս, շուրջառ զիւրեամբք, և ամենայն կղերք եկեղացական զարդու, այսինքն՝ խաչվառվ, խաչիւք, կերոնօք և երգօք հոգեսորօք լնող յառաջ եղեն մեզ՝ Հանդերձ ամենայն բազմութեամբ Հայորերոյ բաղաքին՝ լնող այր և ընդ կին : Եպիսկոպոս մեր ՚ի շնորհս ՚նոցա միայն եդ ՚ի գլուխ իւր զկնգուղն, և զառնաւուխտ թաշկինակաւ սքօղեաց զսրուակ մեռնին ’ի զըկի իմում : Անդ էր տեսանել ամենայն բազմութեան մարդկան բոկով ոտիւք գիմել առ Ո՞եռոնն սուրբ, և ջերմեռանդութեամբ Համբուրել զայն, այս և բարեպաշ-

տադոյնք ՚ի նոցանեկ՝ համբուրէին նաև զռըօշակս հանդերձից իմոց՝ իբրև զսրըոյ ուրուք։ և այսպէս առեալ ածէին զմեզ ՚ի գաւիթ եկեղեցւոյն, նոցա հետի ընթանալով, իսկ մեք ՚ի ձի : Եցրգն՝ զոր զճանապարհայն երգէին՝ էր։ Յաւուրս վերջին ժամանակի շինեաց զիւր տուն Եկեղեցի։

Խսկ ՚ի մտանել եպիսկոպոսին յեկեղեցի անդը և յամնուլ ՚ի գրկաց իմոց զԱեռոնն սուրբ ՚ի գիրկս իւր՝ փոխեցին զայն ՚ի

Հրաշափառ Աստուած, և միշտ բարեխնամող։

Ապա՝ “Եջմիածինն ՚ի Հօրէ” : Խբրե կատարեցան եկեղեցական արարողութիւնք, եղեալ զիւղն սրբութեան ՚ի սեղանի, դարձան ՚ի խուց անդը՝ զոր պատրաստեալ էր վասն նուիրակիս մեծի : Այս իւրաքանչիւր առօրին պատրաստէր սեղան հացալից վասն նորա . ընդ որում բազմէին գրեա թէ ամենայն պատուականքն ՚ի մարդկանէ : Հոգային և զպէտս դարմանոյ երիվարացն մերոց՝ ամենայն յօժարուք : Այլ տարաբախտապէս շնորհաբաշխուի իւղոյն սըրբուն և ընթերցուած կոնդակի Հոյրապետին՝ որ պարտն էր հանդիսանալ յառաջիւկայ կիւրակէի, կամակար մտօք յետս ձգեցաւ . ՚ի պատճառս անհամոյ ձայնուն իրիք պատահելոյ ՚ի մէջնունուիրակին և ժողովրդեանն :

թուիթէ՝ սակա հասից ինչ Աթոռոյնե դաւազաւ-
նալտղոյ, ԱՌինչե յետոյ համաձայնեցան երկու-
քին կողմանք և յերկըորդ կիւրակէի գալստեան
մերոյ՝ սկսաւ ԱՌեռոն-թափէքն : Օ կնի սըր-
բաղան Պատարադ ին առ եպիսկոպոսն զսրուակ
իւղոյն, և թափեալ անտի ՚ի սրուակ եկեղեց-
ւոյն այսորիկ՝ որչափ ինչ և բաւական հա-
մարեցաւ սկսաւ յականէ և յանուանէ օրհնել
զիթաագաւորն Պարսից, և յանուն նորա կա-
թեցուցանել ՚ի սրուակ անդք զկաթ մի յիւ-
ղոյն այնորիկ : Ապա զՔալբալիսան, ապա
և զեշսանս մերավնեայս, և հուսկ ապա ըզ-
ժողովուրդն ամենոյն՝ լստ առաջնոյ օրինա-
կին : Եւ բազմեցուցեալ զայն ՚ի սեղանի,
զահճանակ առընթեք եդ նմին, զե համբու-
րեցեն և խաչահամբոյրս արկանիցեն ՚ի գան-
ձանակին : Արդ զի մի վերստին յեղեղեցից
զայս նիւթ զգուշալի, ընդ ամենայն քաղաքս
և գեօղս այսօրինակ ճանապարհորդութեան
մերոյ՝ արժան համարիմ ՚ի հարեանցի ծա-
նօթս տալ ընթերցողաց, զի հասքն զորս
ընդունի ՚ի ժողովրդոց մերոց նուիրակին Եշ-
միածնի՝ կայանան ՚ի հետագայսդ :

Ա “Եռւիրակութիւն, յերեք տարին միանդամ հաւաքէ
յիւրաքանչիւր չնչոյ մարդոյ 40 փարայ :

- Բ. Քառասնից . տեսակ իմն ողորմութեան վասն հոգւոց
ննջեցելոց , զոր սովորաբար տան յետ 40 աւուրց ,
որպէս և անունն ցուցանէ . այլ նուիրակն ընդունի և
յետ 40 տարւոյ եթէ տայցենն :
- Գ. Յիշատակի . Արծաթի կամ սովի անօթք կամ զիպակիք
և այլք , յուրս զրին անուանք նուիրողացն և տանին
դնին յէջմիածնի :
- Դ. Խոստմունք . Տուրք եթէ ոք խոստացեալ իցէ :
- Ե. Հոգեբաժին . Այլ տուրք վասն ննջեցելոց :
- Զ. Խաչահամբոյր . Զոր տան նուիրակաց՝ զի ի գառնալն
համբուրեաց զիջման տեղին ի դիմաց իւրեանց :
- Է. Աշահամբոյր . նոյնպէս տան վասն համբուրենլոյ զաջ
հայրապետին , և ընդունելոյ ի նմանէ զիկաւ հասաւն :
- Ը. Մատաղ . ոչնար , եզն , կամ զինք նոցա ի կերակուր
Միաբանից Աթոռոյն :
- Թ. Գաւազանապտուղ . զի ի քարոզելն դաւազան առնու
ի ձեռս : Այս հաս յատուկ է նուիրակին :
- Ժ. Փոքրաւորէք . և այս յատուկ է սպասաւորաց նու
իրակին :
- Ճ. Ճամուց . յրէին է , մի՛ վասն Հայրապետին , զոր տանի առ
նա , և միւս՝ վասն նուիրակին՝ եթէ պատարագ ուրեք
մատուցանիցէ :
- Ճ.Բ. Պաշտօնէից . դրամ զոր բաժանն նուիրակունք ամենայն
պաշտօնէից սրբութեան :

Այսու ամենայն՝ թէսկէտե դուզնաքեայք
ըստ յանց , կամաւորականք իմն են , և
նու միւս ոչ զոք կարէ բռնադատել , այլ
հեղութեամբ համողէ : Բայց արե դու
չափանկ լնթերցող , դատաստան արա յատ-
ուածակոյս կողմանէ , թէ լնդէր արդեօք

օտարազդի քահանայք, որք յետ իշխանական և մեծափառ կեանս վարելոյ առատ առատ թոշակօքն՝ զոր ստանան յամսոյ ամլիս, և կանոնոք եկեղեցւոյ իւրեանց գտանելոյ առմի պսակ թումանս տամն, և առ մի կնունք թումանս Հինգ, դառնայցեն անդթարար և զրապարտ բամբասանօք ստդտանիցեն զարարլոց Հոգեորականաց մերոց, Ախմոնականս և չնորհավաճառ կոչելով զնոսա: Փառք, որ ինքեանց առաւել պատկանին ասողացն՝ քան թէ զորոց ասիցենն, Բարձ դու զայս սլիսի ողորմութիւնս ՚ի քոց եկեղեցականաց, և ցըց ինձ դայլ միջոցո, որով ապրել կարիցեն: Ուր թողցուք, զի թէ Հոգեորականք չլինեին յազդի մերում, ոչ զիրս ունէաք և ոչ զգրեանս: Կորուսեալ էաք մինչ ցարդ և զեղուս մինչ խաղառ: Արդ ով ՚ի ժողովրդոց մերոց՝ ՚ի խոտաբարոյիցն ասեմ, և յիմաստնատեցացն, Հոգացաւ ստեղծանել քեզ դիրս: ով թարգմանեաց քեզ զԱստուածաշըն մատեան, ով զրեաց քեզ զայն անբաւ զբուցաց մատեանս: և որ մե ծն է, ով պահեաց և հասոյց ՚ի ձեռս քոյ զնոսին՝ դիցուք թէ և ոչ շահեցուցանելովին ՚ի վերայ և թէ ոչ վանորայք և վանականք Ազգի մե-

բում։ Ապա եթէ այսպիսի աղքիւրք ազդայ-
ին սլարծանաց մերոց՝ առ պահեստի կենաց
իւրեանց, խնդրեցեն ՚ի մէնջ զկամաւոր ո-
գորմութիւնս ևեթ՝ Այսոնականք անուանիցին,
ուրեմն Աստուած մեզ խեղճմտանք տայ։

Ապրիլ 9: Չողաք յԱստաբատ Հեռի ՚ի
Ասխչուանայ երկու մլոնօք ընդ հարաւ,
կառուցեալ ՚ի խառնուրդ վտակի նորա ընդ-
գետն Երասիս Ունչ ՚ի նախնի մեծափառու-
թեանց սորա մնայր յերեւան։ Վ ասնզի Արաս
Միրզա քակելով զամենայն տունս բնակչաց
սորուն՝ կառոյց ամօք ինչ յառաջ զբերթ
հզօր ՚ի նիւթոց նոցին, կոչեցեալ Արասա-
պատ, Որոյ ՚ի միջնաբերթին քարաշէն և մե-
ծակառոյց եկեղեցի սրբոյն Յովհաննեու, դար-
ձեալ է նոցա ՚ի Օ ինարան անվկանդ։ Բը-
նակչաց նորա, էր՝ որք ցրուեցան, և էր՝ որ
եկեալ ամփոփեցան ՚ի ներքոյ սեպհւոյ մե-
ծի Խորամին, յորոյ վերայ կառուցեալ Հրա-
շակերտ և ամուր վանքն Ատեփաննոսի, կո-
չեցեալ Կարմիր վանք։ ուր նստի այժմ
Խօսչատուր Եպիսկոպոս Գեօք-գեօղ կոչե-
ցեալ առաջնորդ Ասխչուանայ։ Բաղում
քարափոր անձաւք են ՚ի ներքոյ և արտաքոյ
եկեղեցւոյս, յորոց ժամանակ առ ժամանակ

Հնութիւնք բաղումք ելին : Այլ հետոյնք
՚ի ընակչաց նորա ասեն , թէ և ՚ի մերձակայ
ապառաժուտս լերանց են քարայրք , յորս
թագուցեալ կան հինաւուրց մատեանք և
դանձք : 'Ի բարաւորի արտաքին դրան
պարսպի վանացս քանդակեալ կոյ բու իմն
թեատարած . առ ՚ի ցոյց անքուն հոկողու-
թեան ուխտին արդեօք : —

Ո՞նդ կապանս ապառաժից և բարձրա-
բերձ քարալերանց , յորս ուրեք ուրեք
յաւելոյր ՚ի ընութիւն՝ և արուեստին ամ-
րութիւն՝ միշտ ընդ յարեելս հարաւոյ ըն-
թանալով ՚ի ձորն Երասխայ՝ հասաք յան-
դիման Դալաշամբ անուանեալ գեղջ , որ
է յայնկոյս Երասխայ , ՚ի խառնուրդն Տըդ-
մուտ գետոյ , Անցաք նաւակաւ յայս գետ ,
և զմիջով տուեալ գեղջն՝ ընդ զառիվեր
Վաղտեաց լերին՝ հասաք ՚ի մեծ վանքն Եր-
խավկայի կոչեցեալ . ուր առաջնորդէր Աար-
դիս վարդապետ , “քաղցրութիւն բարուց”
կարդացեալ յամենայն ծանօթից իւրոց :
Վարաշէն է և բարձրակառոյց , որոյ սեամք ,
բարաւորք դրանց , և առ ընթեր նոցա յատակին՝
երեւցուցին ինձ սեաւ կճեայ սալս մեծամեծս ,
որք թուէին արտապրեալս ՚ի մերձակայոյ

լեռնէ անտի : **Ք**աղմատեսակ՝ անուշահոտ և
 համեղաձաշակ բանջարքն, որ ելանեն ՚ի լեռ-
 նէ աստի, և անաշխատ հաւաքին ՚ի վանա-
 կանացս՝ հազիւ թողուն ՚ի նոսա ախորժակս
 մսեղէն կերակրոց : **Ո**ւտի և առողջունք են
 անձամբ, առուգունք մարմնով, և ողջա-
 խոհունք մտօք : **Գ**րադարան վանացս առատ
 է հին ձեռագիր մատենիւք . այլ՝ ՚ի սակս
 ընդհանուր պակասութեան ուսմանց ՚ի սոսա՝
 ամենայն ընդ փոշովք թաղին : **Ա**րտաքոյ
 վանացն է աղբիւր, որոյ այն զի նուազ են
 ջուրք և ապազօր ՚ի դարձուցանել զաղօրիս
 վանաց, փորեալ է զառաջեաւ նորա աւա-
 զան խորին, ուր հաւաքին ջուրք, և հո-
 սեալ անտի ՚ի խոնարհ բուռն յարձակմամբ՝
 դարձուցանեն ՚ի ներքոյ զաղօրիսն : **Վ**արմա-
 զիարք՝ ցեղ ինչ Տաճկաց Պարսկաստանի,
 ընակեալ շուրջ զերամբք և ՚ի դաշտավոյրի
 զիւղօրէս՝ մինչև ՚ի քաղաքն Խոյ, բռնա-
 նան միշտ վանաց սյսմիկ, զանդս սորա հա-
 տանելով, զերաւունս Պարաշամբայ իւրելով,
 և զվանքն դոյաթափ առնելով և կեղեքելով :
 Հիշատակաց արժանիս եցոյց մեզ Աարգիս
 վարդապետ յիւր հանձար յարուեստին բժշ-
 կութեան : **Մ**ի ոմն ՚ի պատանեաց իւրոց

զհետ ակնդելով վայրի ոչխարի՝ որով լի են
մերձակայք լերինք, գահապիժեալ ՚ի ժայռէ՝
խախտեալ էր զոլոգն աջոյ կռան, Օ որ
բարձեալ ընկերակցացն ածին ՚ի վանսն.
Աարդիս վարդապետ խսկոյն հրամայեաց բե-
րել ինքեան զտիկ գիւնւոյ, զոր դադարկեալ
՚ի հեղանիւթոյն՝ եղ ընդ անթով պատանւոյն.
և զձեռն նորա պարանեաց կապեաց սլինդ
զկողովն, Հայնժամ հրամայեաց փշել զտիկն.
որոյ ուռուցեալ հետ զհետէ հեղիկ և մեղմ
միջոցաւ, աղեղնաձև ամբարձ զթեն, և ուժ-
դին թափով ընկեց զոլոգն խախտեալ ՚ի տեղի
անդր :

Յառակս աշխարհին հանեալ է պարզմառու-
թիւն Պարաշամբեցւոց, իբրև զԲոլորանցւոց
՚ի սահմանս Փէրիոյ յաշխարհին Պարսից :
Խոկ գէմ ընդ գէմ հակառակութիւն նոցա
ընդ հին Պուղայեցւոց՝ թէ բանիւ և թէ
գրով՝ առաւել ես :

Առաջնորդութեամբ սորուն Աարդիս վար-
դապետի ելաք ՚ի հին Պուղա, այլ չե հա-
սեալ անդանօր, պատահեցաք ՚ի ձորամիջին
առ Երասխաւ աւերածոյ հին և մեծի գեղջ
իրիք : Անցաք անտի, և թեքեալ զընթա-
ցըս մեր գէտ ՚ի զառ ՚ի վեր ինչ հիւսիսա-

կողման լերանց՝ եկաք առ եկեղեցի իմ
 մոքը իմ՝ քարաշէն և կանգուն, թէ պէտ և
 շրջակայ պարիսպէք նորա քանդեալք՝ և գե-
 րեզմանքն մացառախիտ փշովք պատեալք,
 որ այնինքն էր հռչակաւորն **Պ**ուղայեցւոց՝
Ամենափրկիչ : Պարձեալ աստի լնդ կը-
 րունիկն ՚ի խօնարհ, և անցեալ լնդ ցռուկի մի
 լերինն յանկարծ յանդիման երևեցան մեզ
 իբրև զհեծեալս հրոսակաց՝ գերեզմանք
Պուղայեցւոց, զորոց զնմանն գուն ուրեք
 էր տեսեալ իմ : **Տ**ապանակիք իւրաքանչիւր
 չիրմաց էին մեծամեծ սալք որձաքարանց,
 և ուրոյն ՚ի սնարից և յանոտից նոցա կանգ-
 նեալ քարձրաբերձ և Հզօր խաչաքարք, այն-
 քան զարմանալի քանդակագործեալք՝ մինչ
 յամօթ առնել նոցա և զինքնապարձն ՚ի ճար-
 տարաց ժամանակիս : **Մ**եռեալք առաւել
 պատմեն զփառո նախահարց իւրեանց, քան
 կենդանիք **Պ**ուղայեցւոց : **Մ**ատենագրու-
 թեան արժանի է արդարև ստորագրութիւն
 ձեոց և քանդակաց նոցա, որպէս և ՚ի քա-
 զումն վսեմ տապանագրութիւնքն . այլ ինձ
 անխայեաց ժամանակն, **Յ**առաջեալ աստի
 իբրև երկու վտաւանոք, հասաք յաւերակս
 չին **Պ**ուղայ, ցանցառակի բնակեալ ՚ի քա-

նի մի տանց չայոց, և աղաք ՚ի տան Ձագդ-
թէոսի երիցու նոցա : Ողմը մնացորդք վա-
զանցիկ երանութեան : Բնակէին ՚ի հիւզս
յաւէտ քան ՚ի տունս : Եկեղեցին անձեղուն,
սեպացեալ ժայռքն վերուստ ՚ի վայր խոնար-
հեալք, լոին գնացք Երասխայ առերի, և
ամենայն առարկայ գոզինը լինէր մեզ Առաքել
Պատմիչ գումբել զաղէտս սորա : Ձողովուր-
դըք առհասարակ քարահատք են, որ ՚ի մեր-
ձակայ լերանց հատանեն և կոփեն քարինս
աղորեաց՝ և տանին ՚ի պէսպէս տեղիս մինչ
յԵրեան և ՚ի Դաւրէժ, որով և մեծապէս
շահին : Քանդիման Պուղայ յայնկոյս գե-
տոյն՝ երևի փոքրիկ մատուռն մի՝ Անդէորդի
եկեղեցի կոչեցեալ, և պանդոկ քարաշէն և դե-
ղեցիկ : Առ որով գէալ յարեելս դարձի լերինն
է կամուրջ քայքայեալ . զորմէ այսպէս սլատ-
մեաց Մէլիք Մկրտիչ տեղւոյս : — “Շինօղ
սորա ՚ի նախահարց անտի իւրեանց՝ բերէ
ճարտարասլետս հմուտս յայն գործ յամե-
նայն կողմանց, և խորհրդով նոցա առաքէ ըզ
ծառայս իւր զնել հաւկիթս ՚ի նիւթ շաղաղոյ
կըոյն : Երբեւ ածեն զառաջեաւ՝ կըուէ մի մի
զամենայն, և զթեթեռնունս և զփոքրիունսն մե-
կուսի եղեալ՝ զլանայ հատուցանել զվճար

դնոց՝ Հաւասարութեամբ պարարտացնեած Օ սյու
տեսեալ գործաւորաց՝ ժլատութիւն խօրհին
զառնէն 'ի միտս իւրեանց, և խնդրեն պատ-
ճառս խափանեած արգել տալոյ գործոյն։ Բ զ-
գայ նա, և հեծեալ ՚ի ձին դնայ ՚ի ծան-
ծազս գետոյն, ուր հիմն դնել կամեր կա-
մրջըն, և հանեալ ՚ի պայուսակէ փոքուե-
րուամբ զուկին գրամս՝ ամայ ՚ի գետն ասե-
լով : “Աստ հիմն ոչ լնդ ունի . կամ
անդ”, և այսպէս չարաչար վատնելով լղ-
գանձսն՝ գեկ նովին զընդունելութիւն նոցա .
և ասէ, “Ես ոչ ՚ի գրամն խնայեմ, այլ վա-
ճառականութեան օրէնս ուսուցանեմ խմայ-
ոցն, ձեզ զի՞ փոյթ ։”—

(Օտար իմն էր և բարբառ սոցա Համեմա-
տութեամբ լեզուացն լսելոց յինէն մինչ
ցարդ : Ա էլեք Ա կրտիչ որ բերան լեալ
էր փոքրիկ հասարակութեան իւրոյ, յառար-
կել եպիսկոպոսի իմում վասն նուիրակու-
թեան, ասաց : “Օր կդոյ՝ ծառէդամ, որ
Պ ուղղցիք էլ աւալի Պ ուղղցիք զնեն :
Բ լդայ մեր զարն ամէն օր սաստկամանայ, արգի-
կտաս՝ լսելէց չեն, մոնչ ինչ բանում խղճման
չեն, էլ մենք դո՞ր պիտիլայ յանցկանք :
Կ ահարասի տունն հալս միան Տէրն քանդիւ,

դոր նա մեր գեղեցին քանդէց + Ասուման թէ
տեղն լէվ երկիրան շինել, ու Հնդստան էլ
գնալ գոլան առում + աղորդայ՝ ծառէդտմ + ”
Արդարե իրաւ + զի ՚ի բարձմանէ Թագաւո-
ւորութեան մերոյ, և ՚ի գարս նուազութեան
Հայաստանի, ոչ ինչ ժողովուրդ այնքան
մեծանուն Հանդիսացաւ յազգօգուտ ձեռ-
նարկս իւր՝ որպիսի Պուղայեցիքդ, Օ-
րինակի վասն. Պարսն ՀՅովհաննն ՚ի Առ-
բաթ + Ըստիր՝ ՚ի Մագրաս, Խաչեկ Առա-
քել՝ ՚ի Կալկաթա, Լազարեանք՝ ՚ի Առուկով.
և այլն :

Միով ժամու ՚ի խոնարհ ընդ յարեելո
Հարաւոյ Պուղայ՝ կրն անցք գետոյն Ե-
րասխայ, ուստի երթեեկք վաճառականացն
Պարսկաստանի անցուցանին նաւակօք, Ե-
թէ այս դործ ամբողջ մնայր Պուղայեցւոց
կարող էր վութով Հարստացուցանել զնոսա,
բայց արքունի գոլով՝ այնքան ծանր Հարկ
ունի, մինչ բաղմիցս զեան քան թէ շահ բե-
րէ նոցա :

Ունի Պուղա կարիճ անթիւ, սեաւ դու-
նով՝ մեծ քանակաւ՝ և մահարեր թունով,
ընդդէմ որոց Հանձար բնակչաց հնարեալ է
գեղթափ ընտիր, զի սփռեալ զանկողինս ՚ի

տանիս , կամ՝ ՚ի բացօթեայ բակս իւրեանց ,
առնուն չուան մազագործ և շուրջ պատեն
զնոքոք , քառակուսի կամ բոլորշի իմն ձե-
ւով : Ալարիձն որ ՚ի մարդահոտոյն յորդո-
րեալ յառաջ մղի , ելանէ ՚ի վերայ չուա-
նին : Լահջ և փոր նորա խտախ ՚ի մազէն ,
յոր կռուեալ անշարժ մնայ մինչ ցառաւոտ
և անաշխատ կալեալ ջախջախի ՚ի մահ :
Չորացուցեալ կարիձն մեծ դեղ է կարճա-
հարին : Օորոց հաւաքեաց Դանիէլ եսլիս-
կոսլոս բազումն և պահեաց առ իւր :

Բաժանեալ ՚ի Ալարդիս վարդապետէ , և
ընդ * Վանանդ անծանօթ անցեալ՝ յաղագս
չլինելոյ անդ հայազգի ընակչաց , եկաք յլ-
գուլիս քաղաք մեծ Գողթան դաւառի : Ե-
ռաջին որ շարժեաց զնորասիրութիւն իմ , էք
անլուր և թիւր լեզու ընակչաց նորա : Տե-
րացու Փիլիսոպս՝ * Յորգեցի , աշակերտակից
իմ յլջմիածին , ընդ Ալմեն եսլիսկոսլոսի
կարգելոյն առաջնորդ Գողթան՝ ընակէր ՚ի
վանս որբոյ Առաքելոյն Յովլայի : Մեք
իջաք յլիկեղեցւոջ Աստուածածնի ՚ի ներքի

* Այս Վանանդ այլ է ՚ի Վանանդոյ Կարուց , և առ այլ
մատենագիրս՝ միջոցն ՚ի ջուղայց ցԳողթան՝ կոչի “Ազատ
զաւառ”¹⁷

թաղն : Ապաժոյժ ՚ի տեսանել զանձկալիքն ,
 առաքեցի առ ՚նա զմանուկ ոմն ազդ առնել ՚նմա՝
 թէ Մեսրովը իւր եկեալ է : (Քանզի մեք
 լոելեայն մտաք այսր :) Գնաց , դարձաւ մա-
 նուկն , և ետ ինձ զայս պատասխանի : “Եա-
 հալամ , տեհալամ , ահալամ , ակալ չի :”
 Ե՛կ գու հասկացիր՝ թէ զի՞նչ : Օ ի՞նչ խօ-
 սիս մանուկ , ասացի ցնա . և ՚նա երկիցս և
 երիցս կրկնեաց զխուժադուժ և զանլութ զայն
 ասութիւն : “Թռուրքերէն դիտես . ասա .”
 ասացի , և ՚նա սկսաւ ասել զայն Թռուրքե-
 րէն , որով իմացայ զի ասել կամէր թէ՝ “գհա-
 ցի , տեսի , ասացի . չեկն ՚—Իրրւ ինքնին
 ելի գնալ անդանօր , պատահեալ ՚ի փողոցի
 առն միում , հարցի թէ ընդ որ գնացից ՚ի
 վանսդ : Պատասխանեաց “Օ ամզնմ ՚նօլիս ,
 զնմ զնմ գոլիս , կեռիս տոլ , վանքն առաջիդ
 տեհալաս ՚” Որպէս թէ ասել կամիցի , “այս-
 պէս երթեալ , այնպէս դարձեալ՝ զվանքն
 առաջի տեսանես :” Պատահեալ ուրեք Ա-
 գուլիցւոյն պատանւոյ ուրեմն՝ եհարց ցնա ,
 “Դշո դղացիլս :” Տղայ ուստի ես : Պա-
 տասխանեաց “Գլէցի ,” որպէս թէ՝ Ագու-
 լիցի . ընդ որ կարի խնդամտեալ և հաւանեալ
 առաջնոյն՝ ասաց , “Անտոքայ լօղըդ պօրդէյ :”

Այսինքն՝ “Հայն սակա է, զի պարզ է լեզուդ ։” — Խոր Արեւ :

Խեքեանք զայս գաղտնի լեզու՝ որպէս և զանձինս իւրեանց՝ Օ ոկս անուանեն, թէպէտ և Խորենացին հատուած ի Ախականէն դնէ։ Եթէ այսպէս իցէ, ուրեմն զարմանք չեն եթէ նախնի Պազլթնացոց աշակերտեալ աղանդոցն Օ ոհակայ մոզի, հետեղաբար և զանունն կրեցին։ Օ ի թէպէտ և լուսաւորութեամբ քարոզութեան Առաքելոյն Բարթուղիմեայ պարծեսցին, սակայն և այնպէս կռապաշտական աղանդոց յաւէտ հետամուտք եղեն։ Առւրբն Մեսլովալ ձեռնտուութեամբ Շարիթայ իշխանի սոցա և աւետարանի Տետան քարոզութեամբ՝ Հաղիւ վլուցանել կարսց ՚ի սոցանէ զաղանդն մոլորութեան։ այլ թէ զի՞նչ աղանդն լեալ իցէ՝ չկարացի հասկանալ։

Լ իցին սոքա՝ որպէս և համարինն՝ ՚ի Ախսականաց անտի սերեալք, բայց ինձ յաւէտ հաւանական թուի համարել զնոսա սերունդս ՚ի նախնի Մարաց անտի՝ ՚ի Օ ոհակեանց՝ ասեմ, կամ յԱշդահակեանց, զորս գերի վարեալ մերոյն Տիգրանայ՝ բնակեցոյց յարեւելից ուսոյ Մեծի լերինն Մասսեսց՝ մինչեւ

ի Գյողթն դաւառ : Անհակառակելի հաւաստիք են գրութեանս այսորիիկ՝ կոչել նոցադինքեանս՝ Օ ոկս , որ այնինքն է Օ ոհակեան կամ Աշղահակեանս , խժութիւնը բարբառոյ նոցա՝ որ ոչ Հայ հնչէ և ոչ Մարացի , խորդիմն և օտար ի բուն Հայոց բնաւորութիւնք նոցա , և ընդարոյս հակամիտուի նոցա ի մոլորութիւնս Արևորդեաց՝ այլովքն Հանդերձ , Տես ի ժանօն . Պատմ . Պարսից երես 5—910 :

Իրեւ ութնհարիւր ամօք յառաջ եղեսա թաղտ իշխանութեան Ապութալիփայ , որում 'ի դիմի հարկանելն կամեցեալ ԱպլՀաճայ՝ հարիւր հազար Պարսիկ զօրօք խաղաց ի վերայ : — Շուրջ զԱգուլեօք սլատին Աշխանկեզ լերինք , յորոց հոսեալ գետակն ինչ կարկաչահոս ոռոգանէ զամենաբեր այդիս և զանդս սորա : Պատուականք են շինուածք Ագուլեաց քան զորս տեսի մինչ ցարդ , և զարդարեալք սքանչելի նկարուք : Թաղդք սորա երկու վերին և ներքին , Աերնոյթաղի եկեղեցին է սուրբ Յովհաննէս , իսկ ներքեռոյն՝ Աստուածածին : Առ որով ունի և մատուռն ի կուսանոց երկուց և եթ ծերունեաց , որոց մահ եղեւ կնիք կուսակրօն կենաց աշագեղ

աղջկանց տեղւոյս : Օ միջով երկոցուն սոցա
անկանի վանքն թուլմայի առաքելոյ՝ կառու-
ցեալ զօրէն Եղմածնի 'ի կեդրոնի շրջաշէն
պարապարիսալ և պարտիզազարդ պարսպաց :
'Ի բերս Ագուլեաց գովանի է նորա պահունի
տանձն, որ մնայ ցտարին բոլոր, զորս 'ի բամ-
բակի ծրարեալ և 'ի մէջ փոքրիկ արկեղաց ե-
ղեալ՝ առաքեն մինչև 'ի Առակով և 'ի Պօլիս :
Առ անբաւութեան թթոց գործեն օղի բարկ՝
և շերամ : Այլ ամենայն պտուղք նորա հա-
ւասարին պտղոցն Երեանեայ, բաց 'ի սեխոց :
Ժողովուրդք տեղւոյս կարի գձուձս ագա-
նին, այլ սեղանք նոցա ընդ չափ անցանեն
ամենայն չափուց : զի միայն 'ի ձկանէ յօրինեն
մերձ ՅՈ տեսակս համադամ կերակրոց : Առ
հասարակ ոստայնանկք են, նաև ճոխք 'ի
նոցանէ : Աստ կատարեալ զ Օ ատեկ փրկու-
թեան հոգւոց մերոց՝ ելաք 'ի Փառակայ
գիւղ, 'ի Բուստ, և 'ի Ծղեա կամ 'Օ'ղնա :

Պարոն Քովհաննէս Աղամալեան՝ ազգակից
մեծին Պետրոսի Բերթումեցւոյ մեծանուն
Հեղինակին յազգի մերում, խնդրեաց յեպիս-
կոպուէ մերմէ պատարագ մատուցանել 'ի
մեծակառոյց և 'ի թագաւորալոյել յեկեղեց-
ւոջ գեղջն, որ լստ մեծութեան և լստ

ընդարձակութեանն, ոչ ինչ նուազ էր և քան
զեցին ինքն Խջմիածին : Ա ասնորոյ Պահե-
էլ եպիսկոպոս տուեալ ինձ զբանալիու արկեղ
իւրոյ՝ առաքեաց վերստին ՚ի վանս սրբոյն Թով-
մայի, (ուր Թողեալ էր զծանրութիւն աղխից
իւրոց .) բերել անտուստ զզգեստն եպիսկոպո-
սական, Խըրեւ Հասիանդը խնդրեցի ՚ի Արմեոն
Արք Եպիսկոպոսէ՝ Բզնունոյ յառաջնորդէ
տեղւոյն, զի Հրաման տացէ և Փիլիպեայ
ընկերել ինձ ՚ի Հանդիւին սրբութեան, Պար-
ձաք, և սլատարագն կատարեցաւ : Խպիսկոպոսն
զինի ճաշուն՝ որ ՚ի տան Պարոն ՀՅովՀաննիսի,
մեկնեցաւ ՚ի սենեակ իւր յառանձինն . իսկ
Տէր Յովսէփ քահանայ տեղւոյն՝ այր բարե-
բարոյ՝ այլ պարծուտ, սկսաւ ՚ի լեզուն Ապան-
դարամետի տյնքան բարձրացուցանել զարարա
քաջագործութեանց իւրոց՝ մանաւանդ զան-
նուածելի սրտին արութիւն, մինչ Հարկե-
ցուցանել զմեզ ՚ի միաբանութիւն չարութեան:
“Ասց տեսից, ասէ Փիլիպոս, զփորձ արութե
սորա .” և խորամանկեաց, զի ես և ինքն կան-
խեսցուք յեկեղեցին ՚ի գիշերի՝ յառաջ քան
զնա, խռուեսցուք զհերս դլիսոց մերոց, ըդ-
գեցցուք ժամաշապիկս սպիտակս, զերեսանիս
երանդեսցուք ալերօք նշխարամանին, և գա-

ղիցուք, մի՛ ՚ի ներքոյ գըակալին, և միւս՝
աթոռոյ եպիսկոպոսին։ Արարաք այնպէս եկն
Տէր Հովսէփ, և դեռ չէր աստցեալ “զհրա-
ժարիմքն ՚ի սատանայէ,” մինչ նա անտի և ես
աստի՝ այլանդակ աղաղակաւ ելեալ կացաք
տռաջի : Օ արհուրեցաւ, զգետնի հարաւ, և
անշնչացաւ։ Ահա քեզ յետին տղիտութեանցո
պտուղ, զոր ստուգապէս պատմել եպիսկոպո-
սին զարդար պատուհաս նորա շարժէր ՚ի
վերայ մեր . բայց և լռել և թաքուցանել
զայնպիսի մեծ վտանգ, զառնն մահու կասկած
՚ի սիրտս մեր արկանէր։ Օ խաղուց սքեմմեր-
կացաք, և լրջացեալ ՚ի կրկնապատիկ վնասուէն,
լու իմն համարեցաք մեզ անձամբ զանձինս
գատապարտել, բան զպաշտօնեայն սրբութեան
թողուլ յայն վիճակ մեռօրինակ անշնչու-
թեան։ Գնեացի առ ՚ի անինէլ եպիսկոպոս,
պատմեցի նման այլ վայ ինձ, թէ քանի անհա-
ւատարմութեամբ։ Փութացաւ նա յեկեղեցի
անդը, սաստիկս ոլորեաց զականիցս և զքնե-
րակս նորա, և ծխեալ զծծումբ ընդ ոնդունս
նորա՝ հազիւ հաղ թէ յուշ դարձոյց։ Եհարց
ցնա զպատահարացն, և նա որպէս թէ յուշ ե-
կեալ՝ ասաց . “քանիցս առացին ինձ” թէ դեք
գոնե յեկեղեցւոջ այսմիկ, և ես ոչ հաւա-

ապացի , այլ ահա աչօք բացօք տեսի . “Հրա-
ժարիմ՝ ’ի սատանայէ և յամենայն խա-
քէութենէ նորա՝ և այլն ,” Ակսաւ ժամեր-
գութիւնն և կատարեցաւ , և մեր կալեալ զնա-
մեկուսի պատմեցաք նմա՝ զոր ինչ միանդամ և
արարտքն , պատճառ զնելով չարեացս՝ զիւր
սնապարծութիւնն : “Նա քանդեսցին ձեր
դժոխք , չկարէիք այլով իւիք հնարիւք ’ի
փորձ մտանել Ճշմարտութեանն , քան այդու-
կերպարանօք ,” ասաց քահանայն , և թողեալ
մեզ զմեզս մեր՝ զնաց :

Յինա , Քընա , կամ Կաղնա յաւէտ աւ-
երակ իմն մեծի քողաքի , քան թէ զիւզ
աննշան որպէս զարդիս տեսանի՝ անկանի յա-
րեմտից հիւսիսոյ Ագուլեաց , յարեելից
Շոռօթայ և Պազանչի քաղաքաց , ՚ի հա-
րաւոյ Աիսիանայ , և ՚ի հիւսիսոյ Փառակայ
գեղջ . Աա թուի ինձ զոլ Կաղկանց աւան
՚ի համանուն զաւառի . ուր նստէր երբեմն
նահապետ Աիւնեաց : Եզկեղեցի սորա կա-
ռուցեալ համակ ՚ի սրբատաշքարանց , այնքան
քարձը է և ընդարձակ . և այնքան հզօր և
յաղթ զմբէթ ունի ՚ի վերայ՝ մինչ սուզ ինչ
հնչիւն ՚ի ներքոյ՝ լսելի լինի իրքե զորոտ ա-
հազին՝ ՚ի պատճառս հզօր արձագանդաց նորա ,

Աւստի և ահաւոր երեխի յոյժ՝ միայն և 'ի
մթան մտանողին ՚ի ներքս :

Դարձաք աստի ՚ի գտշոն աւան, 'ի ներ-
քց Ագուլեաց ՚ի գիւղաքաղաք իմն Հայոց
երեք մղնոօք հեռի յԵրասխայ՝ որ հայի յՎր-
տուպատ քաղաք : Ծինուածք տանց նորա
վայելսագոյնք ես, և դրոշուածք և քանդա-
կըք գեր՚ի վերոյ քան զԱգուլեացն :

Տէր Աստուածատուր քահանայ տեղւոյն
սկզբէր, թէ ՚ի ստորոտս արևմտեան ըլրակին
որ հանէր ՚ի ճանապարհ Ա անանդայ՝ էր գուր,
ընդ որ մարթ է մտանել մարդոյ, և ստորեր-
կրեայ անցիւք գնալ մինչ յափն Երասխայ :
Պինտէր ես՝ թէ իցէ անդանօր ընդերկրեայ
դաղուատ, որ տանի զամենայն քնակիչս Գրող-
թան ՚ի ժամանակս պատերազմի, Խցէ, կամ
նչ, ես զոր լուայն գրեցի :

՚Ի հարաւոյ արձակատարած այգեստանեայցն
Դաշտայ՝ անկանէր եկեղեցի փոքրիկ զորմէ
այսպէս պատմեցին մեզ Աստուածատուր քա-
հանայ և Ալիք Գիւլամպար՝ տանուտէր
Դաշտայ . թէ “ ամօք ինչ յառաջ պառաւ
մի ՚ի նմին աւանէ, միանդամ և երկիցս ելա-
նէր ՚ի փողոցս և քարոզէր, թէ կոյ ՚ի ներքս
փոքրիկ եկեղեցւոյն վէմ, և ՚ի ներքոյ վեմին

Նշխարք հրաշագործք՝ որք յերապի յայտնեցան և խոստացան որոց ուխտիւք դիմիցեննն կատարել զամենայն հայցուածունոցա , Պարահաւաւան ժողովրդեան փութով ազգեաց քարոզութիւն պատառոյն , և ահա եղեւ այն ուխտատեղի մեծ : Մինչեւ եկն Առաջնորդ , և լուեալ զնորոգ յայտնութենէս՝ ի կասկած տարակուսանաց անկաւ , Առ զմեզ ընդ իւր հանդերձ քանի մի մշակօք , զնաց անդը և հրամայեաց բըել զգետինն շուրջ զվիմովն , Բըեցին , և ահա փոխանակ նշխարի ել անտի Գո՛րջն մի՝ անօրինակ մեծութեամբ , զոր սատակեաց անդէն , և պատուիրեաց այլ ևս ոչ ամպարշտել 'ի պաշտօնն . զի որոզայթ սատանայի էր երազն և մեկնութիւն նորա :

Մ զեալ յայսմանէ Պամեիէլ եպիսկոպոս մեօք հանդերձ զնաց 'ի զեին , զվէմն ետես՝ որպէս և զփորուածն 'ի ներքոյ՝ և դարձաւ :

Թռողաք յաջմե զքաղաքն Որդուպատ , որ առ հնովք մերովք Որդվասն լսէք՝ յայնկոյս յափն Երասխայ , ուր նստէք երկրորդ բգեշին 'Ետիսուանայ , և դատէք զՊաղթն Գաւառ , զԱրեիս կամ զՄեղքի , և զսեաւ լեառն Պարագաղ՝ մինչեւ 'ի սահմանագլուխ Ահարքաղաքի , Եւ մտեալ ընդ Կասլանն երկային ,

ընդ մէջ Ալանկեայ և Այրաւ լերանց : որք և
կապանք անուանին՝ և հզօր խրոխտանօք
անցուցանեն դիրասխ , և գործեն դքարավազն
մեծ հռչակեալ առ Խորենացւոյն՝ եկաք 'ի
կենաւուղ գաւառ , և ազաք 'ի գիւղն Կըր-
ճիվան . ուր էր օրորոցաձև և քարաշէն
եկեղեցի , կառուցեալ որպէս անունն ցուցա-
նէ , յանձուկ կրթին այնմիկ՝ որ հաներ գէպ
'ի Ա'եղբի : Փոխեցաւ և աստ բարբառ բնակ-
չացն յօտարոտի իմն , գլխովին տարբեր ոչ
միայն 'ի Գողթնցւոց և 'ի Գուղայեցւոց ,
այլ նաև 'ի գրացեաց իւրեանց 'ի Ա'եղբեց-
ւոց անտի :

'Ի Ա'եղբի :—Արդարեւ աւան մեղեր , յորում
են երկու թաղք , մին շինեալ 'ի լանջս Գանե-
ծափարախ լերին 'ի հիւսիսոյ . իսկ միւս
սեաւ լերին 'ի հարտոյ : Երկոցուն ևս բնա-
կիչք էին յազգէս Հայոց , և ունէին առան-
ձին եկեղեցիս , բերթս և մելիքս՝ ըստ յատուկ
բնաւորութեան Ազգիս մերոյ՝ հտկառակս իրե-
բաց , 'Ի մէջ թաղիցս յարևմտից յարևելս
կարկաչէր գետն մեծ Երասխ , գայր 'ի հիւ-
սիսոյ և գետակն Ա'եղբի , զգրկօք խանդադա-
տիւք վարել Ա'եցին Երասխայ , Այս գետակ
'ի Բաղաց ելանէ , ջուր պատուական և առողջա-

ըարյոյժ . իսկ 'ի ձորին Պաշտունայ ելեալ
աղքերականց ծծմբայնոց 'ի հանքացն պղնձոյ՝
ապականեն զջուրն և վատառողջարար գործեն :
'Ի թիկանց հիւսիսակողման թաղին Մեղրւոյ՝
անկանէր Անապատն Պահճական մասնակարախոյ ընդ
վերակացութեամբ Հովհաննու վարդապետի
ուրումն Մեղրեցւոյ : Այսկան է առատ պղը-
տուղ աւանիս այսորիկ և այնքան աղնիւ ,
մինչ զանուն նորա համարել ոմանց 'ի մեղրա-
համ պտղոցն առեալ : Մեղրեցիք թէ և յա-
մենայն աղդ պտղոց հանեն զցքի , սակայն և
այնպէս ոչ տանելով աշխատութեան կթոց
նոցա՝ լքանեն 'ի բաց : Արջք և աղուեսունք
բազումք , թէ պէտե մեծամեծ վիասս հա-
սուցանեն այգեաց նոցա + այլ ոչ կարեն 'ի
չափաւորութիւն ածել զնոսա + Օի բնու-
թիւնն ամենաբաշխ որպէս թէ սիրելով լզ
մարդկան բնակութիւն 'ի միջի այնպիսի ա-
պառաժ լերանց՝ կրկին ձեռօք շնորհէ նոցա
զառատութիւն պարզեաց իւրոց : Օդն կարի
տօթագին է և վատառողջ , այլ առաւել և ս
թունաւորեն զայն անչափ կիրառութիւնք
բարկ օղեաց :

Կարգընկէց արար եպիսկոպոս մեր զՊիոդոս
ոմն եկամուտ երէց Մեղրւոյ , վասն պսակ

զնելոյ կեռջ արամբւոյ ուրուք 'ի կենդանութեան առն նորա , ընդ Գևորգայ ուրումն Առեղեցւոյ , հրամանաւ փոխ բգեշխին Որդվատայ :

Ոճ խօսից Առեղեցւոց օտար երեւցաւ ինձ յայնցանէ՝ զորս մինչ ցարդ լուայ . որ թուէր խառնուրդ և բարելոն Գողթնցի և Արմեն բարբառոց միանգամայն : Օրինակի վասն “Ատա բէռնայեք բէռնայեք , հօկ մօտը մորտայ մորթալ” Հարց “Հիւ այ մօրթալ” , “Ի՞ո ծըռայ սընամար՝ սընամար” Այսինքն կալարուք կալարուք . մարդ այդ զմարդ ըստան .” Հարց , “Օ ով սպան ւ” Պատասխանի “Օ ծառայ քո սանամայր ,”

Խմբժական որպէս և են ասուլիսք վայրացս , տակաւին իւրաքանչիւր գիւղ զիւր ոճ գերամն ծար համարի , և միշտ տնազ առնէ ըզ լեզուօք դրացեաց իւրոց :

Ծնդ առաւել ևս դժուարանց Ապանս ձորոյն Երասխայ՝ եկաք 'ի Շուանաձոր , երեւելին 'ի գիւղօրէս Զավեդուրայ , թէ պտղոցն պատուականաց առատութեամբ՝ և թէ օդոց մաքրութեամբ :

Յանդիման Կոմանեցայ հին շահաստանի մերոյ՝ որոյ չնաշխարհիկ են նուռն , թուզ և

ընկոյզ, անցաք լսոտիւք ընդ Երասխ ՚ի
 կողմն Պարատապայ : Տիրապէս աշխարհ
 Փայտակարան է այս Պարատաղ, սկսեալ
 յլլալանդուզայ մինչև ՚ի ծովն Կասպից, մոյ-
 բաքաղաք ունելով իւր զլլհար : Յաննշան
 գիւղօրէս բազումս անցանելով, ուր ոչ կարգ
 կայր՝ ոչ կանոն, ընդ Աղթափէ, ընդ Աշկենա-
 ձոր, և յիմլանկ՝ եկաք ՚ի մեծ գիւղն ՚ի Ա նիս,
 ուր էր եկեղեցի մի քարաշէն և սլայծառ .
 այլ բնակիչք ՚նորա՝ ըստ բնակչաց այլ ամե-
 նայն գիւղօրէից ՚նահանդիս, էր՝ զի ծառոց
 ժունը ածէին, էր՝ զի կարկառաց քարանց
 մատաղս մատուցանէին, էր՝ զի զաղբիւր պաշ-
 տէին, և էր՝ զի դիւթից և հմայից անսային :
 Երկկնութիւն, կնաթողողութիւն, և այլ այս-
 պիսի չարիք՝ արդասիք էին աւելորդապաշ-
 տութեանց սոցա : 'Ի Ա նիս կացաք ամսօրեայ
 ժամանակաւ, և Պանիկէլ եպիսկոպոս բազ-
 մօք ջանացաւ ուղղութիւն վարուց մուծա-
 նել ՚ի ՚ներքս՝ այլ ոչ կարաց : Օ ի Տեան
 Աստուծոյ ամենակալի ։ արձեալ էր զհոդի իւր
 ՚ի ՚նոցանէ, վասն դոլոյ ՚նոցա մարմինս և եթ :

 Օ արմանալիս պատմեաց մեզ Աէլիք Յոլ-
 հաննէս գեղջս, իրը թէ ՚ի բանիլ զարեան
 և ՚ի չուել մարդկանն խաշամբք իւրեանց և

արջառոք ՚ի գլուխս լեռանց՝ բերեն կուտեն
 ՚ի տան իւրում զամնայն ծանրոցս կահուց և
 կարասեաց իւրեանց։ Եւ իբրև մեկնին ան-
 տուստ՝ բազմութիւն օձից դան և զեռան ՚ի
 մէջ ՚նոցա։ յահէ որոց ոչ ոք իշխէ ՚ի ներքս
 մտանել և գողանալ ինչ։ Եթէ դէպ լինիցի
 ումեք բանալ զթեռ իւր կամ զբեռ, դան ա-
 զաչեն զմի ոմն ՚ի գերդաստանականաց իւրոց՝
 որում միայն տեղի տան ասէ օձքն, և ՚նա
 հանեալ բերէ արտաքս զոր ինչ և պիտանի իցէ
 տեառն իւրում. զմնացեալսն կրկին տանի և
 զետեղէ ՚ի ներքս, Օ արմանալին այն է
 զի ոչ միայն քահանայ տեղւոյն և ժողո-
 վուրդք կրկնեցին զամէնն ՚ի հաստատութիւն
 բանիցս, այլ և Ահմադ Խան կոյր՝ Տէր
 Ահմադ բէ գլու դաւառին, այր ՚Բըրիստո-
 նէասէր և լաւարարոյ՝ վկայեաց ճշմարտու-
 թեան Մէլիքիս մերոյ։ և ասաց՝ թէ և ինքն
 առաքէր անդք դաւելորդս մթերից իւրոց
 'ի գնալն ուրեք։

Ահմադ Խան բազմօք ձեռնտու եղե մեզ
 յամնայն ՚ի կարիս մեր, և որովհետեւ չորեք-
 տասան գիւղք Ահմադ բեղլու դաւառին ընա-
 կեալ էին յազգէս Հայոց՝ աղաչեաց զեսլիս-
 կոպոս մեր գնալ անձամբ անդք, և միսիթա-

բել զնոսա : **Ճ**'անապարհն քարակոշկոճ էր ,
տարժանելի յերկիւղէ աւազակաց . և ինքն
կարի զբաղեալ գոլով ՚ի խնդիրս եկեղեցա-
կանս ժողովրդեան աշխարհին՝ զիս ինքն կոն-
դակաւ իւրով և մեռոնաւ կարգեաց երես-
փոխան իւր , և գրեաց առ քահանայս գաւա-
ռին 'ի մի խմբել և զմեռոնթափէսն առնել :
Ուղղեալ ՚ի **Ա** ինայ ընդ Խմլանկ և ընդ Խրիս-
եկաք ՚ի **Շ** հարեկ , ուր ՚ի ժողովս քահանայից
քարոզեցի ես . և յետ հանդիսի մեռոնաբաշ-
խութեան պատուեցայ ՚ի ժողովը ենէն և 'ի
տէրանց՝ իբրև զգերմարդկային ոք :

Երկիրս լի է երկաթի հանօք , և գրեթէ
ամենայն գիւղականք զարբինք են . վասն որոյ
և նուիրակութիւն իմ եղեն ըստ մեծի մա-
սին լուսնունք , այսինքն պայտք ձիոց (նալ.)
դուլալայք՝ և այլ խոշոր մազագործ մըերք :

Դարձաք աստի վերատին ՚ի **Շ**ուանաձոր ,
և անցեալ ընդ լեառն նորա 'ի հիւսիսոյ՝ 'ի
գիւղօրէս **Ա**բանդոյ , 'ի **Հ**ալիձոր՝ առ հա-
մանուն վտակաւ , 'ի **Մ**անլի , 'ի **Բ**եխ ,
ՋԱրջաձոր կամ յառաջնաձոր . 'ի **Խ**ոջան ,
՚ի **Պ**ալաթաղ , 'ի **Փ**քնի և հեկաք 'ի **Տ**աթե , որ
էր այժմ միջոց աշխարհին **Ա**իւնեաց , 'ի բաց
հատանելով ՚ի նմանէ զգեղամ , **Ճ**'անապարհ

մեր ՚ի հարաւոյ յեղերաց Արասխայ ուղիղ լնդ
 հիւսիս : — Բաղարերթ յարեմտից հարաւոյ
 կայ Տաթևայ . ուղիղ լնդ յարեմուտս
 նորա անկանի Ախսիան գաւառ , յորում գիւղ
 մեծ՝ Բռնակոթ : Յարեելից նորա է երկիրն
 Բարկուշատայ , և անտի ՚ի խոնարհ դաշտն
 Առուղանայ : Խոկ ՚ի հիւսիսոյ Աորէ՝ զօրա-
 նիստ Ոչուսաց , Աորիս , Խնձորէկս և Կռա-
 ձոր՝ որք են ձորք աստի և անտի ունելով
 գեհս սեսլացեալս՝ ողջ փորեալ ցանհամար
 ականս մարդկան և ՚ի գոմս արջառոց՝ յորս
 ամրանան ՚ի լինել նեղութեան , և լնդդէմ
 կան արշաւանաց թշնամեաց : Ը ըջեալ լնդ Տող
 կամ Տեղեր , մինչև ՚ի գետն Հաքարու և ՚ի
 Ծուշի քաղաքաբերթ յԱրձախ աշխարհի՝
 ոչ ինչ յիշատակաց արժանի գտի ես յաշ-
 խարհին Ախւնեաց , քան զԲաղաբերթն յԱ-
 ճանան՝ որ և Բաղակայ քար ասէր , կառու-
 ցեալ ՚ի վերայ բարձրաբերձ և սեպացեալ
 ժայռի , յամուր և Հզօր ապաստանի աշխար-
 հին լնդդէմ արշաւանաց թշնամեաց՝ մինչև
 ցայսօր ժամանակի : Լ քեալ և ամայի է ը
 թէպէտ , այլ շինուածք նորա տակաւին
 կանգունք և պայծառք , որք զարմանս առա-
 ւելուին զտեսողացն ամենեցուն , ծածկեալ

Էին կապարաւ և կողով՝ ըստ ասից բնակչաց
գեղջն՝ որ յստորոտս նորա . զի առ անբաւ
բարձրութեանն , որպէս և հողմոցն և անձրե-
ւացն յաճախութեան՝ հողք ՚ի փոշիս ցնդէին :

Երկրորդ տեղի երեելի զինի Բաղաց դա-
ւառի՝ է Տաթե ՚ի սկատճառս Հայրապետանո-
ցին Արևետաց՝ աթոռոյ ասեմ , Ատաթէի ա-
ռաքելոյն , կառուցեալ գոլով ՚ի գլուխ զար-
հուրելի սեպհւոյն , որ հայի յանդունդս ձորոյն
Որոտնայ՝ ուր մեծ Անապատն է՝ առ համանուն
գետով՝ ՚ի հիւսիսոյ լերինն : Եկեղեցեն է
Քարաշէն , այլ այնքան խճողեալ աստուստ
և անտուստ աւելորդօք կցորդաց՝ մինչ
խանգարել զնորա բոլանդակ գեղեցկութիւնն
Ունի գրատուն յաջակողման խորանի յա-
րեմտից հարաւոյ եկեղեցւոյն , այլ գրեանքն
ոչ այնքան ՚ի համարի հնագունից : ՚ի ժա-
մանակի այսմիկ անկաներ սա ընդ տէրու-
թեամբ Ուուսաց , և յիսնիկ մի ՚ի զօրաց
նոցա բնակէր յարտաքին պարսպամիջի վա-
նացն : Մայրաքաղաքական առաջնորդ նո-
րա Տէր Մարտիրոս Տաթեացի՝ Արքեպիս-
կոպոս , ՚ի գեղջէն՝ որ կիսով մղոնի հեռի
էր ՚ի վանաց աստի ընդ յարեմուտս նորա ,
ունէր ընդ իւրե զԱխմէն եպիսկոպոս , և ըզ

քանի մի արեղայս . յորս Գրիգոր վարդապետ
անուանի էր յոյժ ՚ի ձիավարժութեան և ՚ի
զինաշարժութեան , մինչ այնքան՝ զի և շրջա-
ընակ խուժք աղդաց զարհութեին միայն յա-
նուանէ նորա : Հատ էր հարիւրաւոր հրո-
սակացն ՚ի նոցանէ լսել միայն զանուն Գրի-
գոր վարդապետի , և ահա կամ զաւարն
թողեալ փախնուին , և կամ զինաթափ պա-
զատաւոր առաջի անկանէին :

Բնական ճարտարութիւն մտաց նորա չէր
՚ի խոնարհ արութեան սրտին . զի միայն դա-
նակ ՚ի ձեռին՝ հատանէր փայտ յանտառէ , և
տաշեալ արուեստէր զայն ՚ի շղթայս և յայլ
պէսպէս զարմանալի ձեռակերտս : Բազումք
ընդ խաղս ևելթ հնարեալ քանդակաց նո-
րա՝ գաղափար առան ՚ի ճամկագործաց և
յոստայնանկաց : — Բայց աիսոս . զի ՚ի գրա-
կանութենէ աղդիս զուրկ էր , և այն՝ յան-
ցանք իւր չէին , եթէ ոչ խաթարելոյ դբակ-
րութեան Աիւնեաց աշխարհի :

Հաց առօրին թարմ թրէր աստ . և յա-
ւուր միում առեալ զպանիր նստաք առ թոն-
ըիմ , և որքան հացթուխն հանէր՝ մեր ՚ի
ներքս ծալէաք մինչեւ կշտապինդ յագեցեալ
յետս կացի ես , Օ արմացմամբ իմն առիւ

Հայեցեալ Գրիգոր վարդապետի, ասաց .
“Ատա լհա խի ուտէիս չըս,” Խրբե թէ՛ Տղայ,
ընդէր ոչ ուտես :”—Ասացի, “Հազեալ
եմ, Տէր,”—Պատասխանեաց “Ատա լհա դէ
վաղ ըսիր, թէ Հազօտ վերա ըս էյ . մըն
մարդ Հաց ու պէնիրից կկօշտընայ Հարկիզ ,”
իբրու թէ՛ Ուրեմն վաղ ասա զի Հոգելարիս,
ասկա թէ՛ ոչ՝ մարդ յազենայ երբէք ՚ի թարմ
Հացէ և պաներոյ :

Իովանդակ զամիսս քսան շրջեցաք յայ-
սոսիկ կողմանս՝ մինչե ՚ի Շուշի . այլ ըստ
մեծի մասին անցուցաք զաւուրս մեր ՚ի Տաթէ :
Ուրսնոր յերեկոյի միում, այնինչ անազան
ուրեմն ննջեալ էաք իւրաքանչիւր ՚ի տա-
նիս խցի մերում, եկին անդ Գրադիր Յով-
Հաննէս եղիսկոպոս, պատմեաց մեզ զյետին
թշուառութենէ սրբոյ Աթոռոյն Հայաս-
տանեաց՝ ՚ի սաստիկ Հարկապահանջութենէ
Պարսից և պարտուցն : Եւ անց գնաց ՚ի
Շուշի, ՚ի գիմաց Հայրապետին և Ճողո-
վոյն Լշմիածնի՝ փոխ առնուլ մուրհակաւ
՚ի Օռհրաբայ և ՚ի Ամրկոսէ Թառու-
մեանց 4000 ոսկիս, և տանել Լշմիածին :

Այս ՚նիստ մեծի գրականութեան աղդի
մերոյ և Անեկնաբան սուրբ Գրոց, արդարե

այնքան խաթարեալ և անշքացեալ էր՝ մինչ
եթէ հարկ լինէր մայրաքաղաքական Առաջ-
նորդին նամակ ինչ կամ գիր օրհնութեան
առնել ուրեք, ինքնին նստեալ գրէր, կամ
նախարարակ առնէր և տայր Առարտիրոսի
Աշտարակցոյ սարկաւագի իւրում. որ հազիւ
օրինակէր զմին յաւուրս երիս :

Առարտիրոս Արքեպիսկոպոս այր պար-
թեահասակ, անձնեայ և գեղեցիկ կերպա-
րանօք, գեռ 'ի վեհ մտին պահէր զանձն
փանաքի և զիծուն գրուածս իմ, յիշատա-
կեալս 'ի Հատուածն Ա եցերորդ :

Աւստի . և ընդ ակամբ հայէր յիս +
Կուստ էր նմա վանել ՚ի վանաց իւրոց զտի-
րացու նուիրակին Խջմիածնի. բայց և այն-
պէս երեսումնս առաջի նորա ժխորէր զա-
խորժակն, մինչև անագան ուրեմն հարկ ե+
ղե նմա ճռնչալ ընդ մեծի պարտեօք գը-
րութեան, յոդւրոց հանել, և գրեթէ լու
իսկ՝ յաղագս չունելոյ իւր օգնական 'ի մե-
ծի պաշտաման իւրում : Պահիէլ եպիսկո-
պոս՝ որ քաջ հասու լեալ տղայական վրիպա-
նաց իմոց, և անոխակալութեան սրտիս՝ ան-
մղադիր եղե զինէն առաջի նորա “Առջեա
մի, և տես ասէ, թէ քանի առաւելութեամբ

յետ վճարել կարէ ԱՌԵՎՐՈՒՄ զաղոյշութեանն,
և արժանի լինի գթոյ և չնորհաց հայրու-
թեան քոյ :”— թէ այսպէս և թէ այնպէս
յանդիման եղէ պատկառելի երեսացն : Ա-
ՏԱՍՏԱՆԻ ԱՅ ընդ առաջին տեսն , և կոչեալ
զիս առինքն՝ որպէս Հայր զանառակ որդին ,
համբուրեաց , և ասէ “ անցցին , որ ինչ և
անցին . տակաւին որդի ես դու սրբոյ Ա-
ԹՈՈՐԾԻ և մեր : ” Եւ արդարե որպէս ա-
սաց , նոյն և եկաց առ յապայս ինձ ՚ի Հայր
հոգեոր և ՚ի պաշտպան հզօր , և ես յամենայն
սրտէ և յամենայն զօրութենէ ջանացայ գան-
ձել ինձ զօրհնութիւն նորա :

Եւ այսպէս յամսեան (Օդոստոսի 1821 , ընդ
Որոտն , ընդ Կաղատ , և ընդ Բանակոթ Աի-
սիանայ գաւառին՝ եկաք ՚ի Պահուկ գիւղ
առ եղերք զետոյն Կախչուանայ . որ ՚ի Բըռ-
նակոթայ և այսր՝ Քաղցրութեամբ ընկերա-
կից եղեւ մեզ : Աստի ուղղեցաք ՚ի կողմանս
Աղալերանց (որոյ հանք աղիցն պատուականք
են յոյժ ,) և անտի դարձեալ եկաք ՚ի Կահ-
կերտն աւան . որ այժմ Պաղանչի կոչի , և
անտի յԵրնջակ գաւառ , Այս անուն ըն-
կալաւ ասի՝ յԵրնջեկ տիկնոջէն Աիւնեաց ,
որ շինեաց զամուր բերթն , որ կայ մինչեւ ցոյշ-

սօր ժամանակի , ընդ մէջ Շահկերտայ , Ապրակունեաց , և Կյալիսչուանայ՝ 'ի վերայ քարալերին միոյ լեռնացելոյ 'ի դաշտին . ուր պահէր գանձն արքունի , և ապաստանի լինէր Ամբատայ Բաղրատունոյ արքայի մերոյ և նահատակի՝ վասն 'ի Քրիստոս հաւատոց : Ընդ յարեւելոս հարաւոյ սորա անկանի (Օձալեառն կամ) Խլանտաղի անուանեալ քարալեառն Ապրակունեաց՝ բարձր յոյժ , զորմէ ասի ունիլ անթիւ բազմութիւն չարաթոյն օձից . յորոց և զանունն ընկալաւ : Ապրակունիք գիւղ առ երի կայ սմին , և ուանքն Երնջակայ սուրբ Արագետի՝ յարեւմտից նորա , առ ձորակաւ գետակին՝ ուստի բղիսին աղբերք անուշակ ջրոյ : Լի են շրջակայ դաշտորայքն օձիւք , զորոց պէսպէս առասպելս յօդեն բնակիչք Ապրակունեաց . որպէս թէ յեօթն տարին միանգամ զօրաժողով լինել նոցա , ընդ վարչութեամբ Արքայի իւրեանց . և գնալ պատերազմել ընդ օձից Ամասսեաց . որով և 'ի վերին խնամոց պակասել զիրեարս սատակելով . ապա թէ ոչ անբնակ լինէր աշխարհս յերեսաց նոցա : Ասէին նաև՝ թէ մարդիկ հարեալք յօձից այսոցիկ , փութային որքան կանուխ և մարթ

էր, և գային 'ի վանսն անդ, և առեւալ 'ի Հողոյ խորանին ձգէին ՚ի բերանս իւրեանց, և թոյն օձիցն չազդէր ինչ ՚նոցա : Այլ որ առաւել հիանալի՝ պնդէին թէ՛ և օձքն գիմնալ գային անդանօր, և որ 'ի հարկանողէն և 'ի հարաւածելոյն շոյտ հասանէր անդը՝ ազատէր . և որ յետոյ՝ մեռանէր : Այս հաւատ առիթ տայ ժողովրդեան տեղւոյն յաւուրս ամարանի, կրել ընդ ինքեանս ՚ի Հողոյ աստի մասն՝ իբրև զանդեղեայ սրբազան ընդդէմ հարուածոց մահաբերին :

Վերադարձաք ՚ի ՚Եամաչուան, յամսեան Վեպտ . ՚ի 25. 1821. և լուաք թէ Հայրապետն ամենայն Հայոց՝ քանի մի եպիսկոպոսոք եւ լանէր հրամանաւ Բգեշլին Երեանայ՝ դալ անցանել ՚ի Շուշի :

Եկին եհաս նա, ընդորում էին Տեղապահ Մարտիրոս Արքեպիսկոպոս, Անտօն Մուղնեցի Արքեպիսկոպոս, Գրիգոր Շօնկուլին Արքեպիսկոպոս . Յովհաննէս եպիսկոպոս գրագիր, և ՚ի վարդապետաց անտի Յովհանի Ասրբեցի՝ Գանձապետ . Գրիգոր Աշտարակցի Շարադիր կոնդակաց, Մինաս վարդապետ Բժիշկ, Յովհաննէս վարդապետ Արքմեցի՝ Ատենապիր, իսկ ՚ի սարկաւագացն,

Յովսէփի Երգոկիացի , Շահօն Երեանցի ,
 Գրիգոր Երեանցի , Տեղապահի , և Առա-
 քել Անտօնի՝ ժամասացք , Բնդ յառաջ
 ելին նմա , ոչ միայն ժողովուրդք Հայոց ,
 այլ և Խանն Կախչուանայ ամենայն կազ-
 մութեամբ այրուծիոյ և ազատագունդ Հե-
 ծելոց : Եկն էջնա ՚ի տան Պարոն Աարգսի
 Հայկազուն իշխանի տեղւոյս . և որ նախ
 մատոյց նմա թեթութիւն հոգոց ՚ի պատ-
 ճառս ծանրութեան պարտուց , էր Դա-
 նիէլ եպիսկոպոս , որ հաւատարմութեամբ
 մեծաւ ետ ոչ միայն զամենայն հասս նուի-
 րակութեան , այլև յաւել ՚ի վերայ յա-
 ռանձին հասից իւրոց թումանս հարիւր ,
 օգնութիւն ՚ի նեղութեան հոգեոր Օ՛նողիս
 իւրոյ , որով և ընկալաւ զառաջնորդութիւն
 Անապատին Ամարասայ յըզուանս Հայոց ,
 և զնաց անդք : Խսկ ինձ ՚ի տեղւոջն խնդ-
 րանօք նորա տուեալ զչորս աստիճանս գլու-
 թութեաի և ղուրար հրամանաւ , առ ընդ իւր
 վերստին ՚ի գրութիւն կոնդակացն : Ուրա-
 նօր կացեալ նորա մինչև ՚ի սկիզբն Հոկ-
 տեմբերի , այց ելեալ յամենայն ՚ի վանա-
 հարց շրջակայ վանօրէից , յառաջնորդաց ,
 յիշխանաց , և գրեաթէ յամենայն ժողովր-

դոց , որք որպէս զհօտ դալարաբօտ դիմէլնե
յաղ օրհնութեան նորա , և յունկնդրու-
թիւն հոգեպարարն խրատուց :

Հոկտ , 2. Օ համբաւի հարաւ լուրն :
Թէ Բդեշն Երեանայ զապաշաւ մեծ կրելով
ի միտս իւր յաղագս ելից Հայրապետին՝
գունդ կազմէր առաքել զինի նորա և յա-
թոռն դարձուցանել Խջմիածնի : Ա ասն ո-
րոյ աճապարեալ նորա չուեաց այնօր ի Պ ա-
հուկ ընդ Հիւսիսակողմն քաղաքին Եախ-
չուանայ , ամենայն բազմութեամբ աղխիցի
և պարագայից : ()րն կարի ամպային , և
տեղային ամպք ձիւն սաստիկ յոյժ փրթու-
ածովք , մինչև թզաչափ ստուարութեամբ
ծածկել զերեսս երկրին , Այլ զի Պ ահուկ
չէր հեռի իմն ի քաղաքէն , և ընդ իշխա-
նութեամբ անկանէր Պարսից Տէրութեան ,
խորհեցաւ ծերունին Հայրենասէր , զի եթէ
դիւրութիւն անձին և եթ խորհելով , մնայցէ
անդ զգիշերեայն՝ յայնմ վոյրի դադարեալ ,
գուցէ հասանիցին խնդրակք բդեշնին , և
բռնի տարցին դինքն . ի նահանջ մեծ ամե-
նայն հասարակօգուտ խորհրդոց իւրոց : Ա ա-
սըն որոյ աճապարեալ ընդ ձորն ի վեր , և ան-
ցեալ ի սահման Ախսիանայ՝ որ էր յոյժամ

ընդ Տէրութեամբ Ոչուսաց, սՍլ ևս յառա-
ջել չկարաց 'ի յորդութենէ ձեանցի՝ որ
էր ուրեք՝ զի գաղաշափ բարձրացեալ, և
էր ուրեք՝ որ երկուք և երիւք ես, ծածկէր
զմակերեոյթ խորդուբորդ կրճոցն և գժու-
արանց ելել ջից տարտարոսական ձորոյն :

Այլ ևս յառաջել ոչ կարելով, ագաւ-
զայն զիշեր 'ի քարայրի ուրեք՝ յաջակողմնան
եզր գետոյն . ուր յետ գեշերային պաշտա-
մանցն, պատուէր ետ իւրոցն զոյր մի հե-
տիոտս առաքել 'ի Բռնակոթ, զի հանցեն ՚ի
վաղուի կասկերտս և սփռեսցեն զերեսօք
ձեանն, լնո՞ որ հնար իցէ անցանել կարա-
ւանին սրբութեան : ՚Քանզի բազմափորձ էր
նա ամենայն ճանապարհորդական հնարից,
՚ի հեռաւոր ծագաց անտի Հնդկաստանեայց
մինչե ՚ի սառնամանիս Ահբերիոյ՝ առաքելա-
կան քարոզութեամբ շրջելովն և կազդուրելով
զցրուեալոն մերազանց 'ի հաւատս ՚Քըիս-
տոսի :

Շարժական Եկեղեցի :

Այլ նոր և վոհմ երեեցաւ բովանդակ կա-
րաւանին երեկոյեան ժամբ բգութիւն հեծե-
լոցն զՃանապարհայն . զի Կաթուղիկոսի ՚ի կեդ-

ըսնի կացեալ, յաջմենորա Տեղապահ Մաք-
տիրոս Արք Եպիսկոպոս, և 'ի ճախմէ՛ Անտոն
Եպիսկոպոս Մողնեցի՝ որ զՃախմօրհնողի ու-
նէր զպաշտօն, և ապա վարդապետք և սար-
կաւագունք աստի և անսի՛ որոշ որոշ և դա
առ դասս՝ սկսան զաղօթսն առ Աստուած :
Համարէր ոք զկարաւանն փոխեալ 'ի քաւա-
րան շարժական՝ 'ի ստորին հովտաց անտի ընդ-
դառ ՚ի վեր ճիւնափաղփիւն՝ յերկինս 'ի վեր
խիզախել, և օրհնութեամբ աստուածայնով
ամրափակել զանդորայ 'ի բերս առատ սլար-
գեաց Բարերարին : Հայք ընդ նորութիւն
տեսարանին հրաշանային, և Պարսիկք զահի
հարեալ քստմնէին : Օ 'ի աղօթքն 'ի ճի՛
ընդունակ Արարչին լեալ՝ ոչ երբէք հաւա-
տային :

՚Իախ քան զլոյս առաւօտուն՝ ծագեցան
առ մեզ գթութիւնք Բռնակոթայ . զեղաւ
անդանօր ամենայն արու, այլ թէ սրպիսի կա-
մակար ջերմեռանդութեամբ այր զարամբ
ել համբուրել զաջ Հայրապետի իւրոյ, և
շնորհաց օրհնութեանն լինել արժանի՛ անմարթ
է ինձ ստորագրել գուցումմալ մատամբք :
՚Իբրև կատարեցին զամենայն՝ զարմացեալ ընդ-
համբերութիւն նորա՝ որ 'ի ցրտոյ, և երկու-

ցեալ ևս՝ թէ ՚ի ծագել արեգականն ջեռուց
ցետը ձեանց խխմէին չտալ մեղ անցս ամեւ-
նեին, ստիսլեցին զկարաւանն ՚ի չու իւր : Ալք
ուեցին զկապերտանին ՚ի վերայ ձեանց, այլ
յանցանել առաջնոյ թեւին, ծանրութիւն սըմ-
քակաց երիվարաց նոցա ՚ի խորս ձեանց ի-
ջուցանէր զնոսա, և զհետ եկողացն չտայլը
անցս աղատ ՚ի վտանգից : Ա առնորոյ և յեր-
կուս բաժանեցին զառաջս ճանապարհին . մի՝
վտան բեռնակիր անասնոց մերոց, և միւս՝ վասն
հեծելոց . և անհնարին արագութեամբ փո-
փոխելով զկապերտանին յետուստ լնդ յա-
ռաջ՝ անվեսա ճանապարհ հորդեցին մեղ մինչեւ
՚ի գիւղ անդր իւրեանց :

Եկն անդ մոյրաքաղաքական Արք եպիս-
կոպոս Ակնեաց՝ Արտիրոս, քանի մի պատ-
ուական երիցամբք և երեելի երեելի իշխա-
նօք. յորս նախապատիւք էին և հզօրք ՚ի
ժամանակիս՝ Աէլիք Պողոս Տաթեոյ, Առւսի
Հարիւրապետ եղբայր նորա, և Յովսէփ որդի
Առւսեայ՝ Հսկայից ժամանակին ահաւոր :

Յետ երկուց աւուրցն հանդարառութեան,
նովին տաժանմամբ յառաջ խաղացեալ՝ հա-
ռաք ՚ի Շնհեր գիւղ Հայոց, առ եղերք
գետոյն Որոսիւսյ՝ և ագաք անդ :

Հասաք ՚ի վանս Աստաթէիր, ուր կացաք ամ-
 սօրեայ ժամանակաւ, գոհացեալ ՚ի շրջակայ
 գիւղօրէից՝ որք ինքնոյօժար ջերմեռան-
 դութեամբ մի զմիով ելանէին նախընծայ
 մատուցանել մեզ զհացալից սեղան իւրեանց.
 և զօրհնութիւնս ընդունել, Մէհդի Խան
 որ ՚ի կողմանէ կայսերութեան Ուսուսաց իշ-
 խէր Ըուշոյ և Աիւնեաց, այսինքն Արցախայ,
 Աիւնեաց և Աղուանից միանդամայն, պատգա-
 մաւորս առաքեաց առ Հայրապետն առտանիօր,
 և խնդրեաց մի յառաջել յամուրն Ըուշի, մին-
 չե ծանուսցէ կուսակալին Տփղեաց և յայսկոյս
 Կոլկասու եղեալ նահանդոցն՝ զգալստենէ
 նորաւն, Ահա քեզ որոդայթ մեծ, և առիթ
 անհետարին տագնասի ։ Կուսակալ ժամանա-
 կիս էր Արմս Երմալով, որ առ մեծ շնորհս
 ունելով զմեծն Աերսէս Արքհաղիսկոպոս, թա-
 խանձանիօք նորա հրաման գրեաց առ Մէհ-
 դի Խան հրաւիրել զնա ՚ի Ըուշի, այլ թոյլ
 իւիք չտալ նմա առնելոյ ինչ մինչեւ ինքն գը-
 րեսցէ առ Ասյսին Աղէքսանդր Առաջին,
 և ընկալցի զհաճոյս նորա ։ Ատ և կապք
 անհնարինք, այլ ճար ինչ : —
 Ե՞՞յեմ, 3: Մէհման բազմութեամբ Արք
 եպիսկոպոսոց՝ Մէլիքաց՝ հոգեորտկանաց

և աշխարհայնոց ելաք ՚ի Տաթեոյ, և ընդ-
ձորն անդնդոյին գետոյն Որոտնայ, ուր Ա-
նապատն էր անուանեալ Վեծ, ընդ վերա-
տեսչութեամբ Ակըլտիչ վարդապետի Խլէզն
կոչեցելոյ, ելաք ընդ զառ ՚ի վեր նորա
՚ի դաշտ ինչ . ուր էին բլուրք երեքին Աւ-
թափէք կոչեցեալ . յորում առ երի ընդ յա-
րեմուտս հիւսիսոյ փոխելով զգլուխ կարա-
ւանին՝ եկաք ՚ի Կորէս գիւղ մեծ Հայոց,
երբե 200 տանց . ուր էր և ամրոց հզօր
յարեելից գեղջն, ընդ սլահանութեամբ
գնտապիտի ուրուք Ոչուաց, որ հսկէր անդ
500 զօրօք . Առ սաստկութեան սառնամանեաց
յրտահար եղին ոտք և ձեռք բաղմաց, և
իմ իսկ առանձինն . զորս շփելով գիւղակա-
նացն ՚ի ձեռնն՝ սաստիկ ուժգնութեամբ,
բացին ՚ի նոսա զշրջան արեան, և խան-
ձարրեալ ՚ի բամբակի՝ սլատուիրեցին հեռի
սլահել ՚ի կրակէն . ապա թէ ոչ խխմնալք ՚ի
բաց թօթափէին : Օ աւուրս ութե կացաք
աստանօր՝ համբուրեալք յամենեցունց : Եւ
գնուապետ զօրուն առաւել շուք գնէր ելից
մերոց՝ քան մտից : Ա ասն զի յետ ՚ի
կարդի դնելոյ զզօրս իւր ըստ զբօշու զբօ-
շու, յաջմէ և յահեկէ կարաւանին մերոյ :

չուել Հրամայեաց ընդ մեզ , մինչեւ 'ի գիւղն
մէծ Խնձօրեսկ : Այս գիւղ յարե ելից հիւ-
սիսոյ անկանի Առիտայ , 'ի խորին ձորամիջի .
որ լստ ձորոյն Ոշականայ և Արբւոյ , լի-
է անմատչելի անձաւոք և քարոյրօք ընդ
կըկին կողմանս իւր : Ծնդ ամենայն աջ և ա-
հեակ հոլովմունս վիճակին Ոիւնեաց աշխար-
հի , և 'ի պէսպէս առմունս և աւերմունս
տինա և Քարին Բաղակայ այս գիւղ եկաց
մնաց անառիկ : Ա ասնզի ոչ միայն արք նո-
րա են կորութք և քաջաղէնք ՚ի մըցմունս
պատերազմաց , այլ և կանայք իսկ նորա ,
յորոց չեք օտար գործածութիւն Հրազինուց .
վասնզի յանցեալ ամառան , յորժամ ընդ
Պահիէլի եպիսկոպոսի նուիրակէաքն յայսմ
գեղջ , կանայք նորուն ոչ միայն Հրացանօք
և սուսէրօք ելանէին 'ի հունձս , այլ և 'ի
հանդիպել աւաղակաց և 'ի վարել անդ զար-
ջառս նոցա , արիաբար դհետ սինդեալ և առ-
նապէս պատերազմիլով . կորզեցին զաւարն ՚ի
ձեռաց նոցա :

Օ ոՀրաբ Հոյ՝ 'ի հաւատոց ուրացեալ , և
ընդ կուրացեալ Քեռ ամուսնացեալ Խա-
նին եկն անկաւ յոտս Հոյրապետին , և
Պղջոյր մլ ծաւ ապաշաւանօք ընդ կորուստն

միջաղին : Հայրապետն միսիթարական ըա-
նիւք և Աւետարանական վարդապետութեամբ
կազդութեաց զյոյս դարձի նորա առ Տէր .
իսկ Տէրութիւն Ոչուսաց արգել զնա 'ի
դառնալոյ անտի 'ի լոյս փրկութեան . ասելով,
“թէ որ միանգամ հաւատոց 'ի հաւատո փո-
փոխի, պարտ է մկրտիլ յեկեղեցւոջ Ոչուսաց .
ասլա թէ ոչ կալ և մնալ ուր էն : ”

Եկա.ք 'ի Առնաձոր, որ 'ի թիկանց Խըն-
ձորեսկոյ 'ի հիւսիսոյ, դրիւք և ամրութեամբ
համանման առաջնոյն : “Եոյնալէս և Եկեղեցի
սորա է քարակերտ, որորոցածե կամ սագաշէն,
այլ աղքիւր ջրոյն՝ յորմէ ըմպէին ամենայն
գիւղականք իրբե 75 տունք ունէր զհանքային
բաղադրութիւն իմն թթու, անախորժ եկամը-
տից, այլ ախորժընկալ և առողջարար համա-
րեալ 'ի բնակչաց : Գրիգոր Մէլիք գեղջ այսո-
րիկ սպանաւ 'ի Մէհրի խանէն, երկոքին
կանայք նորա 'ի միում տան՝ սնուցանէին
ուրոյն զորբս նորա . և զարմանք այն էր՝ զի
սիրով կէին ընդ իրեարս : Աստի էր և քերթո-
ղուհին Աիւնեաց, որ արար տաղս բազում
յաշխարհիկ լեզու երկրին, յորոց հետա-
գոյդ՝ յանէ ծո անհաւատարմութեան առն
իւրում Գրիգորի, սկսանի այսալէս :

“Ես Մըրան ըմ մըլոքած
Հօսիրըս չար հըլորած ,
Լսօր Գիւղիւն մըռած պլտէր .
Պըտարազըն բըլորած :

Եւաք աստի ՚ի Տոլ՝ կամ Տեղեր . որ ՚ի վերայ
բարձրաւանդակի սարուգ աշտին կայանայր ,
՚ի հարաւոյ ձորոյն Հաքարու , մղնաւ միով
և աւելեօթ ևս՝ հեռի ՚ի նմանեւ , Ուրանօր
ողջոյն հրաժարանաց տուեալ Հայրապետին
եպիսկոպոսի և իշխանացն Ոիւնեաց , արձակեաց
գնալ իւրաքանչիւր ՚ի տունս իւրեանց . և
առեալ լնդ իւր միայն զՅոլսէփ որդի Վու-
սեայ հարիւրապետի՝ քանի մի ձիաւորօք +
չուեաց անց լնդ զետե Հաքարու , և անտի
լնդ անհնարին ելեէջս լերանց Արձախայ ան-
ցեալ եկն յամուրն Շուշի : Այլ ծանիր , զի
Արձախ , Փայտակարան և Ուտիք միահաղոյն
առեալք , կոչէին Աղուանք , կամ Աղուանից
տուն . (տես ղքննութիւն իմ ՚ի վերայ բուն
Փայտակարան աշխարհի ՚ի ծանօթութիւն-
ուն) : ” Օ ճանապարհայն զարմանալիս ե-
ցոյց մեզ արդարեւ պատանին Յոլսէփ , Հայ-
րապետ մեր բազմեալ յԱնդրուար գնայր ,
զոր բարձեալ տանիին ջորիք երկու ամենիք՝
յառաջոյ և յետուստ լծեալք : Եղերք ձո-
րոյն սաստիկ զառիթափ , ձորն խորին յոյժ ,

և գետն որ 'ի նմա սաստիկ յործանուտ :
Չիւնն պարապատեալ ծածկէր զամենայն
 հետս և դշաւիզս անցից , և չէր ինչ ակե-
 կալել մեղ , եթէ ոչ վտանգ յամենայն կող-
 մանց : **Յ**անցանել կարաւանին ընդ կիրճ մի
 'ի կրծիցն անմատչելեաց , խրտնեցան ջորիք
 անդրուտրի Հայրապետին , և ահա բուռն ուժ-
 գնութեամբ ՚ի ձորն գահաւիժեալ խորտա-
 կէին , եթէ չէր քաջին **Յ**ովսէփոյ զուսն
 ահալորտելի 'ի ներքոյ մատուցեալ անդրու-
 տրին , և զսաստիկ ծանրութիւն նորա՝ և
 ջորեացն երկոցունց , 'ի վեր կալեալ պահեալ
 վայրկեանս բազումն , մինչև տոլու շացեալ
 կարաւանին հասեալ կորդեցին 'ի միջոյ ըդ
 Հայրապետն զահիհարեալ , և ապա լուծին
 զգործին , և անվասս զերծուցին զօրիս նորա :
Ահա ոյսպիսիս ունի իւր քաջս աշխարհն

Ոիւնեաց :

Խոկ Հայրապետն օյնուհետեւ ՚ի ձի հե-
 ծեալ առանձին , եկաք հասաք ՚ի **Շ**ուշի :
 ուր Խանն և ամենայն բազմութիւն հեծե-
 լոց և հետեակացն ընդ յառաջ ելին նորա ,
 և տարեալ հանգուցին զեա ՚ի տունն Հայ-
 րումեանց կոչեցեալ՝ որ ունէր սենեակս կրկին ,
 մի՝ լասն Հայրապետին և սպասաւորաց նո-

բա . իսկ միւս՝ վասն լնոտնն եպիսկոպոսի և
գրադրացն առ հասարակ . ՚ի միւս բակին ընա-
կէր տեղապահ , և այլք աստ և անդ :

Ըուշի անառիկն համարեալ ամրոց՝ կղզի
ինն էր գոգջեր ամբարձեալ ՚ի վերայ քա-
րայերին , որոյ յարեւելից կողմանէ պարապա-
տէր գետն ընդ որ մեք եկաք , իսկ յարե-
մոից գետքի բխեալ յարեւմտեան լիրանց , և
եկեալ համբուրէին զերեարս ՚ի հիւսիսոյ ստո-
րոտս նորա : Բնութիւն յամենայն կողմանց
ահազ ին քարապարսակօք պատեաց զայն , բայց
՚ի հիւսիսակողման մասնէն , ուր ելից զթերին
ընութեան արուեստն՝ Հզօր պատնիշօք ընդ
դուռնն՝ որ հանէր յլւետարանոցն զիւղ :
Բնակիչք նորա Հայք և Թառերք , Հայքն
հաշուեին լինիլ 500 տունք , և ունէին ե-
կեղեցիս երիս , զլուկուլիցւոց՝ զլուկարազ-
ցւոց՝ և զլուկանչւոց , ոյլ զքարակերտ և
զմեծ Եկեղեցին ՚ի նորոյ շինէին յայնժամ
երկոքին եղբարքն Թառումեանք . Օ ոհքար
և Մարկոս : **Ը**ուշի զամենայն կերպարանս
բերէր յինքեան զմիջնարերթի , շրջակայ լե-
րինք յերից կողմանց նորա երեւէին բերել
զձեւ արտաքին պարսպաց բերթին . գետորայք
յորդեալք զնովաւ գործ խրամոց կատարէին

Չըալեաց , և ինքնին ՚ի կենդրոնի ամբարձեալ ,
արդարեւ անառիկ լինէր , եթէ ՚ի մերձակայ
լերանց անտի չհասանէին առ ՚նա գնդակք
թնդանօթոց :

Հիւսիսակողման քարաժայո՞ն է առաւել
բարձր , և ահաւորագոյն ևս ձոր ՚նորա ,
Պատմէին , թէ “Եհմէդ Խան , Հայր Աէհ-
դի Խանին ցասուցեալ երբեմն ՚ի վերայ
Քեռ եղբարց Ծառումեանց , Հրամայեաց
զահաւէժ առնել զնա ՚ի ժայռից աստի ՚ի
խորախորս ձորոյն . այլ առ անհնարին բարձ-
րութեան միջոցին , ասեն Հողմոց ՚ի ՚ներքս
մտեալ երկայն և յոյժ ծաւալ հանդերձիցն
մեղմեցին զուժգնութիւն ծանրանաց ՚նորա , և
Հեզիկ ՚ի վայր բերեալ՝ կենդանւոյն իջուցին
զնա ՚ի ձորամիջին : Օ որ Հրաշից ՚ի սակե
եղեալ Բռնաւորին . Հրամայեաց այնուհետեւ
ազատ շնչել ՚նմա զօդ Հասարակաց : ”

Օդ տեղոյս կարի խոնաւ և երկիր կա-
ւուտ . ուստի և յանձրեային եղանակս կա-
րի տղմուտ : Յաւուր միում ՚ի գնալ իմում
յեկեղեցի քաղաքիս , գտե զպառաւ ոմն կըկ-
տել ՚ի մէջ տղմոց զպայտիկ կոշկացն իւրոց ,
զոր ՚ի բաց կորդեալ էր ցեխն : Բնակիչք ՚նորա
ընդ այր և ընդ կին առոյգ են և աշխոյժք : Ձե-

զգեստուց նոցա կոչեցեալ Պ արաբաղի՝ խառնութիմն է Ա բացի և Պարսիկ ձեռց : Կանայքն նոցա ունին և զգոգնոց յառաջոյ իւրեանց՝ ՚ի պահպանութիւն զգեստուցն ՚ի կեղտոյ : Պառաւունքը զգեստուն և զմիսաշապիկ ՚ի վերայ ամենայն զգեստուց իւրեանց զի մի միատեսցեն զնոսա , Առւսահք նոցա , որ զծայրագոյն պատկեր ամօթխածութեան ՚ի գեմս կընեն , գեղեցիկը են յոյժ՝ և ախորժատեսիլք : Ոչ սքօղեն զգլուխս իւրեանց , այլ գուտակ ՚ի մորթոյ գառանց Պ ալմուղաց դնեն ՚ի գլուխս՝ զօրէն սպատանեաց , ձիւնափայլ փողքն ընդ կարմրութեան այտուցն զուգակառեալ , յօրինեն զնոսա խնձորս ձերմակու կարմիր . իսկ գիսակիք հոպովեացն շուրջ զուսովքն ՚ի թիկանց ցներբանս նոցին ծաւալեալ՝ հաւասարեն զնոսա , (եթէ չգերազանցեսցեն) գեղեցկուհեացն Ա բաց . սովին և եթ տարբերութեամբ , զի սոցա՝ իշխէ Ամօթ , իսկ նոցա՝ Աշխոյժ :

Գինի Շուշոյ՝ սոխի ջմւը : Ա յլ Պարտաւայն , Աւետարանոցին , Շաքոյն , Շամախոյ , և Գանեձակային՝ աղիխահք յոյժ . որովք լի է քաղաքն , Պառուղք համեմատ օդոյն , այլ հունն , զկեռն մորն , և մոշն , մամուխն ,

մասութ, կաղինն, շագանակն, տանձ և սալրք անտառաց նորա պարաբո են և Համեղք յոյժ : Ըերամ առատ է աստ՝ որպէս յամենայն Ախւնիս . մի ՚ի գերազոյն բերոց նորա է ձին՝ գիլիբօղ անուանեալ, որ երկրորդ դասի յամենայն ուրեք՝ նժուգին Արաբացւոց, և Հաւասար իջորդոմեան օգտակարկաց . ուստի ևմն ծագնի վաճառի յոյժ : Ահայք երկրիս առՀասարակ արուեստաւորք են, և գործեն պէսպէս ձեռակերտս մետաքսիս . իսկ արք նոցա առՀասարակ վաճառականք և երկրագործք :

Երկոքին տունք էին Հայոց՝ որոց ընդարձակութիւն վաճառաց, բազմութիւնք գործադարաց, և պատիւք ՚ի մէջ Ախուսաց՝ մնային յոյժ յոյժ, Տունն Հախումեանց՝ ամենահարուստ, որ և ՚ի գանձարանի կայսերութեանն Ախուսաց ունէր մինչեւ միլիոնն ոռւրլեաց, և ՚ի քաղաքացն Պարսից մինչեւ ՚ի քաղաքս Ախերիոյ և Եւրոպայ՝ ձգէր առև տուր : Բայց ՚ի վերայ այսորիկ ամենայնի տակաւին Ճիշդս կարդոյր զնոսա աղքն և ռիշտս . զի առ անբու գանձուցն յոլովութեան զարարս մնագործութեան յանձինս ոչ բերէին, տինա և ՚ի գուղիաբեայ ողովութենէ կա-

բօտեալ և տառապեալ համազգւոյն զինքեանս
 ՚ բաց որոշեին : Բայց ես ոչ համարձակիմ
 մակազրել ՚ բարաւորի տան սոցա զանուն
 անողորմ . վասն զի՞ թերեւս ոչ զհամբաւի
 հարկանի զնոցանեկ այն ՚ ցոյցս մարդկան արա-
 բեալ ողորմութիւն , որով այլք ուկւով զնեն
 զպարձանս ՚ մարդկանեկ՝ քան թէ վարձս յլու-
 տուծոյ . սակայն և այնպէս , դեղեցիկ իմն
 մոլութեամբ մոլեալ , ընդարձակեին յոյժ
 ձեռն տալ աչալիքնոց մերազանց , գործավարս
 կարգելով զնոսա ՚ի վերոյ վաճառաց իւ-
 քեանց ՚ տեղիս տեղիս , և ջանալով հարատա-
 ցուցանել զնոսա , և ՚ տունս Հաստատունս
 կազդուրել , զորս և Օրազս իւրեանց անուա-
 նէին , այսինքն է՝ ճրադունս , փայլեցուցանել
 յարտաքս զանուն և զերախտիս իւրեանց : Ուր
 բազում ճրագս ունելոյ ընիկ իմն էր բազա-
 քիս . վասնորոյ և այլ զարամբք ելանէր ճռ-
 խցուցանել զհամազգիս իւր՝ զի ՚ պարձա-
 նաց սակի էր յոյժ ՚ տեղւոջն համբաւեալ
 գործն :

Երկրորդ տունն էր Օ ոհրապայ և Արեկոսի
 Թառումանց՝ յամենայնի վերադոյն : Ա ասն
 զի՞ սոքա ընդ իւրեամբք ունելով զամենայն ար-
 տումութիւնս զծովուն Աասպից , թէ զձկնոր-

սական իրաւունս , և թէ զնաւագնացութեան
տեղեհարկս , բազմագունից պէտս ունէին
գործալարաց յոյն պաշտօն , Ուր մնայ , զի և
վաճառականութեանցն առեւտուր ոչ ինչ
նուազ քան զախումնանցն՝ ձգէր ի հեռաւոր
ծագս աշխարհոց , Շրագունք տան թառու-
մեանց երեկին գոլ մի մի շահապք շահաստանի ,
ոյնքան զարդարեալք և պաճուճեալք՝ թէ
զգեստու , թէ տամբ , թէ հարստութեամբ ,
միւչ յառաջին տեսութեան իմում , համարել
զնոսա տեարս տերանցն իւրեանց . **Օ** ոհրապայ
և Վարկոսի : **Ա**ռօրէական բաշխոյք ողորմու-
թեանց տան այսմիկ առաւելոյը քան զւութիս
500 . Թող զմեծամեծ հասարակաց սեղանս , զոր
տային 'ի տան անող իւրեանց : Եկեղեցին կա-
ռուցեալ համակ ի սպիտակ վիմաց գեղեցկա-
դոյն քան զբազումս ի հռչակաւոր եկեղեցեաց
աշխարհին՝ յայտնի արձան էր մեծագործու-
թեան սոցուն :

Թառումնեանք ընիկք էին աւանին Հակեր-
տոյ . այլ ի վերջին աւերս նորա եկին ընակե-
ցան յԵրեան : Խսկ բգեաշխ նորա՝ որ զա-
մենայն ինչս հպատակաց Տէրութեան յիւր
սեղհական ի ստացուած համարէր , և չարա-
չարս տանջէր զնոսա տուժել ինքեան զգոյս

իւրեանց : (Վենդանի էր յայժմամ և Բարս
եղբայր սոցա կրտեր, որ յետոյ մնուաւ ՚ի Պար-
բանդ ,) Բարա առեալ զամենայն զուգ՝ փախ-
չի յաշխարհ Փայտակարան , և գրաւէ զե-
րեսս ծովուն Կասթից ՚ի Ուտսաց դրանեն ,
որով սակաւ առ սակաւ Հարստացեալ անդա-
նօր՝ կոչէ և զեղբարս իւր , և հիմն դնէ
այնորիկ Հարստութեան , յոր վայելէին այսօր
եղբարք իւր և ազգն :

Ո՞նդ Հարուստ ժամանակս կացի ինքնին՝
անձանօթ ՚ի քաղաքի այսմիկ . այն ինչ աստի-
ճանակից եղբարք իմ ներդաշնակ տաղասա-
ցութեամբք իւրեանց՝ զոր խնոյէր ինձ ընու-
թիւն , հանրածանօթ Հանդիսացան ՚ի քաղա-
քին . և շահեցան ոսկիս քաղումա՝ պարզ և ի
մաստմք , ոյն ինչ թուղթ և թանաք յառան-
ձին սենեկի՝ չշահէր ինչ ամենն ին :

Ովորմութեամբն Աստուծոյ վերստին աստ
պատահէր Պիոլոս Ա արդապետ Ա արտգաղցի՝
նախելին Ա արդապետ իմ , և Յովակի վար-
դապետ՝ իմաստասէր վերաձայնեալ , ուսուցիչ
ուսուցչի իմոյ . զորս Հրաւիրեալ էին երեկլի
գերդաստանք քաղաքիս՝ ՚ի գաստիարակու-
թիւն ուստերաց և դստերաց իւրեանց : Յորս
կարի երեկլի հանդիսանային Յովհաննէս և

Արապետ Մարկոսեան թառումնանց, Աղա
Բաբա Հախումնանց, Մագական Պալա-
լեանց և այլք, ուստի և ես սպրդեցայ ՚ի նոսա-
ուսանիլ զնորոգ և զպայծառ Տրամարանու-
թիւն Հօր Յովսեփայ Վարդապետի:

Ուսանէի այս, բայց այն զի միշտ զուրկ և
թափուր ՚ի միսիթարութեանց, և ոչ որպէս
կրօնակից եղբարք իմ,—յուսահատութեամբ
ծալեցի զգիրք և գրիչ, և նստայ ծոյլ ՚ի սենե-
կին: Եկե Վարդապետն աստուածային,
զոր իբրև տեսի՝ զեղան արտասուք. և լուռ
միայն կացի: Բազմցաւ առընթեր երանե-
լին, և լնդ Հարուստ վայրկեանս ոչ խօսեցաւ
ամենենին, մինչև բացի նմա զառիթ տառա-
պանաց իմոց: Ակսաւ նա զառաջինն թողուլ
զամենայն, և յիմ կցս յենուլ. որպէս թէ
արդար ոք համարելով զիս յանիրաւի արա-
րլա իմ: Բայց իբրև եգիտ զիս կակղացեալ
տռ սակաւիկ մի՝ մեղմով իմն ասաց ցիս: “Որ-
դեակ ՚իմ, գիտես որքանոյ արժէ նժոյգն
օդապարիկ:” —“Ճինդ Հարիւր կամ Հազար
ոսկի” ասացի յնա: “Եւ գիտես առէ, զի ՚ի
զնել և վաճառել նժուգին պարտի գոլ յետ-
կար վաւերական և կնքել մատանեաւ դա-
տաւորի քաղաքին՝ ՚ի հաստատութիւն իս-

կութեսն սերի նորա ։՝—“Եղուաք թէ ։՝—
 “ ’Ե հարկէ , դու ոչ գնեցեր զայն , և ոչ
 վաճառեցեր . բայց լուար երթէ.ք թէ գնեց
 ոք զայն վասն առօրին զրօսանաց խրոց , կամ
 կրելց զբեռինս աղօնից ՚ի ջրաղաց անդը ։՝”
 “Ոչ քնառ , զի ափսո՞ս է երիվար այնքան
 աղնիւ ՚ի հասարակ գրաստու կարգի վարել ։՝”
 “Արդար ես որդեակ , որքան արժէ.ք իցեն օդա-
 պարիկ երիվարին , քառասկատիկ այնքան և
 ծախս.քն լինին , և այս ամենայն վասն մի միայն
 աւուր վտանգի կենաց հեծանողին ։՝”—“Ա՛յս
 մի այդպիսի ձի , Հայր սուրբ . և յայնժամ
 տեսանեիր թէ մինչեւ ուր փախուցեալ հե-
 ռանայի ։՝”—“Յայդ իսկ եկեալ է իմ ,” պա-
 տասխանեցաց Երանելին . և ինձ թուեցաւ. թէ
 արդարեւ ուներ նա զնժոյդ այդպիսի : “Յայդ
 իսկ եկեալ է իմ ,” կրկնեցաց . “Օդապարիկ
 նժոյդ քոյ է ՈՒՄՈՒՄՆ , որ որքան և մեծա-
 գին և բազմահոգ իցէ քեզ այժմ , տակաւին
 օր մի ապրեցուցանէ զհեծեայն , և փրկէ ՚ի
 վտանգ է զկեանս նորա : — Ա՛յս նախանձիր
 ժայնի եղբարց քոց , նոցա ձայն հաղիւ հա-
 սանէ ՚ի տանէ ՚ի տուն : ուսիր , և համբաւ
 քո հարցէ յաշխարհէ յաշխարհ : ” Օ այ-
 պիսիս խօսեցաւ նա , բայց յանկարծ շար

ժիւն աշխոտ ժանաց ՚ի դտանել ինձ զնմոյցն
խոստացեալ՝ գրեթէ առ ոչ ինչ գրեաց ինձ
զիսրատ և զվարդապետութիւն նորա :

Թռողեալ զիս յայս մասածութիւն՝ չոքաւ ՚ի
տուն իւր, զի արտաքոյ խմբի մերոյ բնակէր :
Եւ ՚ի վաղիւ առաւօտուն եկեալ առիս ասաց :
“**Մ**ի պատմութիւն դիտեմ, **Մ**եսը պիր : —
Թռագաւոր զորդի իւր յուսումն դրոց առա-
քեաց ՚ի վանսուրեք, և յետ կատարելապէս
ուսանելոյն՝ Հան զնու ՚ի կրթութիւն աշխարհա-
կան իրողութեանց : **Դ**իրք կարդալն մի ինչ
է, իսկ աշխարհ կարդալն՝ միւս : Համբակն
՚ի Հանդէս եմուս, և ըստ նախատես տնօրէ-
նութեան Հօր իւրոյ՝ շուրջ պատեցին զեռվաւ-
աղքատ Հպարտ ազատորդիք : **Պ**ատահեցաւ
ասի, յաւուր միում, զի թռագաւորացուն
մեր զամենեսին ՚ի բաղանիս Հրաւիրեաց : և
յելանել իւրում անտի՝ չունէր ինչ ՚ի վճար
վարձուն : **Բ**աղանէպանն անծանօթ նմա և
ընկերաց միանգամայն՝ պահանջէր զվարձ վաս-
տակոյն : և նա ասէր, չունիմ արձաթ կամ
ոսկի, այլ գիտութիւն բազում : առ քեզ
“**Ճ**պի մի ՚ի ներբողքոց մեծարանաց : “**Ճ**առ
ինձ ոճառ ոչ շինէ,” ասաց ցիա բաղնէպանն :
“**Հ**ուացար : լոմայ ցնծա՛ : ”

Օ այլացեալ պատանւոյն գրաւէ առ նմա
 զվերաբկուն իշխանական, և գոյ տըտում և
 տարակոյս՝ ի տուն իւր, տժգոհելով զերախ-
 տեաց ծնողին և զվարժապետին, իրը թէ ըն-
 դունայն կորուսին զժամանակ իւր : Խրազեկ
 եղեալ հօր նորա՝ տայ նմա զակին ինչ պատու-
 ական, և ասէ զնել զկանաչի ՚ի պարտիզաց
 քաղաքին : Պարտիզանն ոչ զշարգ ականն
 ճանաչէ, և ոչ կանաչիս քաղէ նմա : Ամո-
 թալից դառնայ պատանին, և վերստին արտունջ
 բառնայ զծնողէն : — ՚ Խ վազիւ անդր առաքէ
 զնա նովին ակամը հանդերձ առ ակնալաճառ
 Արքունեացն, որ ՚ի զարմացումն համբակին՝
 տայ նմա զմեծ գումար գանձուց փոխանակ
 ականն և զնէ զայն : Ուրախ զառնայ պատա-
 նին և պարծի ընդ յաջողուած իւր . և հայր
 նորա մեկնէ նմա զիմաստ մտաց իւրոց : թէ
 “ակն պատուական ուսումնադ քո է, զոր պարտիս
 յարաժամ ՚ի գործ զնել, և առաջի սյնոցիկ՝
 որոց գիտիցին զշարգ նորա : Ապա թէ ոչ
 որսլէս բազեկ պանին ճառ, նոյնալէս և պար-
 տիզանին գոհար՝ միօրինակ անարդք են : ”
 ՚ Խու միայն ուսանել ջանա, ասաց . և ոչ ընաւ
 փոշիմանիս : ” Խրաւ որ այնալէս եղեւ . զի
 յաւուր միում, իրքե սեղանն զուարճանայր,

Ե. Օ ոհքար առ ամենայն աւաշիւն տա-
ղեց հնչեցուցաներ զքսակ ոսկոյն՝ յառաջ
կոչեալ և զիս ինքն, ասաց. “Խօխա, մոյն
տաղ ասա՞ւ”—“Չայն չունիմ,” պատասխանի
ետու նմա լաբադեեալ աչօք, Դարձուցեալ
նորա զբան իւր առ Հայրապետն սուրբ՝ ասաց,
“Ատա լհա յետխաւրդ չոռ օնեմ, Հայր
սուրբ, իմ բէրելաս էս խօխես բան,” Պատաս-
խանեաց նա, թէ անպիտան զոք չուներ ընդ
իւր. այլ զգալի իմն թուացողութեամբ, Եւ ի
վաղուի առաւօտուն կոչեալ զիս զառաջեաւ,
ասաց. “գնա, գրեա զքարոզ մի ՚ի վերայ դա-
տաւորի կիւրակէին, և բեր այսր.” Աւուրք
քառասնորդական պահոցն էին, և ես յօժա-
րակամ յանձնառեալ՝ օդնականութեամբ Աս-
տուածաջունչ սուրբ Գրոց միայն՝ յօրինեցի
զայն: “Յայսմ իսկ երեկոյի առէ, պարտիս
ասել զայդ ՚ի բեմին եկեղեցւոյ, այլ չլա-
խիս:” (Օտար իմն էր այս Հրաման ՚ի Հասա-
քակ սովորութենէ ազգիս մերոյ. այլ զի հրա-
ման Հայրապետի էր, պարտ էր ինձ հնագան-
դել: Հերեկոյեան ժամուն տարան զիս յա-
ւանդատուն եկեղեցւոյն, զգեցուցին շապիկ
պայծառ յոյժ, զուրաք զուսովք իմովք ար-
կին, և քօղ զլանջօք իմովք ձգեալ, զաւե-

տարանն սուրբ ՚ի գիրկս եղին : Յաւարտել
 աղօթիցն առեալ ածին զիս առաջեաւ աթո-
 ռոյ Հայրապետին , զորոյ զաջն Համբուրեցի ,
 առ ՚ի նշան թողոթեան նորա : Այս նորա-
 ձեւ երեսյթ իմ , Հարկիւ մղէր ղնորասիրու-
 թին ժողովրդեանն տեսանել թէ յի՞նչ ելք
 իրացն վճարիցին : Ելի ՚ի սեղան անդը , և
 սկսայ քարոզել : Օ կնի ժաման Հրաւիրե-
 ցայ ՚ի տուն թառումնանց , ուր յետ յարգա-
 նաց և պատուական ընծոյից նոցա՝ որ առաւե-
 լոյր յոյժ քան զտարեկան շահ ձայնից եղ-
 բարց իմոց՝ Հարց ցիս Օ ոՀրաբ , եթէ ուստի
 իցեմ ես , կամ որոյ որդի , Պատասխանեցի
 Երեանցի թաղիդեանց Դաւթի որդին “Ար-
 դարե թաղիդեանց Դաւթի որդի իցես դու ,
 կրկնեաց Օ ոՀրաբ զարմանօք . և յետ զայն
 լսելոյ , սկսաւ պատմել թէ յաւորս :” Հալա-
 ծանաց Մահմադ խան սարդարին Երեանոյ ,
 ոյն ինչ աշխարհ ամենոյն յերկիւղէ բռնաւորին
 թշնամիք ինձ երեեցուցանէին զանձինս , երես
 թեքեցի ՚ի տուն Դաւթի թաղիդեանց . և
 Աննա մայր նորա զաւորս երիս բովանդակ
 յարկեղ իւրում զաղեալ պահեաց զիս , մինչեւ
 դադարեցան խնդրակըն անձին իմոյ , և ապա
 տուեալ ինձ և զծախս ձանապարհի՝ արձա-

կեաց ՚ի բաց՝ զանխուլ ՚ի մարդկանե՛, Բարեբառ-
բութիւն ոչ կորնչի երբէք : Ե՛կ օն սիրելի իւգ-
իմ, առաց, և կալեալ համբուրեաց զիս :
Այնուհետեւ եղէ ես իրրե մի յորդւոց նոցա,
և սաստկացաւ սնամիառութիւն իմ անդը քանե
զարժանն :

Ամօթէ ինձ զանցելոց խօսել, ուր հա-
սակ՝ աստիճան և բազտ՝ թե ՚ի թե տուեալ,
առարկայ առնեին զիս ոչ մլայն խնամոց և
գթութեան Այեծաւորաց իմոց, այլ և յա-
տուկ իմն սիրոյ և խանդաղատանաց սիրուն
Հայուհեաց տեղւոյն : — Աիրպատում առաս-
պելաց զտեղի ունեին անցք Հրաշալոյն, —
եթէ սոսկ անցք կոչել արժան իցէ զանան-
ցանելին ՚ի մտաց իմոց՝ զառաջին հանդիպումնն,
զգրաւորական համապատասխանութիւն, զան-
մեղ կաթոգնութիւն, զաղի արտասուս, ընդ-
ուխտ և երդմունս սիրոյ, զոր վոխադարձ
հաւանութեամբ իրար տուաք և առաք :
Փոքր մի ևս, և ահա փոխէր բովանդակ
վիճակ կենաց իմոց յայլ իմն եղանակ՝ եթէ
չէր հարկին բռնացեալ ՚ի վերայ մեր, և
բաժանեալ մինչ ՚ի սպառ :

Կալ և կապ՝ որպէս և էին, կացին հանգա-
մանք Հայրապետիս մերոյ ընդ ձմեռն ողջոյն :

Վասն զի որպէս և գրեցաքն , արգելեալ էր
 տէրութիւն Ռռուսաց առնել նորա ինչ յիւ-
 ըում սահմանի : Առ այս գրեան բազում
 արար նա առ Աւերսէս Արք եպիսկոպոս Հայոց
 Վրաստանի , ջանալ հորդել զճանապարհ .
 այլ ի գերեւ ելանել և ամենայն ջանից նորա ,
 գրեաց մի անգամ և երկիցս ինքնին դիմել
 գալ ի Շուշի , զի խորհեսցեն թէ զի՞նչ առ-
 նել արժանիցէ վասն ազատութեան Աթոռոյն
 Հայաստանեայց ի ծանր լծոյ անտի պարտուց
 և հարկապահանջութեանց : Գիր ի գիր առա-
 ւելեալ երթայր և գայր հանապազօր , այլ գա-
 լուստ նորա ոչ ժամանէր ցվախճան ամսեան
 Փետրվարի 1822: Անձարացեալ Հայրապե-
 տին գրեաց ղճրաշարական իւր առ Աղքաքսանդր
 Առաջին՝ Կայսրն Ռռուսաց , ի 13 նմին ամսոյ՝
 և ընտրեաց զԱնտօն եպիսկոպոս Մուղնեցի ,
 և զէ ոլիչաննէս վարդապետ Պ ըիմեցի , գնալ
 ի Տփղիս , և յորդորել զԱռհին Աւերսէս ի
 Հնազանդութիւն հրաւիրանաց Հոյրապետին :
 Ի պատրաստիլ նոցա յերթալ , Առաքել
 սարկաւագ Անտոնի եպիսկոպոսի որոյ գրեթէ
 յատուկ էր ողիւ տրանջանաց և տժգոհու-
 թեան , սկսաւ յայտնի գժկամակ լինել ամե-
 նայն ակնարկութեանց եպիսկոպոսի իւրում :

Այս անհամբեր Անտօն եպիսկոպոս՝ Հրամայեաց նմա դադարել և կալ որպէս և կամբը . և զիս ինքն փոխանակ առեալ նորա՝ ել ՚ի Շուշոյ, և եկեալ ՚ի Խնածախ գիւղ Հայոց՝ ՚ի ներքոյ լեռանցն Գանձասարայ՝ ագաւ անդ զայն գիշեր :

Ո՞նդ ճանապարհ լեռնային և անտառախիտ՝ թրթնջակ և ողին ուտելով՝ զի դարուն էր, Հասաք ՚ի Շիրանաքար, զոր Հասարակօրէն Արէլիք Ա անուոյ գիւղ ասէին, ՚ի դաւառին իսաչենոյ . և իջաք ՚ի տան նորուն իսկ մէլիք Ա անուոյ, առն բարեպաշտի և երկիւզածի յիստուծոյ, բայց և Հզօրին ՚ի սպատերազմի : Ի ոկ անուն սորա դողացուցանէր զջջակայ ազգս, մինչեւ անգամ և զլեռնականս Կովկասու : Երկիր նորա առատ էր Հացիւ և մեղերը, երիվարք նորա լնտիրք . և բնակիչք ամենայն Հայք Հզօրք և տիրասէրք յոյժ : Աստի էր մեծանուն Հայ ասողն Ալավերտի, կըր երկոքումբք աչք, այլ լուսաւոր յոյժ երեակայութեամբն, որ ՚ի Հանդիսի ուրիք Յօնուրքաց ՚ի վէճ մտեալ լնդ մեծի Հայքերթողին Քէշիշ օղլի կոչեցելոյ, և ըղձիւ յաղթանակ կանգնելոյ ՚ի վերայ անպարտելի ախոյեանին՝ յետին ամբարշտութեամբ զիողմն էառ զղենի նոցա, որով

՚ Հարկէ ըստ Քմաց բազմականին գեր ՚ի վերոյ հանդիսացաւ Արդւոյն երիցու , որ լատ արժանի անուանակոչութեան իւրում՝ նուագեաց զԵհովահ ՚ի փառս սքանչելոյն , Այս գիւղ ընդ մէջ անկանի Պանձասարայ և Պետկայ վանից , ունի աւերակ ամրոցի մեծի ՚ի գլուխ հիւսիսակողման լերին , ըերէ երիվարս աղնիւս և ցորեան առաստ :

Անցաք ընդ Թարթառ գետ ՚ի Դիղա , գիւղ մեծ մէլիք Յովսեփոյ մէլիք Փրիլոննեան մէլիք Բեկլարեանց . որոյ մի եղբայրն Շամիր անուն Թարդման էր դեռոպանութեան Առուսաց ՚ի Պարս , և յետոյ Տեղակալ կոյսերութեան և Հազարապետ եղեալ՝ սրակեցաւ պէսպէս կոյսերական նշանօք . և միւսն՝ Պաւելթ , որ ընդ Արթանիսի եպիսկոպոսի նուիրակին Խջմիածնի դնացեալ ՚ի Հնդիկս՝ քաղցրութեամբ հագագին աղգի աղգի կատարելութեամբ մսացն , որպէս և աղնուութեամբ արեան՝ մեծանուն հանդիսացաւ . և ամուսնացեալ ընդ այրուոյ ուրումն հարստի՝ առանձնացեալ ընակեցաւ ՚ի Պաքա , Խոկ Թալին և Թալիշ եղբարք նորա՝ դեռ մանկունք էին հասակաւ : Այս գիւղ իրրե չորիւք հրասակսօք յարեմոյն անկանի գետոյն Թար-

թառայ , որ բուռն ընթանալով ընդ զառ ՚ի
վայր դաշտին Խաչենոյ՝ անկանի ՚ի Կուր :
Դիզա է գրիւք դաշտային , ոդ նորա ջերմ ,
բերէ զամենայն ազդս ազդս արմտեաց , և
զորիզ և զբամբակ , ուստի և լի է մոժակօք :

՚Ի գեղջէ աստի ՚Ի իղափայտ անուն կոչի
և մածի հարաւակողման լերինն՝ որ երկայնեալ
յԱրձախայ միագօտի ընթանայ յարեելից
յարեւմուտս՝ և միանայ ընդ Արմաղ լերին .
՚ի ծոցս և ՚ի ծորակս իւր ունելով Հովասուն
դիւղօրէս Հայոց : Երեելին յամենայնի է
Գուլստան . իբրև ինն մղնեօք ՚ի վերուստ
Դիզայ , ուրանօր յամի Տեառն 1815 փակե-
ցաւ դաշն խաղաղութեան ՚ի մէջ Ռուսաց և
Պարսից : Գտաւան բոլանդակ կալուած էր
անխախտ ժառանգութեան Մէլիք Յովսե-
փայ Փրիդոնեան և եղբարց , որ կարէր Հանել
ըստ Հարկին՝ ճիւսորս հինգ հազար ՚ի պատե-
րազմ , ողջ Հայս՝ արիս և քաջամարտիկս :

՚Ի իղայ անկանի ՚ի հիւսիսոյ ՚Ի իղափայտի՝
՚ի տափարակ դաշտավայրի , զմիջով անցանելով
գետակին՝ որ խոխոջուն գայ իջանէ ՚ի Գու-
լստանայ : Յարթառ յարեելից անցանէ ,
և Կուր գետ ՚ի հիւսիսոյ , որոց ամենահամ և
պատուական ձկունք հանապազորդեան զարդք

են սեղանոյ մեծամեծաց և փոքրկանց : Այս
ընտիր և գետառատ դաշտավայր մացառա-
ցեալ մոշայիւթ և այլ և այլ խառնութեղոր
բուսականոք՝ ոչ յայլ պէտս մշակէր՝ քան
թէ յարօտ հօտից և հօրանաց նոցա : Տնիկը
նորա՝ մի միայն . բայց և զորիզ ցորեան և
զայլ արմտիս բերէ : Աշխարհ շերտամոց լինէր,
և արուեստաբան մեծ լեղակի և շաքարի՝
եթէ միտ եդեալ էր բնակէչաց :

Տուն Մէլիք Յովսեփոյ անկանէր ՚ի մի-
ջավայր քաւառաջ ճանապարհին , ընդ որ
երթեւեկս առնէին կարաւանք ՚ի Տփղեաց
յԱրցախ , և ՚ի Հոյոց յԱղուանս : Ենմարթ
էր ումեք անցանել առանց սեղանոյ հիւ-
րասէր տան այսմիկ , առօրին երկու եղինք
և չորս կամ հինգ ոչխարք զենուին անդ՝ ՚ի
կերակուր անցաւորաց , բաց ՚ի ձկանց և յոր-
սոց անտի՝ զորս յ Հողակք ՚ի ժողովրդոցն
անդադար կըէին ՚ի ներքս :

Աստ կացաք զաւուրս երիս , և աստ ուրեմն
ծանուցայ Արժանապատիւ Տիկնոջ Փրիդոնի
Բեկլարեանց , որ թէպէտ և անկարօտ յամե-
նայնի՝ և չորեքին ծառացեալ պայծառացեալ
որդիք իւր շուրջ զիւրեաւ՝ տակաւին առաջին
տիրացու զիս տեսանելով ՚ի տարագ վանա-

կանութեան՝ կոչեաց առ ինքն, և ընդ առաջին տեսն՝ “որքան նման է որդւոյ իմոյ, ահ, Դաւիթ Դաւիթ, որդեալ,” ասաց, և արտասուեաց : Անձանօթ մայրենի խանդաղատանաց նորա՝ և որդւոյն իսկ գլխովին, ասացի, “Եանի, իմ անուն Դաւիթ չէ, այլ Վեսրովը՝ Դաւիթի որդի :” Որք շուրջն կային՝ զծաղու հարան, ժպտաց և Տիկինն ծանրամեստ և խնդրեաց յԱնտօնէ եպիսկոպոսէ թողուլ զիս անդը՝ ցվերադարձ իւր ’ի Տփղեաց : Բայց Արհին՝ որ յիս միայնակ ունէր զտիրացու, զդրագիր, զսպասաւոր, զձիապան, և զբեռուաբարձ անվարձ, հարկին ոչ զիջանէր ի պաղատանս նորա :

Աստի ելաք ՚ի Գանջա, որ ՚ի Հնումն Գանձակ, երբեմն Հայոց՝ և երբեմն Աղուանից կարդացեալ շահաստան . սակա ստեղի փոփոխելոյ դարձադարձ իշխանութեանն ՚ի նմա, Պուղան յամի Տեառն 1088 էառ զայս քաղաք, որ եկաց ՚ի ձեռս նոցա ց1200: Արքանեցաւ յերկրաշարժէ ի 1140: և յաւուրս Խլեսաւէտուալու: Ոչ ուրեք այնքան դժնեայ գտան Պարսիկք տու Հայս՝ քան ՚ի քաղաքի այսմիկ, որ կառուցեալ է ՚ի

վերայ Բերբեր գետոյ, ըուն քաղաքն Քիւ-
լիսաքեանդ կոչեցիալ՝ յարեելից անկանի գե-
տոյս . ունի Եկեղեցի մի, պարապատեալ
պարտիզօք և գեղեցիկ մենարանօք, ուր
նստէր յաջորդ քաղաքիս : Խսկ նոր թաղն
Կորաշէն անուանեալ՝ յարեմտից անկանի
գետոյն, որոյ ընակիչք են ըստ մեծի մասին
գաղթեալքն ՚ի Գեղամայ և ՚ի Առայից . ու-
նին եկեղեցի և սոքա, վաճառանոց պատշա-
ճեալ ինքեան, և բերթ ՚ի Հիւսիսոյ յարեմտից
կողմանէ՝ բայց խարխուլ : Ծրջապատք բեր-
դիս են աւերակիք Հնոյ իրիք քաղաքի, լի
խորախոր գրօք և խորովեօք, զորս փորեցին
Ուուսք և այլք ՚ի խնդիր գանձուցն գողելոց
՚ի նոսա : (Օդ քաղաքիս ջերմ է յոյժ և վեա-
սակար արանց . այլ օգտակար կանանց նոցա .
զի արք ՚ի հասարակի խօսելով՝ վտիտք են
և անդեղեայք . իսկ կանայք ընդ հակառակն՝
առողդք են և գեղեցիկք, որք և երկրորդ
դասին գեղուհեացին Արաստանի առ քեր-
թողս աշխարհին :

“Գառու ջիստան զիւղելի,
Գաննջայ մարալի ,”

որ է ասել

Արաստանեաց աշաղեղն ,
Եւ գանձակայ զովեմ զեղն :

Առատ է Գանձակ՝ ի բերս, այլ նուռն
ընտիր, և տորոնն մի միայն : Ձկունք կու-
րայ և Բերբերայ Հանապազորդեան կերա-
կուր բնակչաց նորա : 'Ի բազմաթիւ հաւուց
վայրենեաց նորա անուանի է Պուրաջ՝ որ
է թռչուն ըստ մեծութեան կաքաւու, սր-
բաթռիչ . գոյն փետրոց նորա խայտաբղէտ
ի հրագոյն, գեղնագոյն և գորշ, ճայն նորա
համեղ, որ նստեալ յոտս ծառոց ողորմադին
կարկաչէ, որ լսողաց ասել թռուի,

Հայ մանի՛ թռութակլար,

Շիշ, քաբար՝ էթակլար .

որ է ասել

Հայ վայ զիս որսացին

Խորովու շամփրեցին ,

վասն զի բաց ՚ի խորովածոյ, որ Համեղագոյնն
է, յու ինչ այլ Հանգերձի միտ սորա : Խա-
շածն անսլիտան է :

Գատի աստ զՄ արգարիտ հօրաքոյր իմ, կին
Հսկոյիրան, որ ամուսնացեալ ընդ Ալաւեր-
տոյ ուրումն Առնջեցւոյ՝ ՚ի կոտայից Արա-
րատեան նահանգին՝ ընդ գաղթականս աշխար-
հին եկեալ բնակէր ՚ի Եղբաշէն Գանձակայ :
Աս երեքտասաներորդ ծնունդ և մի միայն
դուստր հանւոյ իմոյ՝ ապրէր տակաւին ՚ի տալ

ինձ զանուանս և զարարս երկոտասահեսին եղարց իւրոց : Եշաց յոյժ ընդ առաջին տեսն, և համբուրիւք սրբովք ընկալաւ ընդ յարկաւ իւրովլ : «Օ» երունի այր նորա ճշմարիտ պատկեր հեղութեան և բարեպաշտութեան . ունէր միայն գատրիկ՝ ամենն ին գեղեցիկ՝ Վարիամ անուն, նորոգ խօսեցեալ առն . որ ընդ ծնողաց միահաղոյն, և ընդ վաղեմի ծանօթից նախնեաց իմոց, մաքուր ընտանութեամբ և ճշմարիտ բարեկամութեամբ մասիթարեցին զիս անդը քան զոր ինձ գրել հնարին :

Աստ կացեալ զաւուբս ինչ, խորհրդովլ Խաչատրոյ վարդապետի քարծն կոչեցելոյ, (որ յետոյ Արքեպիսկոպոս և նուիրակ Արքոյ Լշմիածնի 'ի Հեղիկո') գրեաց Անտօն եպիսկոպոս թուղթ աղաչանաց առ Արքուն Արք եպիսկոպոս, և ինքն ելեալ անտի խաղաց գնաց 'ի Ծամբոր : Որ 'ի հնումն քաղաք շներալ 'ի Ծարիթայ որդւոյ Պարուխայ . իսկ այժմ գեօղ ինչ Հայոց՝ յարեմտից կողմանէ գետոյն : 'Ի մէջ աւերակացն կառուցեալ, յորոց միջի ամսղածայր տնկիւ աշտարակ իմն, իբր 189 կանդնոց բարձրութեամբ՝ զոր Անելք Անդրսոն երկրի անուաննեն :

Ո՞նդ ոլորտապտղյատ սանդուզս 'Նորա 'ի ներ-
քուստ ՚ի վեր ելեալ՝ յանդիման աչաց տեսի
զԱռուր գետ 'ի հիւսիսոյ , զԳանձակ յարեւ-
լից՝ 8 փարսախօք տարակաց 'ի նմանէ . ըդ
Ըամշադին՝ 'ի հարաւոյ , և զամենայն Տաշ —
բատաֆին մինչեւ 'ի կամուրջն Առղանելուայ :

Աստ նստէր Գէռըդ ոմն յազգէս Հայոց ,
պաշտօնատար Առւրհարանի թղթատարութեան
տէրութիւն Առուսաց , առ որում և մեք զի-
շերօթս արարաք :

Յարուցեալ ընդ առաւօտն՝ փոխեցաք զըն-
թացս մեր դէպ 'ի հարաւ յարեւմտից , փո-
խանակ ուղիղ ընդ արեւմուտս ընթանալոյ . և
եկաք ՚ի Ըամշադին , որ այն ինքնէ Ըամշողդէ —
նախնեաց՝ 'ի Տաշիրն գաւառի , որ 'ի հարա-
ւոյ ունի զԳեղամ գաւառ Ախոնեաց : 'ի
հիւսիսոյ զԸամքոր , յարեւելից զԱրցախ և
զԱռուտիս . իսկ յարեւմտից զզաշտն Գագայ , —
որ այժմ Պաղախ ասիւ Ըամշուլէ երեքնետ
կոչե ՚ի լեզուն Արաց . 'ի հնումն կոչէր
Օրբէթ . անառիկ ամրոց շինեալ 'ի Քարթ-
լոսէ եղբօրէն Հոյկայ՝ նախահօր Ազգի մե-
րում , 'ի վերայ Արմաղ լերին : Այժմ նըս-
տէր անդ Գարիգոր անթեմ եղիսկոպոս ՚ի նմին
գեղջէ . որ 'ի սակա կերակրելոյ զզօրս Առու-

սաց , և վասն պէսպէս օդնականութեանցն մատուցելոց նոցա յառման Պահնձակայ և այլոց՝ ասպետացեալ շքով՝ ի Ապյսերէ նոցա , թոշակաւն որ յարքունուստ՝ շատանայր : Կացաք առ սմա զաւուրս հնգետասան ակնկալեալ գալստեան անձին , կամ պատասխանեոյ գրութեանն Աերսիսի : Այլ ոչ զայս գտեալ և ոչ զայն ելաք և ընդ ճանապարհ Աողանը լուսյ և եկաք 'ի Տփղիս , քուղաք կառուցեալ ի ձորսմիջի , ընդ որ Կուր գետ անցանէ 'ի Հիւսիսոյ ընդ հարաւ : Յարելից է լեառն 'Օ՛մինդայ . իսկ յարելից՝ Հալուաբարութերենք : Ունի բերթուերկու , մի 'ի Հալուաբար վիմաշէն և գեղեցիկ , յորում է եկեղեցին Ա արդանուշոյ՝ գտեր մեծին Ա արդանայ մերոյ , որ վասն գողտրութեանն կոչեցաւ Ըուշան , և բանտն : Խոկ միւսն է ի Տափիթաղ՝ մերձ 'ի ջերմուկս նորա : Եկեղեցիք աղքիս մերոյ՝ 15 , յորոց ի մին վանք անուանեալ՝ ի վերոյ գետոյն , նստէր Աերսէս Առաջնորդ : Եկեղեցիք Ա բաց և իսուսացութն , և պատականացն՝ մի : Տափիթաղ յարեմտից կայ Կուր գետոյ , որ են ապարանք կուսակալին , գատարանք Առուսաց , վաճառանցն , և բաղմութիւն տանց Հայոց . զի և

անուննե Հայերէն ցուցանե զբնակչաց զինչութիւն + 1200 տունք Հայոց են առա, իսկ Արացի՝ 400:— Մերձ առ վանքն մեր կառոյց Կերսէս Արքեպիսկոպոս զԱհերսիսեանն անուանեալ Աւումնարան՝ քառալեզու դպրութեանց, և ճաղկեցոյց 'ի նմա զուսումնականութիւնն յոյժ յոյժ + Յառաջ քան Կերսէս, Հայք առ հասարակ խօսէին վրացերէն, և չէր՝ որ գիտէր զլեզու Ազգին. իսկ յետ գնալոյ նորա անգր, և ճաղկեցուցանելոյ զուսումն Ազգին՝ նաև Վիրք ուսան խօսել Հայերէն, Հալուաբար յարեւելից կայ Կուր գետոյ, ունի իւր բերթ և վաճառանոց 'ի բարձրաւանդակին. տունք Հայոց են անդ 175, ըստ մեծի մասին գաղթականք յԱյրարատեան նահանգէ:— Արտաքոյ սորա է գերեզմանաւուն Հայոց, և 'ի նմա եկեղեցի քարաշէն, ՚իներքոյ Հալուաբարայ առ եղերք Կուրայ՝ է Կուկիա, որոյ ընակիչք են Վիրք և Գերմանացիք, որք և ունին զեկեղեցի գեղեցիկ:

Առուսք յաւէտ նենգութեամբ և ու խոտազանցութեամբք առին զայս քաղաք՝ ապաստանեալն 'ի սլաշտապանութիւն իւրեանց, քան զինու զօրութեամբ իւրեանց, Աւստի և հետ զհետէ ջանացան անհետ առնել զաղղատոհմ

Նախնի իշխանութեան նորա : Աալան զամնայն
արքայաղունս Արաց , և տոեալ տարան
զնոսա ՚ի խորին Ոչուսաստան . ուր հոգեմաշ
կորեան նորա : Ազէքսանդրոս որդի Ներակ-
լեայ փախուցեալ անկաւ ՚ի Պարս , ամուսնա-
ցաւ ընդ դստեր ԱԷլիք Աահակայ Նայկա-
զունւոյ յԵրեան , և ծնաւ ՚ի նմանէ զորդի մի՝
զոր յետ առնլոյ Ոչուսաց զԵրեան , անա-
գորոյն խժութեամբ կորզեալ ՚ի գրկաց անտի-
մօրն՝ տարան յԵւրոպա Ոչուսիոյ : Խոկ Ա-
զէքսանդրոս Նայր նորա երթեալ յԱտր-
պատականս , և յարքայէն Պարսից ընկալեալ
զ Կասորովա՝ աւան մեծ ՚ի Աաղամաս , բնակի
անդանօր՝ ասլրեալ եկամտօք գեղջն : Բարձին
մինչ ՚ի սպառ և զկաթուզիկոսութիւն Արաց ,
և այժմ հովուէ զեկեղեցի նոցա Լքքարխն
առաքեալ ՚ի սիւնհոգոսէն Ոչուսաց :

Պատուականագոյնք են ջերմուկիք քաղա-
քիս , երկոքին ևս ստացուածք Նայոց . յորոց
մին երեելի և Հոյակոտ բաղանիք , խմբեալ
յամնեայն աւուր յամնեայն բաղմութենէ՝ մա-
նաւանդ ՚ի գեղուհեաց քաղաքին , առ ՚ի մե-
ծագոյն օգուտ գիմացն գեղեցկութեան՝ ա-
նուանի մշկիքէց համամ , զի պատկանի Տան
Անիշկարեանց , որ և զմշկութեան քա-

զաքիս զպատիւ ունին ՚ի հնուստ հետէ :

՚ Ե վերջին ժամանակս նուսպութեան թագաւորութեանն Արաստանի՝ փոխանակ զոգի աղպասիրութեան բորբոքելոյ ՚ի մլրջի խրեանց, որով և յոտին կանգնելոյ զկործանեալ տէ, բութիւնն, սկսան իշխանք նոցա՝ որպէս սնա և ՚ի մերոցն իսկ ոմանք, գնոց գնել ՚ի թագաւորէ խրեանց զգիւզօրէս աշխարհին բնակչոք նոցա, և հետ զհետէ խանգարելով զօրինս և զիրտւունս քրիստոնէաբար առի և արոյ, վատթարեցան վարել զնոսոտ տռ հասարակ՝ ՚ի գերուի ստրկութեան հաճոյից խրեանց Այս աղգ գերեցց գնելոց համարիմ զամենայն գիւղօրէս Արաց, և որ առաւել ցաւելին է, նաև ոմանք ՚ի Հայաբնակացն, որոց տեարքն՝ Պարնիք անուսնին, և Տիրուհիք՝ Աղջիկ Պարսնք, Պարսնք կամ աղջիկ Պարսնք իրաւունս համարին ունել զանձինս, զընտանիս, զորդիս և զըստացուածս գիւղականցց իւրեանց՝ իրբեւ սեպհական ժառանց գուիս անձանցց, Հանեն զհարսն ՚ի ծոցոյ փեսային, և վաճառաեն ում և կամիցինն, Այսին պէս զորդիս ՚ի ծնողաց հատանենն, Կերին՝ զորինքեանք Շուրտ անուանենն, ոչ կարէ քահանայ կամ վանական լինել, եթէ ոչ նախ

ազատեսցի դրամովք : Եթէ Պարսն ոք սիրիցէ գկոյս ոք , կամ աղջեկ Պարսն՝ զպատանի ոք ՚ի Շուբալց անտի , չիք ինչ որ խափան արկանէ սիրոյն : Եթէ ոք զնոյն ցանկութիւն ցանկացեալ , և կամ իցի գնել կամ վարձել՝ կարէ , եթէ յղփացեալ իցեն կողմանքն . զի չիք ամօթ ազնուականաց աշխարհին՝ կաւատանալ դրամոց : Խսկ Տէրութիւն Ոչուսաց , որ առաւել անմոտադիր քան զսոսա . և ստրկութեան ազգի իւրեանց ջատագով , ՚ի Հարկէ՝ փոյթ անգամ չառնու այսպիսի անկարգուե , ուստի և երկիրն Հեծէ անողորմ . փառս մատուցանելով յաւէտ Տէրութեան Պարսից՝ քան Քրիստոնէիցս այսցիկ գերչաց :

Օդ տեղւոյն լեռնային է . ուստի մաքուր և առողջարար : Բնակիչք ՚նորա Հայք և Վիրք առ այլազգիս միահաղոյի Գուռջիս անուանեալ , հռչակաւոր են 'ի գեղեցկութիւնս մարմնոց իւրեանց . իրանք ՚նոցա ՚նոճօրէն աճեալք , հերքն թուխ , աչկունքն արեգակունք , մորթք սպիտակուկարմիր . միջկունքն բարակ , և լեղուք անուշախօսք՝ յօրինեն զնոսա ցանկալիս ամենայն աղդաց . մանաւանդ Պարսից և (Կամանեան Մեծամեծաց . ուստի և 'ի վտանգի կան միշտ կեանք ՚նոցա ,

թէ յառաջ քան՝ և թէ զկնի Տէրուե Ուուսաց։
 Վասն զի լէ զկիւք, որք առ ոչինչ գրեն զա-
 մենայն երկիւղ՝ յափշտակեալ ամի ամի աղջ-
 կունս և պատանիս ՚ի նոցանէ՝ կայտառս, տանին
 վաճառեն մեծագնի ՚ի թէհըրան, ՚ի Առատանդ-
 նուալօլիս և ՚ի շրջակայս նոցա։ Գողտրականք
 են յոյժ, և նազարնոյթք կանայք նոցա։ որք
 թէպէտե ճարտարք յուսմունս գրոց և ՚ի
 պէսպէս արուեստս կանացի ձեռակերտաց,
 սակայն և այնպէս՝ անձնասէրք են յոյժ, և գե-
 ղոյ իւրեանց անխնոյ խնամատարք։ Գրեա-
 թէ յամենայն աւուր ՚ի ջերմուկսն լուանին։
 որ ՚ի սակս խառնուրդս ինչ ունելոյ հանքայ-
 ին բաղադրութեանց՝ մեծապէս օգտէ փափ-
 կութեան մարմնոյ և պայծառութեան դիմաց
 Վարշամակ ՚ի գլուխ գնեն և ճակատանոց աս-
 ղարուր, զոր աստ կօտ կամքամբարա կապեն-
 բասպնդաւ, քօզ ՚ի վերուստ ծաւալ ցծունկ-
 արկաներով երեսանին բաց։ Պատմուճան՝
 փորանկեալ, և գօտի խնձորակապ զմիջովքն՝
 ծայրակախ։

Վնապարծք են յոյժ, և զարարս դուզնա-
 քեայս իւրեանց գովութեամբ յօդս ամբառ-
 նան, զըրօրինակ պատահեցաւ ՚ի 1795 յաւու-
 րս արշաւանոց ՚ի էրիմ Խանին՝ Գոգոյ

ուրումն Շաշեանց ասել ցմի ՚ի զօրոց նորա ,
“նա դու ք նա դուր ՚՝ այսինքն՝ Խ՞նչ է , ի՞նչ
է՝ “զոր ցայսվայր գովութեամբ հրատարակեն՚ի
լուր ամենայն մարդկան , յասելն “Բարաբալոն
Շաշունց Պազի , Քրաբին ասից՝ նա դուր .
նա դուր ՚”

Բայց առաւել քանի դառաւելն զարդասէրը
են առհասարակ կանայք և մանկանի նոցա ,
միանգամայն . և տուեալ դանձինս արրեցու-
թեան և խրախճանաց : Խցէ ոք ՚ի նոցանէ
՚ի վերջին կէտ անանկութեան կամ աղքատու-
թեան , տակաւին ջանաց որով և հնարին ին-
քեան՝ ունիլ պատրաստի զսաք մի ազնիւ զգես-
տուց , որով պՃնին յաւուրս Աիւրակէից կամ
արքունի Պրազնիկաց , որ այնինքն է՝ տօնից
և տարեգլխոց յաղթութեանց նոցա . յերա-
մակս յերամակս բաժանին , և առեալ ինքեանց
զինի , գաւաթ , թմբուկս , և զորս միանգամ
գտանեն ազգս ազգս նուադարանաց՝ ելանեն ՚ի
դրօսանս դաշտաց . ուտեն և ըմպեն , խա-
զան և խնդան , անզգայ յամենայն հոգոց :
Ոչ տեսի ես քաղաքութափին քան զոյս :
Այնքան զուարձաբանք են բնակիչք սորտ
մինչ ՚ի ինձիու հեղձուցանել զունինդիրս
բանից իւրեանց : Փոխանակ ՚ի կիր սունելոյ

զերգ և Շաբականացն Աստուածայնոց 'ի մար-
մաւոր խրախմանս՝ յօրինեալ են առ այն
պէսպէս նուազս ծաղրալիս, յորոց մին առ
տիկ դինւոյն այսպէս սկսանի :

Ու էքը և Տէկ դարձաք
Տկահան Հարչարվեցաք.
Հալվաբը դարի դուսին,
Ցուինք մշակի ուսին,
Ու ու սուբը Տկառը,
Լուլէդ բաց մեղ ուղուբմիս :

Երդմունք նոցտ Հասարակօրէն անմեղա-
դոյնք են քան զայլ ամենայն նահանգաց և
գաւառացն Հայաստանի, զի են՝ “քու դէ-
գին ումը ։” “Ապրիքոյ մայր ։” “Խս ապրիմ ՝”
և այլ այսպիսիք :

Տփղիս քաղաք չունի բերս բաւական բլ-
նակչաց իւրոց, այգեստանք նորա բերեն խա-
ղող ազնիւ, և միրգս ազգի ազգիս, այլ ՚ի Կա-
խէթայ օր ըստ օրէ մտանեն այսր մերձ Հա-
րիւրաւոր սայլք դինւոյ՝ բարձեալք ՚ի տիկս
գոմշոց : ’Ի Ալիանայ՝ նոյնաչափ թուով
սայլք ձկանց, որոց ծախք մեծ են յոյժ ՚ի
քաղաքի այսմիկ : Մատակարարէ և Կուր
գետ զանազան տեսակս համեղ ձկանց : Ըստ
կաւ ասի, թէ Գալիանոս բժիշկի մտեալ եր-
բեմն և ՚ի Տփղիս, և տեսեալ զանըաւ առանուէ

ձկանցն՝ ասաց, “Այս տեղին շայելան արուեստի
տի իմում է” Բայց իբրև ետես և զմեծ եւ-
կամուլտ գինւոյ՝ ասաց, “Թէ սոքա ինքնին
դամին զդեղ իւրեանց է” և մեկնեցաւ, Չեք
ժողովուրդ ՚ի համօրէն Հայաստան այնքան
ձկնելեր և գինախում, որքան սոքա են, Շի-
րակուան մատուցանէ զիւր ցորեան . Երեան՝
զազ, բրինձ, բամբակ, և չորապտուզս ամե-
նատեսակն . իսկ Խուսաստան՝ շաքար մա-
քուր և զամբնայն ձեռակերտ վաճառս իւր :
Արուեստն սկսանէ թ ծաղկել աստ, այլ դեռ
աղայ գոլով ’ի խանձարը իսյր . և եռ հաղիւ
թէ կարացի տեսանել զերեսս նորա :

Առջորութիւն իմն կայր ՚ի քաղաքի այսմիկ
վնասակար յոյժ, զոր վերացոյց Տեր ՚Աեր-
սէս . զի յաւուրս կիւրակէից յինսնց ժո-
ղովեալ պատանեաց թաղից թաղից քաղա-
քին՝ մարտնչէին ընդ միմեանս, փայտեայ
սուսերօք, մահակօք, պարսատեօք և այլ
սոցին նման գործեօք՝ ուստի թող թէ կէս
քաղաքին միականի՝ պինջատ և գոնջատ լի-
նէր, այլ և մահունք ևս ՚ի տեղւոջն պա-
տահէին, Այժմ փոխանակ այսը՝ արշաւա-
քան Հաստատեցաւ, և պատանիք մեր ոչ
սակաւ հմտութիւնս ցուցանէին յայնմիկ :

* Աերսէս Արքի սլիսկոպոս սիրէր յոյժ զլունա-
տօն Եղալիսկոպոս . ուստի և մահրմաբար վա-
րէր ընդ նմա , այն ինչ այլք ամենայն ըզ-
գողանի հարկանէին ՚ի նմանեն , Անդ յառա-
ջին անոռութեան նորա յառաջ մատոյց և զիս
ինքն ՚ի համբոյը աջոյ սրբոյ : “Ով է սա .”
եհարց յեա , և Անտոն Եղալիսկոպոս պատաս-
խանեաց՝ “ծառայ և որդի Տէրութեան ձերոյ .
Վեսրովը , Գրագրին հաւասացեալ :” Տէր
* Աերսէս ընդ անուն Գրագրին քստմնեցաւ .
զի ոչ սիրէր զեա . բայց յաւելու Անտոնի
Հօր զինէն բանս բարիս կոչեաց զիս վե-
րատին , և ասէ , “Հա Վեսրովը լուեալ է
իմ զքէն . այլ տարաբաղտ գտար մինչ ցարդ .
զի ամենայն աշակերտակիցք քո արժանացան
շնորհաց մերոց . իսկ դու ոչ :” Պատասխա-
նի արարի , “Աեցցէ միշտ Տէրութիւն ձեր , և
ես վաշխիւ հանդերձ առից զիմն :” — “Դեռ
նոյն ես՝ Վեսրովը , որ ինչ պէս և տեսի ըզ-
քեզ . և ոչ փոխեցար ՚ի բնութեան քութ :
Աիրեմ զանմեղ համարձակախօսութիւն քո
զայդ . և յաւետ զվաշխելդ . ջանա դու :”
Արկին գիմեցի ՚ի համբոյը աջոյ նորա և մեկ-
նեցայ ՚ի խուց մեր :

Անագան ուրեմն պատրաստեցաւ . Աերսէս

Երբեալիսկոպոս ծանր կարտանեաւ, յորումէին
Տէր Ատեփաննոս Ա իճօ՝ այր ծերունի և
զուարթախօս, Տէր Յարութիւն Ալամ-
դարեան, Տէր Երայի, Յովակիմ Կարապե-
տեան, Եղբօրորդի իւր, Առակետ, և Գէորգ
Քեռորդի. Գարըիէլ, երկոտասան կայսիկ
ձիաւորօք, ջորեպանօք և ստորին ծառայ-
իւք, Խնքն ընդ Արհւոյն Անտօնի ել 'ի
կառա քառաձիգ երիվարաց, և մեք 'ի ձի աշ-
տանակեալ, ելաք ընդ նմա մինչեւ 'ի Շուշի,
արքայավայիլ իմն մեծափառութեամբ զու-
ղին 'ի դարձ հատանելով:

Այլ զՃանապարհայն անխսոհեմ ինչ արա-
րի ես, որով 'ի մի հարուած յերկիր 'ի վայր
տասլալեցի մինչ 'ի սպառ՝ ոչ եթէ զշահ, այլ
և զմայր գումար շնորհաց ազդային Բարե-
րարին, Խրբե հասաք 'ի Շամքոր, և վաս-
տակութեկ կարաւանն 'ի քուն քաղցրուել լինէր,
եմուտ յիս զիկան անանդորրութեան, Խոր-
հերով նորօրինակ պաշտօն ինչ հարկանել
արինակի խոնարհութեան և հեղութեան Քը-
րիստոսի հետեղին, յիս յանկուցի նախ
զմիտս Գէորգայ Առահարանապետի՝ պատ-
րաստել ինձ ձիս երկու, և ապա գնացեալ
առ տասնապետ կայսիկ ձիաւորացն՝ ասացի

ընկերել ինձ զմի յիւրոցն ՚ի Գանճակ ։ զի
 կարի սարիպաւ հասանել պարտ էր ինձ անդր:
 Ժամն անագանեալ էր, և ԱւՀիք մեր նըն-
 ջեալ էին. վասն որոյ ոչ համարձակեցաւ տառ-
 նապետն ստուգել զիսկութիւն բանին . ուս-
 տի և քան զիս յիմարար՝ զիջաւ յիմար
 խնդրանաց իմրց : Ելուք զմլու ժամ ու զիշե-
 րոյն ընդ ճանասլարհն՝ միանդամենթ զնացեալ,
 և կէս քուն՝ կէս արթուն՝ յառաջ վարեցեալ,
 հազար և մի տուոյտանօք հազիւ հաստք ՚ի քա-
 ղաքն ընդ ուսանալ առաւօտուն : Գնամկամ
 առաջի խաչառու թ Ա տրդապետի . և զանա-
 զան երեսանի շինելով՝ ծանր և լուրջ բարբա-
 րիս : “Դեռ անհոգ կաս , Հոյր . այնինչ յե-
 րեկ զօրի բոլոր և սերեկեան զիշերս բովանդակ
 ՚ի ձի աշտանակես լ զամբ” — “Բարի գաս , ”
 ասաց նա, “բայց ընդ Էր” — “Ո նդ Էր, — Եր-
 ես Առաջնորդ զայ + ասացի . և իս յառա-
 ջագոյն առաքեցայ աւետիս տալ քաղաքիս,
 և քեզ՝ զի թափօրիւ ելջեք ընդ յառաջնորաւ”
 Փորձանք այն եղեւ , զի և սա Հաւատա-
 ցեալ ինձ՝ գրեաց առ Առուս քաղաքա-
 պետ Գանճակայ , և հրամայեաց հնչեցու-
 ցանել զզանգական : Եւ ահա ամենայն բազ-
 մութիւն քաղաքին , զինուորութիւն բերթին,

և ուխտ Եշեղիցւոյն ՚ի թափօր բոլորեցան , և
ելին բազում մղոնք ընդ յառաջ նորա :
Մեծագոյն տարաբաղաութիւն այն էր , զի
և Արհին Եերսէս ՚ի մտի եղեալ էր բոլորու-
վին լոելեայն մտանել ՚ի բազաքս այս , և ընդ
տեսանել բազմութեան առաջաւորաց վշտա-
ցաւ յոյժ յոյժ : — Յանդիմանեաց զիսա-
շատուր վարդապետ , և ՚նա զինե արկ զվը-
նասն արքունի : Խսկ ես՝ որ խոնջեալ և վաս-
տակեալ յոյժ , այլ գեռ ևս իրբե բարւոյ
իմն ակնկալ՝ փոխսիցի զձին , և ելի անձին
վոյելել զվարձն յիմարաց : Բարեացապարտ
Արհին Կնաօհ՝ որ հեծեալ յերիվար գոյր ,
նշմարեալ զիս ՚ի հեռուստ՝ արշաւեաց առ-
իս . և ասէ . “Փախիր Մեսրովը , փախիր .
յաւիտեան կորեար : Օ ի Հոգեոր Տէր
բարկացեալ է յոյժ ընդ արարս քո : ” Ոչ
կարեմ ճիշդ ստորագրել աստանոր , թէ որ-
պէս փախուցեալ՝ թողի զձին ՚ի կամն իւր ,
և թաքուցեալ զօղիցայ ընդ մացառովք թը-
զենեաց Եորաշինին : Երկեայ գնալ ՚ի տուն
հօրաքեռ իմոյ , զի մի անդր գտցեն զիս խնդ-
րակք . և զօր մի և գիշեր բոլանդակ ահահար
և գողահար մնացի . մինչեւ անազան ուրեմն
քաղցն նեղեաց զիս , և ասացի ՚ի միտս իմ : “Ե-

թէ իմ խառնեալ իցէ զքաղաքս ու ոչ երբէք
պատեհ տայ Ա եհին զինէն խորհելոյ . ըստէք
ապա սովամահ կորնչեցիմ : Բայց և այնպէս՝
գեռ ևս վարդապետ է նա , և ո՛ գիտէ թէ՝ և
խիստ ոմնու — Վաց ուր կաս , ” ասացի . և խորհե-
լով զանփառասէք բնութենէ նորա՝ ննջե-
ցոյ : Օ երկուս տիւս անսուաղ կացի ’ի փա-
խստի և ՚ի թաքստի իմում . և յաւուրն ե-
րորդի՝ այնինչ բարեսցապարտ Անտօն Եղիս-
կոպոս նախաձաշէք ընդ Ամա՝ յանկարծ
յանդիման ելի , և ասացի , “ Ա եղայ , այլ
ևս ոչ արարից այնպէս : ” Գաթութեամբ բազ-
մաւ ընկալաւ զիս՝ և ասաց , “ Ի մէջ Պարսից և
պարսկաշունչ վառասիրաց ելով , մանուկդու ,
խարիս և զիս զոք ՚ի նոցանէ Համարել . այլ
փառք վանականաց խոնարհութի է : ” — “ Բարի
է . ” ասելով ՚ի միտս իմ , զլուխ իջուցի նմա՝
և մեկնեցայ յուտել :

Խրբե Հասաք ’ի մերձակայս Շուշլոյ ,
խորհելով թէ մի գուցէ խելագարեցիմ վե-
րստին զխելագարութիւն Պանձակոյ՝ կա-
մովին մշոնաւ միով հետեակս կարաւանին գը-
նացի , և իրբե Հասի անդը՝ գեռ նոր զգրունս
ասպինչականացն բաղիսէին ՚ի մուտ . և սկսայ
մռմռանալ ՚ի քիմս իմ , թէ՝ Եւ այդ քիզ

բաւական է : ”

Եղ ՚ի տան թառումնանց , յորժամ Մահանուն բարեկարգ իչ նորա՝ Մարկս , ՚ի վերջին կէտ կենացն խոնարհեալ Հեծէր ՚ի պատճառս ընդերկար և ցաւազ ին Հիւանդուե ոտնուռուցի : Ա երջինք իշխանիս այսորիկ՝ բարի , առ ՚ի խրատ զկնեաց արդարեւ պատմեալք , Ա ամենզի ՚ի ծանրանալ Հիւանդուեթեան նորա՝ թեթև անոյր ոգին սրբասուն ՚ի վերիլս երկնից , Առջէր կացու ցանէր առ և մահճօք իւրովք զարս գրագէտս , թախանձէր ՚ի նոցանէ ընթեռնուլ ՚ի լուր զաւետարան փրկութեան իւրոյ : Ատէպ զաշս ՚ի վեր ամբարձեալ՝ աղաղակէր , “Տէր Քիսուս .” ստէպ աղօթս առնէր , ստէպ և զանձն յանձն առնոյր ՚ի կամս Արարչն նորա : Խրբեւ յայանի եղեն նմա Հաճոյքն Աստուծոյ ՚ի բառնալ զնայրիպէն կենդանեաց , Հրամայեաց իւրոցն աժել զառաջեաւ զմու ըհակ պարտուց Լջմիածնի՝ իրբեւ 4000 ոսկւոց , կրկնապատիկ քան զայն՝ և մուբհականի այլեայլ մարդկան , և զուգուկիս կրկին պարկօք մեծամեծօք : Ամբարձզոտն ուռուցեալ , և եդ ՚ի վերայ նոցա , և ասէ . “Անալիտան գիրդ , ապաքինեաց եթէ կարող ինչ իցես , դու չաստուած մոլորու-

թեան աշխարհի . ո՞չ—ո՞չ . այս ամենայն արա-
տաքոյ է մտացածին զօրութեան քոյ , և
Աստուծոյ իմոյ օրհնեալ եղեցին կամք՝ 'ի
Հարկանելն և 'ի բժշկելն զիս : " Ապա ա-
ռեալ գնէ իւրով ձեռօք զմուրհակ Խջմի-
ածնի ՚ի սկտեղ , և հրամայէ տանել ՚նուի-
քել Հայրապետին . այնուհետեւ առնէ և ընդ-
մուրհակացն միահազոյն բերելոց . և երկուս
պարկս սսկւոցն հրամայէ ողորմութիւն բա-
ժանել աղքատաց : Օ արհուրի Օ որհաբ
եղբայր ՚նորա՝ յարարս ՚նորա , այլ յանդե-
մանի ՚ի ՚նմանէ քաղցրութեամբ խրատուց ՚նո-
րա : Եւ այսպէս Յիսուսի Քրիստոսի աւան-
դեալ զինքն և զտուն իւր՝ շնչէ զվերջն
զիւր շունչ :

Ու էթ տեսեալ իմ Հանդէս յուղար-
կաւորութեան փառաւորագոյն քան զիշխա-
նիս այսորիկ : Օ այրագոյն Ամթուղիկոսն
Հայոց՝ գրեթէ ամենայն մայրաքաղաքացի
աթքեսլիսկոսպոսօք , եպիսկոպոսօք , առաջ-
նորդօք , վարդապետօք , քահանայիւր , սար-
կաւագօք , դպրօք և ամենայն ուխտիւք Եւ-
կեղեցւոյն՝ 'ի միոյ կողմանէ : Խշխանք Աշ-
ուանից և բովանդակ զինուորութիւնիք Առու-
սաց սկաղկեացք , սեադրօչք , սեանշանք ,

աեաձիք , շրջուն զինու , և զարդու իւրեանց՝
ի միւսոյ կողմանէ : Ամբոխ հասարակութեան
յամնեայն աղգաց զիրերօք խոնեալք , այլ
ոչ առ անց կարգի . և ո արդեօք ստորագրել
կարէ յայսքան ամաց հետէ զարարս և
զարտասուս ընտանեաց և ճրագաց նորա ,
թուուէր իմն թէ Արտաշէս մեռանէր՝ Անձն
Արշակունի , և միայն Հաւատն անարատ ըղ-
դէմ ունէր Համօրինակ հետեանացն : Ես Աս-
տուծոյ խնամոց տամ' զօրհաս նորա ՚ի ժամա-
նակին , ուր ամենայն աղգային միսիթարու-
թիւնք ներկայ գտան անդ . ապա թէ ոչ
ո գիտէ թէ զբ՞նչ ինչ զհետ գոյին կոկծա-
նաց և կրից սիրելեաց և սիրողաց նորա ,

Հոգեսէր որքան և էին ընակիչք աշխար-
հին , և հոգեոր Տեառն իւրեանց սրտի մտօք
մեծարուք , տակաւին քառապատիկ աւելի
պատիւ եղին Անձին Կերսեսի : Ան' զի
Համբաւ աղգասիրութեան նորա և մեծամեծ
գործոցն՝ մլէր զամենայն աղդ իւր յայցելու-
թիւն և յօրհնութիւնն ՚ի նմանէ , և երկ-
րորդ՝ զի պսակեալ էր ՚ի Այսերէ , և բա-
րեկամ Երմալովի կուսակալին յայսկոյս Առկ-
կասու եղեալ նահանգաց : Թա՞ղ զհոգեորա-
կանս ամենոյն քաղաքաց և դաւառաց աշ-

խարհին , և մարմնաւոր իշխանք նոցա և զօրութիւնք խոնարհեցան առաջի նորա , մինչեւ իշխան Մատաթովլ Հայ , և Մէհդի Խան՝ փոխ կուսակալ Աղուանից ես :

Մարտիրոս Արքեպիսկոպոս Աիւնեաց եկեղական կարձեալ ՚ի Ծուշի երեւելերօք հանդերձ * Մեծ էր սէր և մտերմութիւն նորա ընդ Տեառն Երսիսի . և յաւուր միում այնինչ ՚ի տան թառումնանց յառաջ մատեայ ՚ի համբոյր աջոյ նորա՝ ակեն յանդիման Արհոյն Հայոց Արաստանեայց , կարի պետանոք իմն ասաց նա ցՄարտիրոս հոգեոր Տէր Աիւնեաց , “Երբեմ ժողովեաց կուտեաց Հոգեոր Տէր մեր զայսքան անպիտան որեար , յորոց և ոչ մին երեխ գոլ օգտակար մեզ : ”— Օ արմանոք իմն դարձոյց առնա Մարտիրոս Արքեպիսկոպոս , “Տեսանես զմանուկդ զայդ : ” մատամբացի ցուցանելով նմա զիս : Յցուեցան իսկոյն թաւ յօնքն , և խրոխտ յիս ականել սկսաւ . որպէս թէ զմտաւ ածելով զանկատարութիւն իմ ՚ի Գանձակ . և ընդ Տեսուչն ՚ի վեր հծծեաց—“Ե՞՞—“Ո՛չ ենչ , Տէր . փորձեցեր զգա երբէք . քննեան և տես թէ քանի պիտանի լինի գա Տէրութեան քում ։” Հաղիւ իմն պարզեալ զխոժոռու-

թիւն հայեցուածոցն կոչեաց զիս առ ինքնէ
և առանց անոյշ ինչ յառաջաբանի կամ
առարկութեան յանձնեաց ինձ զեռնդակն զոր
զըեր, և ասաց, “Պհան զրեան, տեսից !”

Ուղարկութեամբ հազար անդամ՝ տւելի հաճու-
թեամբ ընդունելի զհրաւեր նախաճաշուն,
և բիւր անդամ՝ ախորժանօք ուտելի քան ըզ
ծղծամ և զկացկամ ճաշակումն իւր, սակայն
և այնպէս՝ առի, նստայ յանդիման, զաչս
յաւետ ՚ի սեղանն կըթելով՝ քան ՚ի թղթին
օրինակեցի և մատուցի իսկոյն, զի մի գու-
ցէ անմասն ելից ՚ի սեղանոյին, ընկալաւ՝ ե-
տես, և վառ ք բարերար շնորհացն **Աստուծոյ**.
զի հաւանեցաւ ևս :

“ԵԵՐՍԻՍԻ” հաւան գործն մեծ իմն հա-
մարեր տղգ մեր, և մարդարեութիւնս բաղումս
մարդարեանայր ինձ. ուստի և ես քանի կա-
րացի՝ ջանացայ. և շոյեցայ միայն զետիսանձ
եղբարց և զմախանս **Յովսէփայ** վարդապետի
Աստեղանեան, որ յետոյ՝ կոչեցաւ “Ա եհա-
պետեան !”

Առ որդի էր **Վատթեռոսի Տէր Վարու-**
քեան. **Ասրբեցւոյ**, որ ՚ի **Զորագիւղ Երեւ-**
անյ. Հայը ՚նորա՝ կատեղան՝ ոյսինքն այդե-
պան, գըեթէ ըովանդակ տամբ իւրով՝ կեայր

'ի ներքոյ շնորհաց տան հօր իմոյ : Յօհակատ
զուրկ էր 'ի գիտութենէ գրոց՝ այլ հմուտ
գոլով ամենայն հնարից և հայթայթանաց՝
վերացաւ 'ի ստորին սպասաւորութենէ 'ի
գանձապետութիւն Աթոռոյն, և իրօք յինքն
կորզեաց զամենայն իշխանութիւն, մինչեւ
Տեղապահին զանուն ևեթ թողուլ :

Աս՝ յաւէտ ՚ի սակս գժտութեան իրիք
եղելոյ ընդ մէջ իւր և գրադիր Յովհաննու
եպիսկոպոսի, (թէպէտե հաղար անդամի խռո-
վեալք և հաշտեալք ընդ միմեանս՝) տակաւին
ընդ ակամք հայէր առ իս : և որքան կարէր՝
՚ի կարեորացն ստէպ զրկէր զիս : Այլ թող
բարիք առն միայն յիշեսցին . չարեաց օրէ-
նակ շատ կան :

Խսկ Հայրապետն ամենայն Հայոց և Տէր
Կերակս եպիսկոպոս, յետ կալոյ անդ զա-
միսս ինչ, և բազմիցս խորհելոյ և խօսելոյ
ընդ իշխանս աշխարհին՝ 'ի վերայ անկեալ
վիճակի Աթոռոյն Հայաստանեայց, ելին 'ի
Շուշոյ յամի Տեառն 1822, և դնացին 'ի
Գանձասաար . որ էր 'ի ժամանակին մայրա-
քաղաքական աթոռ Առաջնորդին Ազուանից:
Աարգիս Արք եպիսկոպոս, երբեմն կաթու-
ղիկոս անուանեալ, իսկ այժմ մայրաքաղա-

Քացի՝ սիրով ընկալաւ զնոսա , և պահեաց զաւուրս հնդետասան : Հայրապետն իւրովք հանդերձ էջ ՚ի վանս : իսկ ՚Եւրուէս Արքեպիսկոպոս իւրովք հանդերձ՝ վրան եհար ՚ի ձորաբաշխն՝ արտաքոյ վանացն :

Խրբե պատրաստէր կարաւանն մեր , և Կաթուղիկոսն բազմութեամբ այրուծից ընդ ամրոցն ՚ի վայր իջանէր , ՚Եւրուէս Արքեպիսկոպոս և ես տակաւին գրէաք : Ճամ պատեհ առեալ գանձապետին՝ առնու զերիվար իմ , և տայ ոյլում : Խրբե ելաք , Արհին Հայոց Արքաստանեայց պատրաստ եզիս զերիվար իւր՝ և հեծաւ , իսկ ես մնացի անձիւ Ո՛իանգամ և երկիցս զմտաւ ածի չհետեել կարաւանին , բայց յետոյ ընդ տիղմն հետեակ ընթացեալ՝ հասի . իրբեւ ետես զիս Արհին մեծ , այսը անդը հայեցեալ՝ կոչեաց զեղքօրոքի իւր զՅովակիմ Ասպետ , հրամայեաց իջանել յերիվարէն , հեծուցանել զիս յայն , և ինքեան հետի գնալ : ՞Ո այն տեսեալ գանձապետին՝ գալարեցան աղիքն . մատոյց առաջի նորա զմի յետակաց Հայրապետին՝ այլ նա ոչ հեծաւ՝ լանն որոյ բազում աղաչանօք հաճեցոց զիս ինքն հեծանել՝ ինա , և տալ Յովակիմայ զձի իւր , Երիվարս ոսկեսար՝ ընծայ էր Ապ-

գիս արք եպիսկոպոսի Աղուանից առ ծայրագոյն Հայրապետ ամենային Հայոց ։ Քուռակ երեքամբ ան Հրաշէկ նարինի գունով՝ գեղազալտուշաճ ։ բարձրահասակ, և անարատ գըլիսովին, Աշխոյքք՝ սերին և սննդեանն համեմատ : — Ես միայն Համարձակեցայ Հեծանելին նա, բայց և ի Հեծանելը իմում, ոչ պակաս քան զ՛իատաքէն Արձրունի յօդապարկին Տիրանայ՝ երջանիկ զանձն համարեցայ բան զամենայն հեծեալը սրբագումար կարաւանին : Ո՞րս յառաջուստ՝ խածանէր, զ՞րս 'ի յետուստ՝ աքացէր, ի սանձելս՝ ոստնոյը, և յարշաւանսն զկայ առնուլ ոչ դիտէր, վասն որոյ Հրամայեցայ մեկուսի վարել . և ես զայդ իսկ կամէի, զի և ի ձիալարժութեան փորձ հանդիսացայց : Ուր և հասանէի՝ զգոյշինէի աւետաւոր չլինել զգալստենէ կարաւանին սրբոյ. բայց և այնպէս զառաջին աւետչեայ ի մեզը և մածուն, կամ ի սեր և կողի՝ սիրով ընդունէի, և յագ ապրէի՝ այնինչ դանդաղք եղբարց իմոց սովալլուկ ձգուտային ի վերայ ձիոց : Համեմատութեամբ նոցա՝ ես աշխարհ տեսեալ ոք էի, և հանգամանաց բնութեան և բարուց բնակչացն ծանօթ : Առանձնաշնորհութիւնք արդարեւ,

որ եթէ լսորհրդով և հանձարով՝ ի գործ եղեալ՝ շահէին ինձ զջշմարիտ մեծութիւնս : Բայց աւանդ . որ միշտ յումպէտս և ՚ի խաղս տղայականս վարեցի :

Աստանօր հրամանաւ ։ Երբսիսի շրջեցայ ՚ի մերձակայք վանորայս և օրինակեցի զամբնայն նախնի արձանագրութիւնս աշխարհին , դըտեալս յորմունս եկեղեցեաց , ՚ի խաչաքարս , և ՚ի վէմն ապառաժից . ոկսեալ ՚ի Գանձասարայ մինչեւ ՚ի Հաղբատ և ՚ի Ասմահին . զորս և մատուցի նմա , տռ իս պահելով զօրինակս նոյա՝ որք յետոյ կորեան :

Աստի եկաք ՚ի Շառաքար , կամ լաւ ես Շառիրանաքար՝ կալուած Ուկեք Վանուոյ , կացաք անդ զաւուրս ութեաւ , զորոյ և զընծայս պատարագացն ընկալեալ՝ երիվարս գեղեցիկս և զոսկիս՝ ընդ Եղեցէ առաքեալն , և ընդ Գետավանքն , որ ՚ի հնումն Գետակայ վանք , (զորոյ զտեղին բաղմօք շիոթէ Ատորագիր Հայաստանին) եկաք ՚ի Գիւլստան , կալուած իշխանութեան Ուկեք Յովսէ փայ Տեառն Դիղոյ : Աստի Գարձեալ գրեան արարին հարք մեր առ զուռն Կայսերութեան Առուսաց , վասն թոյլ տալոյ ինքեանց , զի ժողովութեան զիամաւոր նուելըս Ազգին՝ յա-

դասութիւն պարտուց Հասարակաց Աթոռոյ
սրբութեան նոցա : Ապցին ամսօրեայ ժա-
մանակաւ , և զի ձմեռն ՚ի վերայ Հասանէր,
յուղի անկեալ եկին ՚ի վանս Հաղբատայ ,
զի ՚ի Տփղիս մոաներ ոչ ներհցան :

Հաղբատ անկանէր յաշխարհին Անորդեաց
կամ Աւտէացւոց , սահմանակից Լոռոյ՝ յա-
րեելից Հարաւոյ նորա . շինեալ յաւուրս Ո-
զորմածին Աշոտայ : Երկեղեցին մեծ սուրբ
Խոաչ կոչեցեալ՝ ունի կաթուղիկէս երկուս ,
իսկ Համազապն՝ ՚ի Հիւսիսոյ նորա , բերէ զՃե-
դահլճի մեծի՝ քան եկեղեցւոյ : Պարիսպ
վանացս էր քայքայեալ , և ընակութիւնք
՚ի նմա անբաւականք բազմութեան մերոյ :
Վասն որոյ մի զմիով խճողեալ ձմերեցաք
անդանօր , որպէս և կարացաքն :

Խորհրդով Այիրսեսի Արքեպիսկոպոսի ա-
ժան յլջմածնէ բեռինք երեքինք՝ թղթոց ,
յորոց թէպէտե Հաւաքել մարթ էր աղգի
աղղի ծանօթութիւնս Հնութեանց , սակայն
տարարախտապէս յոյլ իմն զբաղեալ գո-
յով ՚ի ժամանակին՝ անտես արարաւ : Բն-
թեռնուաք զնոսա , որքան Հարե անցի և կա-
րեոր լինէր ՚ի մէնջ . յորս գտանէաք զթիւ և
զհնչիւն դրամոց՝ պահէտաք , և յորս ոչ՝ ժո-

ղովեալ ՚ի հուր՝ յաճիւն դատէաբ : Հանցանել աւուրց ինչ և ՚ի տաղտկանալ գործոյն ՚ի վերայ սլարապասէը որենոյօ՝ բազում այն էր, զի և առանց ինչ ՚ի նմանշմարելոց յանպիտանիս դատէաք : Եւ ոյսովէս զսակաւս ՚ի սակաւուցն ընտրելով, զվերաբերեալո դրամական մտից Աթոռոյն, զայլովք բոլորեքումք զաւս կափուցանէաբ : Ոչ կարեմ զսպել աստանօր զմտածութիւնն . թէ դիցուք թէ միք մանեկունք կամ մանեկամիտք ամենեւքին՝ անփոյթ արարաբ զայնքան հինաւուրց թղթովք, ուստի մարթ էր հաւաքել վճիտ անցս ժամանակացն և փարթամացուցանել զսպատմութիւն և զգիսութիւնս ազգին, Տեաւն Կերսեսի խմասնոյ և ազգասիրի զի եղեարդեօք, որ թոյլ ետ այնմ : — Հապահովի նստեալ, խորհել և խօսել կարեմք՝ զոր ինչ միտք տուն տան, բայց եթէ այր մի միայն, և ՚ի հազար վարանս տարակուսանաց զբաղեցուք, որպէս նայն էր յայնժամ, բարւոք ևս առնեմք՝ եթէ լուսոց ւք :

Օայսու ժամանակաւ մեռաւ մի ՚ի մերոցն՝ Անսաս վարդապետ Արքիկ կոչեցեալ, և ՚ի խնդիր լինել մեր զդադաղէ՝ թէ ՚ի վանան, և թէ ՚ի գեղջ՝ որ սլարունակէը տունս իրբե-

150. ոչ գտաք : Եւ ՚ի հարցանել մերում
ցերեց տեղւոյն Ատեփանոս , թէ “ապա զի-
արդ թաղեր ՚ստ զմեռեալս իւր ,” պատաս-
խանեաց . թէ “Ահա քառասուն ամբ են , զի
քահանայեմ աստ , և ոչ զոք թաղեցի ՚ի մե-
ծամեծաց մինչեւ ՚ի փոքրկունսւ” Եթէ իրաւ
լցէ այս , ցուցանէ քեզ զպատուականութիւն
օդոյ տեղւոյն :

Խստիւ արգելեալ էր Հայոց բնակելոց
՚ի Արաստան , ելանել գալ ՚ի տեսութիւն
Հայրապետի իւրեանց , Ուստի դատարկ և
միայնակ կերանս վարեալ անդանօր , մոռա-
ցաք գրեան թէ զաշլարհ ամենայն , և սկսաք
զիրեարս բանբասել :

Յովսէփ վարդապետ Ա եհապետեան՝ զան-
ձապետ , եկեալ ՚ի սենեակ մեր՝ ուր էին Ան-
տօն և Գրադիր Յովհաննէս եպիսկոպոսունք ,
Առաքել Ատրկաւագաւ Հանդերձ՝ սկսաւ
բանս առնուլ ՚ի բերան զԱրհւոյն Կերսի-
սէ , յօդս ՚ի վեր ամբառնալ զարարս հա-
ւատարմութեան իւրոյ՝ որով լոկ զտուն հօր
իւրոյ փարթամացուցեալ , և ախ և աւաղ
կարդալ ՚ի վերայ բաղտի իւրոյ : Արհիք
մեր ունկն դնէին միայն . իսկ ես ՚ի ծունկն
յարուցեալ՝ բացի և եղի առաջինորա՝ զոր

ինչ և գիտեի զառն թերութեանց : Եւ առ
 ե գլուխ կորացոյց առ ամօթոյ , և յելանել
 իւրում յոդւոց եհան և հառաչեաց : Ու-
 նեակ Արհեոյն Կերսիսի հուալ անկանէր բը-
 նակութեան մերում , ուստի լուեալ զասու-
 թիւն երկուց 'ի մէնջ՝ կոչեաց առաջեաւ ,
 յանդիմանեաց , և ասէ , “խաղաղ կացէք”
 ’ի վաղուի առաւօտուն եկն Գէորգ առ իս
 մինչ աղօթէի յեկեղեցւոջն . և ասէ , “Հայր
 սուրբն կոչէ զքերգ” : Խրբե յանդիման ելի ,
 լուռ և եթ տուեալ նորա ինձ զթուղթ մի ,
 և ասաց գնալ կալ 'ի զբան եկեղեցւոյն . և 'ի
 թղթին գրեալ էր , “Որ միանդամ տեսանէք
 աղօթս արարէք առ Աստուած տալ ինձ զհո-
 գի խոնարհութեան և հնազանդութեան : ”
 Քոի , գնացի , կացի և կատարեցի զպատուէր
 նորա : Բայց իրբե ելին ժամաւորքն , ծալեցի
 զթուղթ 'ի գտակածալի , և լնդ վանսն ար-
 տաքս ելեալ ձիւնակոյս լնթացայ զճանա-
 պարհն 'ի փախուստ : Հասին զկեի Հովակիլմ ,
 Գէորգ և Գարբիլ ներսիսեանք , և գրե-
 թէ բռնի յետս դարձուցին , և կացուցին ա-
 ռաջի զիս Արհեոյն : Աստ զառաջին ժպիտ
 տեսի ես 'ի գէմն նորա , որով առ իս դարձու-
 ցեալ զերեսն՝ ասաց , “Որ անարգէ զիսրաս”

անմիտ է :” Եթես անգրէն դարձուցի , “Ո՞ր այսուհետեւ առանց վարձուց ծառայէ քեզ , և առանց քննութեան պատժի՝ անմիտ է : —

Աերսէս Արքեպիսկոպոս վերադառնայր ի Տփղիս , և կամէր տանել զիս ընդ իւր՝ որպէս զէշ ’ի Հարսանիս . ’ի Հարկէ , ձրի գլուք վասն իւր : ԱՅԼ չգիտեմ բաղտաւորապէս իմն՝ թէ տարաբաղտութեամբ պատահեալ , ի խաղոլ իմում ուրագաւ հիւսանց՝ որք տաշէին զտախտակս վասն շնութեան իւրիք . Հարի ուժգին ’ի կոճ ձախոյ ոտին իմոյ , և անկոյ ոգեսպառ : Եկին եղբարք և յանձանձեցին , և վէրն մնաց ցամիստերկու : ”Աերսէս Արքեպիսկոպոս գնաց , և պատուէր թող զէնի՝ զի երբ առողջացայց , առաքեսցեն զիս ՚ի Տփղիս ԱՅ թէ գնացի : —

Աշուն էր , և քանիք ’ի սարկաւագաց Հըրաման տռին գնալ յԵրեան ’ի տեսութիւն ընտանեաց : ԱՅ կարացի Հանգութել վայելից ինքնիշխան ճանապարհորդութեան , մանաւանդ թէ և տեսութեան խանդակաթ և կարօտ ընտանեաց : իմ իսկ եռացին խանդաղանք , ուստի ընդգէմ ամենայն ամոք Համոզանաց Հալց և եզրարցն ՚ի Հազրատ , որպէս և ընդգէմ ամենայն խոստմուց և ակնկալու-

թեանց Արհեոյն Կերսիսի, ժտի առեալ
զՀրաման և ընկերացայ նոցա : Գրիգոր
Աարկաւագ Տեղապահի, Առաքել Աարկա-
ւագ Անտօնի, Գրիգոր Շահուն մականու-
անեալ՝ Աարկաւագ Գանձապետ Գրիգոր
Արքեպիսկոպոսի . և ես ընդ նոսա հանդերձ
ոմամբք յաշխարհական եղբարց՝ ելաք 'ի
Հաղբատայ յամսեան Աեպտեմբերի ութ'ն. և
ընդ ձորն ահագին մղեալ՝ անցաք ընդ կամուրջ
գետոյն՝ յ(Օ)ձուն գիւղ, յանդիման Աանահն-
ւոյ վանաց, ուստի էր Խմաստասէրն մեր .
և անդ ագաք զայն գիշեր : —

(Օձուն ՚ի հիւսիսոյ անկանի Աանահնւոյ՝
յայնկոյս ձորոյն մ. ծի ՚ի տափարակ քարու-
դաշտի շրջապատեալ ծնիւք լերանց և բլրոց:
Պղնձահանքն Երկայնաբազուկ Արդութեանց՝
անկանի առ երի սորա . զոր կոռիւ գործեն
ընակիչք մերձակայ գիւղօրէից՝ առ ՚ի պէտա
Կայսերութեան Ոտուսաց՝ հաս իմն որոշելով
գերապանձ Գերգաստանին Արդութեանց :
Երկիրն լեռնային է, զի բազուկ ինչ Արա-
գածոյն աղիսաղիսեալ ընդ կցորդս Գեղամա-
կան լերանց յարեմոից յարեւլս ընթանայ,
կատարս անուսնիս ամբառնալով ՚ի տեղիս
տեղիս, զԱրմաղ, զԳիղափոյտ . զԿոյէն,

զ՞անձասար , զՇուշի , ցղաշտն ԱՌուղաւնայ և ՚ի Շօռով Աղուանից : Ե է այս դօտի անհամար պտղատու և անպտուղ ծառօք : Ե ինի ՚ի նմա տանձ , խաղող , կաղին , շաղղանակ , և այլն : Օդ նորա պարզ , առողջաբար և պահեցողական իոկ է . զի գտանին յայրս և յանձաւս երկրին մարմինք բազմօրեայ մեռելոց՝ անփուտ և անապական մնացեալք՝ որպէս զմոմեայ , զորոց պատմեցից յետ դարձիս ՚ի Հնդկաց ՚ի Հայս :

Արպէս թռչունք ՚ի վանդակէ գերծուցեալ , ոչ ոք իմանայր թէ զբնչ իցէ ճշմարիտ աղատութիւն : Ա ին ասէր , “ Բան լիցի եթէ վերստին դարձ արարից ՚ի Հաղբատ , կամ յեղբայրութիւն նորա : ” Ա յլ ոմն ասէր , “ Աւնիմ արդ դրամս բաւական տնդոյ միոյ և տան , երթեալ կին ածից և զկինցաշ վարիցից աշխատութեամբ և սիրով : ” Ա յլ ոմն թէ “ Ես ՚ի Աւան դիմեցից : ” և այլ ոմն թէ “ յիշրուսաղէմ , կամ յայլուր : ” Պատկառելի տարազուք սրբութեանց մոռեալ յՇօճուն : յամենեցունց պատիւ և մե ծարանս ընկալաք : բայց իրեւ տիրեաց տղայութիւնն ՚ի վերայ Գարիդոր տեղապահէի առաջին եղեւ , որ սափեաց զմօրուս իւր , և զգեցաւ զձեւ աշխարհիկ :

“ԵՐԵՒԱՎԵՍ ԱՌԱՔԵԼ ԱՌԱՋՈՆԻ սափրեաց զպառ-
կառանս երեսաց իւրոց , և զի շունէր զգեստ
նորաձեւ , արձակեաց զգօտի իւր , և շուրջ
զգլիսովն պատառեաց՝ ասելով “ԱՌԵՂԱՅ լինե-
լոց էիս ամիբայ եղայ : “ԳՐԻԳՈՐ Շ ահուն նոյն
եկաց յոր ինչ էրն . իսկ ես՝ թէպէտն զաքեմ
վանականութեանս հանի և զաշխարհիկ զգե-
ցայ , այլ բարեբախտապէս դեռ ալիք չե էին
ինձ զի գերձուի :

Աւրախ և ցնծում յարուցեալ յառաւո-
տուց ճանապարհ արարաք ընդ Լոռէ ՚ի
Բամբակաձոր՝ ընդ խիստ և խոշոր ելեէջս
լերանց և անապաց նոցա . և ՚ի մժան զի-
շերոյ հաղիւ հասաք ՚ի Պ արաքիլիսա : “(Օ՞ն
՚ի տուն Աւագերիցուն ,” դոչեաց Ամիրայ մեր,
կարծելով թէ որպէս Աւագերէցն (Օձունայ
դթութեամբ ընկալաւ զմեզ ընդ հիւրասէր
յարկաւ իւրով , նոյն առնէր և Ախման Բամ-
բակաձորայ . բոյց ոչ այնպէս . իբրև ել
պաշտօնեայն խաչապատկ՝ և ետես զկարաւան
մեր խառնուրդ իմն խօրականաց՝ եհարց , “ովլ
իցէք ,” Պատասխանեաց Գրիգոր՝ “Մ իաբանք
սրբոյ Լշմիածնի , վեհապետեանք , կաթողի-
կոսականք ,” և այլ հաղաք այսպիսի մեծա-
նշան բառեր : Խսկ նորաքաղցրութեամբ ա-

սացեալ “թէ ես զայսպիսի խառնակ միաբանութիւնն ոչ քետ տեսի,” Հրամայեաց հօտաղի իւ բում վանատուք լինել մեզ ’ի գոմ անդը անասնոց իւրոց :

Մինչ սոքա այսպէս մեծաբանէին, և նա այնքան յարդ զնէր բարբանջանացն, վարեալ զձին իմ առ Գրիգոր գանձապետին՝ մատամբացի աղդ արարի մեկուսի կալ, և իսկոյն հանեւալ զվերարկուն վանականութեան իմոյ և զդտակն՝ զգեցայ զինե՚ի վերայ ձիոյն, և գոչելով առ ընկերն “Տերացու Գրիգոր մարտիրոս այսրէն, այսրէն .” հուպ մատեայ առ սրբազն քահանայն, և որքան կարեռը էր՝ քաղաքականութեամբ՝ ասա վանականութեամբ՝ ողջունեցի զնա, զիոյն արար և Գրիգոր առ լուսով ընդաղօտ ճրադին, որ զարդիս արտաքս երեր աղախին տանուտեառնն : Խըրելաւ նշմարեաց զմեզ, “Ահա սոքա են տիրացուք, ասաց մեծաւ պատուով առ տարաւ զմեզ ’ի տուն : և հրամայեաց լնթրիս առնել մեզ՝ աւելի քան զոր ակն ունեաք :

Գրիգոր Տեղապահի և Առաքել Անտոնի զօրէն չաստուածարարձ իշոյն Հռովմայ քաջ ծանեան զյարդ իւրիանց, բայց իրբելնթրիքն պատրաստեցան, և մեր գինի հիւ-

բասիրին ջեռոյց զսառնութիւն սիրոյ՝ պատմեցաք նմա զոր ինչ միանդամ անցք անցեալ էին : Առաքեաց Տէր Ախոն կոչել զնոսա , որք թէպէտե զհանդերձ վահականութեանցն լման ունէին , բայց այնպի զմորուաց ծիլ ընդ ծնօտս պատուաստել ոչ կարէին՝ զամօթի հարան հրէշանի հանդիուանալ ՚ի տես գերդաստանին , և 'ի ժաղը կանանոյն : Փոքը մի խոժոռեալ ևս էին . ու ատի և զհացն առաքեալ ՚ի զոմանդը՝ ոչ կերին : Ոչ ոք ևս հոգացաւ ինչ լիոդ այն . և զքաղց 'ի քսակաց կրեցին :

Այնպի աղաղեցաւ յոյժ քիթ Կրիգորի տեղապահեան , որ գանձու փարթամադոյն էր , միտնդամ և երկիցս գրգիռ ՚ի մէջ մատուցանէր , զի թերես կոռւեսցուք փոքը ինչ գուազանաշարժութեամբ հանդերձ : — Բայց որովհետեւ աշխարհական եղբարք , մեօք վայելեալ ՚ի սեղան Տէր Ախոնի , և ակնունէին նոյնպէս վայելել և 'ի սեղան քահանային չամամլուայ՝ ամենեքին ՚ի մեր կողմն էին : “ Աւասիլ ոսկի մի՝ առ երեկոյս , ” ասաց նա . զնեցից ինձ ոչխարս և մարիս , և զՃենճեր խորովածին յիրկիսս ՚ի վեր գալարեցուցից այսօր՝ ՚ի հիճուկս ձեր : ” “ Ո՞եք և առանց ոսկւոյ

արարաք, և արասցուք .” պատասխանեաց
 Շահումն : Առաքել ընդ քեզ լինի, չէ,
 Հարցի ցնա : “ Ի Հարկէ .” պատասխանեցին
 երկոքին ’ի միասին : Հայնժամամ դարձու-
 ցեալ զդէմս իմ դէալ յողջշն կարուանն՝ և ա-
 սացի , “ Բարու ոք ևս . զի Համարին Համամ-
 լու.ք , եթէ դոքա երկոքեան յանցաւոր.ք ի-
 ցեն . և վասն այնորիկ գերծեալ ’ի մօրուաց՝
 ’ի բաց Հալածեալք . և այդ մեզ մասնաւանդ
 պատիւ է՝ եղբար.ք : ” “ Ա՛ չար . եթէ նոքա
 չհամարիցեն ևս՝ տակաւին դու բաւական ես.
 ուրեմն ’ի միասին լիցու.ք , ուր և կալ Հա-
 սանիցէ մեզ .” ասաց Գրիգոր : “ Ոչ բնաւ.
 զի դու Հարուստ ես , և ոսկւով պարծիս . ե-
 թէ տաս զոսկիու առ ’ի գին Հասարակաց
 պիտոյիցն՝ բարի է . իսկ թէ՞չ ուր և երթամք՝
 զդոյն քարոզեմք : Օ ի՞նչ ասէ.ք առ այս՝ եղ-
 բարք : ” Ամեսեքին զամէնն ասացին . և Գրիգոր
 Հան զոսկին , Հաւատաց Մկրտչի կիւրդեան , և
 ազա ընկերեցաւ մեզ : Եւ այսպէս յօթեվանէ
 յօթեվան , մանաւանդ ’ի մերձակայս Հայրե-
 նեաց , որքան առաւել Հասանէաք ծանօթից՝
 այնքան և շատ կեղեքէաք մեզ կաշուս ’ի
 մօրուաթափ եղբօրէն :

Հասեալ ’ի Համամլու զիւլ մէծ , ’ի

ստորոտս հիւ սիսային ինչ բազեկի Արագած լեռն՝ հուպ ի կիրճ նորա՝ որ հանէ յԱպարան, այլ ևս ոչ ծանրացաք քահանային, թէպէտե ընդ լուր հասանելոյ մերոյ անդր՝ եկին հեղահագին ի տեսութիւն մեր. և շատ ևս դարմացաւ, զի թողեալ զտուն իւր՝ օթս արարեալ էաք 'ի տան Պարսկ Առուուոյ Գաւորդեան: — Ոսկին Գրիգորի առաւել սլատրաստեաց մեղ խորված, խարշած, և այլ համազամս կերակրոց՝ քան զոր մեք ծախել կարէաք. ուստի և քահանային հանդերձ բազմութեամբ գեղականաց հրաւիրեցան անդանօր, և զրեթէ զգեշերն բովանդակ կերին, արբին, երգեցին և խնդացին:

Հարուցեալ, տինա թէ յոտն ելեալ, զի հազիւ թէ ննջեցաք, հեծաք յերիվարս մեր, որ պարզակեացք քան զմեղ՝ բանաւորագոյն ևս քան զմեղ ցուցան՝ 'ի հանել զիսոնջ յանձանց իւրեանց. այնինչ մեք սընտեաց և խեղկատակութեանց ծախեցաք զգիշերն ողջոյն: Եւ ընդ ահազին ընդ կիրճն 'ի վեր մղեալ ընդ ձիւն և յեղուրջ՝ հազիւ հազ շրջեցաք յԱպարանքն Այրարատայ, ուր 'ի զոլորշուտ և 'ի ձիւնաբաց մարման գլս ինչ եղերաց Քասազ դետոյ էջս արա-

բերալ՝ կերաք զնախաճաշ մեր 'ի պախ մսոյ
և պանրոյ, և Հանդեաք 'ի բուն : — Հաղիւ
ուրեմն կտրացին աշխարհական, այս և աշ-
խարհատես և առաւել քան զմեղ փորձա-
ռու և իմաստուն եղբարք մեր զարթու-
ցանել զմեղ 'ի չուն . զի չէն մերձաւոր չէր
ուրեք ընդ ձիւնապատ ամսային . և վրանք
խաշնարածաց վաղու իսկ 'ի ձմերոց անդր իւ-
րեանց ծալէին : Ա ասնորոյ զարժանին մեղ
պատուհաս զանմեղ անասնովք մերովք ար-
կեալ՝ անագորոյն խժութեամբ արշաւեցաք
մինչ յԱշտարակ, իւրաքանչիւր ոք 'ի տունու
ծանօթից մերոց և աղզականաց : Ե՞արթ էր
մեղ՝ գէթ մղնաւ մլով դուլ տալ անասնաց
մերոց՝ եթէ էջո արարեալ էաք 'ի Ե՞ուղնի-
բայց այնպի այն վանք էր, և մեք Հրէշտնի
սմանք, կէս վանականք և կէս աշխարհականք,
մանաւանդ թէ և յերկուց իսկ արտաքոյ՝
երկեաք թէ մի գուցէ զի՞ամբակաճորոյն նորո-
դեսցուք մեղ դիպուած, և փոխանակ յաբ-
դանաց՝ անարգութիւն յանձինս մեր բերի-
ցուք :

Ժամ զկիսով գիշերոյն անցեալ, գլխովին
ցրտատար և վաստակեալ՝ Հաղիւ թէ կարա-
ցաք զարթուցանել զընտանիս և զբարեկամս

մեր՝ի կամոյ և յակամոյ լնդունելութիւն
մեր՝ որոց ապաստան թողեալ զանասունս և
զոր ինչ մեր անել կարէաք, հազիւ թէ
կարացաք ունել զծերպ ինչ՝ Քառակուսոյն,
զոր հասարակօրէն Քուռօի անուանեն, (Ե-
դեալ 'ի վերայ թօների և ստուար վերմա-
կաւ պարապատեալ, 'ի վերուստ ձգելով
սփռոց պատուական, և 'ի վերայ կասլերտ
կեղտակալ.) և հալել լուժանել 'ի քուն :

Մեզ նոր առաւօտ լինէք 'ի վազուի՛ մի-
ջօրէն Աշտարակայ, այնինչ նոր զարթու-
ցեալ տեսաք արս, կանայս և մանկաբ՝ տանց
'ի տունս գրոհել 'ի զինին ինքնակամանկեալ
հրեշտակացս մեզ, Ամենեքին զարմանային լնդ
Գրիգոր և Առաքել, զի թողին զկարգն փա-
ռաւորիչ անձանց իւրեանց, և զգեցան զանկար-
գութիւն, “Գրղ փոխէ ասէին, զվիճակ մարդ-
կան . բոյց ոչ երբէք 'ի փառաց յանալ-
գութիւն, որոց նախ քան զստացութիւն՝
զբարւոք կիրառութիւնն ուսանէին 4” Ամօթ
և խայտառակութիւն մեր մեծէք յոյժ, բոյց
ես ծալեալ ծրարեցի դիմ տարադ աշխար-
հական և խոր 'ի պահեստի եղեալ առ Պա-
րոն Կարապետի Մէլիք Մկրտչան՝ Քեռ-
ւոյ իմոյ՝ զգեցոյ զփառաւորագոյն սար վա-

նական դգեստուց իմոց , և նստայ որպէս
զիթուրք 'ի դատաստան՝ ծանր և լուրջ : Ե՛ն
առ իս և Տիրացու Գրիգոր Շահունն կո-
չեցեալ , և այնինչ խորհեաք և խօսեաք զե-
րից մերոց 'ի սուրբ Խջմիածին՝ բազմու-
թիւն նորասիրաց աւանին զեղան անդանօր .
և իրրե տեսին զմեզ յայն տարազ զուսպ և
պարկեշտ կրօնաւորութեան՝ ասացին : “Ո՞՛ի
Գրիգոր էր՝ և մի Գրիգոր պիտի մեզ . մի
Մեսրովը էր՝ և մի Մեսրովը պիտի մեզ .—
սուրբ եղիցի ձեզ Հաց Խջմիածնայ՝ որպէս
զձեր մարց կաթնն ։” Գրիգոր պարզ և ան-
խռով դիմոք ընկալաւ դշաղթանակ մարտի
անփոփոխ ճգնութեաննն . իսկ ես շառագու-
նեցայ . զի խիզձ նեղէր զիս : Ա ասնորոյ
ոչ կարացի բանալ զբերան իմ , այն ինչ
Գրիգոր աստուածաբանել ոկսաւ առաջի նոցա
զզօրութիւն աղի և Հացի Աթոռոյն մեծի .
մեր զանմուռաց ճանաչումն յարգանաց նոցա ,
և զոր կոչեցաքն կալ՝ անփոփոխ մտօք և ան-
դրդիւն Հաւատովլք : Մարդարէացաւ այն ,
և վասն այլակերպեալ եղբարց մերոց . դողայը
անտփառութիւն իմ առաջի ճարպիկ լեզուի
նորա , թէ մի՛ գուցէ և զիս ՚ի նոստ խառ-
նեցէ . բայց գոհութիւն եղբայրական սիրոյն՝

որ ծածկեաց զրազմութիւնն մեղացս :

Խակ Գյորիգոր սուփրեալ, որ ամենայն ոսկեալ իւրով, որպէս և անուամբ տեղապահին ոչ կարաց մազ մի ՚ի ծնօտին ցուցանել, և ոչ զասուլիս հասարակաց լոեցոցանել՝ ստիպէր զամենեսին ՚ի չու յայն իսկ օր. բայց եղբարքն արդարապէս ողորմելով անասնոցն՝ ոչ հաւանեցան : Ե՛լ նա զգիշեքայն : և խոյս ետ ամօթահար յլցրեան ՚ի տուն հօր իւրոյ : Առաքել Ասրկաւադ ՚ի բաց եղ զամիրայութիւն իւր, զգեցաւ ըզթուխ զզջութեան իւրոյ . և ուխտեաց տանել ամենայն անարդանացն՝ զոր աշխարհ մատուցանէր ինքեան վասն մեղաց տղայութեան և անգիտութեանն :

՚Ի Պարաքիլիսա անուանեալ հանգուց ցեալ եկեղեցւոյն՝ յԱպարան, ցխոնարհ չէր ուրեք ձիւն ընդ դաշտն մն ծ, և կութք այդեաց էին յամենայն ուրեք, ընդ Աշական աւան ճանապարհ արարեալ՝ հասաք յլցջմիածին յաւուր վեցերորդում ՚ի Հաղբատայ : Գոյք տղիտութեանց մերոց կարպետեալ անդանօր պատրաստեալ էր մեղ զտեղի վայելուչ ապերախտ գնացից մերոց : Հիւրնեկալ Յօվհաննէս վարդապետ հազիւ թէ

Հայեցաւ յերեսս մեր . և փոխանակ ՚ի ներ-
քըս անդ եղբայրանոցին Հրաւիրելոյ զմեզ ,
կիսաբերան առաց վանատուր սպառաւորին՝
որոշել մեզ սենեակս ՚ի Պ ազարապատին .
Եթէ և զնոսս սենեակս անուանել հնար ինչ
իցէ . ոչ սփուոց , ոչ վառարան , և ոչ մահիճ
կամ անկողին ունելով : Ամիրայ մեր՝ արդար-
ե Հաստատ եկաց յուխտի իւրում , և դեր-
արինակ հեղութեամբ տարաւ անարգանցն .
(ուստի և Աստուած արժանապէս կոչեաց զնո-
՚ի վարդապետութիւն քանին՝ փոխելով ապա-
զանուն նորա՝ Քովհաննէս :) Խոկ Գրիգոր
առիւաւագ և ես առաքեցաք զծառայս մեր
առ Հիւրընկալն , Հարցանել թէ զի՞նչ Դե-
տումն իւր իցէ առնել լնդ մեզ : Պատաս-
իանեցոց նա . “ Օ ի ուեիցիք աշխարհասէրք
և աշխարհականացեալքդ լնդ սրբագումար
Հրաժարելոցն յաշխարհէ . Աշխարհական էք
կացէք ուր և կայք :

Արթի ՚ի խոր խոցեալ ՚ի քանից առան ,
դրեցաք առ ոմանս յեղբարց մերոց ՚ի ներքս
Ամարգար սարկաւագ , որ յետոյ Պիոնէսիոս
Վարդապետ , և Ամմոն սարկաւագ՝ որ յե-
տոյ Առաջնորդ Ա իրապին՝ ՚ի կողմանէ Գրի-
գորի . խոկ Տիրացու Պօլոս՝ կեսարոց : և

Եղիշակ կողբացի՝ սարկաւագունք՝ 'ի կողմանէ
իմ՝ եկին, փարեցան զմեօք՝ և առեալ տարան
'ի ներքս՝ զիա՝ 'ի դիտարան Գանձապետ
Գրիգոր Արքեպիսկոպոսի Վաղարշապատոյ,
և զիս՝ 'ի տաճար Բարսղի Արքեպիսկոպոսի
Ահարացւոյ :

Կացաք անդ զաւութս ինչ, և դառնու-
թեամբ սրտի ընթերցաք ՚ի դէմս ամենեցուն
դժխրութիւն 'ի մահ Հարց ումանց, մահա-
ւանդ թէ և Փիլիպպոսի Արքեպիսկոպոսի
Վողնեցւոյ՝ մե ծափորն կոչեցելոյ և Ճոխի.
՚ի հարստահարութիւն Պարսից՝ անգրելի բար-
քարոսութեամբ Պաքար Խանի ընդ անձն
Ատեփանոս վարդապետի ութումն կաշւոյ .
վասն մաշկելոյ ՚ի նմանէ զգաղուստ գանձուց
վարդապետին՝ և որ մե ծ քան զամենայն՝
զգերութիւն ազգիս ՚ի Պարսայ, ՚ի Վաղար-
շակերտոյ և 'ի կողմանց կողմանցն Ապրեոյ .
զորս էր՝ զի վաճառէին. և էր՝ զիքդեաշխն
Երեանայ վարէր ՚ի Պաղբին և բնակեցուցա-
նէր ՚ի դիւդօրէս իւր : Խսողի զձի իմ յախոռ
անդը, և փոխանակ առեալ զմի ՚ի պատուա-
կան երիւլարոց սրբազնն հիւրասիրիս՝ հեծայ
յԵրեանեւ : Եւ զի՞նչ զճանապարհայն արդեօք,
եթէ ոչ երամ երամո զըեթէ ամենայն վառ-

տակաւոր քաղաքուհեաց Երեանայ՝ դառնաւլ յիւրաքանչիւր սյգեաց և 'ի հնձանաց իւրեանց, է՛ որ հեծեալ, և է՛ որ հետի, տառնելով ընդ ինքեանց տառաղանս տառաղանս խաղողոց և այլոց պտղոց աշնայնոց ՚ի պահեստ ձմբ բանի, և կամ յուտեստ առօրի՝ բարեվլաստակ անդամոց գերտաստանաց իւրեանց, որք յայլ և յայլ արարս չորուցամաք պարապեալք : Եւ անդ ՚ի մէջ յառաջաւորացն տեսի զՄԵՅ իմ Օ արդար թաղիդեանց, կողով խաղողոյ յուս իւր, յաջմէ նորա Աննա քոյր իմ, կուսան երկոտասամեայ՝ ոգեպէս կերպարանեալ ՚ի սխրանս հանդերձից՝ որ ձիւնափայլ ձեռօք իւրովք կարկառէր զողկոյդ ինչ խաղողոյ եղբօր մերում Յովհաննու մանկանն հասակաւ՝ հեծելոյ յէշ իւր :

Դան առաջին տեսեալ զիս, որ գըեթէ մայրացեալ և քեռացեալք գլխովին՝ ամենեքին իրրե ՚ի միոջէ բերսեոյ գոշեցին, “Քարեաւ տիրացու Պապիկ, բարեաւ քամին չկայ որ գնայ Օ արդարին աւետիս տայ” Պնդ բանիս բազումք ՚ի մանկանց և պատանեաց ուսս առին, բայց ես կամեցեալ նոցա չժողով զաւետչեայն՝ ձի արշաւեալ ինքնին հասի, իջի, և վարեցայ զնովաւ : Զկա-

բեմ մարմացու ցանել աստանօր զգութ ծըստ
դական խանդաղատանաց սրաբին, և զարտա-
սուս կարօտահար աչսցն՝ որովք հառաչեաց .
“Փառք քեզ Աստուած, փառք քեզ, որ ոչ
ամօթ աղջի արարեր զիս, և ոչ յայպի դրա-
ցեաց իմոց :” Յետ թազում ողջունից և
համբուրից, գրգանաց և փափայմանց, լուսու-
թէ, և առ սա հասեալ համբաւոյ այլակեր-
պութեանցս յ(Օ)ձուն՝ վշտացուցեալ էր յոյժ
յոյժ : — Ո՞վ եթէ գիտէին մանկունք՝ թէ
խաղքն համարեալ չարիք իւրեանց՝ որքան
մեծ վիշտս հասուցանեն ծնողնց :

Կացի ասու զաւուրս հեղետասան, և իր-
բեւ ելանէի՝ բարեպաշտօն մոյր իմ մատոյց
ԴԱՍՏՈՒԱԾՈՒՆՀ միահատոր Տիալ Յովհան-
նու Ա արդապեաի Օ օրաբեան՝ զսր գերի
վարեալ զօրաց բգեշխին Երեանայ ’ի կող-
մանց Վաղարշակերտի և Արքեսոյ՝ վաճառեալ
էին յԵրեան . դրելով ’ի վերայ իւրով իսկ
ձեռամբ խրասս պիտանիս ինձ՝ առ ամենայն
դէսս կենցողոյս այսորիկ : Այս առաջին
օրինակին էր ’ի համօքէն նահանդին, և ինձ
ինքեան վիճակեցաւ մոյրենի օրհնութեամբ
հանդիրձ :

Ո՞վ կարծէր թէ այս վերջին լինելոց է ը

աեւսութեան ամեներան ծնողիս , և այս վերա-
ջին՝ անմահ և անմահարար ի պարզեաց նու-
րու առ իս : Ապառնիք , ապառնիք , Աստու-
ծոյ միայն տեսանելիք , և ի մէնջ անտեսք .
ո՞ ասել կարիցէ թէ զինչ վաղիւն ծնանիցիւ
Թողի զնա , և զսիրելի զաւակունս նորա-
գիտեմ . բայց թէ յոր արտասուս , յորպիսի
հառաջանս , և յորպիսի աղօթս առ Աստու-
ած , ոչ կարեմ ասել : Դեռ բարբառ մար-
դոյ կրից անուանա չունի , մանաւանդ թէ
սրբոց , անարատից և երկնայնոցն :

842
Յելելոցն ի Հաղբատայ միայն ես գարձայ .
բայց ընդ Ահարօն վարդապետի և նորոց այլ
ճանապարհորդաց՝ և 'ի միջոցս ամսոյն Հոկ-
տեմբերի հասի անդք ընդ նոյն ճանապարհ ,
յոր եկեան էաք :

Ահարօն Վարդապետս այս՝ էր հինաւուրց
և բազմարդինն ծերունի ոք , զարմանալի թէ
ի միտս , և թէ ի վարս : Ուշ նորա անկա-
րուստ պատգամարան էր սուրբ գրոց . մինչ
այնքան՝ զի եթէ անհետանայր Աստուածա-
շունչն ի միջոյ : Կարական , և Կարեկ , նո-
կարող էր զամենայն ծայրածայր ասել կամ
դրել : Չէր մննթ անուանի՝ որ կարէր
զհամբարձին ճիշդ ասել , քան նա զն և իցէ

գլուխս զգրոց սրբոց : • Քերականսւթիւն :
 Ճարտասանութիւն և զՄրամաբանութիւն ան-
 դիր ասէր , քայց սրով հետեւ առ վարժապետի
 ոչ ուսեալ՝ տող մի անողալ գրել ոչ կարէր :
 • Քերթող էր և զանազան տաղս յօրինեաց .
 այլ միշտ սրբագրութեամբ Ե՞նօքեան Ասե-
 փաննոսի և Գիւլասպեանց ։ Օ աքարիայ ե-
 պ ! Առաջուաց : Ձայն նորա կամ հազար՝ հա-
 մեմատ ուշոյն , ներլաշնակ՝ եղանակաւոր և
 հրապուրիչ : Ա արք նորա յաւէտ հրեշտա-
 կայինք էին , քան թէ մարդկոյինք : Ճշ-
 մարիտ մեռեալ աշխարհի էր , զի ոչ իմիք
 փափագէր . և եթէ էր՝ զի անկանէր 'ի ձեռա-
 ինչ իւր ոչ Համարէր : Բազում անդամ
 տեսի զնա այսօր ՚ի ծիրանիս , և զաղիւ՝ ՚ի
 ցեցոտիս : Այլ աշխարհ զնա աղուաշ և թե-
 թեահանձար դնէր , զի գրեթէ ծանակ եղեալ
 կամովին՝ ծաղը առնէր զամենեսին . մինչև
 անգամ բգեշխն Երեանայ զիտէր զնա , և
 շնորհ առնէր նմա , Աս եղեւ մեզ Հայր բա-
 րեկենդանութեան թէ ՚ի ճանապարհին՝ և թէ
 ՚ Հաղըատ :

Եկն անդ թումաս Ա արդապետ աբեղայ՝
 Ա բթանիսի Արհւոյ Երւերակին Հոգկոց ,
 և մատոյց Հայրապետին զղուզնաքեսոյ խե-

շերանս մեծագանձ Հարստութեան այնորիկ՝
զոր մեծաւ առատաբաշխութեամբ նուիրեալ
էր ժողովուրդ մերազնց կողմանցն այնոցիկ,
և զորս յետին անյաջողութեամբ վասն Փօղո-
սի Եպիսկոպոսի Կաթոչուանցւոյ՝ ի կորուստ
յաւ իտենից մատնեալ եղեալ էր սկզբնապատ-
ճառ այսքան պարտուց Խջմիածնի :

Այս Փօղոս Եպիսկոպոս աթեղայ էր մե-
ծին Փիլիպոլոսի արքեպիսկոպոսի, որ յետ
վախճանի նորա ի Հնդիկս, և յաջորդելոյ
նմա Աթանասի արքեպիսկոպոսի, վերա-
դարձաւ Խջմիածին, և ձեռնադրեալ ե-
նպիսկոպոս՝ ընկալաւ զգլիաւորս ի Պարսիկ
պարտատերանց անտի Աթոռոյն՝ և գնաց ի
Հնդիկս, ուր զայնու ժամանակաւ մնաեալ
գտանելով զՊարսն ՀՅովեկի ՀՅարութիւնեան,
զՊարսն Վարտիրոս Տէր Ատեփանոսեան
անանկացեալ մինչ ի սպառ, և զԻթօդաբաշխ
ոնն Պարսիկ զմնացորդս զոյից հանգուցե-
լոյն գրաւեալ սուս յօդածոյ մուրհակօք,
գարծոյց զնոսա գատարկաձեռն ի սուրբ Խջ-
միածին : Որոց եկեալ հրամանաւ բդեշխին
յաւելին վաշխս սաստիկս ի վերայ մայր
գրամոց զամենայն ծախս անհուն ճանապար-
հորդութեան իւրեանց թէ ի գնալ և թէ

՚ գալն , և և զմուացածին շահ վաճառացն՝
զորս յուսոյինն գտանել , եթէ ընկալեալ
էին զդրամո իւրեանց ՚ի Հնդկաստան , վեաս
և ոչ մի կարծելով թէ Հանդիպէր ամենեին ,
բարդեցին ՚ի վերայ՝ և ահա 5000 թումանն
վեցպատկեալ աճեցուցին ց50,000 թուման :

Ապա եկն անդանօր և մեծանուն Պատիթ
խան Շօհատութեան Պաեսպան ՚ի կողմանէ
Պարոից ՚ի Գաղղիա դնացեալ , և առ յապայն
զիրաւունս տանուտիրական իշխանութեան
իւրոյ ՚ի վերայ Գեղարքունեաց Հաստատեալ
՚ի դիւանի կայսերութեան Պառաց , վասն
շառաւիդ գորոյն իւրոյ սերնդոց Առաջանոց
Հինաւուրց Տեառն երկրին : Այս հոյակապ
պայազատ , ՚ի սակս սակաւութեան սենեկաց՝
Հիւր տուաւ գրադրատան տեղւոյն , յորում
եսն բնակէի : ՚Բաղցը և իշխանավայելուչ
բարք նորա , Հանքածանօթ տեղեկութիւնք
աշխարհաշուրջ մտացն , և ուսումնասիրու-
թեանն սովորոյթ , բազմօք բացին զմիտու
իմ : ՚Ի մասնաւորի պատմեաց ինձ սա զվարս
Պառինսոնի ՚Բրուզայ՝ զոր գեռ չէի տե-
սեալ . և յաւել ՚ի նա զհրաշակերտս և լդ-
գովանիս ՚ի գիտութեանց մեծի մայբաքա-
զաքին Պարիսոյ , և զարուեստիցն գիւտս յե-

զուլ՝ ՚ի լսելիս իմ։ Մանուկ անլուր այն-
պիսեաց՝ այնքան սաստիկ հարայ ՚ի սէր եր-
թալոյ անդը, և վտանգաց ՚ի վտանգս անկա-
նելոյ՝ մինչև աղերս ՚ի վերայ աղերսանաց գը-
րեալ մատուցի ամներան հայրապետին Եփ-
րեմայ, թողուլ զիս ազատ ՚ի շուրջ աշխար-
հի։ Տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոս՝
որ զայլ ինչ ոչ ճանաչէր, եթէ ոչ՝ զիսուց և
զանուն իշխանութեանն, Հակառակ կայր խնդ-
րանացս։ Երբեմն ասէր “մի բնաւ թոյլ տալ.”
երբեմն՝ “թէ զինն ամ կացի յլ ջմիածին,
նախ տարեկան տասն և երկու թուման Հա-
ցագին պարու էի վճարել՝ և ապա ելանել
ազատու” Եւ երբեմն՝ “թէ տղայ անփորձ տուայ-
տանաց աշխարհի, թող գնայ ասէր, փոշի-
մանի, գառնայ, և յայնժամ տնտրգաբար ևս
վարեցուք ՚ի գործ ։” Խայց Տէր Եփրեմ
մեր հայրապետ՝ զոլով այր հեղ, և աշխար-
հատեսութեան զճաշտկ առեալ, անակնու-
նելի գթութեամբ զիջաւ ՚ի խնդիր + կոչեաց
առ ինքնի, և ասէ, “Վ' բդեակ, այս ևս այս-
պէս ոչ մնայ + դայ ժամանակ՝ յորում ես
ինքնին Հրաման տաց քեզ ելանել և զաշ-
խարհ տեսանել՝ փառօք + բայց զարդիս ոչ +
կամիս վերստին դնայ յլ ջմիածին և յԵ-

բեան ՚ի տես ընտանեաց քոց, մինչեւ զիջանիցի սիրտ քո . և ասկա դարձիր այսրէն առ մեղ .”

Ոչ այնքան սքանչելիք համարէր ամենի Հեղեղաց դարնան կամ բուռն ծփանաց ծովու դադարել առաջի նորա՝ քան զիմ 'ի ժամանակին ուկնդրութեան : Ասացի, “Տէր յարսւցեալ սրտի իմում, այլ ոչ ևս յօժարի կալ մնալ աստ' առանց ուսման, և եթէ որպէս խնդրեմս, չդտից զողորմութիւն՝ կամ փախեայց, կամ ջանացայց չարիս առնել արժանիս առ ՚ի ձէնջ Հալածանաց, և յայնժամ հոգւոյ և մարմնոյ իմոյ պարտական մնայ—տէրութիւն ձեր .” “Քարի է .” ասաց բարեհոգին, և ես զաջն համբուրեալ՝ ելի արտաքս, և Հրամայեցի իսկոյն կազմել զերիվար իմ .—“Քոյ հօր տան մատակ ծնանքեղ զայն .” ասաց Յովսէփ Ա արդապետ, զոր այդպէս Հրամայես սարել քեզ, ձին վեհապետին պատկանի, և միայն Հաւատարիմ որդւոց աթոռոյ է ժառանիդութիւն, որպէս մտեր, այնպէս ել .”—“Երանենթէ և սըրբութիւն ձեր արասցէ ըստ Հրամանիդ ըստ այդմիկ .” պատասխանի արարի ցիս . երից երեք անդամ արհամարհանօք : Այնինչ ըդ հակս շերամի պայուսեկին ծանրութեթե առ-

Նեի , զի յուս բառնալ կարացից , հաս առ իս
արժանապատիւ . Արքահամ սարկաւագ Աս-
տուածատրեան Վաղարշապատեցի , Հայ և
Ոչուս քերականութեանն և այլ և այլ գըոց
Հեղինակ , և մատոյց Մաէթ Հինգ իդիմաց Հայ-
րապետին : Օ այրացեալ գոլով ընդ բանս
Յովսեփայ վարդապետի , ընկալայ զպարգե-
հայրապետին , և այսր անդը Հայեցեալ՝
տեսի զորթարած լանացն՝ տղայ աղքատիկ և
մնրկ . զառաջեաւ կոչեցի , ետու նմա զբո-
վանդակ զայն Հինգ Մաէթ , և ասացի սարկա-
ւագին՝ “թէ այնքան միայն արժէր ինձ պար-
գեն , որ ևի ձիոյ միոյ զըկեցայ յետ այսչափ
զաւացո լոյս թափելոյ : ”

Ելի ՚ի Հաղբատայ սարկաւագ՝ սարօք սըր-
բութեան , բայց իրքե՝ յուսահատ մոօք : —
Բաժանեցի որ ինչ և ունեի ծանրոցո . միայն
զԱստուածաշոնչն՝ զպարգե խանդակաթ մօր
իմում , և զԱստուածաննմանութիւն Պետրոսի՝
իմով ձեռամբ օրինակեալ՝ ՚ի պայուսեկին ,
ընդ եօթնուտասան Պարսիկ սեալաց ՚ի ծոցի՝
և Հետի ընթացեալ՝ Հասի ՚ի գիւղն ՚ի ա-
րաբաշն , ուր ժողովուրդք սիրով ընկալան ,
և ՚ի վաղուի վարձելով ինձ զերիվար՝ տարան
՚ի Պազախ՝ առ Տէր Յովհաննէս , որոյ եղ-

քօրորդի՞ն իւրոյ ինքեան համահուն , աշակեր-
տէր ինձ ՚ի վանս անդ Հաղբատայ :

Գարուն էր , գեռ ձիւնք լեռնակողմանցն
անհալ , ուստի և ձիւք և ոտք իմ մւանդա-
մայն զուցումնալք : Առաջին՝ որ ետես զիս՝
Յովհաննիկ էր՝ իմ աշակերտ , և ճխալով
վազս առեալ աղդ արար ծնողաց իւրոց : Տէր
Յովհաննես ընդ յառաջ եկեալ ընկալաւ զիս
իրը զհրեշտակ լուսոյ , նու նորա՝ որ մայրն
էր աշակերտիս՝ լուսոց նախ զոտս իմ , և աի-
րուհին հանգերձեաց զկերակուր : Իսկ զանոյ
հացեն ցչորորդ ժամ զիշերոյն՝ ինդրեաց Տէր
Յովհաննես գտանել զստոյդ պատճառ ելիցու¹
՚ի Հաղբատայ , այլ ես ոչ կամ ցոյ ասել :
՚Իսկ վաղուեի յարուցեալ հասաք ՚ի դետն՝ ընդ
որ յանցանելին՝ սկսեցայ ընդ յորձանսն երիվա-
րու իմուլ , և Հեղձանեի արդեօք՝ եթէ չէր
Պարոն Ակրոցի հզօր երիվարաւն ՚ի թիկունա
հասեալ և ձիաւն հանեալ զիս արտաքս : Տամ-
կացեալ յոտից ցգ լուխ՝ և պաղեալ յարձան
սառնորակ՝ բերայ վերստին ՚ի զիւղ անդր-
ուր և ադայ զայն զիշեր : Տէր Յովհաննես
հաղարիցս հաղար անդամ ստիպեաց զիս
ունել զձի իւր պարզեի մասամբ , այլ ես
յանձն ոչ առի . զի չունեի ինչ առձեռն ՚ի

Փոխարեն շնորհացին, Հաղիւ ու ըեմն զիջտւ
 նա ընդունել զիօթնուտասան պարսիկ ռեալս՝
 որ կացուցանեկը զբովանդակ հարստութիւն
 իւր. և ես ապա ընկալայ զծին, և անուն
 կարդացի նմա՝ Աշխոյժ. զի հեղամենից էր,
 բարձր յոյժ, և ՚ի կայսիկ յարենէ. որուլ
 բազմիցս ՚ի մահուանէ փրկեցայ ։ Առաջնորդ
 կալեալ ինձ ապա զմի ՚ի գիւղականացին՝ Առքի
 անուն, պատանի առոյգ և զուարձարան,
 Հասի ՚ի Գանձակ, և ագայ առ Արագարտի
 Հօրաբեռ իմում. յորմէ փոխ ընկալայ ինձ
 ոսկիս երկերիւր : ՚Ի վաղիւ անդր չոքոյ առ
 Խաչատուր վարդապետ. և ՚ի Հարցանել
 նորա ցիս, թէ զի գաս, պատասխանեցի, ՚ի
 փրկութիւն քոյ՝ եթէ միայն ողջոյն դարձայց
 ՚ի Շուշոյ : “Օ խարդ, զիա՞րդ” կրկնեաց
 Հատկլեալ. և ես ասացի, այնու զի զկնի
 գարձին իմոյ՝ Հոգեոր Տէր մեր ձեռնա-
 դրելոց էր զեպիսկովունս, յորոց մի անու-
 անեցար դու ինքնոդ : Ո՞նդ այս լուր՝ տչք
 նորա պայծառացան. և երեսքն կարմրեցան,
 Հրամայեաց ծառայի իւրում գինի մատուցա-
 նել, և ասաց : “Այդ բերան չէ, բարե-
 կամ, ոյլ տաճար Աստուծոյ է : ” Առաք
 անձնիւր բաժակ մի կամ զերկուս . և բըե

սակաւիկ մի գինեցաք . ասացի յնա . իսկ
աւետչեայ իմ ուր է : " « Հազար ոսկի քեզ
մատաղ , » ասաց նա . եթաց զարկղն ապանոսի ,
և համարեաց ի բուռնս՝ ոսկիս իրքեւ երեսուն .
Օ աջն համբեելով առի , և ընդ Դիլզա , ընդ
Խաչեն և Խնածախ եկի հասի ի Շուշի :

Ասաջեորդ իմ Առւքի յամեցաւ 'ի վա-
ճառանոցին հետեւ ել ինձ . և ես միայնակ
յառաջեցի 'ի տուն անդը Թառոռւմեաց .
և այնինչ բաղխէի զգուռնն , **Ա**ւետիք որդի
Օ ոհբապայ ընդ պատուհանն հայեցեալ՝ ետես
դիս և ճշաց . " **Վ**եսրավը , **Վ**եսրավը : " **Ա**մենայն
գերդաստանն օտարութի իմն կրիւք անդը գըռ-
հեցան . մին վայէր , "մի բանար , մի բանար : "
Վին ասէր "արդարեւ **Վ**եսրավը է դա . " և
միւս " թէ ոչ , ոչ այլ ընդ կրունեկն հայե-
ցարուք : " **Լ**աւլի լինէր և ձայն , թէ ածէք
այսր զատրճանակ իմ , ածէք այսր : " **Օ** այ-
սու ժամանակաւ եհաս անդը Առւքի . և ես
կարի յոյժ զայրացեալ և ի խոր խոցեալ յար-
համարհանաց աստի . զերես թեքեցի դէսլ
'ի տուն եղբայրացելոյն ինձ **Վ**նացականայ :
Դուռնն բաց էր , իրքեւ 'ի ներքս մտաք .
յարեան **Վ**նացական և զառամեալ մայր նո-
րա . և շտապաւ փախուցեալ 'ի սենեակ մի

տանեն՝ ընդդեմ վակեցին երեսաց զգուռնն ։
 Տագնապ և տարակցո պաշարեցին դիս ։
 Փոքր մի լուռ և եթ ընդարձացայ, և ասելով
 յլուքի, “Ահա քեզ Արցախային բարեկա-
 մաւթեան Հանգամանը .” սկսայ մի ըստ միոջէ
 պատմել նմա զանցեալ սիրոյ և զվայելից
 միբոց, “Եկ ասէ նա, երթիցուք ՚ի պանդոկ
 անդը վաճառանոցին . միթէ տեղւոյ պակա-
 սութիւն կայ մեզ ,”—Եւ իբրև սյր իւրաք-
 քանչիւր զերասանակ երիվարաց կալեալ ար-
 տաքս ելանէաք, ել Վնացական . և ահա-
 Հար և դողահար Հեռի Հեռի զհետ գայր ։
 Անագան ուրեմն սրտապետեալ առ սակաւիկ
 մի՛ եհարց յլուքի “Ատա ափին Լհա տրացօդ-
 Հու ա՞ .”—“Քնա, քնծահար, քռացելամս .”
 պատասխանեաց նմա յլուքի, և նա խկոյն ե-
 կեալ վարեցաւ զինեւ . արտասուեաց և ասաց .
 “Ատա քը մատաղ՝ Վսրօ՛ր, դու գըռ մըռէլ
 չը՛ս . խիբա ըսէյիսլն .” և սկսաւ պատմել
 մեզ թէ որպէս գոյժ մահու ՚ի հարուածոյ կո-
 ճին խմոյ՝ Հաս առ նոսա ՚ի Հաղթատայ . և
 թէ որպէս տուն Թառումեանց սուդ արար
 վասն իմ . և պատարագ վասն Հոգւոյ իմոյ
 ՚ի Առաշէն յԵկեղեցւոջ .—Եւ թէ զարդիս
 յանկարծ երեւել իմ աչաց իւրեանց՝ ղիս՛րդ

ահարեկս արար + զոգի ինչ ՚ի զերեղմանաց
յտրուցեալ համարելով , և այլն .”

Այսպէս արդարացուցեալ նորա զփախուս-
տըն յերեսաց իմոց՝ բաղում թախանձանօք
հաւանեցոյց զիս ընդ յարկաւ իւրով մտանել
վերստին . բայց յառաջոյ կարապետելով և
նախ զմայըն համոզելով . որպէս և առ. **Աղայ**
Օռհրաբ գնալով և ստուգելով նմա զՃշմար-
տութիւն կինաց իմոց .—

Երիվար ընտիր առընթեր , ընկերիւր ոսկի
զու գ ՚ի ծոցի , և սարս զգեստոց ՚ի պատրաստի
ունելով . որքան կարացի . ծանր ծախեցի .
վասնորոյ և ընդ հրաւեր **Աղայ** Օռհրապոյ
ամենենին ոչ զիջոյ՝ մինչեւ առաքեաց զորդիս
եղքօր իւրոյ զէսով հանեւս և կարապետ , և
տարաւ զիս ՚ի տուն իւր . կացի առ նմա
զաւուրս երիս . պատմեցի նմա զպատճառ ,
զեզանակ և զվախձան ելից իմոց . բազմօք
յորդորեցոյ դառնալ առ Տէր “Երակո
՚ի Տփղիս” կամ առ Հայրապետն սուրբ՝ ՚ի
Հաղթատ , այլ չեղեւ հնար : “Կաց ուրիմն
ասաց , և սխակեցից զքեղ :” Պատասխա-
նեցի՝ պսակ վասումն է ինձ . որ ինչ ծախք
երթան պատկին՝ ուտման շնորհեալ . զի յաւի-
տան օրհնեցից զկեանս քոյ : ” “Քամի՞ բէսի

օնլու Խրօսա՛ ու ասաց . այսինքն՝ արասիւ Առա-
ցի երկերիւ ը ոսկիս ՚ի Վարդարտայ՝ և երեսուն
՚ի Խոչչատուր վարդապետէ ։ ՚ Եւ պատ-
մեցի ճշմարտութեամբ զմիջոցսն՝ որով առա-
ցայ ինձ զնոսին : Ա ասն աւետչէի Խոչչա-
տուր վարդապետին շատ ծիծաղելով՝ ասաց ·
“ սուրբ է քեզ այդ փող . ” զգումար հօրա-
քեռ իմում գարձոյց յիւրմէ . զի և զնա սիրե՞
յոյժ . և յաւել ինձ ոսկիս հարիւր և եօ-
թանասուն . տալով և ՚ի տեղիս տեղիս գիր
յանձնարարական ՚ի վերայ ճրագանց իւրոց :

Եկի հասի ՚ի Տաթե . ուր Վարտիրոս
Արքեպիսկոպոս իրեւ եղիս զիս անլսու յոր-
դորանաց իւրոց ՚ի դարձ , համոզեաց մնալ
առ իւր . “ և ՚ի միջոցի երկուց ամսոց ժո-
ղովեցից առ քեզ , ասէ , մանկունս աւելի քան
զհինդ Հարիւր , և զԱնապատն մեծ կարգեցից
քեզ ՚ի վարժարան . որքան կարես ուսո՞նոցա
զընթեռնուլ և զգրել ։ ” Ես ինքնին պէտո
ունիմ ուսանելոյ , որում և զոհ արարէ զա-
մնայն ակնկալութիւն հանդերձելոցն . — ՞չ
մնամ ” պատասխանի արարի . և ՚ի վաղիւ
անդը դեռ ՚ննջէր ՚նա՝ մինչ ես հեծոյ ՚ի
Քոնակոթ Ախոխանայ , զի երկնչէի՝ թէ մի
զուցէ ըռնաբարիցէ զիս ՚ի կալն կամ ՚ի դառ-

նայն անդրէն : Աշտի եկի ՚ի ՚ի աշխուան առ
 Պարոն Այսրգիս վանատուր Հայրապետին ,
 յորժամ անդ էր . և մատուցի նմա զգիր Ա-
 ղայ Օ ռհբապայ : Աիրով ընկալաւ զիս . և
 առ ՚ի չգոյէ երթեւեկութեան՝ ծանրացայ
 նմա զաւուրս Հնդետասան , Արովհետեւ զօրք
 Արքաս Միթղայի որ իշխէր Ատրպատականի ,
 և Հասան Խանի եղբօր բգեշխիւ Երևանայ
 դեռ կռու էին ընդ Մարաց քհակելոց ՚ի Ա-
 ղարշակերտ դաւառի՝ երթեւեկ կարաւանաց
 լուելք էին : Ճանապարհ աստի ՚ի Առ-
 տանդնուպօլիս ընդ այն անկանէր , և բաց ՚ի
 վտանդաց անտի գերութեան և տարագրու-
 թեան՝ նաև զմօտալուտ զմահուն վտանդ ըս-
 տառնայր ինձ : Ա ասնորոյ խորհրդով բարե-
 բար ասպիջականիս , փոխեցի զերասանակ մտաց
 իմոց գեպ ՚ի Պարսկաստան . զի անտի ՚ի Հըն-
 դիկս անցից գնացից . զորոյ սքանչելի նո-
 րութեանց ո՛չ սակաւ տեղեկութիւնս տու-
 եալ էր ինձ Թաղմասայ վարգապետի , Պար-
 տաւորեցայ փոխել զձեւ վանականութեան իմց ,
 և զգենուլ դաշխարհական վրացին կոչե-
 ցեալ տարագ . բայց զերկարութիւն Հերաց
 իմոց , որ ձգեր զուսովք ՚ի խոնարհ , ըստ
 կապիտանալոյ իրա հոգեորականացն Առուսաց

նոյն թողի մնալ : Ապայ ինձ ծառայ դէքսկիել
ոմն 'ի գերելցին Բասենց , գնեցի նմա զձի ,
և ընկերացայ Մազսուդ Խանի Կախչուան-
ցոյ ընդ ճանապարհ գետեցերացն Երասխայ ,
ընդ Ազտու գաւառ : Այս այս Մազսուդ
Խան Քանդեառլու կոչեցեալ , (որպէս կոչեն
և ամենայն մահմետականք ի սահմանա Կախ-
չուանու ընակեալք ,) էր 'ի տանուտիրական
տունմէ Մազսուդեանց . որք յառաջ քան զմեծն
Շահաբաս տիրէին կողմանց այսոցիկ : Այս
լիահասակ էր սա ըստ արտաքին երեսութեն ,
ազուակն , կցայօն և արծուունգն . վարուք
ընտելագոյն , և եթէ Համարձակեցայց ասել ,
մարդառիրագոյն և ազատախորհուրդ ոմն 'ի
մէջ Համօրէն ազգին , որոց եսն պատահեցայ :
Խրբե անցաք նաւով ընդ Երասխ գետ՝
յամի 1823 յամսեան Մայիսի ինն , և յուղի
անկաք դէպ ի Հարաւ ընդ կապանն Արկառոյ՝
Մազսուդ Խան խօսս 'ի մէջ առեալ ասաց
ցիս , թէ “գիտիցնս մանուկ զուսումն գըոց .”
և յլնդունել իմում , եհարց ապա . թէ “ով
էր ԽՍՌ .” պատասխանեցի , Նրեշտակ Մե-
ծի ուխտին , Փրկիչ աշխարհի , և Բան Աս-
տուժոյ , “Քանի՞ առաքեալս (Հավարիուն)
ուներ նա , ” ասացի՝ երկոտասան և աշակերտու

եւթանասուն . որք Հրաման ընկալսն ի նմանէ .
քարոզել դարքայութիւն Աստուծոյ ամե-
նայն մարդկան , զի որ Հաւատասացի բանիւ-
նոցա՝ կեցցէ . և որ ոչն Հաւատասացէ՝ դա-
դապարտեսցի : “ Դայնալէս էր ասէ , և մերս
պատգամութեր . որ առաքեալ յԱստու-
ծոյ քարոզ կենաց աշխարհի՝ արար եւր Խ-
մամս երկոտասան , և դարձոյց զաշխարհն կը-
ողն ’ի պաշտելութենէ , զոր դուքդ ար-
համարհէք անխիղճ իմն թերահաւատու-
թեամբ : ”— Օ իարդ “ դոյն պէս , ” Խան .
թուիցի ձեզ , եթէ Վահումէդ ըստ օրինա-
կին . Քրիստոսի եկե յաշխարհ , և առաքեաց
դքարոզս փրկութեան հոգւոց մարդկան : ”
“ Եւ ընդէր ոչ ” : Գիտցես արդեօք զի ես
Քրիստոնեայ եմ : — Գիտեմ ասէ : Ուրիմն ոչ
կարեմ Հաւատալ նմանաբանութեան այդմիկ
Աչ ասաց ձեզ ԽԱՆ , թէ գալոց իցէ Վա-
հումէդ , այսինքն միսիթարիչն , և ուսու-
ցանելոց ձեզ զամենայն Ճմարտութեամբ :
Այս , ասաց նա թէ գայ միսիթարիչն՝ Հոդին
Ճմարտութեան , որ ’ի Հօրէ ելանէ , սակայն
ոչ ասաց , թէ գայ Վահումմէդ , “ Վահու-
մէդ միսիթարիչ ասել է . ” կրկնեաց իշխաննն ,
Խրաւ իցէ թերես , բոյց ուստի ուսացք դուք

թէ Խսայի Հրամայեալ իցէ մեզ միւթեարչեալ
 հաւատալ : Ասաց “Ճեր իսկ աւետարանք
 յայտ առնեն , որք յերկնից իջին : ”Պատաս-
 խանեցի Հաւատանն աւետարանի մերում , պա-
 տասխանեցաց , “ըստ մասին ևեթ ”: Անդէր :
 “Վասնզի փոփոխեցիք զտեղիս տեղիս ՚ի սուրբ
 դրոց . որք գուշակէ ին զմարգարէէն մեծէ՝
 Վահմէտէ . և այս՝ որ էջն յերկնից՝ վե-
 րացաւ կրկին . և մնաց ճեղ միայն մըուրն ՚ի
 պարզութեանց նորա : ”Վկ պատմեաց ճեղ
 զայդ , Խան : —“Աստուած յԱղուբանի մեր-
 ում , ” ասաց : Ուրեմն՝ կրկնեցի և լոե-
 ցի , ցուցեալ նմա թէ երկնչէի յառաջ վա-
 րել զընթացս վեճին . իսկ նա ստիպաւ իմն
 Հրամայեաց ինձ աղատաբար մատուցանել
 զառաջեաւ զփաստս իմոց կասկածանաց : Ե-
 թէ ասացից , Խան , թէ Աստուած երբէք
 ոչ խօսեցաւ ՚ի Պուրանի , քարկործել Հր-
 րամայիցնս զիս : “Խրաւունք են դենալետաց
 և խստակրօն Խսլումաց մերոց զայդ առնել ,
 Հրամանաւ Պուրանին . բայց ես ինքն Քանգե-
 տալու ոք եմ , առէ . և շատ ծանօթ Վսե-
 լեաց : այսինքն Քրիստոնէից . վասնորոյ և
 մեղմով իւիք խեայեմ տղայական հասակիդ : ”
 “Ուրեմն Աստուած ոչ երբէք խօսեցաւ ՚ի

Պուրանի .”—“Ես հարկե ասէ , դու այդպէս
 կարես արդարացուցանել զբան քո + և մեք
 այսպէս : Այլը գիրք գըոց հակառակ խօ-
 սին :”—Բայց ոչ այն գիրք , որք ՚ի հոգւոյն
 Աստուծոյ շնչեցան առ մեզ + “Դու զքո Աւե-
 աարանդ համարիս շնչեալ ՚ի հոգւոյն Աս-
 տուծոյ , և մեք զմեր Պուրանն . բայց եկ
 զանց արասցուք զերկոքումբք ես , և Հա-
 ւաստիօք բանին յայտնեցուք իրերաց զգե-
 րազանցութիւն երկաքանչիւր հաւատոցս : Եւ
 յայնժամ տեսանելով տեսանիցես , զի դեն
 Աահմետի է գերագոյնն ամենայն կրօնից
 մարդկան : ”Եւ զի՞նչ առ այդ ասել կա-
 միցիս ՚ի պաշտպանութիւն զի՞նի քում , ասէ
 Խան : ”Եթէ անդստին իցէ մարդոյ , որ տե-
 սանէ արարածս ’ի ներքոյ քան զի՞նքն՝ մա-
 կաբերել և զէակս նոյնալէս ’ի վերոյ քան
 զի՞նքն—թէէ պարտ է զմուաւ ածել , զի ո-
 րով հետեւ ոչ ինքն զի՞նքն արար + և ոչ ծը-
 նողք նորու աշխատք ինչ եղին կազմութեան
 զարմանալի դրից մարմնոյ նորու , պիտա-
 նութեան զգայարանացն , և զօրութեան վե-
 հագունին ՚ի նոստ՝ մտաց նորա , որպէս և
 ոչ անձամբ տիրելոյ ստորագոյն էակաց + այլ
 գոզ ջիր ’ի վերագոյն իմն հրամանէ՝ ճանաչել

զՀրամայողը՝ արարիչ ամենայնի , և գերա-
դոյն կառավար . ուստի և երկիւղածութեամբ
պաշտօն հարկանել նմա՝ որ անուանեալ կո-
չեցի Աստուած : Բայց ոչ կարէ բնութիւն
առանց սղալանաց առաջնորդել զմարդն առ
նախկին էակն զոյացուցիչ ամենայնի : “Կարէ,
ասէ + բայց ոչ միշտ առանց սղալանաց : ” Ու-
րեմն ուր մարթ իցէ մեզ գտանել զՃշմար-
տութիւն յայսքան կրօնից միջի : ” Ի հա-
մեմատութեան մտաց քոց՝ ընդ պատգամաց
կրօնի ուրուք : Եւ այսպէս միտք ձեր Հա-
մեմատին ընդ պատգամաց Դ ուրանին, և միտք
իմ ընդ պատուիրանաց Աւետարանին Յի-
ՍՈՒՍԻ + ուստի և ոչ ինչ փաստ վախճանա-
կան ելանէ աստուստ , ապահովել մեզ զգերա-
զանցութիւն բազդատութեանցն , որ են ՚ի նու-
սաւ “Եկ ուրեմն՝ ասաց ես և դու լիցուք ան-
կրօնք , ՚ի կզզի ինչ անծանօթ ընկեցիկք ,
և անտուստ նոր եկեալ յաշխարհ , քեհսցուք
զգիրս , և աեսցուք թէ որ մտաց մօտ . զայն
կալցուք մեզ ՚ի վարդապետ հաւատոյ :չէ կարելի , Խան . եթէ որպէս տարբերե-
րիմքս զիմօք . նոյնպէս և տարբեր եղեալ
մոօք , մին զայս , և միւս՝ զայն նախամեծար
համարիցիմք , և մնայցէ ճշմարտութիւն տա-

կաւին անձանօթ ՚ի մշնջ՝ ՚ի խորս գաղտնեաց :
 Վանաւանդ՝ զի մի և նոյն ոք, երբեմն զայս
 և երբեմն զայն ընտրելով՝ փափոխիւն և որ փո-
 փոխականն է, զիարդ կարէ զանփոփոխն զը-
 տանել ճշմարտութիւն : “Օ Ե՞նչ, ուրեմն
 անհաւատ մեոցուք բա՛ :” Ոչ, խան . այլ
 աղօթս մատուցուք առ Խանին անձանօթ, զի
 վասն փառաց իւրոց և բարութեանց՝ բացցէ
 զկափարան մտաց մերոց, և յայտենացէ մեզ
 վճիտ պարզութեամբ զհաճութիւն կամաց իւ-
 րոց . որպէս զի ընտրել կարասցուք զբարին՝
 և հետեւել նմին : “Ալհամիկուլիլահ, արդ՝ որ
 իցէ հետեւելին ըստ մտաց քոց . ահա քեզ
 Պուրան և Աւետարանն Յոյնժամ բերեալ իմ
 օրինակս ինչ ՚ի սրբոյ Աւետարանէն, և զհակա-
 ռակս նոցին մաւծեալ ՚ի Պուրանէն և եղծեալ,
 հարցի ցնաս, թէ որ ՚ի նոցունց երեկը ար-
 ժանի փառացի Աստուծոյ, փրկութեան և պա-
 տուց մարդոյն . և Համաշխարհական կառա-
 վարութեան աստի կենաց և հանդերձելոցն
 միանդամայն : —

“Վարտան քեզ, մարտան քեզ, մանուկ,
 և մւր ընթերցար դու զՊուրան ու Ապա-
 թողեալ զիսնդիրն կարե որագ ՚յն՝ որ հուսլ յամ-
 բոկն հասանէր, ոկսաւ կեզծու պատիր բանիւք

Յուցանել բաղմութեան այրուձի հետեակաց
իւրոց զգերազանցութիւն Աշեհեաց՝ քան ըդ
Առննեացն՝ (զորս չարաչարս ատեան Պար-
սիկք,) և յաւելուլ թէ՝ ինքն ոչ խարէր ինչ
այնուհետեւ ուտել ի ձեռաց իմոց ։ Քանզի ա-
էսր, թէ սուրբ է նա՝ որ միայն զԲատուած մեծ
ասէ, “Ալլահ ու ակպար.” թէպէտեւ զմար-
դարէ նորա ոչ լնկալնուցու ։ և ահա սա ըստ
որում ոչ անհաւատ Աստուծոյ՝ սուրբ է մեզ ։
“Բալի՝ բալի՝ Խռան.” հնչեաց այրուձին յա-
մնայն կողմանց ։ և ես խառնեալ ի հաղորդակ-
ցութիւն նոցա՝ զուարձալի իմն ճանապարհոր-
դութեամբ լնդ հեղիկ առապար ձորոյն ՚ի վեր
մատուցեալ՝ հասաք փարսախաւ և կիսով ՚ի
գիւղ մի Տաճկաց՝ Առջա անուն ։ որ ունէր
տունս իրրե 40, կառուցեալ ի ստորոտս ոսաոյ
իրիք մեծի լերինն՝ զոր իրաւունս համարէի
կոչել մասն մեր Աշասեաց ։ որ սկսեալ ՚ի
Հնդկաց, և անցեալ լնդ Պարսկաստան և լնդ
Արեծ և Փոքրն Հայս, երկայնի մինչև յե-
ղերս Արեջերկրական ծովուն ։ որոյ են Դմբա-
ւանդ, Ելբուրզ, Շմու, Ալատաղ, Առալան,
Ահենդ, Աննատրուկ, Աշոխիս՝ և այլք՝ բարձ-
րագոյն և մշտաձիւն կատարք նորա ։ Այս
լեառն դուն ուրեք երեւցուցանէ ինչ յաշ-

Խարհին Պլարսից՝ քան ժայռս և առասլարս
սևանիշ որձաքարանց, անջրդի և անպտուղ
կուտակութիւնս խճից և աւազոց կոշտացե-
լոց, և սոսկալի ահաւորութիւնս սկզբնական
սչընչութեան ընութեանն : Ուրեք ուրեք
'ի ծործորս նորա ընթացեալ աղբերականց՝
հրաշալի իմն տեսարան ընծայեն ընակչաց երկ-
րին : Այլ մեք զանց արարեալ զհեռաւոքն,
զմերձակայն, զոր տեսաքն՝ ստորագրեսցուք՝
զսարսափելի քարալերինս Առջայ, և զորս 'ի
հարաւոյ ձգեալ ընթանան դէպ 'ի լերինս
Կորդուաց : Չեք բոյս 'ի վերայ՝ որ պիտանե
մարդկան և անասնոց . բաց 'ի գաղեց, յակ-
քանացն և 'ի համասեռից նոցուն՝ փշոց : Քա-
րակոշկոճ են յոյժ, և ժայռք 'ի ժայռս կու-
տակեալ դժուարանցք 'ի մարդկեղէն արարա-
ծոց : Ունի կիրճ իմն նեղ, երկայն և խոտորըն-
թաց՝ կարկառ կոչեցեալ . ընդ որ միայն է հնար
անցանել կարավանին, Գտանին 'ի լերին այս-
միկ էրէք և այծեմունք ազգի ազգիք, թըռ-
չունք որսոց՝ տեսակ տեսակ, և 'ի գաղանաց
մինչև 'ի վագը և առիւծ : Ա տակ ականակիտ
ջրոյ անցանել ընդ այն և թափի յիշրասխ, ե-
կեալ 'ի դաշտէն Մարանդայ՝ Մեծին Հայոց :
Առ մեծ դիւրութիւն ճանապարհորդաց՝ 'ի տե-

ղիս տեղիս կառուցեալ կան աշտարակք, բըր-
 դունք և մարտկոցք . որք եթէ հրազինուք
 վառիցին, և 'ի քաջակիրթ զօրաց պաշտպա-
 նիցին, արգարե անմատչելի մնան յամե-
 նայն եկամուտ թշնամնաց անտի . այլ՝ չիք
 'ի նոսա՝ ոչ պահ մի, և ոչ հրացան . ուստի
 զօրք Ուուսաց անկասկած գրոհ տուեալ ընդ-
 այն՝ երբ և կամիցինն՝ ունել կարեն զաշսարհն
Պիարսից : Երկու կամ երեք ջրաղացք են 'ի
 ձորամիջե անդ կրճոյն՝ յորս մերձակայ գիւ-
 ղօրայք աղան զեխւթս Հացի : Երկայնութիւն
 ոլորապտոյտ ընթացից նորա մինչե 'ի դաշտն
Յոջու , որ այն է աղաւաղութիւն **Կարկառիս**
 մերոյ՝ է ինն հրասախ : **Յորժամ** արտաքս 'ի
 զարհուրելի գեհիցն գաս՝ ժաղկածին ծածանի
 առաջի քոյ դաշտն սիզաւէտ, ընդ որ՝ դէպ յա-
 րեելս ընթացեալ կոյս՝ վեց հրասախաւ, հա-
 սանես 'ի վտակինչ անապական ջրոյ, առ որով
 կոյ ջրաղաց, և կոչի **Յոջու .** Թերեւս 'ի հա-
 մանուն 'ի գեղջէն՝ 'ի հիւսիսոյ կառուցե-
 լոյ : **Աստ** 'ի վայելուչ դաշտավայրի խառան
 արկեալ յոտս երիւլարաց մերոց՝ թողաք ա-
 զատ 'ի վայելս փափկութեան դաշտին դա-
 լարւոյ . և մեք ըստ սովորականին՝ զրուցիւք
 ձանձրացուցաք զծերունին ապաժոյժ՝ 'ի փա-

Խուստ յաւիտենից + մինչև պատրաստեցաւ
 սեղան Ա՝ աղսուդայ, յեղինձն Պարսից և յար-
 գանակն չըալից, 'ի խորոված, և 'ի զանազան
 տեսակս օշարակաց : Տեղեակ ծիսի խորու-
 թեան Պարսից՝ քանի մի վայրկենիւք յա-
 ռաջ քան զայն՝ մեկնեցայ անտի . և այնինչ հա-
 նեալ 'ի մաղախէ իմմէ զհաց աստուճ լնթրէի՝
 մին 'ի ծառայից անտի նորա բերեալ սկտեղը
 անօթ եղինձոյ, խաշած մսոյ, և օշարակ, դըր-
 գալաւ միով անձոռնեաւ կեցածեով, մատոյց
 առաջի՝ ողջունիւ Խանին իւրոյ . և ստիպաւ
 իմն պատուիրեաց, մի ինչ ունիլ առանձիննե-
 ցորչափ ուղեկիցն լինելոց իցեմ շնորհապարտ
 իշխանին : “Ա ասնզի պատուիրեալ է նորա ինձ,
 ասէ, որոշել քեզ զայդ խան, անօթ + դաւաթ
 և դրդալ . բայց ջութ՝ լմալիցես դու քոյով բա-
 ժակաւ, մինչև 'ի Պատրէմ : ” Ա ամեն զի անհը-
 նարին է Պարսից՝ որք զիսլամութիւն աշխար-
 հին Ճիշդ կանոնոք վարել կամիցին, յանօ-
 թոյն հպելց 'ի Քարիստոնէից՝ ուտել ինչ կամ
 ըմպել, մինչև ոչ մաքրեացի վերստին օծու-
 թեամբ անադին : Ա յլ ես, որ պիղծ և պատ-
 ուեալ միանգամայն՝ դոհութեամբ ընկալայ
 զերկոսին ես : Պիղծն՝ իրեւ անհիմն վարկուած
 նոցա . զի ես յայնժամ ամենենին սուրբ հա-

մարեկի զիս ինքն . և զպատիւն՝ ոչ իբրև ողորմութիւն Այնորիկ՝ որ 'ի ձեռին ունի լզսիրտս հղօրաց , իբրև սահան դիւրաշընուն , այլ իբրև արդիւնք իմոց ճառատանաց՝ որով գնալով գնաց և բարձրացաւ եղջիւր ամբարտաւանութեան իմոյ : Իբրև կերի և յադեցայ , փոխանակ փառս մատուցանելոյ Խնամողին տիեզերաց՝ անկուշեալ զնա , սկսայ խօսել 'ի սրտի իմում , օրինակ զայս :

“Ահա տաճիկ . և տես զիածրդ մեծարէ զիս . և ով ոչ այնպէսն արասցէ , յորժամ զչափ առնուցու զպատուականութեան իմոյ :” Եւ այս կարծիք՝ այնքան ամբարձին զմիտս ամբարշտութեան իմոյ՝ մինչ ամօթ համարել ինձ խնամ տանել վաստակաբեկ անասնոյն , զոր յանչափս սիրէի . և ապաստան թողուլ զնա խնամոց Յովիտյ :

Յարուցեալ ընդ արեգական առանց աղօթից՝ յինէն կողմանէ , ճանապարհ արարաք յես դալարաւէտ և 'ի ծաղկածին մարմանդս դաշտին՝ ի Վարանդ գիւղաքաղաք : Աստանօր մեծահանդէս շքով իջև անեցաւ Խանն , և զիս ինքն հիւր օրար միում 'ի տաճիկ գիւղականացն , ըստ որում հայ ոքո՞չ էր անդ . և ըստ սովորականին՝ առաքեաց ընթրիս , որով

և արգոյ յոյժ ընծայեաց զիս յաչս տանու-
տեառնն : 800 տունք են ՚ի նմա : ունի վա-
ճառանոց փոքրիկ շուրջ պատեալ զքառա-
կուսի հրապարակաւ : Ականակիտ առու իմն
եկեալ ՚ի Համզայ-չիման լերանց՝ անցանէ ՚ի
Հարաւոյ լնդ հիւսիս : Տունք ընակչացն են
Հողաշենք : և են որք յարեաթուրձ տղիւսոյ
և ՚ի կաւոյ կառուցեալք : Տանիք տու հասարակ
տափարակք են, որպէս և ամենայն Հայոց : յորս
ննջեն յամարանի ընակիւչք նորս, և ՚ի ձմրան
ստիւլին քերել օր ըստ օրէ զձիւն նոցա : զի մի
Հալեալ կաթիլու կամ քանդմունս պատճա-
ռիցէ : Վարանդ միանգամայն առեալ է դաշտ
իմն երկայնաձեւ յարեմոից յարեելու : ՚ի հիւ-
սիսոյ ունելով զլերինսն Առջայ, որ է մասն
Ալանկեղ և Ասպան լերանց . և ՚ի Հարաւոյ լոզ
Համզա-չիման : Աահմանակից է Հեր և Օ ա-
րեանդ դաւառաց՝ եթէ մարթ ինչ իցէ ասել
Վասպութականի : ունի ոյդիս խաղողոյ և
պարտէզս ծառոց : Բերէ դարի և յորեան
անհրաւ առասութեամբ, և զսեիս, զլարունկ :
և զձմերուկ . այլ հարստահարութիւն Պար-
սից ոյնքան սաստկանայ ՚ի վերայ ողորմե-
լեացն : մինչ ըաց ՚ի կորկանէ և ՚ի դարւոյ,
չառուուլ ինչ զջաշակ քաղցրութեան աշխա-

տանեացն։ Հարևմոից ճանապարհին՝ որ հանէ
 'ի վեր լնդ Համզա-շիման՝ դէսլ 'ի Առվիան
 գիւղ՝ է շիրիմ գմբեթաշէն։ յոր աւանդու-
 թիւն ընակչաց ամփոփեալ դնէ զԱյցեմզա-
 բա կին Այցի նահասլետի։ որ ՚ի բազմաց ուխ-
 տիւք և խնկօք պատուեալ։ — Ա բիպակաւ
 գրեն Ա արդան։ Ա ատթէոս՝ միանգամայն
 և հետեղք նոցա, թէ Ա լիփասլան առաջին
 թաղեալ իցէ աստանօր։ լնդ որում և բա-
 զումք ՚ի Առւլղանացն Պարսից։ զի նա ըստ
 Աքսոն գետ անցեալ ՚ի Բերդէն՝ և 'ի Խո-
 րիզմայ նետահարեալ մեռաւ և թաղեցաւ 'ի
 Ա երու կամ 'ի Ա էրվընդ՝ 'ի Խորասան աշ-
 խարհի։

Եհաս այսօր կարտվան յԱղուանից՝ յորում
 էին կարմրափաթեթ Հնդ եկք երկու։ կարի
 վտիտք մարմնով, նիհար, և նուրբ դիմօք, և
 բարակ բոլորեալ միջօք, որք եկեալք ՚ի Գուշ-
 բաթայ՝ որպէս ասէինն՝ ուխտեցին Հրաքոտին
 ՚ի Բաքու՝ և դառնային ուրախութեամբ՝ 'ի
 հայրենիս իւրեանց։ Առքա զնոր իմն եղանակ
 խօսից ՚ի կիր առնուին՝ զոր ես ոչ հասկանայի,
 այլ զ՞ը բառ ՚ի թռուրք և ՚ի Պարսիկն ար-
 տասանէին՝ գրեթէ զամենայն զիս՝ զլ՝ և զք՝
 կէ հնչէին։

՚Ի Ա աղիւ անդք խաղացաք ՚ի Առվիան .
որ էր զիւղ ընակեալ ՚ի Տաճկաց՝ իրքե Հա-
րիւր յիսուն տանց : Ունի այս զիւղ զգետն
Աարդապ ՚եկեալ ՚ի Մարանդայ . որ ոռո-
դանէ զայդիս և զանդաստան նորաւ Ռնդար-
ձակածաւալ դաշտն , որ անկանի առաջոյ նորաւ
յարեմուից յարեելս՝ մինչև ՚ի Դավթէժ քա-
ղաք՝ և անտի ցսորոստս մեծի լերին Ահենդայ .
՚ի Հիւսիսոյ՝ Խլադաղ լերանց մինչև ՚ի լե-
րինսն Աալաւանայ , և ՚ի Հարաւոյ՝ ցծովակին Որ-
մայ և ՚ի լերինս Ալզուզաց : Մատակարարէ
նիւթ մեղեր անՀամար փեթակաց գեղջո այսո-
րիկ : Առերի սորուն՝ ՚ի Հիւսիսոյ Ճանապար-
հին , երեէր աւերակ ինչ նախնի և Հաստակա-
ռոյց իմն պանդոկի , որ լբեալ և ամայի :

Յայս դաշտ ընդարձակածաւալ խաղան զետո-
րայքդ Աարտապ , Աարդարակ , Աղե՝ Աճի՝ կամ
Շօր , յորոյ վերայ է կամուրջ գեղեցիկ ե-
լեքկամորեան՝ մերձ ՚ի քաղաքն Դավթէժ . ևս
և գետակն Ուջան : ՚Ի Հնումն կոչէր դաշտ
Աարաժնունի : Բաց ՚ի մասնաւոր ինչ մար-
դաց ՚ի ստորոտս լերանցն Խլադաղայ , և Ահեն-
դայ՝ սկսեալ ՚ի Առվիանայ մինչև ցեղերսն
Կապոտանի՝ երկիրն զանդեալ գոլով ՚ի ծծմբոյ ,
՚ի կոլոց , յաղէ և ՚ի բորակէ , ոչ մի յն աղտաղ-

տինս առնել զնա և անբեր՝ այլև ենթակայ
ահադին շարժմանց, և հանապազորդեան կոր-
ծանմանց, չեղանակս ինչ ամառանն՝ յորժամ
տօթանայ և ցամաքի սյս գաշտ՝ օդերեւոյթ իմն
պատճառեալ 'ի զանազան աղից ցնդելոց 'ի
վեր՝ պատկերանայ աչաց ամենազան կերպարա-
նօք, զոր ես հիմն համարիմ բազմաց յանալի
առասպելացն 'ի մէջ Հայոց և Պարսից :

Այնինչ դեռ 'ի Առվիան բացօթեայ գիշե-
րէաք, տեղաց անձրեւ անհնարին յորդու-
թեամբ՝ մինչեւ զգետորայ աշխարհին ընդ-
թումբս արտաքս զեղուլ, և զդաշտն գլխովին
'ի ծով ինչ համատարած փոխարկել : — **Ե**
Առվիանայ ցՊարվէժ ճանապարհ հարթ ըն-
թանայ, ընդ որ երբեւ յուղի անկանէաք չուել՝
դադարեցան սահանք ջուրց, և թողին զկնի
ձկունս այնքան առատութեամբ՝ մինչ մին մի
'ի մէնջ անաշխատ հաւաքեաց զհարիւրս 'ի
նոցանէ : «Բանզի սկեալ զնոսա գետոց յան-
դորայ ցորենւոյ՝ և 'ի ցամաքելն չկարացեալ
ընդիւրեանս վարել, թուի, 'ի խտորելոյ ոստ-
դիցն զկողս 'նոցա՝ մնային ապաստան 'ի խնամս
ցամաքայնոց : **Զ**կունք Աղւոյ կամ Շօրին
պատուականք են յոյժ :

Աստանօր արտաքս ընդ Հայաստան ելեալ՝

Խորհեցայ թէպէտե զայլ և այլ սահմանս
նորա ՚ի վերադարձ շրջադայութեան իմում
զնեեալս՝ յառաջ մատուցանել յամբողջութիւն
մասանց մերոյ աշխարհիս, սակայն՝ այն զի ճա-
նապարհ՝ որպէս և գրեմս՝ ուղղեցաւ, բարւոք
իմն վարկայ ըստ բուն յատկութեան ճանա-
պարհորդի զընթացս մնսայթաք պահել. և
զպատահեալս անվրէալ շարադրել, քան եթէ
պատ ՚ի պատ պատուտմամբ զկարդ բանին ալա-
ւաղել, Ա ասն որոյ ահա քեզ Պարսկաստան
ընդարձակագոյն ևս :

¶, b r g

• ՀԱՏՈՒՅՑ •



